

Տ Ի Ր Ա Ն Մ Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն



ԶԱՄՈՒԾՆԻՉ

Р 25

Тиран-Марутян

ЗВАРТНОЦ

И

ПАМЯТНИКИ ТИПА ЗВАРТНОЦ

*Архитектурный
критический очерк*

Армгосиздат 1963 Ереван

Տիրանի Մարտիրոսյան

ԶՎԱՐԹՆՈՅ

ԵՎ

ԶՎԱՐԹՆՈՑԱՏԻՊ ՏԱՃԱՐՆԵՐ

Ճարտարապետական
քննական ակնարկ

Հայպետհրատ . 1963 Երևան

Սույն աշխատությունը նվիրված է աշխարհի առաջին մեծարժեք ճարտարապետական կոթողներից մեկի՝ Զվարթնոց տաճարի ուսումնասիրությանը:

Իր եզրակացությունները ավելի համոզիչ դարձնելու նպատակով հեղինակը ներկայացրել է տաճարի նոր կազմված հատակագծեր ու կտրվածքներ և կառուցվածքի գանազան դրվագներ արտահայտող այլ գծադրեր: Գրքում տեղ են գտել շուտաբանված կարևոր հանգուցային հարցերի ու խնդիրների նոր մեկնաբանություններ:

Աշխատության մեջ հանգամանորեն խոսվում է Սիւրիայի Բոսրա տաճարի և ապա Անդրկովկասում հայտնաբերված Զվարթնոցի տիպին պատկանող տաճարների՝ Գազկաշենի, Բանայի և Լյակիթի մասին:

Առանձին գլուխ է հատկացված Փարիզի Սեն-Շապել եկեղեցու բարձրաբանդակի հայտնաբերման և արժեքավորմանը, կապված Զվարթնոցի կերպարի հետ:

5

ԽՄԱԱԳԻՐՆԵՐ՝

ՍՍՈՄ Շինարարության և ճարտարապետության
ակադեմիայի իսկական անդամ

Հ. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Վ. Հ. ԽԵԶՈՒՄՅԱՆ



42033.63



ԲԱՎԱԿԱՆ ԱՆՏՈՆԻ ՄԱՐՈՒԹՅԱՆԻՆ
իր այս աշխատությունը սիրով նվիրում
է երախտապարտ որդին

ՆԵՐՇՈՒԹՅՈՒՆ

Զվարթնոցը ճարտարապետության պատմության մեջ ընդունված և ճանաչված է այն ներքին ու արտաքին կոմպոզիցիոնտարածական կերպարանքով, ինչպիսին մեղանից կեն դար առաջ վերստեղծել է հայ նշանավոր գիտնական Թորոս Թորամանյանը:

Այժմ վերոհիշյալ նախագիծը դարձել է վերաքննության առարկա: Որոշ հետազոտողներ հրապարակել և հրատարակել են Զվարթնոցի վերակազմության իրենց նոր նախագծերը, նախորդից արմատապես տարբեր մեկնաբանություններով, որ իբր թե Զվարթնոցը բուրրովին էլ այնպիսին չի եղել, ինչպիսին հայտնի էր շուրջ հիսուն տարի ի վեր:

Մեր օրերում, երբ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Շինարարության և ճարտարապետության պետական կոմիտեի հնությունների պահպանության բաժինը մասնակիորեն վերականգնում, բարեկարգում է Զվարթնոցի ավերակը, աստղարկներ են

արվում, որ հիշյալ ձեռնարկումը իրականացվի վերակազմության ոչ թե նախորդ, այլ նոր նախագծերի համաձայն:

Ինչպե՞ս կողմնորոշվել, որի՞ն տալ առաջնությունը: Ծթե առաջին վերակազմության նախագիծը արդասիք է մեծ էրուշիցիայի տեր գիտնականի շախատուսքի, բայց չէ՞ որ անխոհեմ կլինեք սնտեսել նոր մեկնաբանությունները:

Թորամանյանի ստեղծած նախագծի վիճարկումների նոր շրջանից¹ (1951 թ.) անցել է շուրջ տասը տարի, մինչդեռ մենք, ճարտարապետներս, ի վիճակի չենք եղել որոշակի դարձնելու այդ կոթողի հավանական կերպարը: Ահա այս պայմաններում, երբ վերակազմության նոր նախագծերը դառնում են առիթ ճարտարավետի պատմության մեջ նորանոր ենթադրությունների և եզրակացությունների, փորձում ենք վերաքննել շուրջվան:

¹ Հին շրջանի վերաբերում է ինժեարյուզական ԲՎականներին:

հարցերը, հնարավորին շափ պարզ դարձնելով թե ինչպիսի՞ն է եղել Զվարթնոցը և թե վերակազմության նախագծերից ո՞րն է հարազատորեն վերապատկերում տաճարի երբեմնի հոյակապ տեսքը:

Ուզում ենք հուսալ, որ տաճարի ավերակի մանրագնին ուսումնասիրության և փաստա-

կան նյութի վերլուծության հիման վրա ըստեղծված սույն աշխատությունը գեթ մասամբ կվերացնի այն ճեղքվածքը, որ առաջացել է զվարթնոցագիտության մեջ վերջին տասնամյակում և օգտակար կլինի մեծ հուշարձանի մասին լիակատար մենագրություն ստեղծելու համար:



ԵՎԵՐԵԿԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Մեր օրերից մոտ 55 տարի առաջ մի վեճ էր գնում, և այդ վեճը տեղի էր ունենում էջմիածնից արևելք գտնվող տեղանքում, որտեղ հանճարեղ մի հղացմամբ, ժողովրդի քրտնաշան աշխատանքով, շուրջ հազար երեք հարյուր քսան տարի առաջ հիմնադրվեց և ապա կառուցվեց հայ հանճարի անմեռ կոթողներից մեկը՝ Զվարթնոց տաճարը:

Ավելի քան երեք հարյուր փառավոր տարի ապրելով, այդ հրաշակերտ մեծագործությունը 10-րդ դարում խորտակվեց, ծածկվեց անթափանց հողաշերտով, ժամանակն ու պատմությունը գրեթե մոռացություն տվին այն:

Քսաներորդ դարսկզբում միայն պեղվեց, լույս աշխարհ հանվեց, նույնիսկ ավերակ վիճակում պատկառանք ներշնչող այդ հուշարձանը, ապա պահպանված բեկորների և այլ տվյալների հիման վրա ստեղծվեց նրա վերակազմության նախագիծը, վերակենդանացնելով փառավոր կերտվածքի երբեմնի

հույակապ կերպարանքը, միաժամանակ հիմք դնելով բուռն վեճերի հիշյալ նախագծի շուրջը:

Կես դարու կյանք է ապրել, ազդու տըվյալների հիման վրա լայն ճանաչման է արժանացել վերակազմության այդ նախագիծերի հեղինակն է ճարտարապետ Քորոս Քոթամանյանը:

Պեղումները Զվարթնոցում սկսվել էին 1900 թվականից վարդապետ Խաչիկ Դադյանի ղեկավարությամբ: Հետագայում, 1904 թվականից, պեղումների գիտական հսկողությունը հանձնարարվում է նորերս էջմիածին ժամանած Քորամանյանին:

Այդ տարիներին կատարված վերոհիշյալ պեղումների հետևանքով բացվում են տաճարի ընդհանուր պատվանդանը, նրա վրա՝ բուն տաճարի եռաստիճան որմնախարխուղը (ստիլբատը), ապա շինության ներքին դասավորությունը—հատակագիծը բնորոշող պատերի մնացորդներ, սյունների խարխուլներ,

ինչպես և մի քանի սյան բներ, խոյակներ, կամարների, բարավորների (перемычки), թիվերի (карнизы) և շենքի բազմաթիվ այլ և այլ մասերի վնասված և անվնաս բեկորներ, հիմքերի, մույթերի ու ծածկերի (թաղերի) բնտոնակերպ զանգվածներ և այլն:

Ավերակի խորազնին ուսումնասիրության, շափազրումների, կանգուն մնացած, կամ համեմատաբար լավ պահպանված այլ եկեղեցիների համեմատությունների հիման վրա, Քորամանյանը կոաչում և ապա որո-

շում է գիտության և պատմության համար հետաքրքրության առարկա դարձած տաճարի արտաքին ու ներքին տարածության ուրվագրեծերը, վարպետորեն վերծանում կառուցողական արվեստի այն հնարանքները, որոնց գործադրմամբ ճարտարապետը մոտ մեկուկես հազարամյակի խորքում, իր ժամանակի գիտության ու տեխնիկայի պայմաններում կանգնեցրել է անիրագործելի թվացող Զվարթնոցի շինությունը:



ԶՎԱՐԹՆՈՑԻ ՎԵՐՈՎԱԶՄՈՒԹՅԱՆ ԹՈՐՈՄՄԵՆՑՆԵՆԻ ՆՎԱՐՍԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայն Քորամանյանի՝ Զվարթնոցի ունեցել է հետևյալ կազմությունը՝ «Իր արտաքին տեսքին մեջ եռահարկ» է Զվարթնոցը: «Շենքին ամրոզությունը մեծ բոլորակ մըն է, որուն արամագիծը՝ 35,75 մետր», «եկեղեցիի կենտրոնեն հավասար հեռավորության վրա զետեղված են շորս մեծ, լայնահաստ և հաստահեղույս մայր սյունները և այդ սյուններուն միացած են շորս կիսաբոլորակներ, որոնց մեկը գոց պատ մըն է և կկազմեն սեղանը, իսկ մյուս երեքը սյունազարդեր են. այսպիսով՝ եկեղեցիին ներքին մասը ստացած է կիսաբոլորակներ կաղմբված խաչաձև մը»: «Ներսի խաչաձև մասը ծածկված է եղբր զմբեթով, իսկ դրսում աղոթող ժողովրդին բաժինը՝ շուրջանակի կամառով»: Որպեսզի հնարավոր լիներ «Իրսի բոլորակ պատեն կամառ մը դարձնել ղեպի ներս, ամբողջ բոլորակի շրջանակին վրա... այստեղ հղացել է հանճարեղ ճարտարապետը հանդուգն գաղափար մը՝ ունենալ բոլորակ պատվանդան մը, կախված մեծ մասամբ սպիտակ մեջ: Նախապես շորս արծվախու-

յակավոր սյունները զմբերառչ կամարներով միացուցեր է մայր սյուններուն, հետո այդ շորս սյուններու խոյակներու վրայեն սկսելով՝ դրսի պատի զուգահեռական կորությունը դեպի աջ ու ձախ կողմերը աղեղներ ձգեր է, որոնք զնացեր հանգչեր են սյունազարդերու մեջտեղի սյունները իրարու միացնող կամարներուն վրա: Այսպես հաջողաբար ձգված ութ զորեղ աղեղները իրենց մեկ ծայրին հենակետ ունենալով արծվախոյակները, մյուս ծայրին՝ սյունազարդին միջին սյունները կապող կամարները, սովբ են բոլորովին հաստատուն բոլորակ պատվանդան մը դրսի պատեն մեկնող կամարին»: «Նախքան զմբեթին կաղմբվիլը, ինչպես ցույց կուտան բեկորները, դրսեն եկող կամարը, ութ աղեղներն ձևացած բոլորակ պատվանդանին վրա հանգչելն հետո, ուրիշ պատ մը [տաճարի երկրորդ աստիճանի (յարուսի) թմբուկի պատը—Տ. Մ.] շարունակված է բարձրանալ նույն բոլորակ պատվանդանին վրա»²:

Ահա այս է ճարտարապետ Քորամանյանի Զվարթնոցի վերակազմության համառոտ

¹ Քորիմացությունների առիթներ շտեղծելու նպատակով, աշխատության շարադրանքի ընթացքում այլ և այլ ուսումնասիրողների կարծիքները և տեսակետները բերվում են անփոփոխ, մեղրերումների ձևով:

² Քորոմ Քորամանյան — Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, 1942 թ. էջ 247—249:

նկարագրությունը՝ Ուրեմն՝ Զվարթնոցը մի հռաստիճան, բոլոր աստիճաններում բոլորակ հիմքով (թմբկաձև) կառուցվածք է (տես նկ. 1), բստ որում՝ առաջին և երկրորդ աստիճանների սահմանում հիշյալ բոլորակների ներքին տարածությունը կազմակերպվում է գմբեթակիր շորս մայր մույթների միջև ստեղծված շորս կիսաբոլորակ արսիղներով (տես գծ. 4)։

Տաճարի առաջին աստիճանում ներքին խաչաթևերը բոլորում են սրահների երկու հարկ։ Այդ սրահները ստեղծվում են զրսի ու ներսի բոլորաձև պատերով և թաղակապ ծածկերով։

Ներսի բոլորակ պատը բարձրանում է երկկոր կամարաթաղերի վրա, որոնք ստեղծված են խաչաթևերի գագաթները և արծվախորակ սյուները բոլորաձև միացնող եզրագծով։

Այդ նույն շիմքի վրա է ծանրանում տաճարի նաև երկրորդ աստիճանի ներքին խաչաթևերը ամփոփող բոլորակ պատը։

Տաճարի երրորդ աստիճանը (գմբեթաթևմբուկը) բարձրանում է շորս մայր մույթները միացնող գմբեթակիր կամարների վրա։



Քորամանյանի վերակազմության վերահիշյալ նախագծի շուրջը 900-ական թվականներին, ընդհուպ մինչև 1906 թ. ծավալված վիճարանությունների իրենց առարկություններով մասնակից եղան հատկապես Նաչիկ Դադյանը, Ինժ. Ք. Տեր-Սարգսյանը, որոշ կարծիքներ հայտնեց Վիեննայի համալսարանի պրոֆեսոր Ստրժիգովսկին։

1950-ական թվականներին հանդես եկան իր կարծիքներով և վերակազմության սխեմայով ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Ա. Կուզնեցովը, վերակազմության նոր նախագծով՝ գիտության թեկնածու ճարտարապետ Ս. Մնացականյանը։

Զվարթնոցին անդրադարձել են նաև դոկտոր Կ. Ղաֆադարյանը, դոկտոր Ռ. Աղաբաբյանը, պատմական գիտությունների թեկնածու Ն. Տոկարսկին, ճարտարապետության թեկնածուներ Կ. Հովհաննիսյանը, Վ. Հարությունյանը և ուրիշներ։

Զվարթնոցի և զվարթնոցատիպ տաճարների մասին խոսք ունեն ասած եվրոպական և ալլազգի գիտնականներ, այդ թվում նաև՝ ռուսական, վրացական, ադրբեջանական։



ՎԵՃԵՐԻ ԸՌԻԹՆԵՐԸ

Որո՞նք են այն արիթները, որ վեճի առարկա են դարձրել Զվարթնոցի ներքին կազմության և ամբողջական պատկերի հարցը:

Պատմագրությունը, բացի ընդհանուր հիացական նվիրումներից, չի պահպանել տաճարի արտաքին ու ներքին նկարագրին վերաբերող տեղեկություններ: Զկան մոդելներ, թանդակներ, մանրանկար հուշարձաններ: Կա միայն ավերակը և Զվարթնոցի կառուցման ժամանակակից (7-րդ դար) պատմիչ Սեբեոսի վկայությունը՝ «...Եվ կառուցեց [Ներսես 3-րդը] եկեղեցին բարձր կառուցվածքով և հրաշակեալ գեղեցկությամբ...»:

Ավերակն ինքնին բավական կլիներ տաճարի լիակատար վերակազմության նախագիծը ստեղծելու համար, եթե նրա առավել կարևոր բեկորները տեղում պահպանված լինեին: Մինչդեռ այդպիսիք ոչնչացվել են ավելի վաղ ինչպես նաև այս դարասկզբում պեղումները սխալ ձևով վարող վարդապետ Խաչիկ Դադյանի կողմից: Ահա ինչ է գրում այդ մասին Քորամանյանը՝ «...Տաճարին մեջը որ ստալ մաքրելու համար, մեջը թափված քարերն ու շագախի փշրանքները դուրս թա-

փերուց հետո մնացած մեծազանգված փուլ-բեր, որոնք պիտի բեռոշեին շենքի կազմությունը և գմբեթի մանրամասն ձևն ու նկարագիրը, վառողով պայթեցրել և փռի վերածել է [Խաչիկ Դադյանը]...: Ահա այս իսկ պատճառով... ուրիշ ճարտարապետական մանրամասնություններ ընդմիջտ կորած են հուշարձանի պատմության համար: Միևնույն ձևով պեղվել է Գառնին, Դվինը, Եղվարդը և ուրիշ կարևոր վայրեր»: Եվ այժմ, եթե հնարավոր է դառնում վերականգնել կառուցվածքի ընդհանուր կմախքի պատկերը, այդ էլ շնորհիվ ցարդ պահպանված բազմաթիվ բեկորների և հատկապես այն 3—4 զանգվածների, որոնք ոչնչացումից փրկվել են շնորհիվ Քորոս Քորամանյանի, երբ վերջինս 1904 թվականին իր վրա է վերցնում պեղումների գիտական հսկողությունը:

Քերևս տարակարծություններ չլինեին, եթե Քորամանյանը, որ Զվարթնոցի առաջին վերակազմության մշակողն է, հնարավորություն ունենար նախագիծն ամբողջացնել բոլոր անհրաժեշտ մանրամասներով, այդ

Քվում հատակագծեր¹ թուր հարկերի համար
և այլն:

Քորամանյանի մշակած նյութերը Ստեր-
ժիզովսկու կողմից հրատարակվել են առանց
հեղինակի մասնակցության, իսկ շահագրու-
թյունները մնացել են Վիեննայում, թերև
մասամբ կորել անվերադարձ և, հետևաբար,

¹ Քորամանյանի Ջվարթնոցի վերակազմության
նյութերում չեն պահպանվել բուրբակ սրահի երկրորդ
հարկարժեհի, տաճարի երկրորդ և երրորդ աստիճան-
ների վերաբերող հատակագծային մշակումներ, այդ-
պիսի էղև են, թե՛ ոչ, առայժմ հայտնի չէ: Գրական-
ության մեջ երևացողները կազմված են տարբեր ու-
սումնասիրողների կողմից Քորամանյանի թողած նա-
կատի (Ֆասադի) և կորվածքի հիման վրա—իրենց մեկ-
նաբանությամբ: Եվ որոշ զեպերում այդ հատակագծե-
րը օգտագործվել են ջրայն Քորամանյանի վե-
րակազմության նախագծի «անհիշա» լինելը, և նայնիսկ
նման վերակազմությամբ շենքի գոյության կոնստրուկ-
տիվ «անհետիևությունը»:

նրանց ավարտված կամ անավարտ լինելը
մեզ համար մնում է անհայտ: Իսկ երբ Ծրե-
վանում հրատարակվեցին նրա աշխատու-
թյունների երկու ժողովածուները, Քորաման-
յանն արդեն չկար:

Համենայն դեպս հրապարակի վրա եղած
նյութերն ամբողջությամբ չեն բացահայտում
տաճարը իր բոլոր մանրամասներով:

Հնարավոր է, որ Ջվարթնոցի կազմու-
թյան շուրջը շարունակվող վեճերը համա-
րնույթ չկրեին, եթե վերակազմության նոր
նախագծերի հեղինակները հնարավոր հա-
մարեին նախքան իրենց նոր մեկնաբանու-
թյուններին անցնելը, նախօրոք լրացնել ամ-
բողջացնել, մինչև այդ ընդունելի համարված
վերակազմության նախագիծը և ապա, եթե
վերջնական արդյունքը մնար անկատար և
կամ կասկածելի, աշխարհ բերեին նոր առա-
ջարկություններ:



ՎԻՃԵԼԻ ԼՆՆԳՈՒՅՑՆԵՐԻ ՄԵՍԻՆ

Զվարթնոցի շուրջը թե՛ նախկինում ծագած, և թե՛ մեր օրերում վերակսվող վեճեր, վերաբերում են գլխավորապես և առավելապես կարևոր՝ շինության կոնստրուկտիվ կողմին:

Ճարտարապետական նոր երկի հղացման դեպքում այդպես չէ, իհարկե, այնտեղ առաջնությունը չեն տալիս կառուցվածքի կոնստրուկտիվ կողմին կամ արտաքին կերպարին: Նորի ստեղծման ժամանակ, կերպարի դեռևս ուրվագծման ընթացքում, ճարտարապետի միտքը զուգընթացաբար զբաղվում է հղացումը իրականության փոխարկելու ուժեղ հնարավորության հարցով:

Փորձամանյանի Զվարթնոցի վերակազմության նախագծում տաճարի արտաքինը ստացել է որոշակի պատկեր, և թեևս այն շվիճարկվեց: Եթե հետազոտողներին ողջ իրականության վրա համոզված արտաքին պատկերին համապատասխան շինության ներքին: կոնստրուկտիվ կազմությունը:

Այսպիսով, Զվարթնոցի վերակազմության նախագծի ստեղծման համար կառուցվածքի կմախքը նախադրյալ, արգելման է հանդիսանում և նախորդում է ինչպես ներքին տարածական, այնպես էլ արտաքին ծավալային ուրվագիծն ու պատկերը: Փորձամանյանի

առաջարկության վիճարկողները միշտ էլ հենց կոնստրուկտիվ կողմն են առաջ քաշել, որպես քննարկման նյութ, և դրանից ելնելով է, որ տվել են հուշարձանի արտաքին պատկերի նոր, այլ մեկնաբանում:

Նլնելով մտա այս իրավիճակից, երբ շկան պատմագրական լիակատար տեղեկություններ, երբ չեն պահպանվել կառուցվածքը լիովին բնորոշող բնկորագանգվածներ, Զվարթնոցի ուսումնասիրության միակ և հիմնական ուղղությունը պետք է համարել նրա ճարտարապետական-ինժեներական խորաքննիչ վերլուծությունը, վերջինիս հիման վրա կատարվող մեկնաբանությունները:

Արդ Զվարթնոցի Փորձամանյանի վերակազմության կոնստրուկտիվ կողմի հիմնական հանգույցը տաճարի երկրորդ աստիճանի հիմքն է, նրա լուծման կերպը և վերջինիս աշխատանքը, այսինքն՝ կրող էլեմենտների (հարամասների) տարողունակությունն ու նրանց ներքին լարվածության չափը: Մյուս, առավել կարևոր հանգույցը տաճարի տարածական-ճարտարապետական լուծման օրգանական լինելու հարցն է. այսինքն՝ նույնի երկրորդ աստիճանում ներքին խաչաձևերի և արտաքին բոլորակ պատի համադրումն ու նրա հետևանքները, որ իբր 32 պատուհաննե-

րից տաճարի ներսը լուսավորում են 12-ը և նույնիսկ՝ 9-ը, որ մնացած 20—23-ը «կույր» են և կամ «կեղծ»:

Մյուս կարգի վեճերը հետևանք են վերոհիշյալ երկու հանգույցների, հետևաբար հիմնական «առեղծվածի» լուծման դեպքում անառիթ կղառնա նրանց որոշ մասը: Այլ խնդիրներ էլ, որոնց լուծումը անկախ է վերոհիշյալից, վերաբերում են մանրամասներին և մանրութներին, քնականաբար պահպանված բեկորների և համանման կառուցվածքների օգնությամբ կստանան իրենց լուծումը. և վերջապես նրանք շունեն վճռական նշանակություն Ձվարթնոց տաճարի ամբողջական, ըստ ամենայնի պատկերի վերստեղծման համար:

Ծիծե նկատի շունենանք այն ճարտարապետներին, որոնք Ձվարթնոցի օրինակով կառուցել են տաճարներ, ապա մեր օրերում (այս դարասկզբին) առաջինը ճարտարապետ Քորոս Քորամանյանն էր, որ մասնազիտորեն վերլուծեց և գտավ կոնստրուկտիվ այն աննախադեպ յուրօրինակ ձևը, որ գործադրված է եղել Ձվարթնոցում, (ինչպես նաև Գազկաշենում) և որի օգնությամբ հնարավոր

է եղել առաջին հարկի քառաթև (խաչաձև) հիմքի վրա բարձրացնել երկրորդ հարկի բուրակ թմբուկը:

Անժխտելի է, իհարկե, որ Քորամանյանի նախագծով ամբողջ լիակատարությամբ պարզաբանված չէ լուսամուտների հարցը:

Քորամանյանից մեզ շին հասել որոշ նյութեր, որոնց մեջ թերևս հանգամանորեն վերլուծված և բացահայտված լինեին Ձվարթնոցը կառուցողի կոնստրուկտիվ հաշիվների էությունը: Համաձայն եղած նյութերի, Քորամանյանը հիմնվելով հուշարձանում պահպանված կառուցելակերպը բնորոշող բեկորների տվյալներին, խորապես հավատացածի մեր հանճարեղ նախորդի մեծ էրուդիցիային, նրա կառուցողական հմտության ու զգուշավորությանը, զգաց նրա մտքի թռիչքաչափն ու հղացման համարձակությունը, հիմնվեց ստացված առկա արդյունքի կատարելության փաստերի վրա և հնարավոր համարեց սահմանափակվել հուշարձանի ընդհանուր, սակայն հիմնական կառուցվածքային սկզբունքներն ու ձևերը, նրա արտաքին կերպարանքն ու գործադրած միջոցները պարզելով:



ՆՈՒՆԵՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՈՐՄՄԱՆՑՆԵՆԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՆՈՒՆԵՐԺԻ ԸՈՒՐԶԸ

Այս դարասկզբում հայ եկեղեցականների և հին ճարտարապետության հետազոտողների համար տաճարի եռաստիճանը (եռագմբեթը) մի անսովոր, շտեմնված երևույթ էր: Եվ երբ Քորամանյանը իր վերակազմությանը Զվարթնոցը պատկերում է հենց այդ պիսին, եռաստիճան, անվտաճությունը մեծանում, հասնում է այնպիսի չափերի, որ վարդապետ Խաչիկ Դադյանը վերակազմության նախագծի կտրվածքից մկրատով կրտում հեռացնում է գմբեթաձևը կազմող երրորդ աստիճանը: Ահա այդ անդամահատված կտրվածքն է (տես նկ. 2), որ պահպանում է իր գոյությունը Քորամանյանի գործերում:

Առավել անսովոր նորությունն այդ վերակազմության մեջ այն էր, որ տաճարի երկրորդ աստիճանի մոտ 80 մետր պարագծով թմբուկը (այդ թվում և առաջին աստիճանի ղուլորակ սրահի երկրորդ հարկի— վերնասարկի ներքին պատը) ծանրանում է առաջին հարկի «ութ կետերի» ութ երկվոր կամարաթաղերի վրա:

Այս կապակցությամբ 1906 թվականին էջմիածին է հրավիրվում համրավավոր ճարտարապետ Ք. Տեր-Սարգսյանը, ստիպելու Քորամանյանին, որ նա հրաժարվի իր «ոչ գիտական» վերակազմության նախագծից և:

Թերևս, ինքը՝ Տեր-Սարգսյանը տա վերակազմության նախագիծ:

Ստորև մեջ ենք բերում հատվածներ Քորամանյանի քրջ նամակ արծ. Մեսրոպ վարդապետին՝ հողվածից, պարզ դարձնելու համար, թե ճարտարապետ Ք. Տեր-Սարգսյանն ինչ հայացքներ և կարծիքներ է ունեցել Զվարթնոցի կազմության վերաբերյալ, նկատի ունենալով, որ վերջինս ոչ գրավոր և ոչ էլ գծագրերի ձևով իրենից հետո ոչինչ չի թողել գրականության մեջ (համենայն դեպս մեզ հայտնի չէ նման նյութի գոյությունը որևէ տեղ):

Երբ Քորամանյանը պարզում է նրան վերակազմության հիմնական դրույթները, Ք. Տեր-Սարգսյանը բացակայում է՝ «Գիտությունը չի ընդունի, այդպես բան չի կարող լինել»¹: Եվ երբ Քորամանյանը նրան,

¹ Ք. Տեր-Սարգսյանը իր խոսքի մեջ հատուկ շեշտով հիշեցնում է՝ «Ինչի նայեցեք, պարոն, ես Պետերսբուրգ եմ ունել, արտասահման եմ եղել...»: Քորամանյանը առանց հապաղելու պատասխանում է՝ «պարոն, վրաս այլոսորտ տեսնելով զիս չաղացողան մի կարծեք...»: Այս առիթով արվեստի վաստակավոր գործի Դ. Անտյանը իր հուշերում գրում է՝ «Եվ այդ հակասակորդը (Ք. Տեր-Սարգսյանը—Տ. Մ.) լուռ մնաց, այլևս ճարտարապետական խնդիրների մեջ նրա հետ վեճի չլինեց»:

վարքապետ Մեսրոպ Տեր-Մովսիսյանի և մի երրորդ անձնավորութան (որի ով լինելը Քորամանյանը չի կարողանում մտաբերել), ներկայութեամբ ցույց է տալիս «անկարելի» համարված կուր աղեղների մնացորդները, «պերճախոս իրականութեան առջև,— շարունակում է Քորամանյանը,— պ. Տեր-Սարգսյան ոչ միայն զարմացմամբ ընդունեց այս հետաքրքրական իրողությունը, այլև վաղածանոթ բարեկամի մը նման թև մտած խնդրեց ինձի ցույց տալ իրեն այն բոլոր մասերը, որոնք ավերակի վերակազմութեան լրացուցիչները կկազմեն: Ես սիրով կատարեցի անոր անկեղծ ցանկությունը ոչ միայն նույն օրը, այլև հետևյալ օրն ալ, ցույց տալով բոլոր կարևոր բեկորներն ու քարերը և անոնց պատկանած տեղերը, որչափ որ կարողացած էի ճշտել զարնան շորս ամսվան հետազոտութեանս միջոցին»: Քորամանյանը շարունակում է. «Պ. Տեր-Սարգսյան լիովին ընդունելով ներքին հարկերու վերաբերյալ բոլոր ցուցմունքներս՝ միայն անհամաձայն մնաց ինձ հետ զմեքի՛ կազմութեան մասին»:

1905 թ. հունիսին պրոֆ. Մառը ձեռնարկում է Անիի Գաղկաշեն տաճարի պեղման աշխատանքները:

Մինչ այդ, Ասողիկի պատմությունից՝ այտնի էր, որ Անիում, Գաղիկ թագավորի օրոք կառուցվել է Ջվարթնոցի նմանությունով և շափերով մի այլ տաճար: Պեղումները հաստատում են պատմական տվյալները: Գաղկաշենը Ջվարթնոցի համեմատությամբ ավելի լավ էր պաշտպանվել: Այդտեղ էլ, չանիկ բերումով հայտնաբերվում է նաև տաճարի մոդելը Գաղիկ թագավորի քարակրի արձանի ձևերի վրա (տես նկ. 21): Այսպիսով Գաղկաշենի պահպանված նյութերը, ներառյալ և մոդելը, ինչպես և Ջվարթնոցի նմանողությունը կառուցված Բանա տաճարի կանգուն մասերը, հաստատում են Քոր

ամանյանի կողմից Ջվարթնոցի վերակազմությունն ինչպես համարվող հանգույցները և կարծեք թե գրանով էլ վերջանում են տական հախուռն վեճերը:

Ճարտարապետ Քորամանյանի նյութերի հիման վրա 1918 թվին մի սովորածավայ երկհատոր աշխատություն է հրատարակում Վիեննայի համալսարանի պրոֆեսոր Ստըր. ժիգովսկին³, նա հիմնականում ընդունում է Քորամանյանի Ջվարթնոցի վերակազմությունն և նախագիծը, չպնդելով սակայն բոլորակ սրահի երկրորդ հարկաբաժնի՝ վերնահարկի գոյությունը, լինել-չլինելը:

Նա մոտիկից, հանգամանորեն ուսումնասիրած շինելով տաճարի ավերակը որոշակի ոչինչ չի ասում: Նա լուկ տրամաբանում է՝ «եթե ընդունենք, որ գոյություն է ունեցել էմպոր (վերնահարկ—Տ. Մ.), ապա այդ պատճառները (առաջին աստիճանի վերնաստում ցույց տրված կոր պատահանները—Տ. Մ.) ծառայել են այն լուսավորելու համար»:

Այս զեպտում պետք էր ընդունել, որ եթե կա վերնահարկ, ուրեմն պետք է լիներ նաև այնտեղ բարձրանալու համար սանդուխտ. որպիսին վերակազմության մեջ ցույց չէ տրված: Այս առիթով էլ Ստրժիգովսկին գրում է. «Եվ կամ աստիճաններ կառուցել. եթե եղել է էմպոր (վերնահարկ—Տ. Մ.)»: Ահա այս այն հիմնականն է, որ հանդիսացել է մեր զբաղակցի վեճերի բովանդակությունը:

Իրկու համաշխարհային պատերազմների անցան պատմական այն ժամանակաշրջանում, որ մեզ բաժանում է Ջվարթնոցի և Գաղկաշենի ավերակների պեղումների և վեճ

¹ Այն զմեքի, որը գծագրից կտրել էր վարչապետ Ե. Գաղաշեն (եբրարդ աստիճանը):

² Քորա Քորամանյան—Հայկական ճարտարապետություն, ժողովածու, 2-րդ գրքը, 1918 թ. էջ 283:

³ Տ. Ստրժիգովսկի—«Հայերի ճարտարապետությունը և Սմոլոպան», 1918 թ., ք. Վիեննա:

⁴ Նույնը—ուսերեն թարգմանությամբ (մեքենագրած վիճակում), առաջին գրքի 290 էջ:

րակազմութեան նախագիծ կազմելու ժամանակից:


Եվ ահա ժամանակակից հետազոտողներս զրկված ենք հուշարձաններից մի քանիսի՝ Գազկաշենի, Բանալի, Իշխանի սվերակները տեսնելու, վերաքննելու և եզրակացութուններում ազարտված մտքեր հայտնելու հնարավորութունից:

Այդ հուշարձանների մասին գաղափար է կազմվում գրահանութունից և կցկտուր արխիվային նյութերից: Եվ երբ 1948 թվականին ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Ա. Վ. Կուզնեցովը ուսումնասիրում է Հայաստանի ճարտարապետական հուշարձանների ներքին կազմութեան կոնստրուկտիվ տեկտոնիկ կողմը, զվարթնոցատիպ տաճարներից միայն Չվարթնոցն է ուսումնասիրում և եզրակացութունները հրատարակում «Тектоника и конструкция центрических зданий» 1951 թվականին լույս տեսած իր գրքի համապատասխան դիտում:



Դոկտոր Կուզնեցովը, հրապարակի վրա ունենալով միայն և միայն Քորամանյանի վերակազմութեան նախագիծը, վերաքննութեան ենթարկելով վերջինս, իր ուսումնասիրութեան հենց սկզբում հայտնում է, որ «Քորամանյանի առաջարկած Չվարթնոցի վերակազմությունը եռաճարկ ուստոնդալի (րոյորակ թմբուկի) ձևով, զգալի շափտվ հումտպատասխանում է տաճարի պահպանված մնացորդներին»:

Տաճարի ներսի խաչաձևը հումարում է նորմավ և նրա արտահայտությունը վերակազմութեան նախագիծում՝ տրամաբանական, եվ ապա գրում է՝ «տեսնելով Չվարթնոցի ընդհանուր կոմպոզիցիայի արխիտեկտոնիկային, այսինքն՝ ներքին խաչա-զմբեթարդ սխեմեի և արտաքին ուստոնդալի համատեղմանը, մենք միանգամից հանդիպում ենք մի շարք վերակազմութեան ֆեթալարտ առաջարկներին», և այստեղ, ահա, Կուզնեցովը հնարավոր է համարում երկու լուծում:



ԴՅ. 1. Չվարթնոցի վերակազմության էսքիզ, կազմված Կուզնեցովի կողմից

Առաջինն այն է, որ առաջարկում է ինքը, միաժամանակ ներկայացնելով մի փոքրիկ էսքիզ, որ և հնտեյալն է. «Տաճարի հիմնական քառաթև խաչաձև սխեմանն ամբողջությամբ արտահայտվում է երկրորդ աւտոնձանի արտաքին ձևերի մեջ: Միահարկ, ոչ բարձր բոլորակ շրջանը (առաջին ստտիճան) ընկալվում է որպես տաճարի հիմնական բարձրագույն մասնալի ստիլբատու Այս լավ է, և լուծված է տեկտոնիկ, բայց ուստոնդաձև չէ» (տես գծ. 1):

Վերակազմութեան երկրորդ ձևը Կուզնեցովը համարում է հենց այն, որն առաջարկվել է Քորամանյանի կողմից:

Ի՛նչ հիմնական խոցելի տեղեր է նկատում Կուզնեցովը Չվարթնոցի ընդհանուր օրգանիզմի կերտվածքի մեջ ըստ Քորամանյանի առաջարկած նախագծի: «Մտաւզոր հաշիվներով պիլոնների (մայր մույթերի—

Տ. Մ.) Թիկունքակողմում կանգնած արծվախոյակ սյունները կարող են կրել իրենց վրա բարձրացած պատերի ծանրութիւնը, սակայն նյութի մեծ լարվածութիւնը (ընդգծումները ամենուրեք մերն են— Տ. Մ.)։ Նրա հաշիվներով պատերից եկող ծանրութիւնը սյունների վրա կազմում է 40 կիլոգրամ մեկ քառ. սանտիմետրի վրա։ Հաշվի առնելով շրջանցի կիսաթաղի և կտուրի ծանրութիւնը եզրակացնում է, որ լարվածութիւնը կստացվի ավելի մեծ։

Երկկող կամարների մյուս ծայրերը, որ հենվում են խաչաձևերի կամարաշարի կենտրոնի վերևում, ընտախ եռակի ավելի ծանրաբեռնում են զագաթի սյուններ թևերի սյունների համեմատությամբ, ստեղծելով նրանց մեջ գերբարվածութիւն և, ապա, այդպիսի հենարանը... ինքնին անորոշ է և դժվար իրականացնելի քան շարվածում։ Նա շարունակում է՝ «Եվ վերջապես, արտաքին բարձր բոլորակ և բարակ (1.04 մետր) պատը քաշով չի ապահովում դիմադրելու այն շառավղային հրող ուժին, որն առաջանում է երկկող կամարից, երբ վերջինս 8 մետր երկարության պայմաններում հորիզոնական ուղղությամբ դեպի դուրս է կարկառվում մեկ մետրաչափ»։ Եվ ապա, Կուզնեցովը հիշեցնում է, որ Բանայի տաճարի դրսի պատի հաստութիւնը կազմում էր 2 վարթնոցի պատի կրկնակի չափը (3. 05 մետր), որ իբր այդ պատճառով էլ նա ավելի երկարակյաց է եղել։ Եվ այստեղ էլ Կուզնեցովը գրել է. «...Չվարթնոցի ճարտարապետի ստեղծագործական համարձակ մտահղացումը չի համապատասխանել դարաշրջանի տեխնիկական գիտելիքների վիճակին»։

Նա ավելացնում է՝ «Կոնստրուկցիաների բարելավումը հնարավոր է միայն երկրորդ յարուսի բոլորակ պատին, որպես հենարան երկկող կամարների փոխարեն համատարած սյունաշար ստեղծելով, բացի դրանից, նպատակահարմար է արծվախոյակ սյունների ստեղծումը ստեղծել կոնտրֆորմներ մայր մույթներն ուժեղացնելու համար»։

Կուզնեցովը նշում է և այն, որ իբր երկրորդ աստիճանի 32 պատուհաններից 12-ն են լուսավորում տաճարի ներքը, իսկ մնացած 20-ը կույր են...

Նա հիշատակում է նաև, որ խաչաձևերի կիսազմբեթները, խախտելով հայկական տեկտոնիկ սկզբունքը, չեն արտահայտվում դրսից, այլ ծածկվել են ընդհանուր տանիքի տակ։

Ի վերջո, Կուզնեցովը եզրակացնում է, որ Շվարթնոցի և Բանայի տաճարների ճարտարապետներին չի հաջողվել ստեղծել կենդանի կապ ներքին խաչա-զմբեթադ տարածության և արտաքին ռոտունդանի միջև։ Շարունակելով, գրում է. «Դժվարութիւնը, որ առկա է մի այլ ավելի ճշմարտացի և մեծ հուշարձանին արժանի վերակազմության նախագծի ստեղծման համար, պայմանավորված է Չվարթնոցի կոնստրուկտիվ անբարձրակազմակերպմամբ։ Եվ որ չի բացառվում մի այլ վերակազմության նախագծի հնարավորութիւնը»։ Եվ ապա ավելացնում է. «Այս հատակագծով տաճարի կառուցման անհնարինությունը մի անգամ ևս ապացուցված է Գագիկ I-ի կողմից 11-րդ դարում Չվարթնոցի ձևով Անիում կառուցված տաճարով, որը հանկարծակի կործանվել է, չնայած լրացուցիչ ամրացումներին»։

Այսպիսով, Կուզնեցովը Չվարթնոցն ամբողջությամբ վերցրած մեծ գործ համարելով հանդերձ, նախատինքի խոսքերով է վերջացնում իր ուսումնասիրությունը՝ ուղղված տաճար կառուցողին։



ԾԹԵ ճարտարապետության դոկտոր պրոֆեսոր Ա. Վ. Կուզնեցովը քառասնական թվականների վերջերում Չվարթնոցի ավերակներն ու Քորամայանի վերակազմության նախագծի նյութերը ուսումնասիրելով և վերաբնեւելով, թողեց միայն գրավոր եզրակացություններ, որ բերվեց վերևում, ինչպես նաև բավարարվեց (որոշ վերապահությամբ)

վերակազմության մի այլ նախագծի հնարավորություն տեսնելով, (թողեց նաև իր մտքերը պարզող լույ մի էսքիզ (տես գծ. 1), ապա հիտանականի կենտրոն ճարտարապետության թեկնածու ընկ. Ս. Մնացականյանը ըստ էության ընդունելով Կուզնեցովի դրույթները, առաջարկում է իր վերակազմության նախագիծը, հիմնովին սխալ համարելով Քորամանյանի վերակազմությունը, ծեփ Կուզնեցովն իր ուսումնասիրությունը կատարում է ընդհանուր շահումների (ոչ բոլոր դեպքերում ճիշտ), և սխեմաներից բխող գաղափարների հիման վրա, ապա Ս. Մնացականյանը ջանում է հետևություններ անել կոնկրետ բեկորների իր ուսումնասիրությամբ և շահումներով:

Այլ բան է, իհարկե, թե ի՞նչ վերջնական եզրակացությունների է հանգում նոր վերակազմության հեղինակը:

Իր աշխատության առաջին մասով «Զըվարթնոցի վերակազմության նախագծի հարցի շուրջը»¹ Ս. Մնացականյանը վերաքննում է Քորամանյանի Զվարթնոցի (ինչպես նաև Գագկանների) վերակազմության նախագիծը, լրջորենելով նրանում առաջ քաշված դրույթներից և ոչ մեկը և, ապա, երկրորդ մասով ներկայացնում իր «Զվարթնոցի վերակազմության նոր նախագիծը»²:

Աշխատության առաջին մասում հեղինակը սկսում է մի շարք մեծ կարևորություն շունեցող սխալներից: Նա նկատում է, որ սխալներ կան Քորամանյանի կազմած հատակագծի նաև ամենավերջին գծագրում, որը հրատարակվել է Ստրժիգովսկու կողմից 1918 թ. Վիեննայում: Գիտենալով Քորամանյանի կարծիքն այն մասին, որ Զվարթնոցի արեվելյան արսիդը սյունազարդ չէ, այլ խուլ պատ է, հարցնում է. «Ինչո՞ւ նրա աշխատու-

թյան առաջին գրքում հրատարակված է արևելյան սյունաշարքը»³:

Մնացականյանը, չհամաձայնելով Քորամանյանի հետ, այնհետև գրում է. «Սյունազարդ վերահարկի գոյությունը լիովին բացատրում է»: Եվ ապա «Ձի պահպանվել նրանց (բոլորակ սրահի 2-րդ հարկաբաժնի տանող աստիճանների—Ս. Մ.) ոչ մի հետք: Ավելին՝ տաճարի ներսում չկա և ոչ մի տեղ, որտեղ հնարավոր լիներ նրանց տեղավորել»: Մնացականյանը, կրկնելով Կուզնեցովի կարծիքը, գրում է. «Ճակատում նշված 32 լուսամուտներից միայն 12-ը կարող էին լուսավորել տաճարը, իսկ մնացած 20-ը կեղծ են»:

Չընդունելով Զվարթնոցի երկրորդ աստիճանի բոլորակ լինելը, նա գտնում է. «Տաճարի երկրորդ յարտի շրջագծային պատը ստացվել է միանգամայն արհեստականորեն...»: Եվ ապա ամփոփում է. «Ոչինչ չուսավորող բազմաթիվ լուսամուտներ, զմբեթակիր մույթների արհեստական փոքրացում, առանձին կանգնած արժախոշակ սյունների մեծ գերլարվածություն»⁴:

Մնացականյանը եզրակացնում է. «7-րդ դարի բարձրավեստ ճարտարապետության համար միանգամայն խոր լուծումներ (կատարված Քորամանյանի կողմից—Ս. Մ.) խիտ մեծ անջրպետ են ստեղծում Քորամանյանի վերակազմության նախագծի և Հայկական ճարտարապետության այդ կլասիկ դարաշրջանի հիմնական սկզբունքների միջև»: Եվ ի վերջո Ս. Մնացականյանն աշխատության առաջին մասն ավարտում է հայտնելով, թե Զվարթնոցի «երկրորդ յարաւր ունեցել է ոչ թե ռոտոնդային, այլ խաչաձև կոմպոզիցիա», ինչպես ենթադրում էր նաև Կուզնեցովը:

³ Այս հարց-ոսկիզով Մնացականյանը ցանկանում է հասկացնել, որ Քորամանյանը հիշյալ խնդրում ունեցել է ակնեղ տատանում:

⁴ «Մեծ գերլարվածություն» խոսքի փոխարեն վառ չէր լինի զրկել կոնկրետ թիվ, թե քանի կիրգրամ ճեղչում է գալիս ամեն մի քառակուսի սանտիմետրի վրա:

¹ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի (հասարակական գիտությունների գծով) տեղեկագրի 1959 թ. № 4, էջ 69—86.

² Նույն տեղեկագրի 1959 թ. № 9, էջ 53—75.

Աշխատութեան երկրորդ մասում հեղինակը համառոտակի (23 էջ, որից տեքստը՝ 18—19 էջ) շարադրում է իր կողմից առաջադրվող վերականգմութեան նախագծի հիմնական դրույթները, ահա զրանք.

1. Առաջին աստիճանի հատակագիծը սկզբնապես եղել է միայն բուրգակ, առանց արևելակողմի ուղղանկյուն կառուցվածքի:

2. Գլխավոր արսիղը հանդիսացող արևելակողմի խաչաթևը (КОХХ-ը) եղել է խուլ և ոչ սյունակամարաշար:

3. Բուրգակ սրահը եղել է միահարկ:

4. Արծվախոյակ սյան բունը եղել է երկու կտոր քարերից, յուրաքանչյուրը 222 սմ. երկարութեամբ (ընդ. 4,44 մ.):

5. Բուրգակ սրահի թաղակապ ծածկի ներքին հենարանը եղել է լայնաթուխ թաղ և ոչ թե կամար:

6. Տաճարի երկրորդ աստիճանը եղել է խաչաձև և ոչ բուրգակ:

7. Տաճարի երրորդ աստիճանը՝ գմբեթաթմբուկը եղել է ոչ թե 16, այլ 12 նիստերով:

8. Գմբեթը ծածկվել է ոչ թե կոնաձև, այլ գնդաձև:

Վերջում Մնացականյանը ավելացնում է. «Զվարթնոցի մինչև այժմ ընդհանրացաւ կերպարը (ակնարկում է Թորամանյանի վերականգմութունը—Տ. Մ.)... որոշ հիմքեր էր տալիս օտարամուտ համարելու նրա ձևերը և կասկածելու նրա տեղական ակունքների մասին»:

Տաճարի այժմյան կերպարը (ակնարկում է իր նոր վերականգմութունը— Տ. Մ.) այնպիսին է, որ այլևս խոսք չի կարող լինել օտարամուտ ձևերի ընդօրինակման մասին և այդ հոյակապ կառուցվածքը պետք է համարվի հայկական ճարտարապետական կուլտուրայի արդյունք...»:

Մնացականյանը ժամանակն է համարում, որ «մի կողմ դրվեն տաճարի հանճարեղ ճարտարապետի հասցեին յուրաքանչյուր մեծ ու փոքր աշխատութեան էջերից հնչող մեղադրանքները և ըստ էութեան գնահատվի հայ ժողովրդի հանճարեղ զավակի այդ մեծ գործը»:



ԶՎԱՐՔՆՈՑԻ ՎԵՐՈՎԵՐՄՈՒԹՅԱՆ ՌԵՍԷ ԼԻՄՈՒՆԳՆԵՐԸ

(Պատվանդանից մինչև գմբեթի գագաթը)

Նախորդ էջերում բերվեցին Զվարթնոցը հետազոտողների տեսակետները. այժմ հնարավոր ենք համարում շարադրել տաճարի վերակազմության հիմունքները՝ մինչև այժմ եղած նյութերի, և ապա ավերակում մեր

կողմից կատարված նոր չափագրումների և ուսումնասիրությունների հիման վրա, հայտնելով նաև մեր կարծիքը վերոհիշյալ հետազոտողների տեսակետների վերաբերյալ:

ՊԱՏՎԱՆԴԱՆՆԸ

Զվարթնոց տաճարի բոլորակ շինությունը դրվել է արհեստական բարձրադիր հարթակի վրա, որն իրենից ներկայացնում է մի պատվանդան՝ տեղանքից բարձրացված 6 (սալահատակի հետ՝ 7) աստիճաններով: Աստիճաններից յուրաքանչյուրի հորիզոնական մասը 35 սանտիմետր է, ուղղածիճ մասը՝ 30 սանտիմետր: Պատվանդանը բազմանկյունաձև է, որը հյուսիս-արևմտյան հյուսիսային և արևելյան կողմերից սահմանափակվում է վերոհիշյալ աստիճաններով, իսկ հարավային և արևմտյան կողմերից՝ կաթողիկոսարանի շինություններով:

Քորամանյանի թողած զծագրերում աստիճաններով կազմված պատվանդանի բազմանկյան էջերի թիվը 7-ն է. ըստ որում էջերի երկարությունը՝ անհավասար:

Զվարթնոցն ուսումնասիրողներից Մնացականյանը իր վերակազմության աշխատության մեջ պնդում է, որ պատվանդանը ձևա-

ուցված է եղել 12 նիստ ունեցող կանոնավոր բազմանկյան հիման վրա, որից և տեղում պահպանվել է 9 նիստ, իսկ հարավային կողմի երեք նիստերը միաձուլված են պալատական կառուցվածքների առջևում՝ արված սալահատակին:

Իրականում պատվանդանը, որն այսօր էլ մատչելի է ամեն մի հետաքրքրվողի համար իսկապես որ ունի ոչ թե 7, այլ 9 կող, սակայն չի շյալ կողերի երկարությունները տարբեր են. այսպես՝ արևմտյան մուտքի ձախանկյունում սկսվող պատվանդանը մինչև հաջորդ անկյունը իր ներքևում ունի 8, 22 մետր երկարություն և մյուսները հաջորդաբար՝ 17, 91: 14, 98: 14, 80: 14, 90: 18, 51: 19, 64: 17, 22: 14, 47: Եվ քանի որ բազմանկյան էջերն անհավասար են, հետևաբար և բազմանկյունին չի կարող լինել կանոնավոր, ինչպես որ անհիմն կերպով պնդում է Մնացականյանը: Եվ քանի որ բազմանկյունին փաս-

տորեն անկանոն է, հետևաբար չի կարելի պնդել, որ 9 էջից դուրս պալատի սահմաններում եղել է ևս 3 էջ, նույն անկանոնության պայմանից ելնելով կարող էր լինել ինչպես 2 էջ, նույն ձևով էլ 4 կամ 5 էջ Այսինքն՝ բազմակնյունին լինելը 11, 13, 14 էջերից և այլն։

Դեռ ավելին՝ «հարավային կողմի երեք նիստեր» նախապես գոյություն չեն ունեցել, էլ ինչպես կարող էին «միաձուլվել պալատական կառուցվածքների առջևում արված սալահատակին»։ Իրականում տաճարի և կաթողիկոսական շինությունների միջև եղած տարածությունը սալահատակվել է կառուցողների պլանուման հետ միաժամանակ՝ և այդ ձևն է ունեցել ի սկզբանե։ Այն, որ սալահատակի սալերը բոլորակ տաճարի շուրջը բոլորակ ձևով էլ դասավորված են բոլոր կողմերից, և որոշ շերտ կազմելուց հետո է միայն,

որ սալերը դասավորվում են պալատի դրսի պատերին զուգահեռ, այդ դեռ չի նշանակում, թե սկզբում ավարտված է եղել բոլորակ հարթակը, բոլոր կողմերից սահմանափակված բարձրադիր աստիճաններով, և հետո միայն 3 նիստերի բեկյալներով ստեղծված եզրը քանդվել ու ապա ձուլվել է պալատական շենքերի հարթակին։

Իրավն սասած, այլ կերպ էլ, քան այն, ինչպես է այսօր ավերակում, չի կարելի սալահատակել, եթե իսկապես, հենց սկզբից միաժամանակ ստեղծվելիս լինել հիշյալ հարթակը. բոլորակ իրականացածից բացի մյուս հնարավոր վարիանտները պիտի ըստացվեին, անկասկած, անհաշու։ Վերահիշյալ պատվանդանի հենց կենտրոնում էլ զբտնըվում է բոլորակ, ավելի ճշշտ՝ բազմակնյունաձև տաճարը։

ՏԱՃԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀՆՐԱԿԱՆՄԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄԻ ԿԱՐԿԱՆՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Ջգալի բժախնդրությամբ կատարված չափումներով պարզվում է, որ Չվարթնոցի առաջին աստիճանի արտաքին բոլորակ պատի տրամագիծը հյուսիս-հարավ առանցքի ուղղությամբ 35 մետր 69 սանտիմետր է։

Քորամանյանի աշխատություններում՝ ինչպես տեքստում, այնպես էլ գծագրում (աշխատությունների առաջին ժողովածու, էջ 247) տաճարի առաջին աստիճանի հատակագծում տրամագիծը ցույց է տրված 35, 75 մետր։ Մեզ հայտնի չէ, թե ինչի՞ հիման վրա

Մնացականյանը Քորամանյանին վերագրում է 36, 75 թվով, որից ելնելով է գրում է՝ «ճշտվեց նաև տաճարի ընդհանուր տրամագիծը, որը ոչ թե 36, 75 մետր է, ինչպես հիշատակում է Քորամանյանը, այլ 35, 55 մետր»։ Ուրիշի «սխալը» «ճշտելու» տվյալ մեթոդը ոչ միայն մեզ, այլև ընդհանրապես, անհասկանալի է։ Իսկ եթե այդ ցարդ շհերքված «վրիպակ» է լուկ, ապա ճշտը 35, 75-ն է՝, թե՛ 35, 55-ը (20 սմ. տարբերություն), իրողությունը հետևյալն է.

Արդի վիճակում տաճարի մնացորդների չափագրումով հնարավոր չէ սանտիմետրի ճշտությամբ որոշել երբեմնի կանգուն վիճակում եղած շինության կարևոր չափերը, այդ թվում և տրամագիծը։ Զէ՝ որ հսկայածավալ տաճարի խորտակումով խախտվել, տեղաշարժվել են նաև նրա ցարդ պաշտպանված պատերի և հիմքերի մնացորդները, ըստ որում, ոչ բոլոր խախտումներն այժմ ակններև են պարզունակ չափագրողի համար։ Օրինակ՝ ինչպե՞ս կարող էր Չվարթնոցի պես կատարյալ կառուցվածքի ճարտարապետը

1 Գրականության մեջ ընդունված է, որ իբր սկզբից կառուցվել է տաճարը և հետո միայն պալատական շենքերի խումբը (բացառությամբ հարավակողմի փոքրիկ քրիստոնեական հուշարձանի)։ Այն հանգամանքը, որ Չվարթնոցի հիմնական մուտքը, որ մտնելում է արևմտյան կողմից, ճշտ և ճշտ չի համընկնում տաճարի գլխավոր առանցքի հետ, այլ թեք է, և թեքության պատճառով պալատական շենքերի հյուսիսակողմի կառուցվածքն է, այն մտքին է բերում, որ թեքն պալատական շենքերի որոշ մասը տաճարից ուղ չի կառուցվել, հակառակ զեպտում հիշյալ գլխավոր մուտքը կկառուցվեր տաճարի գլխավոր առանցքի ուղղությամբ։

տարբեր լայնքեր տալ միօրինակ արսիղենբրին, մինչդեռ այսօրվա վիճակում նրանց շափերն տարբեր են՝ 930, 935, 938, 940 սմ. և այլն:

Նույնպես տարբեր շափեր ունի խաշածակենտորնը բոլորող արահի լայնքը տարբեր տեղերում, այսպես՝ արևելք-արևմուտք և հարավ-հյուսիս առանցքների ուղղությամբ հետևյալ շափերն են՝ 3, 81: 3, 79: 3, 75: 3, 88 մ, իսկ անկյունագծերի ուղղությամբ արծվախոյակ սյուների գծով 3, 65: 3, 66: 3, 69: 3, 70 մ.¹: Այս իրավիճակում վերջնական ճշգրիտ թիվ չի կարող ստանալ ոչ մի շափագրող: Մակայն մեր կողմից շափված հյուսիս-հարավ տրամագիծն ստացվում է 35, 70 մ. (ավելի ճիշտ՝ 35, 69²) մի թիվ, որը 15 սանտիմետրով մեծ է Մնացականյանի նշած 35, 55-ից և միայն 6 սանտիմետրով փոքր է Քորամանյանի գործերում բերված 35, 75-ից:

ՅՐԵՎԵՆԿՈՎՈՎՄԻ ԱՐՄԻԿԻ ԾԱՅԻՆ

Ձվարթնոցի արևելյան արսիղի մասին կա երկու կարծիք. ոմանք ենթադրում են, որ արևելյան արսիղը մյուս երեք խաշաթների նման ստեղծված է եղել սյունակամարաշարով, այնպես, ինչպես այդ տիպի մյուս հուշարձաններում, ինչպես և ավելի վաղ կառուցված սիրիական Բոսորա տաճարում: Ուսումնասիրողների մյուս մասը պնդում է, որ արևելյան արսիղը ստեղծվել է խուլ պատով: Անկախ այն բանից, որ Քորամանյանի

Ահա մյուս կոնկրետ թվերը ցույց են տալիս, որ Մնացականյանը ոչ մի հիմք ու իրավունք չի ունեցել իր աշխատության մեջ գրելու, թե իբր ճշտվել է տաճարի ընդհանուր առամագիծը: Եվ, վերջապես, եթե խոսքը վերաբերում է տաճարի առաջին աստիճանը հանդիսացող մեծ թմբուկի տրամագծի որոշմանը, ապա ավելի ճիշտ պետք է համարել և նշված թվին ավելացնել նաև թմբուկը բոլորող որմնասյունաշարի սյուների դուրս ցեցվածքը պատի հարթությունից տասնիննական սանտիմետրի շափով, չէ՞ որ առաջին աստիճանի երկրորդ հարկաբաժնի պատի զբոսի հարթությունը, ինչպես ցույց է տալիս կամարաքարերի ուսումնասիրությունը, եղել է վերահիշյալ որմնասյունների դրսի հարթության ուղղահիղ գծի վրա, հետևաբար որոշվելիք տրամագիծը ստացվում է 35, 69 + 2 × 0,19 = 36,07 մ.:


Ձվարթնոցի հատակագծի նկարագրության մեջ պարզորոշ շարադրվում է, թե տաճարի արևելյան խաշաթը (որը և հիմնական արսիղն է) ստեղծված է ոչ թե մյուս երեք խաշաթների նման սյունակամարաշարով, այլ խուլ պատ է, այնուամենայնիվ աշխատությունների հատորներից մեկում հրատարակվել է հատակագիծ, որտեղ արևելյան արսիղը ևս ցույց է տրված սյունակամարաշարով այնպես, ինչպես մյուս երեք խաշաթներում:

Այժմ Մնացականյանը, պնդելով արսիղի խուլ պատով ստեղծված լինելը, թերևս ցանկանում է նշած լինել Քորամանյանի տասնունուր վերահիշյալ խնդրում:

Իրականում ավերակը ոչ ոքի հնարավորություն չի ընձեռում վերջնականապես հաստատելու արսիղի կամարաշար և կամ խուլ պատով ստեղծված լինելը: Բանն այն է, որ մինչև այսօր պահպանվում է արսիղի բոլորածակ պատի երկու շարք (հավասար սեղանի բարձրության), իսկ նրանից վերև դարձյալ պատ է եղել, թե՛ սյունակամարաշար, հայտ-

¹ Զափումները կատարված են սալահատակի հարթության վրա և ոչ ավելի բարձր—սյունակամարաշարի վերով անցնող բոլորակ պատի գծով, ինչպես հարկ էր կատարել, մի բան, որ այժմ անհնար է:

² 85,89 թիվը ստացվել է՝ բոլորակ սրահ հարավահողմում ունի 3,80 մ. լայնք, հյուսիսահողմում՝ 3,88 մ. լայնք, հյուսիս-հարավ առանցքով խաշաթների երթրի գագաթների հեռավորությունը միմյանցից 24,25 մ. է, տաճարի դրսի պատերի հաստությունը ընդունել ենք 90-ական սանտիմետր, խաշաթների սյուների պատվանդան-ժապավենի լայնքը ամեն կողմում՝ 98 սանտիմետր է. 24, 25 + 3,80 + 3,88 + 0,90 + 0,90 + 0,98 = 32,69 մ.:



ՆՃ. 2. Զվարեցի պալանական կորվածք

նի չէ, կարող է և՛ պատ եղած լինել և՛ կամարաշար, չէ՞ որ միանգամայն սովորական է արսիդի կամարաշարի մյուս խաչաթևների համեմատությամբ ավելի բարձրագույն լինելը: Հայտնի է նաև, որ զվարթնացատիպ բոլոր տաճարներում Իշխանում, Բանայում, Անիում և Լյակիթում, արևելյան արսիդներն ստեղծվել են սյունակամարաշարով, այդպես է նաև Կոնստանդնուպոլսի Այա-Սոֆիայի տաճարում, այդպես է սիրիական Բոսրայում և այլուր: Այստեղից հետևում է, որ բոլորովին զարմանալի չէր լինի, եթե Ղվարթնոցի արեվելոյն արսիդը ևս լիներ սյունակամարաշար:

Նորից վերադառնալով ավերակի ավելի խորազնին ուսումնասիրությանը, տեսնում ենք, որ հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան զմբթակիր մայր մուլթերի արևելակողմի էջերի վրա պահպանվել են արսիդի պատի միջուկի շաղախի հետքեր և մնացորդներ արդեն երրորդ շարքի սահմաններում: Այս բոլորից հնարավոր է անել երկու եզրակացություն: Նախ, որ արսիդը կարող էր ստեղծված լինել խուլ պատով Նրկորոզ և համարազոր եզրակացությունը կարող է համարվել այն, որ հիշյալ մայր մուլթերից սկիզբ է առել արսիդի պատ, սակայն շարունակվել է կամարաշարի երկու ծայրերի թռիչքների սահմաններում, իսկ այնուհետև եղել է կամարաշար, ոչ թե մյուս թևերի նման յոթ, այլ հինգ թռիչքով: Այս երևույթը ևս զարմանալի չէ: Օրինակ Բանայում ևս խաչաթևերի կամարաշարերի թռիչքների թիվը տարբեր է. արսիդում յոթն է, իսկ մյուս թևերում՝ հինգավիստ:

Այստեղից էլ հզրակացություն, որ քնական է Քորամանյանի երկվույթյունը (եթև միայն այդ այդպես է) Ղվարթնոցի արսիդի խուլ պատ, թե՛ կամարաշար լինելու վերա-

բերյալ, չէ՞ որ տրագիցիայի գոյությունը, թե նախքան Ղվարթնոցը և թե նրանից հետո, խոսում է արևելյան արսիդի կամարաշար լինելու օգտին:

Ղվարթնոցի արևելյան արսիդի կազմության խնդիրը պարզելու համար որոշիչ դեր է խաղում կամարաշարի սյունների բացարձակ շափու: Բանն այն է, որ արսիդում պահպանված մեկուկես մետր բարձրության, երկու շարքով ստեղծված պատի վրա սյունակամարաշար ենթադրելու դեպքում, սյուններից յուրաքանչյուրի բունը ստանում է շափազանց փոքր շափ, ընդամենը 0,75 մետր բարձրություն: Իսկ եթե բացառվի սյան խարիսխի գոյությունը, այն դեպքում սյան բունը կստանա բավարար շափ, այսինքն՝ 1,70 մետր բարձրություն: Սակայն այդպես ենթադրել հնարավոր չէ, քանի որ մեր հուշարձաններում նման երևույթ չի նկատվում:

Այսպիսով, հաստատվում է այն, ինչ կա ավերակում և ինչ գրել է Քորամանյանը, այսինքն՝ արևելյան արսիդն ստեղծված է եղել խուլ պատով (տես գծ. 4):

Ոմանք դրական են համարում արսիդի սյունակամարաշար կազմությունը: Մեր համոզմամբ, այս դեպքում դրական պետք է համարել պատը, չէ՞ որ այն սեղանի համար հանդիսանում է անհրաժեշտ ֆոն և միաժամանակ զարմնում է հնարավոր տեղի առավել նպատակահարմար օգտագործումը:


Սյունակամարաշարի դեպքում եկեղեցական արարողությունը կատարվում է նվազ հարմարավետության պայմաններում:

Ղվարթնոցում սեղանի և մտրինի զգալի առաջացած լինելը մասամբ պետք է բացատրել արսիդի խուլ պատի գոյությամբ, նույնն է, թե արարողության մասնակիցների բացակայությամբ արսիդի հետնամասի կողմից:

ԱՐՏԱՔԻՆ ԲՈՂՈՐԱՆԻՍ ՊԱՏԻ ՀԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ինչպես ասվեց, տաճարի արտաքին պատը դրսից բազմանկյունի է, ներսից՝ բոլորակ, հետևաբար նրա հատուկությունը յուրա-

քանչյուր նիստի մեջտեղում ավելի փոքր է, քան անկյունների մոտիկ, սակայն այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բազման-



ՊՃ. 3. Ալսերեցի կողմից հարավ-հյուսիս առանցիվ

կլունաձև պատի դրսի անկյունների գոյություն չունեն, անկյան տեղերում կառուցված են դուռնի սյուներ, որոնցից յուրաքանչյուրի տրամագիծը 38 սանտիմետր է, իսկ պատի հարթությունից դուրս ջեջվածքը՝ 19—20 սանտիմետր, և րանի որ նրանք նույն պատի

անանջատելի մասն են կազմում, ապա հարմար չէ նիստի անկյուններում պատի հաստությունը որոշել հաշվի շառնելով սյուների գոյությունը Մինչդեռ հենց այդպես էլ վարվում է Մնացականյանը. նա գրում է. «Թորամանյանը նշում է պատերի հաստու-

թյան միայն մեկ շափ—95 սմ., մինչդեռ նրանք բազմանկիտ կոնֆիգուրացիայի հետևանքով ունեն փոփոխական հաստություն, ամենանեղ տեղում հավասար է 89—90, իսկ ամենահաստ տեղում՝ 95—96 սմ.-իս:

Տեղում պատի հաստությունը սանտիմետրի ճշտությամբ որոշելու համար պահպանված պատի ամբողջական բեկոր գոյություն չունի: Այն որոշվում է տաճարի ստորին մասում պատի և եռաստիճան պատվանդանի ընդհանուր հաստությունից պատվանդանի բաժինը հանելով: Մինչդեռ պատվանդանի աստիճանների լայնություններում սանտիմետրի տարբերություններ կան, հետևաբար

ՆԵՐՔԻՆ ԽԱՉՄԹԵՎՆԵՐԻ ՊԱՏՆԵՐԻ ՀԱՍՏՈՒԹՅԱՆ ՄՄԱՍԻՆ

Քորամանյանի կազմած մի գծագրում (Աշխատությունների առաջին գիրք, էջ 248, նկ. 158բ), խաչաթևերի պատերը գծված են արժվախոյակ սյան հաստությամբ, այսինքն՝ 80 սանտիմետր: Այդ շափը ոչ որի կողմից առարկության չի հանդիպել: Սակայն որոշ հանգամանքներ մեզ ենթադրել են տալիս, որ խաչաթևերի պատերը եղև են ավելի հաստ՝ 98 սանտիմետր:

Հատակագծի տվյալները պարզորոշ ցույց են տալիս, որ խաչաթևերի պատերի ներսի և մայր մույթների խաչաթևերին ուղղված երեսները պետք է միմյանց շարունակություն կազմեն: Այդպես է նաև Գագկաշենում:

Անկախ այն բանից, որ Բանայում խաչաթևն ուղղանկյուն մասում ավելի լայն է, քան կիսաբլուրակում, սակայն հենց կիսաբլուրակումն էլ սյունակամարաչարի վերնամասի պատը և կամարաչարի պատով վերջացող մասը կազմում են միմյանց շարունակություն (տես նկ. 3):

Չվարթնոցում խաչաթևեր ստեղծող կիսաբլուրակների սյունների տրամագծերը 59—60 սանտիմետր է, իսկ նրանց խարսխատակի ժապավենած շերտերի լայնությունը հասնում է 98 սանտիմետրի: Եվ ահա այդ շերտերը կանոնավոր կիսաշրջան կազմելով,


պատի հաստության ստացվող տարբեր թվերը 3—5 սանտիմետրի սահմանում, բնական է, որանից ելնելով էլ հիշյալ խնդրի արժարձելը՝ 90 թե 95, անկարևոր:

Ահավաստիկ, ինչպես Ս. Մնացականյանը, այնպես էլ Չվարթնոցի մյուս ուսումնասիրողները վերաբնում են տաճարի միայն առաջին աստիճանի թմբուկի պատի հաստությունը, ըստ որում Քորամանյանը տալիս է 95 սանտիմետր, Կուլինցովը՝ 105 սանտիմետր, Մնացականյանը՝ 90—95 սանտիմետր, մինչդեռ խաչաթևերի և երկրորդ աստիճանի թմբուկի պատերի հաստության մասին խոսք չի բացվում:

զնում, միանում են մայր մույթների ներքնամասերին՝ ճշտորեն կազմելով հիշյալ մույթների արսիդներին ուղղված կողերի շարունակությունը, մինչդեռ սյունների բնիկ ներքին շոշափող կիսաբլուրակը մայր մույթների վերոհիշյալ կողերից ետ է մնում 19 սանտիմետրով: $\left(\frac{98-60}{2}=19\right)$: Այս բնականորեն ցույց է

տալիս, որ սյունակամարաչարի պատն ավելի հաստ է եղել, քան սյունների տրամագծաչափը: Բայց որքանով, ընդամենը 20, թե՛ 38 սանտիմետրով: Եթե 20, ապա պատի հաստությունը ստացվում է 80 սանտիմետր, այս դեպքում բլուրակ պատի և մույթի կողի կանոնավոր միաձուլում չի ստացվում, աղավաղվում է այնպես, ինչպես այդ տեղի է ունեցել Բանայի համապատասխան մասում, որտեղ սյունակամարաչարը երկու ծայրերում ետ է մնում մույթի կողից, մինչ նրա վերնամասի պատը, որ արսիդի միջնամասում կարծեք զուգահեռ է սյունակամարաչարին, ծայրամասերում բեկվում է դեպի առաջ, թերևս հաստանում, ձուլվում մույթի կողին (տես նկ. 3):

Եթե հետևողական լինենք մեր այն համոզումներում, թե Չվարթնոցում կառուցվածքի զրվագները մեծ մասամբ կատարյալ են,



ՊՆ. 4. Զվարճացի առաջին շենքի հարկի հանդիպարչի հատակագիծ

ապա պետք է ընդունենք, որ այս հանգույցչև հարտարապետը կանոնավոր է լուծել, հետևաբար խաչաթևերի պատերի հաստությունը պետք է համարենք 98 սանտիմետրը, Որ այս հնարավոր է, և նույնիսկ՝ հավանական, ցույց են տալիս հետևյալ հանգամանքները. նախ, որ խաչաթևերը կազմում են տաճարի օրգանիզմի հիմնական մասը, նա է, որ ավելի բարձրանում, ծածկվում է կլիսագմբեթներով, ձուլված լինելով մայր մույթերին, վերջինների հետ կրում է գմբեթից եկող ողջ բեռը և այլն: Եվ ապա, մեզ այդ բանում համոզում է այն սովորույթը, որ սյունաշարի էլեմենտները, հատկապես սյունների բնորը, կառուցվում են ավելի նուրբ և փոքր տրամագծով, ապա նրանցից վերև, ավելի հաստահողուտ պատին անցում է կատարվում աստիճանաբար: Հունահռոմեական ճարտարապետության մեջ կամարաշարի վերև եղած պատի դրսի երեսը դուրս չի գալիս սյան եզրի հարթությունից, զտնըվում է մի ուղղածիզի վրա: Այդպես չէ մեզ մոտ, օրինակ՝ Բանայում և Իշխանում կամարի հաստությունը մեծ է սյան հաստությունից և գեթեթ հավասարվում է խոյակի վերնասուլի շափին (մի քանի սանտիմետրի տարբերությամբ միայն), նույն սովորույթով՝ առաջին կամարաշարի վրա եկող երկրորդ կամարաշարը ավելի հաստ է լինում առաջին կամարաշարից, այնքանով, որքանով հաստ է ավելի վերև գտնվող պատը:

Այդ ևս հիանալի երևում է նույն Բանայի, (տես նկ. 3) ինչպես և Իշխանի (տես նկ. 22) արևելյան արսիզների լուսանկարներում: Հենց այդպես էլ պետք է եղած լինի Զվարթնոցում: Այստեղ սյան տրամագիծը 59—60 սանտիմետր է, խոյակի վերնասուլի լայնքը՝ 102 մմ.: Այս վերջինի վրա ազատ կերպով Նըս-

տել է երկու կամարի մեկ հենարան հանդիսացող կրճարաբար: Զվարթնոցի ավերակում բեկորների մեջ պահպանվել է այդպիսի մի բար, որի լայնքը 80—82 սանտիմետր է: Այս ցույց է տալիս, որ խաչաթևերի ասաջին կամարաշարի հաստությունը եղել է 80—82 սանտիմետր: Վերահիշյալ տրադիցիան՝ նկատի ունենալով, երկրորդ կամարաշարի (որի գոյությունը Զվարթնոցում ընդունում են բոլորը²) հաստությունը պետք է եղած լինի ավելի, թերևս՝ 98 սանտիմետր, այսինքն՝ երկրորդ կամարաշարն առաջինից դուրս է եկել ամեն կողմից ութակառու-իննակառու սանտիմետրով: Ահավասիկ մի հանգամանք ևս. Զվարթնոցի արևելյան արսիզի պատի պահպանված մասում հաստությունը ճիշտ 98 սանտիմետր է: Մի դեպքում կարելի է ենթադրել, որ պատի հիշյալ ներքնամասը այդքան հաստ է եղել, որովհետև նա հանդիսացել է արևելյան արսիզի սյունակամարաշարի համար հիմք (այնպես, ինչպես խաչաթևերի կամարաշարներում խարսխատակի բուլբուլակ ծապակվելը, 98 մմ. լայնքով և 15 սանտիմետր բարձրությամբ), սակայն վերո-

հը նաև, որ վերնասուլի կողերի երկարությունը դարձյալ 95 սանտիմետր է, իսկ պատի հաստության ուղղությամբ՝ 102 սանտիմետր: Եթե խաչաթևի պատի հաստությունը լինի առաջին կամարաշարի հաստությամբ (որքան որ կամարի կրկնաբարի բեկորի լայնքն է) 80—82 սանտիմետր, ապա խոյակի վերնասուլի ևս ազատ կերպով կարելի կլինի ունենալ քառակուսի 95 սանտիմետրանոց կողերով: Հետևաբար խոյակի վերնասուլի շառնիզի ուղղությամբ շարք մեծացվել է ուղղակի նկատի ունենալով խաչաթևի պատի (նաև երկրորդ կամարի) ավելի մեծ հաստությունը և, շատ հավանական է, 98 սանտիմետր, որ սովորականի պես մի քանի սանտիմետրով պակաս է վերնասուլի 102 մմ. շափին:

² Երկրորդ կամարաշարի գոյությունը Զվարթնոցի խաչաթևերում Մեծապանյանի կողմից ընդգծվել է, իբրև ճարտարապետի զգուշավորության եղան կրողունակությունը կենսացնելու նպատակին ուղղված: 1,80 մետր թռիչքով մեծարում դրա կարիքը չկա, այդ արված է եղել վերահիշյալի ձևով սյունից դեպի վերև, դեպի հաստահողույս պատը անցումը ճարտարապետունե կամավերապելու: Համար միայն:

¹ Հնտաքորական է, որ Զվարթնոցի խաչաթևերում սյունների խարսխատակից հատակագծում ունեն քառակուսի ձև 95×95 սանտիմետր շափով, իսկ խոյակների վերնասուլիներ ոչ թե քառակուսի են, ինչպես ընդունված էր մինչև հիմա, այլ ուղղանկյուն քառանկյունի, որտեղում դեպի խաչաթևի ներքև և դեպի շրջանց արս-

հիշյալ արևելյան կամարաշարի խնդիրը վերջնականացնես, առ այսօր պարզված չէ: Իսկ եթե, իսկապես պատի այդ ներքնամասը կամարաշարի հիմք չի հանդիսացել, այլ 98 սմ. հաստութիւնն ամբողջական պատի մի մասն է, հետևաբար մյուս խաչաթևերում ևս պա-

տերի հաստութիւնը պետք է եղած լինի նույնքան, այսինքն՝ 98 սանտիմետր:

Ստացվում է միանգամայն բնական, սովորութիւն համապատասխան, տաճարի տրվյալները հաստատող պատկեր (տես նկ. 25 պատի կտրվածքը):

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՐՄԻԻ ԲԵՄԻ ՄԱՍԻՆ

Զվարթնոցի գլխավոր արքիդի հատակի և ամբիոնի հարցը ևս վիճարկման առարկա է հանդիսանում:

Քորամանյանի գծագրերում ցույց է տրված այնպես, ինչպես ավերակում առ այսօր պահպանված է սեղանի մի մասը, այսինքն՝ այն առաջ է քաշված գրեթե մինչև տաճարի կենտրոնական մասը և հատակի համեմատ բարձրացված է մոտ մեկուկես մետրով:

Մնացականյանն իր վերակազմության նոր նախագծում սեղանը ցույց է տալիս խաչաթևի սահմաններում և հատակից բարձրացված երկու աստիճանով (40—50 սմ.): Այս նշանակում է, որ նրա կարծիքով սկզբնապես սեղանը եղել է ոչ այնպես, ինչպես ցույց է տրված Քորամանյանի մոտ:

Ավերակում արևելյան արքիդի սահմաններում ոչ մի հետք ու նշան չկա, որոնց հիման վրա հնարավոր լիներ եզրակացնել, թե սկզբնապես սեղանը եղել է արքիդի սահմաններում և այդքան ցածր: Մինչդեռ կան մի շարք հանգամանքներ, որոնց հիման վրա հնարավոր է ենթադրել, որ սեղանը հենց սկզբից էլ եղել է բարձր և թերևս՝ արքիդից առաջացած:

Այսօր էլ արևելյան արքիդում փոս է, որի հատակը տաճարի հատակից ցածր է 1.60—1.80 մետրով. հավանական է, որ այն եղել է ներքնահարկ, այնտեղ են իջնում արքիդի երկու եզրերում գոյութիւն ունեցող քարե վեցական աստիճաններ: Այդ աստիճանները պատերի հետ շին հյուսված, սակայն նրանց տեղադրման համար արքիդի հիշյալ ներքնահարկի պատերի անկյունները հարմար ձևով տաշված են. ըստ որում տաշածեր կատար-

ման որակով և սյլ հատկանիշներով առիթ չի տալիս մտածելու, թե այն հետո է կատարված: Ներքնահարկի պատերի կառուցողական տեխնիկան (քարերի տաշածեր և այլն) այնպիսին է, որ նույնպես առիթ չի տալիս ենթադրելու, թե նրանք հիմնապատեր են, և ոչ ներքնահարկի պատեր, որ իբր այդ փոսը անտեղի է պեղված: Եվ եթե այս բոլորը հաստատում են այդ փոսի ներքնահարկ լինելը, ապա այն պետք է ծածկ ունեցած լինի, որը և պիտի հանդիսանար սեղան: Որպեսզի ներքնահարկը ունենար միևնույն անհրաժեշտ բարձրություն և փայտյա ծածկը՝ նորմալ հաստութիւն, ինչպես և հնարավոր լիներ վերոհիշյալ քարե աստիճաններով իջնել ներքնահարկ, ապա բնականորեն սեղանը—գլխավոր արքիդի հատակը, տաճարի հասակից պետք է բարձր լիներ ավելի, քան Մնացականյանի նշած 40—50 սանտիմետրը:

Տաճարում գտնվող մանի մի ուշադիր մարդ նկատած կլինի, որ արևելակողմի երկու մայր մույթերի (այդ թվում և 3/4 սյունների) խարիսխներն ավելի բարձր են (150 սմ.), քան արևմտակողմի մայր մույթի խարիսխը (60 սմ.): Ըստ որում՝ արևելյան մույթերի խարիսխների բարձրութիւնը ճիշտ և ճիշտ այնքան է, որքան բարձրութիւն ունի սեղանի ավերակում պահպանված հատվածը:

Սեղանի որոշ մասեր, օրինակ ամբիոնը, ակնեբևաբար ուշ կառուցում է, սակայն հիմնական մասը՝ ըստ երևութիւն ժառանգակից է տաճարին, իսկ տաճարին ժամանակա-

1 Արճանի է ուշադրութիւն, որ սեղանի պահպանված թվի ունի մեզ մոտ միայն շատ հուռ գործածված եզրագիծ (профиль):

կից լինելու համար պարտադիր չէ, որ ամեն ինչ ձուլված լինի բուն տաճարի օրգանիզմին: Այդպիսիք իրականացվում են որոշ հերթականությամբ: Բոլոր դեպքերում հարմար չէ արտիդի հատակը այնքան ցածր անել, որ ժամասացողը հազիվ տեսանելի լինի արարողության ներկաներին, համենայն դեպս մեր ցարդ կանգուն հուշարձաններում սեղանները զգալի չափով բարձր են տաճարի հատակից:

ՏԱՃԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՉՄԱՆ ԹՄԻԿԱՊԱՍԻ ՄԱՍԻՆ

Քորամանյանի վերակազմությանը Ջրվարթնոցն իր կանգուն վիճակում եղել է հիմքում բոլորակ, աստիճանաբար փոքրացող տրամագծով եռաստիճան (Трёхярусный) կենտրոնագմբեթ կառուցվածք:

Տաճարի արտաքին ուրվագիծը, հարթությունների պլաստիկ մշակմամբ Քորամանյանը վերստեղծեց ավերակի բեկորների չափազորության հանգամանակից ուսումնասիրության և զգացող գեղազետի շերմ շնչով: Ահա այդ կրթողի առաջին աստիճանը հանդիսացող թմբուկը կազմված է 32 հավասարակողմ նիստերից՝ բարձրացած քարի եռաստիճան¹ որմնախարսխի վրա: Ըստ

Այս ամենից հետո հարավոր է ենթադրել, որ թևերն ճիշտ է Քորամանյանը, որ Ջվարթնոցում արտիդի հատակը եղել է տաճարի հատակից զգալի չափով բարձր, ինչպես և արտիդի սահմաններից առաջացած՝ բոլորակ արահների կողային հատվածներից բավարար չափով տեսանելի լինելու և այնտեղ կատարվող ժամասացությունը բոլորին լսելի դարձնելու համար:

որում՝ արևելակողմի երեք նիստերի սահմաններում, տաճարին կից է հատակագծում ուղղանկյուն մի կառուցվածք:

Նեղ, նկատի ունենալով, որ այդ պատը ազատ պիտի մեր ծածկից եկող ուժերից: Այստեղից կարելի է եզրակացնել նաև, որ կառուցվածքի կողային պատերը պահող թիվերը եղել են հորիզոնական, իսկ արևելյան պատը թեքնա ավարտվել է ճակտոնով:

Ինչ վերաբերում է արևելյան որմնախարսխի մասնաձևերին, ապա պետք է ենթադրել, որ նրա վերին (երրորդ) աստիճանը մյուսների նման պատի հարթությունից դուրս է եկել 35 սանտիմետրով, մյուս երկու աստիճանները՝ հինգական սանտիմետրով: Առաջին աստիճանը հիմնապատի եզրից ետ է մնացել ընդամենը հինգ սանտիմետրով, մյուս պատերի խարսխների 15 սանտիմետրի փոխարեն:

Միանգամայն հնարավոր է, որ արևելյան պատի որմնախարսխը եղած լինի միաստիճան (սակայն երեք աստիճանի բարձրությամբ) 35 սանտիմետրի չափով դուրս եկած պատի հարթությունից, ետ մնալով հիմնապատի երկրից դարձյալ 15 սանտիմետրով, սակայն այս ձևը նախորդին զիջում է որմնախարսխի ընդհատության տեսակետից:

Կարևորն այն է, որ երկու դեպքում էլ մենք պետք է մեկ աստիճանը մյուսների նման 35 սանտիմետրի չափով պատի հարթությունից դուրս եկած ցույց տանք, նկատի արևելյան այն, որ թեքնա բուն տաճարի արտաքին պատի վրայով անցնող զննորատիվ սյունակամարաշարը, շարունակվելով, անցած լինի նաև ուղղանկյուն կառուցվածքի երեք պատերի վրայով:


Այդ դեպքում սյուների խարսխները պետք է հանգչեն պատի հարթությունից 35 սանտիմետրի չափով դուրս եկած վերահիշյալ որմնախարսխի վրա:

Մինչև այժմ եղած Ջվարթնոցի բոլոր հատակագծերում վերահիշյալ իրավիճակին տեղյակ չլինելով, ուղղանկյուն կառուցվածքի արևելյան պատի որմնախարսխը սխալմամբ ցույց է տրվել մյուսների ձևով:

¹ Տաճարի արևելակողմի ուղղանկյուն կառուցվածքի հյուսիսային և հարավային պատերի հիմքերի հաստությունը երկու մետր է (մի քանի սանտիմետր ավել): Ինչպես բոլորակ տաճարում, այնպես էլ այստեղ, լայն հիմքից համեմատաբար բարակ պատին անցումը կատարվել է կոնստրուկտիվ կարևոր նշանակություն ունեցող հիշյալ եռաստիճան որմնախարսխի միջոցով:

Այդ ուղղանկյուն կառուցվածքի արևելյան պատի հիմքը մյուս հիմքերի նկատմամբ բավական նեղ է, ունի մեկ մետր քառասուն սանտիմետր հաստություն: Այս նշանակում է, որ հիշյալ արևելյան պատի որմնախարսխը իր հորիզոնական չափերով մյուսներից տարբերվել է:

Այս հանգամանքը որոշակի է դարձնում ուղղանկյուն կառուցվածքի ծածկի ձևը, ինչպես և որոշ մասնաբաժաններ: Մեր համոզմամբ որմնախարսխս (նշանակում է նաև լայն հիմնապատ) արվել է կառուցվածքի կողային պատերի համար, նկատի ունենալով, որ սենյակների թաղանթա ծածկերը պիտի ծանրանային հենց այդ պատերի (ինչպես և միջնապատի) վրա, իսկ արևելյան պատի հիմքը և որմնախարսխը արվել է



Գծ. 5. Չվարթնոցի առաջին աստիճանի երկրորդ հարկաբաժնի (վերնահարկի) հատակագիծ

Քմբուկի արտաքին հարթուքները, որ պատմականորեն մինչև պատերազմի քիվը ունի մոտ 16,70 մ. բարձրություն, ճարտարապետական պատկեր մշակմամբ, ըստ բարձրության բաժանված է երկուսի: Առաջին՝ բարձր մասը (10,20 մետր) դրսից պարուրված է զեկերատիվ սյունակամարաշարով: Սյունեքը գույզ-գույզ դասավորված են բազմանկյան գազաքներում (նիստերի հանդիպման տեղերում): Հիշյալ կտավաբաշարի վերևով հորիզոնական մի գիծ է անցնում, և այդ գիծ ու կամարների միջև ստացված հարթությունը պատված է հարուստ հարթաքանդակով:

Քմբուկի ներսից, այդ նույն բարձրությամբ, բոլորակ սրահի առաջին հարկաբաժինն է: Ե՛վ այդ հարկաբաժինը և՛, ընդհանրապես, տաճարի ներքին ընդարձակ տարածությունը՝ լուսավորում են յուրաքանչյուր նիստի վրա բացված մեկական լուսամուտ:

Բոլորակ սրահի երկրորդ հարկաբաժինը պատի արտաքին երեսի վրա արտահայտված է մի բազմանկյունի հարթությամբ, որ զբաղեցնում է վերոհիշյալ քանդակազարդ գոտու վերևից մինչև Քմբուկի քիվը եղած տարածությունը: Ըստ որում՝ այդ բարձրության՝ կենտրոնի վրա դասավորված են կոր պատուհաններ, որ լուսավորում են բոլորակ սրահի երկրորդ հարկաբաժինը:

Այսպիսով, պարզորոշ ընկալվում է այն համապատասխանությունը, որ կա տաճարի առաջին աստիճանի ներքին բոլորակ սրահի երկու ճարտարապետական բրգերի գոյությունը և պատի արտաքին ճարտարապետական բաժանված ճարտարապետական կազմության միջև (տես նկ. 1 և գծ. 3): Այստեղ խոսքն այն վերահասարակ մասին է, որի գոյությունը իմաստներ ք. Տեր-Սարգսյանը սկզբում չէր ընդունում, իսկ հետագայում ընդունեց և այլևս այդ խնդրին շանդրադարձավ ոչ բանավոր և ոչ էլ գրավոր:

Պրոֆեսոր Ստրժիգովսկին շխտեց վերահասարակ գոյությունը:

Ա. Կուլենցովը վերահասարակին շանդրադարձավ, թեպետև իր առաջարկած էսքիզ-

նախագծում, տաճարի առաջին աստիճանի բարձրության խիստ փոքրացումով, ոչ միայն ժխտեց նրա գոյությունը, այլև հնարավորից շատ պակաս բարձրության հասցրեց նույնիսկ առաջին հարկաբաժինը:

Ճարտարապետ Մնացականյանը, իր վերակազմության մեջ, Զվարթնոցի արտաքին տեսքը կազմեց, հիմնվել է տաճարի ներքին կազմության իր առաջարկած նախագծի շափերի և համալափությունների վրա: Համաձայն հիշյալ նախագծի՝ առաջին աստիճանի բոլորակ սրահը (գալերեան) երկրորդ հարկաբաժին շունչի ել որովհետև առաջին աստիճանի բարձրությունը նրա մոտ թվական տվյալներով ստացվում է բավական ցածր, առաջարկության հեղինակը, Քրամսյանի նախագծի համեմատությամբ, երկու շարքի շափով (130—140 սմ.) իջեցրել է սյունակամարաշարի բարձրությունը, ընդհուպ մինչև ձևավորված մուտքերն իրենց բարձրությամբ գրեթե ծածկել են կամարաշարի մեկական նիստ: Տաճարի առաջին աստիճանի բարձրության հիշյալ պակասեցումով՝ իրենց տեղերից իջեցնել են նաև պատուհանները, մի բան, որ խիստ անսովոր է այդ շրջանի տաճարաշինության գործնականում, օրինակ. Բագարանի, Քարզմանշացվանքի, Արթիկի, Արուշի, Պտղուն, ինչպես և Զվարթնոցի կրկնօրինակ Գազկաշենի (տես մոդելը) պատուհանները ճակատների վրա տեղադրված են մուտքի դռներից վերև: Հետաքրքրական է, որ այդ սովորույթը նկատվում է նաև այլ երկրների, այդ թվում՝ Ֆրանսիայի, Իտալիայի (տես Պիզիի բոլորակ տաճարը) 11—12-րդ դարերում կառուցված տաճարներում:

Նրա կողմից խիստ պակասեցվել է նաև կամարաշարի վերևով անցող քանդակադրուսու և առաջին աստիճանի պատկազրուտ (քիվի) միջև եղած տարածությունը, և թողնել է լուկ այնքան, որքան տեղ է անհրաժեշտ կոր պատուհանների բարձրությունը կազմող երկու քարերի համար: Այնպես որ հիշյալ քարերը դրվում են քանդակազրուտ վրա, իսկ քիվը՝ վերջիններիս վրա: Մինչդեռ

Քորամայանի մոտ. ինչպես կոր պատու-
հաններին մինչև քանդակագործին, այնպես էլ
մինչև առաջին աստիճանի քիվը՝ նախատես-
ված էին ևս երկուական քարի շարք:

Մնացականյանի մշակած առաջին աստի-
ճանի ճակատը, բոտ բարձրության, ևս եր-
կուսի է բաժանված, մինչդեռ ներքին տարա-
ծությունը մեկ է. երկրորդ հարկաբաժինը չկա.
այստեղ անժխտելիորեն առկա է արտաքին
երկճարի տպավորության և ներքին միա-
կառու ծավալի անճամառատառախանու-
թյունը. մի բան, որ անհամատեղելի է մեր

ԱՐԵՎԵԼԵՍԿՈՂՄԻ ՈՌՂՂԱՆԿՑՈՒՆ ԿՍՈՒՈՒՑՎԱԾՔԻ, ԲՈՒՈՐԱԶԵՎ ՎԵՐՆԱՇՆՈՒԿԻ ԵՎ ՍԱՆԴՈՒՅՆՆԵՐԻ ՄՄՍԻՆ

Ինչպես ասվեց վերևում, Քորամայանի
վերահագմությունը առաջին աստիճանի ներ-
քին խաչաձևին բոլորում է սրահների երկու
հարկ: Առաջին հարկը (որոշ վերապահու-
թյամբ) ընդունվում է բոլորի կողմից, քանի
որ նրա գոյությունն ապացույցները տեղում
սկսբախ են:

Ի՛նչն է հիշյալ վերահագմությունը: Այդ վե-
րաբերում է տաճարի բոլորակին արևելակող-
մից հարող ուղղանկյուն հատակագծով կա-
ռուցվածքին (տես գծ. 4.): Որ իբր թե հայտնի
չէ վերջինիս ինչ լինելը, ինչ նպատակի ծա-
ռայելը և հատկապես նրա կառուցման ժա-
մանեզը՝ բուն տաճարի կառուցման ժամա-
նակի համեմատությամբ: Ըղևնի և կարծիքներ,
թե այդ բացվածքներ պարունակող միջնապա-
տով երկուսի բաժանված կառուցվածքում
եղևնի են սանդուղիների՝ տաճարի բո-
լորակ սրահի երկրորդ հարկաբաժինը
բարձրանալու համար, սակայն այնտեղ
չգտնելով սանդուղիի մնացորդներ, ցուցա-
բերվել է ղգուշավորություն և շին պնդել
իրենց հիշյալ ենթադրությունը: Օրինակ՝ Քո-
րամայանը գրում է՝ «Եի՜նձի հայտնի չէ արե-
վելյան կողմի քառակուսի մասին ինչ ըլլա-
լը» և ապա «ես կենթադրեմ, որ այս մասին
մեջ կգտնվեր վերնահարկ գալուստիին մուտ-
քը, ապա թե ոչ ներսեն ոչ մեկ տեղ սան-

տաճարաշինության հետ: էստետիկական
տեսակետից ընդունելի չէ նաև այն, որ կոր
պատուհանների միջև ստացվում է 4 քարով
ստեղծվող սյունանման շարվածք, որ նստում
է «ամորթ» քանդակազարդ շերտի վրա, իսկ
քիվն էլ հենվում է ոչ թե համատարած պա-
տի, այլ հիշյալ սյունանման պատահատված-
ների վրա: Ստեղծվող նման տպավորու-
թյունը հավատ չի ներշնչում, որ սույն նա-
խագիծը ճիշտ արտահայտելիս լինի տաճարի
ավյալ դրվագի իրական պատկերը:

դուսիքի հետք չկա՝ դեպի գալուստի կամ վերնա-
հարկ պահարանները բարձրանալու հա-
մարա՞:

Բոլորակ սրահի երկրորդ հարկաբաժնի
գոյությունը մեծողները ժխտում են նաև
վերահիշյալ քառանկյուն կառուցվածքի տա-
ճարի ժամանակակից լինելը (հետևաբար
նաև սանդուղիների երբեմնի գոյության
հնարավորությունն այնտեղ):

Այդ մասին Մնացականյանը գրում է.
«սակայն առավել էական քերականը» (Քո-
րամայանի վերահագմության— Տ. Մ.) —
դա արևելյան ուղղանկյուն կառուցվածք
տաճարի շրջանաձև պատի ճեռ միաձույլ
պատկերին է, մի բան, որը արմատապես
ժխտվում է ընդամենը կառուցվածքի և տաճա-
րի շրջանաձև պատի միջև կոնստրուկտիվ
կապին իսպառ քաղաքայնությամբ» և ապա.
«այն չի հանդիսանում տաճարի սկզբնական
կամպոզիցիայի օրգանական մասը և ավելաց-
ված է հետագայում»:

Ուսումնասիրողներից ոմանք, եթե Մնա-
ցականյանի պես վճռաբար չէին ժխտում,
բայց այնուամենայնիվ կասկածանքով էին
նայում բոլորակ սրահի երկրորդ հարկա-

1 Ք. Քորամայան — I-ին գիրք, էջ 268:

2 Տեղեկագիր № 4 — էջ 71:

3 Տեղեկագիր № 4 — էջ 70:

բաժնի գոյութեան հարցին: Եվ մի պատճառով, որ իբր թե այն աննպատակ է, չէ որ այնտեղ հավաքված հավատացյալները շարժուի կարողանալին հաղորդակից լինել տաճարի կենտրոնական ընդարձակ տարածությունում տեղի ունեցող արարողությունները:

Բայն այն է, որ այս խնդրում ևս Քորամանյանը սխալ է հասկացված: Ահավասիկ բոլորակ սրահի երկրորդ հարկաբաժնի հատակագիծը (տես գծ. 5) որի վրա երևում է, թե ինչպես այդ սրահը լուսավորվում է զբոս բոլորակ պատի վերնամասում դասավորված մեծաքանակ կոր պատուհաններով, տաճարի ներքի հետ հաղորդակցվում է խաչաձևերից երեքի վրա ցույց տրված յոթական մեծագիր բացվածքներով՝ կազմակերպված սյունակաբարաշարի ձևով: Օգտվելով երկրորդ հարկաբաժնի հատակագծի բացակայությունից, նախորդ ուսումնասիրողները՝ գրեթե ամբողջությամբ խուլ են ներկայացնում հիշյալ հարկաբաժնում բարձրացող, երկրորդ աստիճանի հիմքը հանդիսացող բոլորակ պատը, հենց դրանով էլ սրահի երկրորդ հարկաբաժնի անշատում են տաճարի ներքին տարածությունից:

Ամեն մի պարզ մտածող մարդ, որ հեռու է կանխամտածված նկատառումից, դիտելով Քորամանյանի կազմած կտրվածքը (տես նկ. 2)¹ առանց վարանման կհանգի այն մշտ-

թին, որ խաչաձևերը շրջանցող վերահիշյալ բոլորակ պատը պետք է լինե՞ր բացվածքներով (տես գծ. 2) և ոչ թե խուլ, որի անհրաժեշտությունը ոչնչով չի թեկնարկվում:

Սրանով էլ բացատրվում է Մնացականյանի կողմից կազմված Ձվաթթնոցի վերնահարկի հատակագծի կեղծ պատկերումը:

Այժմ, երբ պարզ է դառնում, որ բոլորակ սրահի երկրորդ հարկաբաժինը «աննպատակ և անհասկանալի» չէ և որ նա լրիվ հաղորդակից է տաճարի ներքին ընդարձակ տարածությունը, հետևաբար պետք է որոշել այդ վերնահարկը բարձրանալու ուղիները: Պետք է պարզել, ո՞վ է ճիշտ, Քորամանյանը, որ արևելյան ուղղանկյուն կառուցվածքն անբաժան է ներկայացնում բոլորակ տաճարից, հետևաբար հնարավոր դարձնում այնտեղ գտնելու երբեմնի գոյություն ունեցող սանդուխթի հետքեր, թե՞ Մնացականյանը, որ այն համարում է ուշ կառուցվածք, բացառելով սանդուխթների գոյությունը:

Հենց միայն վերջերս ավերակում կատարված մանրազնիխ ուսումնասիրությունը պարզում է, որ տաճարի և ուղղանկյուն կառուցվածքի պատերի կապը բոլորովին էլ այնպես չէ, ինչպես ներկայացնում է ընթերցողին Մնացականյանը:

Իրականում ոչ թե թխպառ բացակայում է՝ հիշյալ պատերի կոնստրուկտիվ կապը, այլ այդ կապը կա, կան և ուրիշ շատ հանգամանքներ, որոնք հաստատում են հիշյալ քառանկյունի կառուցվածքի և բուն տաճարի միաժամանակ կառուցված լինելը, ինչպես նաև Քորամանյանի «առավել էական թերությունից» թխպառ» զեքծ լինելը: Փաստերը հետեւյալներն են՝

1. Տեղեկագրի № 4-ի 72 էջում Մնացականյանի տեղագրած № 4 լուսանկարում երևում է, որ 2—3 շարքերի բարձրությամբ անկյուն կազմած քարերի մեջ չկա շինարարական կապ և նույնիսկ հորիզոնական կա-

մանյանը ձգված վարիանտը կազմել է ավելի ուշ-Գազկաշնի պեղումներից հետո, և սխալ է Մնացականյանը, որ պնդում է հակառակը:

¹ Քորամանյանի աշխատությունների առաջին զբոս 248 էջում 158 նկարում Բ և Գ պատկերները սխեմաներ են հանգույցները բացատրելու համար, նրանց մշակված հատակագծեր չեն:

² Քորամանյանի թողած Ձվաթթնոցի ճակատի և կտրվածքի գծագրերը ոչ թե նույն վարիանտին են պատկանում, ինչպես համարում են Կուզնեցովն ու Մնացականյանը և նրանց միջև եղած տարբերությունը վերագրում վերակազմության նախագծի թերություններին, այլ նրանցից յուրաքանչյուրը մնացել է մեկ վարիանտից, այնպես որ Քորամանյանի թողած ճակատին համապատասխանող կտրվածք չկա և կտրվածքին համապատասխանող ճակատի վարիանտ չկա: Ըստ որում կտրվածքը, որ ցածր համապատկություններ ունի—համեմատաբար հին վարիանտին է վերաբերում, չէ՞ որ այդ այն վարիանտն է, որից գմբեթը կտրել է Գաշյանը, այս առումով ճիշտ է ընդ. Ղաֆազարյանը, որ Քորա-

րիւր շնն համբնկնում: Այս միանգամայն ճիշտ է, սակայն այս միակ է միակ զգվագն է, որ այդպես է, և այս դրվագը վերաբերում է ոչ թե տաճարի պատինն. ինչպես կրկնում է Մնացականյանը, այլ ճրագ հիմքին, որը միաժամանակ ներքնահարկի պատն է: Այդպես չէ նույն հիմքի մյուս անկյուննում, այդպես չէ պատերի երկու անկյունններում, այդպես չէ նաև ուղղանկյուն կառուցվածքի զգալի լայնություն միջնապատի և տաճարի կոր պատի հանդիպումից առաջացած երկու անկյուններում:

Այսպիսով, հյուսիս-արևելյան անկյունում շարքերը փոխադարձաբար հյուսված են գոյությունը պահպանած երկու շարքերում, հարավ-արևմտյան անկյունում՝ երեք շարքերում և մեկ շարքի բարձրություն միջին ելուստի երկու անկյուններում: Ահա այդ ելուստից վերև, տաճարի պատը շունի երեսապատում և ոչ էլ երեսապատման համար տեղ, այլ պատամիջի շաղախն է բացված (տես նկ. 7):

2. Տաճարը շրջանցող եռաստիճան որմնախարիսիւր արևելյան վերահիշյալ քառանկյան սահմաններում չի շարունակվում կորագծով, այլ շրջանցում է նաև ուղղանկյուն կառուցվածքը երեք կողմերից, ինչպես ցույց է տրված Քորամանյանի գծագրում:

Արդ՝ որքանով է ճիշտ Քորամանյանը:

Արևելակողմի հիշյալ ուղղանկյուն կառուցվածքի պատերը համեմատաբար լավ են պահպանված ներսից, իսկ դրսից, ընդհանուր հարթակից վերև, պատի հեռքեր կան միայն (ներսապատման կտորված քարերի ձևով), ինչպես և պահպանված է պատամիջի բեռնակիրը շաղախը: Հիշյալ պատերի հաստությունը ճշտությամբ նույնքան է, որքան տաճարի դրսի բոլորակ պատի հաստությունը՝ 90—95 սմ. (2.0 մետր կողային պատերի եռաստիճան որմնախարսիի հետ միասին):

1961 թ. փետրվարի 14-ի կիրակի օրն անձամբ ակնատեսն եղա մի վիճակի. անցած շարաթվա ընթացքում պատե-

րի ներքնամասերի վերանորոգումով ըզբաղվողները հողաքարակույտներից մաքրել էին տաճարի կոր, և հիշյալ ուղղանկյուն կառուցվածքի պատերի հյուսիս-արևելյան հանդիպման անկյունը: Պարզորոշ երևում էր, որ պատերի հիմքերը կառուցված էին առանձին-առանձին: Հիմքից անմիջապես վերև պատամիջի շաղախից պոկված էր որմնախարսիսի քարե բեկորը ու նրա տեղը մաքուր, որպես թարմ շաղախ, երևում էր երբեմնի մեծ քարի (մոտ 80 սմ. երկ.) տեղը—սպարուլը (տես նկ. 4): Ահա այդ զոգավոր շաղախը 40 սանտիմետրի շափով գտնվում էր ուղղանկյուն պատի ստիլոբատի սահմաններում, 40 սանտիմետրի շափով՝ բուն տաճարի որմնախարսիսի սահմաններում: Այդ նույն տեղում բավական լավ պահպանված է հաջորդ շարքերի դրոշմը կրող բետոնազանգվածը, որի լիցքածևը և շաղախի գույնը՝ վերը նկարագրված որմնախարսիսի շաղախի ձևով, ցույց է տալիս հիմքից վերև երկու պատերի միաժամանակ կառուցված լինելը:

Այս նույն վիճակումն է պատամիջի բետոնազանգվածը՝ ուղղանկյուն կառուցվածքի երկուրակ տաճարի պատերի հանդիպման նաև հարավ-արևելյան մասում:

Այնուհանդերձ պետք է նկատել, որ ինչպես հիմքում, այնպես էլ պատերի հանդիպման տեղերում եթե կար լիներ, այդ դեպքում ցույց չպիտի համարվեր նրանց տարբեր ժամանակներում կառուցված լինելուն: Եվ թերևս այդ ինժեներական տեսակետից ավելի ճիշտ համարվելու Այն պետք է հանդիսանար նստվածքային կար, մի քան, որ ամենուրեք կիրառվում է, եթե տվյալ տեղանքում լինում են երկրաշարժերը: Այստեղ երկու շինություններ են, մեկը՝ բոլորակ, մյուսը՝ ուղղանկյուն հիմքով, նրանց ստատիկ աշխատանքը տարբեր է և ինքնուրույն, հետևաբար երկրաշարժերից ոչ զերծ էլ միաժամանակ կարող պետք է գոյություն ունենար Պետք է գոյություն ունենար ուղղանկյուն կառուցվածքի նաև շրջարդը՝ արևմտյան պատը: Ինչպես տեսանք, շրջարդը պատ չկա, հե-

տևաբար այդ երկու շինությունների պատերը պիտի կապված լինեին: Այլ կերպ չէր կարող լինել. 16—17 մետր բարձրության պատն առանց որևէ կապի պատկերացնելն իսկ անբնական է, իսկ նման բան մեր հին վարպետներին, էլ չենք ասում ճարտարագետներին, վերագրելը՝ անվայել: Իրականում այդ կապը եղել է, պատերը եղել են կապված, կապը չի եղել լոկ հիմքի սահմաններում:

Եզրակացությունը մեկ է. նախ կառուցվել է տաճարի բոլորակ հիմքը, հետո ուղղանկյուն կառուցվածքի հիմքը և ապա կառուցվել են պատերը՝ միաժամանակ և միայնաց ձուլված:

Դեռ ավելին, ամենահավանականն այն է, որ այդ հիմքերը ևս կառուցվել են միաժամանակ, սակայն նստվածքային կարի պահպանմամբ: Այս եզրակացության ճշմարտացիությունը հաստատվում է նրանով, որ տաճարի բոլորակ հիմքի և ուղղանկյուն կառուցվածքի հիմքի հյուսիս-արևելյան հանդիպման անկյունում՝ հիանալի պահպանվել է քար տաշող վարպետի նշանը (Կ) : Ըստ որում նույն նշանը կրող քարերից մեկը գտնվում է ուղղանկյուն կառուցվածքի հիմքի երկրորդ շարքի (հատակից հաշված) առաջին քարի վրա՝ անկյունից հեռու լոկ 40 սանտիմետր, մյուս քարը, նույն նշանով, գտնվում է տաճարի բոլորակ հիմքի նույն շարքի նույն անկյունից հաշված 160 սանտիմետր հեռու՝ երրորդ քարի վրա: Ահա այս էլ ցույց է տալիս, որ հիշյալ հիմքերը կառուցվել են կամ նույն վարպետի կողմից, և կամ նույն վարպետի տաշած՝ ֆաբրով:

3. Տաճարի պատը ներսից կորագիծ է, դրսից՝ կորին մոտեցող բազմանկյունի: Արեւելյան սենյակների սահմաններում ևս ներսից կոր է, իսկ դրսից՝ այսինքն՝ ուղղան-

կյուն սենյակների ներսի կողմից, որ ընդգրկում է բոլորակ պատն ավելի քան երեք նիստ (մոտ 11 մետր երկարություն) ուղղագիծ է, և այս պատհանով էլ տաճարի արտաքին պատի հաստությունն այդ մասում խիստ փոփոխվել է. եթե կենտրոնական նիստի տեղում բարակել է (80 սմ. 90 սմ.-ի փոխարեն), ապա կողքի նիստերի վերջավորություններում՝ անհամեմատ հաստացել է՝ մոտ 130 սմ. (տես գծ. 4): Հարց է առաջանում, եթե արևելյան սենյակները հետո են կցվել տաճարին, ապա, այդ դեպքում, կարիք կլինե՞ր տաճարի երեք սյունակամարազարդ նիստերի սահմաններում պատի հաստության կեսը՝ քանդել նոր ձևով շարելու համար, և հնարավոր կլինե՞ր այդ անել 15—17 մետր բարձրության պատի կալուստից շվախսելով: Իհարկե՞ ոչ: Այդպես վարվելն անմտություն կլիներ, աննախադեպ երևույթ: Հակառակ երևույթի հաճախ ենք ակնատես լինում, երբ ուշ կառուցված շինության պատով ուղղակի ծածկվում է նախորդ կառուցվածքի պատը, առանց փշաջեղու նրա վրա եղած ճարտարագետական էլեմենտը՝ սյուն, պատուհանի զարդ, մուտքի վերնամաս է: այլն: Օրինակ, մեր ժամատները, կառուցվելով ավելի վաղ կանգնած՝ նեկեղեցիների արևմտակողմում, բոլորովին անվաս էին թողնվում եկեղեցու արևմտյան մուտքի զարդերը:

4. Տաճարի բոլորաձև սրահից դեպի հիշյալ երկու սենյակներն են բացվում մեկական դուռ: Շարվածքից պարզ երևում է, որ այդ դռների անկյունային կանոնավոր քարերը շարված են տաճարի մյուս քարերի հետ միաժամանակ. բոլորակ սրահի սյուների խարիխների քարերը կազմում են հենց դռների անկյունաքարերը (տես նկ. 5): Կարելի է այն էլ, որ այդ երկու դռների բացվածքների երկու կողերը ոչ թե պատուհանների նման դրսից նեղ, ներսից լայնացած են, այլ ուղիղ են՝ միմյանց զուգահեռ, նրանց առանցքները ոչ թե տաճարի շառավիղների ուղղություններն ունեն, այլ ուղղահայաց են

1 Քերտ ավելորդ չէ հիշեցնել. որ երկու հիմքերի քարերը նույնատեսակ են (զույնով, շափերով), ինչպես և նույն է տաշանքը, հատկապես քարերի վերին ու ներքին եզրերի վրա տաշվածքանքը և այլն:

2 Փանի որ դրսի պատի ներսի երեսը և երբ ևս ինտերիերի սյուներով քարերը պահպանված կան:

սենյակների երկար ուղղափոփ պատին, ինչպես ճիշտ կերպով ցույց է տրված Քորամանյանի կազմած հատակագծում:

Այս էլ բացատրում է, որ այդ դռները տաճարի դռան փոխարկված պատուհաններ չեն (այդպես կվարվեին, եթե իսկապես հիշյալ դռները հետագայում բացված լինեին):

5. Տաճարի և սենյակների միջև եղած այդ ընդհանուր պատի երկու (հաստացած) ծայրերում, հատակից 115 սմ. բարձրությամբ, բացված են երկու «գանձարաններ» (տես նկ. 6), որոնք շունեն բաց պատուհանների ձև: Նրանք ունեն մեկ շարքի բարձրություն, հատակագծաձևը կոր է 63 սմ. տրամագծով «գանձարանների» թե՛ պատեր, թե՛ միակտուր առաստաղի քարերը մաքուր տաշված են, դռնակը եղել է քարից (առանց շաղախի) և բացվելիս է եղել սենյակների կողմը: Առանց մեկնաբանության էլ հասկանալի է, որ գանձարանը չէր կարող բացվել տաճարի պատի դրսի երեսի վրա. և եթե գանձարանը տաճարի պատի մեջ է նստած և բացվում է սենյակի կողմը, հետևաբար սենյակն էլ պետք է կառուցված լինի գանձարանի հետ միաժամանակ: Վերոհիշյալ փաստարկները կասկած չեն թողնում, որ արևելյան քառանկյուն կառուցվածքը (ներս պատերը հիմքից վերև) բոլորակ տաճարի հետ բարձրացել է միաժամանակ:

6. Եթե տաճարի արևելակողմի քառանկյունի հատակագծով կառուցվածքում սանդուխթի հետքեր գտնվեին, ապա առարկություններ չէին լինի, որ այդ շինությունը ստեղծվել է բոլորակ տաճարի հետ միաժամանակ, չէ՞ որ այդ սանդուխթները պիտի ծառայեին տաճարի վերնահարկը բարձրացող մարդկանց: Այդ կառուցվածքում սանդուխթներ ենթադրելու հետ միասին, Քորամանյանը գրում է նաև, որ այնտեղ սանդուխթի հետքեր չեն հայտնաբերվել: Հիմնվելով վերոհիշյալի վրա, Մնացականյանն էլ նույնն է ասում, դրանով իսկ համոզում, թե այդ ուղղանկյունին ավելի ուշ կառուցվածք է:

Քերևս ճիշտ է, որ չեն պահպանվել վերնահարկ տանող սանդուխթի հետքեր, սակայն ինչպե՞ս կարող էին այդպիսիք պահպանվել, երբ ավերակում վաղուց գոյություն չունի հիշյալ ուղղանկյուն կառուցվածքի վերնամասը, որի վրա պետք է պահպանվեին այդ սանդուխթների հետքերը. պատերից մնացել է լոկ երկու շարք: Սակայն իրենց գոյությունը հիանալի պահպանել են այդ կառուցվածքի հիմնապատերը, որ միաժամանակ ներքնահարկի պատերն են: Եվ ա՛հ այդ պատերը պահպանել են ներքնահարկ իջնող սանդուխթի հետքեր (տես գծ. 6):

Որո՞նք են դրանք: Արևելակողմի ուղղանկյուն կառուցվածքի ներքնահարկի արևմտակողմի պատը՝ տաճարի արևելակողմի հիմնապատն է: Ընդհանուր պատի վերին եզրի վրա (տես նկ. 7) հինգ տեղ հատուկ ձևի փորվածքներ կան, որ նկատելի են դառնում ուշադիր նայողին միայն, առաջին հայացքից թվում է, թե նրանք քարի վնասվածքներ են: Հիշյալ փորվածքներից երկուսը՝ հյուսիսային և մյուս երկուսը՝ հարավային ներքնահարկերն իջնող փայտյա սանդուխթների թեք հեծանների (կասաուրների) տեղեր են, և փորված են համապատասխան թեքությամբ (Տես. նկ. 9 և 10): Ըստ որում, հիշյալ սանդուխթների կիպ կպած են եղել ներքնահարկի սենյակները միմյանցից բաժանող հոծ միջնապատի կողերին: Հիշյալ հոծ միջնապատը, ինչպես երևում է հատակագծում, ունի երկու բացվածք, մեծերը ևս այլն է՝ հատակագծում 190×160 սանտիմետր չափերի: Տաճարի հատակի մակարդակի վրա ծածկ են ունեցել, ինչպես ողջ ներքնահարկը (իջնող սանդուխթների սահմանների բացառությամբ), այնպես էլ միջնապատի բացվածքները: Եվ ա՛հ, վերոհիշյալ հիմնապատի վերին եզրի վրա հետքեր կան նաև այդ բացվածքի ծածկի համար: Այդ հետքերից մեկը (տես. նկ. 8) միջնապատի ճիշտ առանցքի վրա է, որտեղ փորվածքի ձևով պահպանվել է հիշյալ առանցքի ուղղաձիգ հետքը, ինչպես նաև երկու այլ ուղղա-

ձեռք գծեր՝ մյուս փորվածքների առանցքով: Հետքերից մյուս երկուսը միջնապատի երկուս: Գրուխքների հեծանների փորվածքներին, բայց ոչ նրանց նման թեք, այլ հորիզոնական հատակով (որովհետև ներքնահարկի ծածկը եղել է հորիզոնական): Ուրեմն, բացվածքի 160 սանտիմետր լայնությամբ ծածկը ունեցել է երեք հեծան: Հիշյալ փորվածքները մեծ խորություն չունեն, քանի որ նրանց վրա, մոտ 15 սմ. հաստությամբ եղել է տաճարի սալահատակը, որ այժմ չկա, նրա վրա եղել են հիշյալ փորվածքների վերին մասերը:

Թթի ներքնահարկ իջնող սանդուխտները, որ բնականորեն կարող էին լինել քարակերտ, բայց եղել են փայտից, ապա պետք է եզրակացնել, որ վերեմանակ տաճող սանդուխտները եղել են փայտից, և սկսվել են հենց ներքնահարկի փայտյա ծածկի վրայից (տես. գծ. 4): Թերևս նրանց հաջորդ հարթակների հեծանների հետքերը պիտի մնային պատերի վերնամասերի վրա, այն պատերի, որոնք սակայն հիմա չկան:

Վերահարկ տանող սանդուխտների փայտից լինելու մտքից խորշելու, և կամ այն «անպատշաճ» համարելու որևէ հիմք չկա: Կան փայտի տեսակներ, որ շատ երկարակյաց են, հետևաբար նրանց գործադրությամբ պատրաստված սանդուխտները ժամանակավոր համարելը արգարացի չէ թերևս:

Որոշ պալատական, շքեղ դղյակներում և մենատներում փայտե սանդուխտը շքեղության նշան էր: Նույնիսկ մեր մոտավոր անցյալում փայտից էին կառուցվում բազմահարկ շենքերի սանդուխտները: Այդ հարմար և հասկանալի է նաև այս դեպքում. չէ՞ որ այդպիսի թեթև կառուցվածք ունեցող սանդուխտին հատկացված սննդակները հնարավոր էր, որ օգտագործվելիս լինեին նաև այլ՝ սպասարկող, օժանդակ նպատակների, մի բան, որ չէր ստացվի քարե մասսիվ աստիճանների դեպքում:

Հետազոտող Մնացականյանը փայտե սանդուխտ ասածը, անհասկանալի է թե ինչ-


ու, միշտ «շարժական» է պատկերացնում և ինքն էլ այդպիսին անվանում «անտարամաբանական»:

Եզրակացությունը պարզ է: Հետազոտողներից նրանք, ովքեր կանխակալ կերպով համոզվել են, որ տաճարի ասուշին աստիճանում վերահարկ չի եղել, որ այն «մտացածին է, առաջ քաշված թորամանյանի կողմից», հակառակ բաղմամբիվ փաստերի՝ անհիմն կերպով փորձում են արևելակողմի ուղղակյուն կառուցվածքը հետագայում տաճարին կպցրած համարել, բացառելով այնտեղ սանդուխտների երբեմնի գոյությունը ևնթադրելու նհարավորությունը:

Բլորրակ սրահի երկրորդ հարկաբաժնի հատակագծի վրա ցույց են տրված պտտտակաձև սանդուխտներ: Մեր համոզմամբ այդպիսին պիտի լինեին այն ուղիները, որոնք բլորրակ սրահի երկրորդ հարկաբաժնից մարդկանց պիտի տանեին, նախորդ հետազոտողների խոսքով ասված՝ այն «խուլ խորշերը, որտեղ մարդը չի կարող ոտք դնել»:

Մայր մուլթերի հետնամասի կիսաշրջանաձև խորշերում այդ սանդուխտներն այնպես են հարմարվում, որ թվում է, թե հիշյալ խորշերը թողնված են հենց միայն այդ նպատակի համար (տես գծ 5.): Ըստ որում, այդ խորշերը հիմքում ոչ թե սովորականի պես եռանկյունաձև են, այլ կիսաշրջանաձև, և չափերով համապատասխանում են այժմ կառուցվող պտտտակաձև սանդուխտներին:

Նման սանդուխտների գոյությունը բլորրակ սրահի նաև առաջին հարկում, անկախ անալոգիկ կիսաշրջան հիմքով խորշերի առկայությունը, չի ապացուցվում, քանի որ գոյությունը պահպանած բնտոնե զանգվածների մեջ սանդուխտի չափին համապատասխան անցքեր չկան: Պտտտակաձև սանդուխտների գործածությունը մեր տաճարաշինության մեջ սովորական երևույթ է, այդպիսիք կառուցվել են մեծ մասամբ քարե աստիճաններով հոծ պատերի ծավալի մեջ, տաճարների վերնամասերը բարձրանալու համար: Զգալիորոշի



Պժ. 6. Ներհեռահարկ ինչոզ սանգուլիսների հետքեր հիմնապատի եզրաշերտի վրա — շափագուրյուն

վերնահարկը բարձրացող սանդուխտի նման, այս պտուտակաձև սանդուխտները ևս՝ պիտի կառուցված լինեն փայտից:

Ինչպես երևում է վերնահարկի հատակագծից (տես գծ. 5), բոլորակ սրահի՝ երկրորդ հարկաբաժնում շկա և ոչ մի ժեսուլ խորշո, իսկ կոր պատուհաններից լույսը թափանցում է նաև տաճարի ներքին տարածությունը: Նույն հատակագծից երևում է նաև, որ այդ սրահի երկրորդ հարկաբաժնում հավաքված մարդիկ շուրջ 21 ընդարձակ բացվածքներով, կապվում են տաճարի կենտրոնական ընդար-

ձակ մասում տեղի ունեցող անցուղարձին, տեսնում ու լսում այնտեղի արարողությունն ու երգեցողությունը:

Կոնստրուկտիվ առումով՝ այստեղ անբնական-բռնազրոսիկ ոչինչ չկա. երկու կամարաշարերի համաձուլումը խաշաթների գազաթններում՝ սովորական երևույթ է և հեշտ իրագործելի:

Քորամանյանը, բոլորակ սրահի երկրորդ հարկաբաժնի՝ վերնահարկի գոյությունը հիմնավորում էր ավերակների հարավ-արևելակողմում մինչև այսօր պաշտպանված մեծ

զանգվածի մեջ պարզորեն երևացող պահանքի սովորականությունը:

Մեզ հայտնի չէ, թե ինչպե՞ս էին վերաբերվում այս իրական փաստին վերնահարկ շինողները մյուս հետազոտողները: Ինչ վերաբերում է Մնացականյանին նա գրում է. «այդ... իրենից ներկայացնում է մուլթի, արտիզների և թաղի հիմքը կազմող պատերի հատման հանգույցը»¹:


Այսպես թուղիկ և անըմբռնելի մեկ նախադասությամբ պատասխանը ոչինչ չի ստում. անլուրջ է վերաբերմունքը վեճի այդ սուր հարցում, միտքն անըմբռնելի է, որովհետև այն ճիշտ չի տրված, անհամապատասխան է իրերի ռեալ վիճակին, ինչ է նշանակում «...թաղի հիմքը կազմող պատերի հատման հանգույցը»: Թաղ ասվածը բոլորաձև սրահի ծածկի մասին է: Ինչպես հայտնի է Թորամանյանի վերակազմությունից, սրահի թաղի համար հիմք է ծառայում մեծաթուղի երկկող կամարաթաղը և ոչ որևէ պատ, ինչպես բերվում է վերոհիշյալ նախադասության մեջ: Իսկ մեծաթուղի երկկող կամարաթաղը (թվով ութ հատ) Ձվարթնոցում ըստեղծված են ոչ թե պատերով, այլ քարաբետոնազանգվածներով: Մնացականյանն իր աշխատության մեջ այդպես էլ ընդունում է: Եվ ոչ միայն ընդունում, այլ ենթադրելով, որ Թորամանյանն այդպիսիք պատկերում է ժապավենաձև կամարների ձևով, ճգնում է ապացուցել, իբր դրանք ոչ թե կամարներ, այլ «մեծաթուղի թաղեր են»:

Հարավ-արևելյան զանգվածի մեջ պահանջված պահանքների մնացորդները, ազդեաձև պատերի ձևով, տաճարի կանգուն ժամանակ գտնվել են ավելի բարձր դիրքում, վերնահարկի հատակի հարթության վրա և ոչ որևէ թաղի հիմքում, որտեղ դրա համար տեղ չկա: Ավերակի առկա բետոնազանգվածներում նրանք լիքն են:

Արդ՝ եթե Թորամանյանի վերոհիշյալ

իրական փաստը (հարավ-արևելյան զանգվածում պահարանի դուրսբեր) անբավարար է Մնացականյանի և մյուսների համար, ապա մենք հնարավորություն ունենք ներկայացնել մի այլ, նույնքան ակնհերև և առավել մատչելի փաստ:

Ահավաստիկ՝ հարավ-արևմտյան միակետուր բետոնազանգվածը Այս մասով հակառակի բեկորն իրենից ներկայացնում է հարավ-արևմտյան մուլթի և հարավային խաչաթևի վրա երբեմնի բարձրացած թաղը, որի վրա պահանջված է տաճարի այդ



Գծ. 7. Վերահանրի խաչի հատակագիծ, որի պեմզաբետոն հատակը պահպանված է հարավ-արևմտակողմի ֆաբրիկոնական զանգվածի գետնաճեղքի կողի վրա

մասում բոլորակ սրահը ծածկող թաղի կրունկի քարերի մեկ ամբողջական շարք: Այդ բեկորն այժմ ընկած է երբեմնի իր կանգուն վիճակին հակառակ՝ ցածի մասը վերև. և վերին մասը՝ ներքև: Իսկ ի՞նչ է իրենից ներկայացնում հիշյալ զանգվածի վերին (ավերակում՝ գետնահայաց) մասը. այն վերնահարկի եռանկյունաձև ներս ընկած մասի հատակն է (տես նկ.11), այն եռանկյունաձև մասի, որն ստացվել է հարավային խաչաթևի արևմտյան կիսահատվածով, հարավ-

¹ Տեղեկագիր № 4, 1950 թ. էջ 78. տես սողա-տակը:

արևմտյան մայր մուլթի հարավային կողով և տաճարի երկրորդ աստիճանի բոլորակ պատի հարավ-արևմտյան աղեղածև մասով (տես գծ. 7); Եվ ահա, այդ հատակն այժմ պահպանվում է տեղում: Հատակը պատրաստված է 10—15 սանտիմետր հաստության շաղախով: Երբ վերին երեսը հարթեցված է: Միաժամանակ՝ հիշյալ հարթությունը բեկորի ուղղածից դիրք ունեցող պատահատվածի հետ կազմում է ուղիղ 90 աստիճանի անկյուն (տես նկ. 12), և թեք չէ: Թեք լինելու դեպքում հնարավոր կհամարվեր տանիքի ծածկի հիմքը կարծվելու (ինչպես համոզում է Մնացականյանը): Հիշյալ զանգվածն ուշադիր զննելիս երևում է, թե ինչպես հատակը պարզորեն սահմանագծվում է այն խորրորդորդ մասից, որտեղ շարունակվել է մուլթը (տես նկ. 11):

Առավել կարևոր է, որ հիշյալ հատակ-հարթությունը պարզ նշմարվող բոլորածև եզրերից օղակաձև սրահի առաջին հարկաբաժնի ծածկը կազմող թաղի այժմ պահպանված կրունկաշարքից հեռու է այնքան, որքան այդ թաղի շուռավիղն է եղել և ծածկի հաստությունը նույն թաղի զազաթում, այսինքն, հենց այն բարձրության վրա, որտեղ նշվում է վերնահարկի հատակը:

Հարավ-արևմտյան քարաբետոնակուռ զանգվածի վրա պահպանված վերնահարկի հատակի գոյությունը, անառարկելի կերպով հաստատում է Քորամանյանի նախագծում ցույց տրված առաջին աստիճանի երկրորդ հարկաբաժնից գոյությունը, այլևս չտարվող որևէ տեղիք վերնահարկի հարցը վիճարանության առարկա դարձնելու:

Ավելորդ չէ նշել, որ հյուսիս-արևմտյան զանգվածը ևս, պահպանել է երկրորդ աստիճանի բոլորակ պատի հիմքը կազմող քարակոփ շարքի մի հատված՝ արժանի որոշակի ուշադրության:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ վերնահարկի և պահուսանի գոյությունը նույն վերնահարկի բարձրության վրա՝ անվիճելի է, և տվյալ խնդրում իրավացի է Քոր-

ամանյանը: Այս դեպքում ինչպես՝ համակերպել պահարանը կազմող խուլ պատերի առկայությունը ներկա աշխատության մեջ առաջարկվող վերնահարկի բոլորակ պատի կամարակապ բացվածքների հետ, ինչպես ցույց է տրված քննարկվող հարկի հատակագծում (տես գծ. 5): Բանն այն է, որ նման պահարանները ութ հատ շեն եղել (կամ 4 հատ երկուական բաժանմունքով), այլ ընդամենը՝ երկուսը, ըստ որում՝ միայն արսիդի երկու կողմերում՝ հարավ-արևելյան, որի հետքերը մնում են, և հյուսիս-արևելյան, որի հետքերը չկան: Այդպիսիք ստեղծվել են երկրորդ աստիճանի հիմքը կազմող բոլորակ խուլ պատով, մայր մուլթերով և խաշաթիկ համապատասխան դարձյալ խուլ պատով (արսիդի կողմում դեպի դահլիճ բացվող կամարաշար չկա, եթե լիներ էլ, կմնար անօգտագործելի, քանի որ արևելյան արսիդի վարագույրը նրա դեմ կծածկեր տաճարի ներքին տարածությունը):

Միանգամայն պարզ է, որ պահարան պարունակող քարաբետոնակոփ զանգվածներն ավելի մոտուլիտ պիտի լինեին և շինությունը փլվելու ժամանակ համեմատաբար լավ պահպանվեին, ինչպես պահպանվել է հարավ-արևելյան զանգվածը, քան մյուս զանգվածները, որտեղ վերահիշյալ խուլ պատերի փոխարեն եղել են մեծ բացվածքներով կամարաշարքեր՝ հետքերը չեն մնացել: Եվ որովհետև, կամարները կողմ միջուկ-պատերի եղել են հատակագծում ուղղանկյուն կանոնավոր քարերով շարված սյուների, ներքանց քարերը տարվել են այլ շինվածքներում նույն հաշտությանը օգտագործելու:

Զվարթնոցի վերակազմության նախագրծում վերնահարկի՝ հայտնագործումը՝ Քորա-

1 Ջորամանյանի է, թե ինչ ելուցների վրա է հիմնվում Մնացականյանը, երբ գրում է. «վերնահարկ չի եղել նաև Զվարթնոցի տիպի, շատ ավելի լավ պահպանված այնպիսի կառուցվածքներում, ինչպիսիք են Լյակիթր և Բանանո (տեղեկագիր № 4, 1959 թ. էջ 81):

Մնացականյանը Բանա տաճարը չի տեսել, քանի որ այն գտնվում է ժամանակակից Քուրդիայի պետական սահմաններում, իսկ պաշտոնական հրատարակություն-

յանյանի ամենամեծ գյուտն է, նրա խիզախ մտքի անառարկելի պայացույցը:

Կոր պատուհանների բազմաթիվ բեկորների առկայությունը կարող էր միտք ծնել, թե նրանք պատկանել են տաճարի երկրորդ

և երրորդ աստիճանների պատուհաններին, ինչպես ցույց է տրված Գազկաշենի մոդելում և Փարիզի Սեն Շապելի հարթաքանդակներում: Մինչդեռ Թորամանյանը այդպիսիք տեղավորել է վերնահարկում:

ՏԱՃԱՐԻ ԵՐԿՐՈՐԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՏԵԿՎՊԳԺԻ ԵՎ ԼՈՒՍՍՄՈՒԿՆԵՐԻ ՄՍՍԻՆ

Վերակազմության նախագծեր կազմողներին բաժանող ամենակարևոր բնագիծը տաճարի երկրորդ աստիճանի հատակագիծն է: Թորամանյանի նախագծի համաձայն, ներքին անփոփոխ բարձրացող խաչաթևերին փաթեթվում է երկրորդ աստիճանի թմբուկի բազմանիստ պատը իր շուրջ 32 պատուհաններով:

Կուզնեցովը գրում է, թե Թորամանյանի նախագծի վերաբնութայամբ պարզվում է, որ այդ 32 լուսամուտներից միայն 12-ն է, որ ծառայում են որպես այդպիսին (երթափական հատ ամեն խաչաթևում), որ մնացած 20-ը կույր են, քանի որ ընկնում են շրտ մուխ խորշերի դիմաց (խորշեր, որտեղ մարդը ոտք

ներում՝ ցույց է տրված վերահարկով (տես նկ. 40): Գոյություն ունի նաև թաղաքացիական ինժեներ Ա. Կալչինի վերակազմության նախագիծ, որտեղ բոլորակ սրահ է ցույց տրված ոչ միայն առաջին, այլ նաև տաճարի երրորդ աստիճանում:

Գրականության մեջ պահպանվում են անցած դարի ութսունական թվականների հետազոտող Դ. Զ. Բակրաձի ուսումնասիրության արդյունքները, որտեղ կարդում ենք. «Շուրջնակի գալերաններ կան ամեն մի յարուստում: Ոմանք ենթադրում են, ըստ Բակրաձի ստացված է երեք գալերան, մինչդեռ նրա օրագրում ուղղակի գրված է երկու գալերանների մասին: Այս մի կողմից ասում է, որ Բանան եղել է երկու յարուստի, և մյուս կողմից՝ որ երեսուձ եղել են երկու գալերաններ, հետևաբար՝ վերնահարկ:

Ինչ վերաբերում է Լյակիթին, որը ևս ավերակ վիճակում է գտնվում, վերակազմության նախագիծ չունի, ավերակի ուսումնասիրությունն էլ չի հաստատում, թե զուրկ է վերնահարկից: Մենք Լյակիթի համար տեսնում ենք վերակազմության երեք տարբերակների հնարավորություն, մեկը՝ զվարթնացանակ (տես գծ. 24), մյուսը՝ Բանայի նմանությամբ (տես գծ. 25), երրորդը՝ զուտ Լյակիթյան: Երեք տարբերակներում էլ որոշակորեն վերահարկ պետք է լինի:

չի կարող դնել), և ստացվել են ներքի խաչաթևերի և դրսի թմբուկի բոլորակ պատի համադրումից՝:


Այս մասին Մնացականյանը կրկնում է Կուզնեցովին, այն տարբերությամբ միայն, որ 12-ի փոխարեն օրինական է համարում 9 լուսամուտ: Նա պարզապես հիմնվում է Թորամանյանի կազմած կտրվածքի վրա, իսկ այնտեղ արտիդի խաչաթևի վրա չկան նաև այդ երեք լուսամուտները:

Որ Թորամանյանի հրապարակի վրա եղած կտրվածքից կարելի է նման եզրակացություն գալ, այդ հասկանալի է, թե ինչու և, օրնական, քանի որ նրա նյութերը հատաբար կվել են ոչ իր մասնակցությամբ, հետևաբար թե ինչու ոչ այնպես, ինչպես կլինե՞ր՝ եթե հրատարակեր անձամբ: Այժմ հրապարակի վրա են նրա փորձերն ու նախագծերի տարբերակները: Բնական հարց է առաջանում. ինչու՞ հետազոտողները չեն փորձել ճշտել կտրվածքը, կազմել հարկի հատակագիծը համաձայն ճակատի: Այսպես վարվելով, նրանք կհամոզվեին, որ Թորամանյանի կազմած տաճարի ճակատն ունի կտրվածքից անկախ միանգամայն բնական լուծում, և չկա ոչ մի խանգարող հասցամասք Ձվարթնոցն այդ ձևով պատկերելու:

Սույն աշխատության առիթով մշակված տաճարի երկրորդ աստիճանի հատակագծից (տես գծ. 7) երևում է, որ իրական են բոլոր 32 լուսամուտները, չկան մուխ խորշեր: Վերնահարկից բարձրացող պտուտակամաև սան-

¹ Тектоника и конструкция центральных зданий. М. 1951 г.

² Տեղեկագիր № 4, 1959, էջ 77:



Գծ. 8. Զվարթնոցի երկրորդ աստիճանի հատակագիծ

գովիքները հնարավորություն են տալիս մարդուն, շատք դնելու ամեն խորը և ամեն տեղ, որտեղ նա կամենում է:

Կոնստրուկտիվ առումով այստեղ ևս անսովոր հանգույցներ չկան: Խաչաթևերի գազաթևերի այն մասերում, որտեղ համադրվելիս, ձուլվում են ներքին ու արտաքին պատերը, պատուհանների բացվածքների էջերը փոքր-ինչ այլ թեքվածք են ստանում, մի բան, որ բոլորովին էլ անսովոր չէ մեր տաճարաշինության մեջ: Մանավանդ որ բացվածքի եզրագծերը, թե՛ թմբուկի պատի արտաքին, և թե՛ ներքին խաչաթևի զոգավոր հարթությունների վրա մնում են հարևան մաս մյուս, սովորական պատուհանների բացվածքների շափերին ու ձևերին:

Տաճարի երկրորդ աստիճանի այս նոր հատակագիծը գալիս է ժխտելու Ա. Կուզնեցովի և Ս. Մնացականյանի նաև վերահիշյալ կովանը և առիթ չի տալիս վերակազմության մի այլ նախագիծ ստեղծելու անհրաժեշտության:


Քորամանյանի վերակազմությանը տաճարի երկրորդ աստիճանը ևս, ինչպես և առաջինը, արտաբուստ 32 էջից կազմված մի բազմանիստ թմբուկ է մոտ 26,16 մ. արտաքին տրամագծով և յոթ մետր բարձրությամբ:

Թմբուկի արտաքին հարդարանքը կազմում է ղեկորատիվ սյունակամարաշարքը— մեկական սյուն բազմանկյան յուրաքանչյուր անկյունում և մեկական պատուհան յուրաքանչյուր նիստի վրա:

32 լուսամուտներից 28-ը լուսավորում են տաճարի ներքին տարածությունը, իսկ մյուս 4-ը՝ մայր մույթների հետնամասի պտուտակաձև սանդուխքները (տես գծ. 8): Դոկտոր Կուզնեցովի էքզիզ-առաջարկում իր հիմքում, և ընդհանրապես, տաճարի երկրորդ աստիճանն այլ պատկեր ունի և ոչնչով նման չէ Քորամանյանի նախագծին: Այստեղ տաճարի ներքին խաչաձև կազմությունը ոչնչով չի պարուրված և ամբողջությամբ զրսևորված է արտաքին պատկերում (տես գծ. 1): Ահավա-


սիկ մայր մույթներով ու դմբեթակեր կամարներով ստեղծված քառակուսի հատակագիծը! Խորանարդը և շրջա նիստերից յուրաքանչյուրի վրա նկարված շրջա կիսաբոլորակ արսիդները, ավարտված կիսակոնուսաձև տանիքներով:

Դոկտոր Կուզնեցովի և ճարտարապետ Մնացականյանի մոտ տաճարի երկրորդ աստիճանի հատակագծերի պարագծերը բոլորովին նույնն են (տես գծ. 9):



Գծ. 9. Տաճարի երկրորդ աստիճանի ճատակագիծը պարագիծը ըստ Կուզնեցովի (1931 թ.) և ըստ Մնացականյանի (1959 թ.)

Ի՞նչ կոնկրետ փաստերով է Մնացականյանը պնդում, թե տաճարի երկրորդ աստիճանը եղել է խաչաձև-քառասրիդ նրա աշխատության երկրորդ մասում (տեղեկագիր Մ 9, 1959 թ., էջ 70—71) տեղադրված են երկու լուսանկար (նկ. 11 և 12): Հեղինակի ասելով առաջին լուսանկարը պատկերում է երկրորդ աստիճանի կամարաղեղը և լուսամուտի վերին մասը (տես նկ. 13) և բռնում է [կիսաթմբուկի] նիստերից մեկի ողջ լայնությունը՝ մոտ 225 սմ., այսինքն՝ այնքան, որքան կազմում է տաճարի առաջին աստիճանի սահմաններում խաչաթևը կազմող սյուների առանցքների միջև եղած թիվը՝ նրա դրսի կողմից: Սրանով էլ նա փորձում հաստատել, թե ողջ խաչաթևը, հետևաբար նաև ճարտարապետորեն ձևավորված նիստերը, բարձրացել են առաջին աստիճանի



Գծ. 10. Տանոթի երկուսդ աստիճանի կամարաղբի անկյունաձևի և կամարաձևի շափագրություն

խառնվել վրա և չէին կարող ծածկվել բուրբակ թմբկապատով: Եվ ահա, այդ նպաստակով էլ, նոր վերակազմութայան հեղինակը հիշյալ կամարաղեղի քարերի ընտրությունը և կիսաշրջանաձև դասավորումն այնպես է կատարել, որ կամարի երկու կրկաքարերը առանցքների միջև ստացվել է իր ցանկացած շափուր: Սակայն վերահիշյալ լուսանկարը պարզում է, որ այդ ձևով, այդ նույն քարերով հնարավոր էր կամարաղեղ կապել 225 սանտիմետրից շատ ավելի մեծ թռչքով: Այստեղ Մնացականյանը կողք-կողքի դասավորել է պատահական քարեր, և նույնիսկ քարերից մեկը որևէ կամարաղեղի չվերարբորդ: Այս կամարը բոլոր կարերում բեկվում է դեպի ներս: Հետևաբար այդ քարերը ակնբերակաբար պատկանում են ավելի մեծ կամարաղեղի:

Ուսումնասիրվող կամարաղեղի ճշգրիտ շափուր որոշելու նպատակով, մեր կողմից կատարված շափագրությունը պարզվում է, որ այն իսկպպես պատկանում է տաճարի երկրորդ աստիճանին, սակայն ոչ Մնացականյանին, այլ Քորամանյանի առաջարկած վերակազմության նախագծի համաձայն:

Նկատի ունենալով, որ մի քանի, այն էլ պատահական, քարերով դժվար է ստեղծել լիակատար կամարաղեղ, և որ նրա երկու ծայրերում տեղ գտած անկյունաքարերի առանցքների միջև ստացվող շափուր չի կարող հավատ ներշնչել թե արդյունքը ճշմարիտ է, որոշեցինք այդ տվյալը ստանալ առանձին քարերի, տվյալ դեպքում համեմատաբար լավ պահպանված անկյունաքարերի շափագրման միջոցով (տես գծ. 10):

Ավերակում պահպանված այդպիսի մի քանի անկյունաքարերի կամարաղեղ կազմող երկուական եզրերի երկարությունը (b), շափված ուղղագիծ լարով, ամենուրեք ստացվում է 54 սանտիմետր, իսկ կորուսյալ սլաքը (ս)՝ 3,4 սանտիմետր: Այս տվյալներով աղեղի ներքին կորուսյալ շառավիղը (Շ) ստացվում է՝

$$\tau = \frac{\left(\frac{b}{2}\right)^2 + 0,2^2}{2 \times 0} = \frac{\left(\frac{54}{2}\right)^2 + 3,4^2}{2 \times 3,4} = \frac{729 + 11,6}{6,8} = 109$$

սանտիմետր, իսկ տրամագիծը՝ 218 սանտիմետր: Այս թվին ավելացնելով անկյունաքարի լայնքի կեսը կրկնակի շափով ստանում ենք անկյունաքարերի առանցքների միջև եղած շափուր՝ $218 + (2 \times 19) = 256$ սանտիմետր: Ահա հենց այս էլ հանդիսանում է տվյալ կամարաղեղով բնորոշվող նիստի լայնքը:

Այսպիսով հաստատվում է, որ Մնացականյանի կազմավորած կամարաղեղի քարերը պատկանում են Քորամանյանի վերակազմության երկրորդ և երրորդ աստիճանների թմբուկների նիստերին, որոնց լայնքը 255 սանտիմետր է:

Վերահիշյալ գծաչափերի հետ միաժամանակ Մնացականյանը պնդում է, թե կամարաղեղի անկյունաքարերի «թեքագիծ կողերով կազմված անկյունը հավասար է 156 աստիճանի, այսինքն՝ ունի ճիշտ այնպիսի բացվածք, ինչպիսին ունի արտիղների սյունների կենտրոնները միացնող գծով կազմված անկյունը»: Վերջում հեղինակը հետևեցնում է. «Այս ամենը ամփոփելի կերպով ապացուցում է, որ տաճարի երկրորդ յարուսն ունեցել է ոչ թե շրջանաձև, այլ տետրակոնիխասյին կոմպոզիցիա»:

Այստեղ ևս մենք գործ ունենք ռեալ փաստի աղավաղման հետ: Ինչպես երևում է լուսանկարում այս անկյունաքարերի թեքագիծ կողերը ամենևին էլ չեն արտահայտում հարևան նիստերի միջև ստեղծվող հորիզոնական անկյունը:

Վերահիշյալ կամարաղեղի ունի որոշ պրոֆիլ, որն իր լրիվությամբ չի հասնում կրկաքարին-անկյունաքարին, ավարտվում է ավելի վաղ, շարունակվում է պրոֆիլի ներքին մասը միայն: Պրոֆիլի այդ մասը գալաձև զարդաշեղթուն է, որը, աղեղի ցած իջնելուն զուգընթաց լայնությամբ նեղանում, հետևաբար թեքվածությունը դեպի ներս խըս-

ասանում է: Այս անկյունաքարի վրա չկա մի գիծ և կամ որևէ հարթութիւն, որ զուգահեռ լինի թմբուկի որևէ նիստի հարթութիւնը: Քերտ կարելի լինէր անկյունը որոշել՝ այդ անկյունաքարի պատի (նիստի) հարթութեանը ուղղահայաց երես զնացող ծալա-վեհեռակ շերտով: Սակայն այդ էլ հնարավոր չէ, նրանց իրական վիճակի պատճառով, կառուցողների մոտ նպատակ չի եղել ուշագիւր լինել նրանց տաշվածքի ճշտութեանը, քանի որ այդ քարերը իրենց մեծ մասով մնացել են պատի շարվածքի մէջ:

Այսպիսով պարզվում է, որ մեկ առանձին վերցրած անկյունաքարով բոլորովին հնարավոր չէ որոշել հարևան էջերով կազմված անկյունաշափուր: Մնացականյանը պարզապէս բաճաճորին վերահիշյալ անկյունաքարին վերագրում է իրեն անհրաժեշտ անկյան շափուր՝ 156°-ը: Այսպիսով, հետազոտողի կողմից կատարվում է երկու սխալ. առաջին սխալն այն է, որ նա անկյունաշափուր է որոշում այն ժամանակ, երբ անկյունաքարի էջերը զգալա-ձև զարդաթանդակի կորածն եզրեր լինելով, անհնար են դարձնում ճշգրիտ անկյունաշափ որոշելուն: Երկրորդ սխալն այն է, որ նույն ասցնում է անկյունաքարի և հարևան նիստե-րով ստեղծվող անկյունները:

Տաճարի երկրորդ աստիճանի հարևան նիստերով առաջացած անկյունը եղած կամարա-քարերի օգնութեամբ ճիշտ որոշելու համար իր կողմից՝ կատարվեց նոր շափագրութիւն հետևյալ ձևով (տես. գծ. 10)՝

Ուսումնասիրվող կամարաղեղի ձախ ան-կյունաքարի և անմիջապէս կից կամարաքարի ինչպէս վերին, այնպէս էլ ներքին եզրե-րը համապատասխանաբար մի գծի բերելով, ուղղահայեցիկ օգնութեամբ դարձվեցին զուգահեռ՝ երկու անկյունաքարեր միացնող գծին: Այս, անկյունաքարի ներքին աջ եզ-րի և անկյունաքարեր միացնող գծի միջև եղած տարածութեան շափուր կրկնելով նույն անկյունաքարի ներքին ձախ եզրի վրա, հիշ-

յալ երկու կետերը ուղղագծով միացնելով անկյունաքարի անկյանը, շափվեց ստացված անկյունը, այն ունեւր 169°-ի բացվածք. ահա այդ էլ հանդիսանում է թմբուկի հարևան նիստերով ստացված անկյունը:

Ինչպէս հայտնի է, Քորամանյանի վերա-կազմութեամբ, տաճարի երկրորդ աստիճա-նի 32 նիստեր ունեցող թմբուկի հարևան նիստերի միջև ստացվող անկյունը հավասար է 168°45' -ի:

Ահա և քննարկվող կամարաղեղի նոր շա-փագրումների տվյալներով հնարավոր է դառ-նում հավաստել, որ Զվարթնոց տաճարի երկրորդ աստիճանը ևս, ինչպէս նրա առաջին աստիճանը, հիմքում եղել է բոլորաձև, այն-պէս, ինչպէս պատկերված է Քորամանյանի ստեղծած վերակազմութեան նախագծում:

Չետևաբար նոր վերակազմութեան հեղի-նակի այս ապացույցը ևս լիակատար չէ և իրավունք չի տալիս սրա հիման վրա հայտա-բարել, թե տաճարի երկրորդ աստիճանը եղել է աստորակոնիխսային:

Նոր վերակազմութեան հեղինակի մյուս կովանը, որով փորձում է ապացուցել տա-ճարի երկրորդ աստիճանի խաչաձև լինելը, քիվիբի համագրութեան է: Դեռևս 1957 թվա-կանին ԳԱ. Արվեստի սեկտորում զեկուցե-լիս, Մնացականյանը պնդում էր թե քիվը բեկորներից հնարավոր է դարձնել ստեղծել բո-լորակ մի շարք, որի շառավիղը համապա-տասխանում է խաչաթևի շառավիղին: Այդ ժամանակ ևս չէր նկատում, որ այդ քարերը նույն հաշուովութեամբ կարող են պատկանել տաճարի գմբեթին, և ոչ խաչաթևին, չէ՞ որ նրանց շառավիղների տարբերութիւնը բավա-կան փոքր է: Այժմ Մնացականյանն ինքն է ասում. «Սակայն, ինչպէս ցույց է տալիս շա-փագրութիւնը, համարյա թե նույն շափուր ունի նաև գմբեթի շառավիղը: Այս պայմանե-րում խիստ դժվար է տարբերել գմբեթի և երկրորդ յարուսի խաչաթևի քիվերի քարե-րը...»:

Այս անգամ արդեն Մնացականյանը դի-մում է ոչ թե շառավիղներին, այլ բուն քիվե-

1 Թեմաներ Մ. Մարտիրոսյանի մասնակցութեամբ:

րի մշակման մանրամասներին, որ իբր ավերակում հայտնաբերվել են նույնանման քիվերի երեք տարբերակներ, որոնցից յուրաքանչյուրը պատկանել է տաճարի աստիճաններից մեկին: «Առաջին տիպը,— գրում է Մնացականյանը,— դա առաջին յարուսի քիվերն է, նրան համապատասխանող շառավիղով և ներքևի մասի համեմատաբար ավելի հաստ կիսագլանով: Մյուս երկու աստիճանների քիվերի մասին գրում է. «...Դա նույն շառավիղն ունեցող, սակայն վերնասայերի տարբեր մշակումների քիվերի առկայության փաստն է, երբ մի քանի քարի վրա վերնասայը մշակված է քառակուսի շրջանակի մեջ առնված զարդաձևերով, իսկ մյուս քարերում այդ քառակուսուն փոխարինել է արդեն ձգված ուղղանկյուն շրջանակը», այպա «Ամենայն հավանականությամբ ուղղանկյուն շրջանակներով ձևավորված քարերը պատկանել են թմբուկի քիվին, իսկ քառակուսի շրջանակներով ձևավորվածները (որոնք, ըստ էության, կրկնում են առաջին յարուսի քիվի ձևերը), առաջին (պետք է լինի՝ երկրորդ—Տ. Մ.) յարուսին»:

Զվարթնոցի ավերակում անվնաս մնացած քիվի քարեր չկան: Ընկնելով մեծ բարձրությունից, նրանք վնասվել են, քիչ ղեպքերում՝ մասամբ, կոտորատվել ու փշրվել են՝ մեծ մասամբ: Այնպես որ նրանց լիակատար չափագրումը դժվարությամբ է կատարվում, որոշ ղեպքերում, նույնիսկ, չի հնչողվում:

Առանձին ընկած քիվի վերնասայը, կիսագլանը և կամ որևէ հատվածը, չի բնորոշում ամբողջական քիվի լիակատար պատկերն ու բոլոր չափերը: Մյուս կողմից՝ քիվերի ոչ բոլոր քարերն են նույն որակով ու ճշրտությամբ տաշված, և այդ անհրաժեշտ էլ չի եղել, նրանց դիրքը տաճարի վրա, վերելում, չի առաջադրել նման պահանջներ: Այս հանգամանքն իր հերթին դժվարացնում է ճշտիվ որոշել քիվերի, հատկապես կորուսյան շառավիղները: Այսպես օրինակ՝ քիվի նույն քարի վերնասայի կորուսյան շառավիղն այլ է, կիսագլանինը՝ այլ, գլանատակի (քարի

բարձի) անկյունաձև տաշված մասինը՝ այլ, և այն էլ զգալի տարբերություններով:

Տարբեր արդյունքներ են տալիս քիվի պրոֆիլի նույն մասերն իրենց տարբեր հատվածներում. օրինակ կիսագլանի մի ծայրից տարած շղահիղը մի կորուսյուն է բնորոշում մյուս ծայրից տարած շղահիղը՝ զգալի շափով այլ, այն էլ այն ժամանակ, երբ քարի ճակատն ընդամենը 50—70 սանտիմետր է:

Զգալի տարբեր չափեր ունեն նաև քիվերի տարատեսակները բնորոշող զարդաքանդակների շրջանակները վերնասայերի վրա, զամբյուղաձև հյուսվածքը, կիսագլանը և այլն: Օրինակ՝ քիվի վերնասայի բարձրությունը մերթ 27, մերթ 28 և նույնիսկ 30 սմ. է, զարդաքանդակների ուղղանկյուն և քառակուսի շրջանակների հորիզոնական չափերը պատահում են՝ 22, 23, 24, 26, 27, 28, 29, 30, 31 սանտիմետր: Զամբյուղաձև հյուսվածքները՝ 13.5, 14.1, 14.3, 14.5, ըստ որում զամբյուղաձև մերթ ուղղանկյուն է, մերթ շեղանկյուն է կիսագլանը, ավելի ճիշտ՝ $\frac{1}{2}$ գլանը՝ 8, 8.5, 9, 10 սմ. և այլն:

Նկատելի է սակայն, որ մոտավորապես հաստատուն են քիվի ընդհանուր չափերը, ըստ որում բարձրությունը հավասար է զուրկ կարկանդակների (նորմալ դրվածքի ղեպքում — բազմանկյունաձև թմբուկի անկյունային մասում) և այդ թիվը մոտավորապես 52—53 սանտիմետր է: Գրեթե ամենուրեք 37 սանտիմետր է կողովահյուս քանդակի շերտի լայնությունը քիվի վրա:

Ահա այս պայմաններում, մեծ բծախրնդրությամբ և անկանխակալ պրպտումն ու չափագրումը միայն կարող են ճիշտ արդյունքի բերել, որոշելու թե քիվի ո՞ր բեկորն ինչ շառավիղով կոր է բնորոշում, որպեսզի հնարավոր լինի համոզված ասել, թե ինչ տրամագիծ են ունեցել հիշյալ քիվերով պսակված տաճարի աստիճանները կազմող թմբուկները:

Այս ուղղությամբ կատարված աշխատանքի արդյունքը հետևյալն է. ավերակում հայտնաբերված են քիվերի ավելի քան 30 քար և վնասված բեկոր, որոնցից ուսումնասիրու-

թյան և շափագրության համար պիտանի են 20-ը: Բեկորների բազմակողմանի ուսումնասիրությամբ պարզվում է, թե ո՞ր բեկորը տաճարի ո՞ր աստիճանի թմբուկն է պահպել: Այս խնդրին լիակատար որոշակություն են տալիս համեմատարար լավ պահպանված բեկորներից հատկապես 13-ը. նրանցից 3-ը պատկանում են տաճարի առաջին աստիճանին, 4-ը՝ երկրորդ աստիճանին, և 6-ը՝ երրորդ աստիճանին: Ահա այդ քարերի շափագրության որոշ մանրամասներ. ավերակի հարավակողմում պահպանվում է քիվի մակ՝ քար, և ունի սև գույն, նրա վերնասալի քանդակների շրջանակների ուղղաձիգ շափը 27 սանտիմետր է, իսկ հորիզոնական շափը՝ 24. ուրեմն, կոմպոզիցիան ուղղաձիգ է: Քիվի ներքնամասի կիսազանր բացված կիսաշըրջան է՝ շափը լայն մասում՝ 9—10 սանտիմետր: Քարի լայնքը 700 միլիմետր է, իսկ կրության սլաքը վերնասալի վրա՝ 3—4 միլիմետր, կիսազանրի վրա և նրանից ցած՝ անկյունային մասում՝ 3—3,5 միլիմետր: Այս սովորյալ պարզվում է, որ քիվի այդ բեկորի օղիղը կազմվել է

$$\frac{\left(\frac{700}{2}\right)^3 + 3,3^3}{6,6} = \frac{122511}{6,6} = 18560 \text{մմ} = 18,56 \text{մ.}$$

18,56 մետրանոց շառավղով (տրամագիծն ստացվում է $18,56 \times 2 = 37,12$ մետր): Եվ թանի որ տաճարի առաջին աստիճանի թմբուկը իր վերնամասում ունի 36.06 մետր տրամագիծ, իսկ քիվի դուրս կառկառվածքը հավասար է 52—53 սանտիմետրի, ուրեմն՝ $36,06 \div 2 \times 0,53 = 37,12$, Հետևաբար այս քարն անվրայ պատկանում է տաճարի առաջին աստիճանի քիվին: Այդ նույն քիվին պատկանող մյուս երկու քարերի մանրամասն շափագրության արդյունքը նույնն է, շառավիղները ստացվում են 18,56 մետր և 18,40 մետր:

Ստորև նկարագրվող տաճարի երկրորդ աստիճանը կազմող թմբուկը պսակող քիվի շրջա բեկորներից մեկը ավերակի հարավ-

արևելյան կողմում է գտնվում և պատրաստված է կարմրավուն տուֆաքարից: Քիվի վերնասալը չկա, գլանի տրամագիծը 9—10 սանտիմետր է, գլանի պահպանված 70 սանտիմետր երկարության վրա կրության սլաքը 4—5 միլիմետր է: Համաձայն բանաձևի ըստացվում է, որ սլաքի հիշտ շափը 4,5 միլիմետր է, այս դեպքում կրության շառավղը կազմում է $\frac{350^3 + 4,5^3}{9} = 13613 \text{մմ} = 13,61$

մետր (տրամագիծը ստացվում է $2 \times 13,61 = 27,22 \text{մ.}$): Հայտնի է, որ թորամանյանի վերակազմությամբ տաճարի երկրորդ աստիճանի թմբուկի տրամագիծը հավասար է մոտ 26,16 մետրի, քիվի դուրս կառկառվածքը $2 \times 53 \text{մմ}$, ստացվում է՝ $26,16 + 1,06 = 27,22$ մետր, հիշտ և հիշտ վերջ ստացված 27,22 մետր տրամագծի շափը: Ահա այստեղ ևս անվիճելի է, որ շափագրված բեկորը պատկանել է տաճարի (թորամանյանի վերակազմությամբ) երկրորդ աստիճանի քիվին:

Այս նույն քիվին պատկանող մյուս երեք բեկորների մանրամասն շափագրության արդյունքները բոլորովին նույնն են, ինչ որ նախորդ բեկորինը:

Հատկապես վերոհիշյալ շրջա բեկորների առկառությունն ավերակում կասկած չի թողնում, որ տաճարի երկրորդ աստիճանը դրսից եղել է նույնպես բոլորակ թմբկաձև, ինչպես վերակազմվել է թորամանյանը, և ոչ խառնաձև, ինչպես ներկայացնում են Կուլնեցովն ու Մնացականյանը:

Երրորդ աստիճանը կազմող գմբեթաձև թմբուկի քիվին է պատկանում ավերակի հարավ-արևելակողմում ընկած սև տուֆաքարից պատրաստված բեկորը, որ համեմատարար լավ է պահպանված: Վերնասալի քանդակի շրջանակների հորիզոնական շափը հասնում է 31,32 սանտիմետրի, գլանի տրամագիծը 9 սանտիմետր է, երկարության ուղղությամբ՝ քայքայված: Կրության սլաքը պահպանված 60 սանտիմետր երկարության վերնասալի վերին եզրում՝ 5—7 միլիմետր է, 6,5 միլիմետր

ընդունելու դեպքում՝ կորուսյալ շառավիղը ստացվում է 6,93 մետր:

Հայտնի է, որ Փորամանյանի վերակազմությանը գմբեթաթմբուկը կազմված 16 նիստերով, ունի 6,54 մետր շառավիղ (13,08 մ. տրամագիծ) հետևաբար, վերոհիշյալ բեկորի ընձեռած տվյալներով (քիվի դուրս կառուցվածքի ավելացումով) ստացվող 7 մետր շառավիղը (14 մետր տրամագիծ), ցույց է տալիս հիշյալ բեկորի պատկանելը գմբեթաթմբուկի քիվին:

Հետաքրքիր է մի այլ բեկոր, որի սալի վրայի շրջանակի հորիզոնական չափը 27 սմ. է, զլանի տրամագիծը՝ 8,5 սմ., մինչդեռ կորուսյալ սյաքը 50 սմ. երկարության բեկորի վրա 4,5 մմ. է: Շառավիղն ստացվում է 6,95 մետր: Այսպիսով պարզվում է, որ բեկորը պատկանում է գմբեթաթմբուկին: Վերնասալի շրջանակը, որ 30-ի փոխարեն 27 սմ. է, չափտի շփոթեցնի, քանի որ նման երևույթը անբնական չէ:

Քիվերի բեկորների վերոհիշյալ մանրամասն նկարագրությունից բխում է մի պարզ եզրակացություն, որ առաջին աստիճանի թմբուկի քիվին են պատկանում այն բեկորները, որոնք ունեն համապատասխան կորուսյալ շառավիղ—մոտ 18,56 մ., ինչպես 'և այն, որ նրանց վերնասալերի զարգացանդակների շրջանակների հորիզոնական չափերն են՝ 22, 23, 24 սանտիմետր:

Տաճարի երկրորդ աստիճանի թմբուկի քիվին են պատկանում այն բեկորները, որոնց կորուսյալ շառավիղը կազմում է մոտ 13,03 մ., իսկ վերնասալի շրջանակի հորիզոնական չափերն են 26, 27, 28 սմ.:

Գմբեթաթմբուկի քիվին են պատկանում այն բեկորները, որոնց կորուսյալ շառավիղը մոտ 7 մետր է, իսկ վերնասալի քանդակների շրջանակների հորիզոնական չափերն են՝ 29, 30, 31 սմ.: Այստեղ առկա է այն օրինաչափությունը, որ վերնասալերի վրայի զարգա-

քանդակների շրջանակները վերին քիվերում գնալով երկարում են, այսպես. Եթե առաջին աստիճանում նրանք ուղղանկյունի են ձրգված վերև, երկրորդ աստիճանում բառակուսի են, երրորդ աստիճանում ուղղանկյունի, արդեն պտտված, ձգված հորիզոնական ուղղությամբ: Այս միջոցառումն է վերջո բերում է այն բանին, որ հաստության համասար չափ ունեցող վերնասալերը, դիտողական տեսակետից գնալով վերև, բարակում են, զրեթի բարակում են նաև դլանները:

Ինչպես նկատեցինք, վերնասալերի քանդակների շրջանակներն ունեն տարբեր չափեր, նույնիսկ ամեն մի քիվում, և այդ բնական երևույթ է, օրինակ՝ եկեղեցաշինության մեջ և նույնիսկ մեր օրերում, մեր շինարարական առօրյայում որևէ շինության ատամնաշար քիվը կառուցելիս պատահում է, երբ մինչև շենքի անկյունը հասնելը կոր թվով ատամներ և կամ ընդմիջումներ չեն ստացվում, այդպիսի դեպքերում ստիպված ենք լինում քիվի մի զգալի հատվածում փոքրացնել կամ մեծացնել մերթ ատամները, մերթ ներանց ընդմիջումները: Այդպես էլ Զվարթնոցում, որտեղ դրություն ավելի բարդ է, քիվը կորագիծ է և հաշվում համեմատաբար դժվար, կառուցման ընթացքում առաջացող ակամա խախտումներն ա փոփոխությունները, ավելի զգալի Դրությունից դուրս գալու համար ընդունված որոշ չափեր խախտվել են մերթ երկարացնելով, մերթ կարճացնելով:

Քիվերի բեկորների զգալի մանրամասնությունը կատարված հետազոտությանը հաստատվում է այն, որ Զվարթնոցի երկրորդ աստիճանը եղել է բոլորակ-թմբկաձև, մոտ 26,16 մետր տրամագծով: Սրանով հենց թխտվում են տաճարի երկրորդ աստիճանը խաչաձև ներկայացնելու բոլոր փորձերը, «ապացույցներն» ու եզրակացությունները, որոնք հիմնված են քիվի բեկորների անճիշտ չափագրությունների տվյալների վրա:

ՏՄՃԱՐԻ ԵՐՐՈՐԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՄԱՍԻՆ


Քորամանյանի վերակազմության նախագծով (տես նկ. 1) տաճարի երրորդ աստիճանը հանդիսացող գմբեթաթմբուկը զբոսից դարձյալ բազմանկյունի է, արգեն 16 էջից բաղկացած:

Թմբուկը բոլորող սյունակամարաշարը իր քայլով և էլեմենտներով կրկնում է տաճարի երկրորդ աստիճանի սյունակամարաշարը: Երրորդ աստիճանի բարձրությունը 7,20 մետր է: Ինչպես ասվեց վերևում, վարդապետ Խ. Դադյանը նախագծի կտրվածքից ինքնակամ կտրել հասել էր գմբեթալի մասը: Մեզ հայտնի չէ նաև, թե ճարտարապետ Ք. Տեր-Սարգսյանն ի՞նչ կարգի անհամաձայնություն ուներ գմբեթի վերաբերյալ, մի բան, որի մասին հիշում է Քորամանյանն իր բաց նամա-

կում՝ ուղղված վարդապետ Մեսրոպ Տեր-Մովսիսյանին:

Դուկտոր Կուզենցովը գմբեթի կազմության Քորամանյանի նախագծի նկատմամբ ոչ մի առարկություն չունի:

Այլ կարծիքի է այս խնդրում ճարտարապետության թեկնածու Մնացականյանը: Նա գտնում է, որ գմբեթը ոչ թե ունեցել է 16 էջ, ինչպես առաջարկել է Քորամանյանը, այլ՝ 12: Եվ որ գմբեթը առաջին և երկրորդ աստիճանների նմանողությամբ՝ պատված չի եղել սյունակամարաշարով: Մնացականյանը նման եզրակացության գալու համար հիմք է ընդունել երկու քար, որոնք այժմ գտնվում են տաճարի պարսպից դուրս, մուտքի արևմտակողմում՝ երիտասարդ բարդիների շար-



Պ. 11. Զվարթնոցի երրորդ աստիճանի (գմբեթաթմբուկի) հաստեղծված

քի վերջում՝ առվի ափին: Իսկպպես, դրանք պատուհանի բարավոր կազմող քարեր են: Հիշալի քարերի մյուս ծայրերը տաշված են հատուկ թեքովթյամբ: Առաջարկության հեղինակը գտնում է, որ դրանք պատկանել են տաճարի երրորդ աստիճանին, և հատուկ թեքովթյամբ տաշված ծայրերը, որ չեն կարող թմբուկի մյուս էջը կազմել, կազմել են թմբուկի անկյուններում (ենթադրաբար) գոյություն ունեցող եռանկյունաձև խորշերի էջերը: Բաց որովհետև 16 նիստ ունեցող թմբուկի տրամագիծը պայմանավորված է տաճարի զմբեթակիր շորս մայր մուկթերի հեռավորությամբ ու նրա յուրաքանչյուր նիստն ունի որոշակի շափ, և որ հիշյալ շափը ավելի փոքր է, քան երկու քարերով ստեղծվող նիստերի լայնությունը, Մնացականյանը որոշում է թորամանյանի վերակազմության 16 նիստ ունեցող զմբեթակիր-թուկի փոխարեն ընդունել 12 նիստով զմբեթաթմբուկ, և սա հնարավոր է դարձնում մեծացնել նիստերի շափը: Չբավարարվելով վերահիշյալով, նա շարունակում է այնքան լայնացնել զմբեթաթմբուկը, որ նրա պատն ընդհուպ մտնենում և մոտ 40—45 սանտիմետրով ծանրանում է արսիդների զմբեթարդ ծածկերի եզրերին: Գմբեթաթմբուկի պատերի հաստությունը զմբեթակիր կամարների լայնքից շատ ավելի պակաս է, և հետևաբար, զմբեթի տրամագծի մեծացումը պետք է սահմանափակվեր զմբեթակիր արտաքին քառակուսու սահմաններում և ոչ ավելի:

Ահա, այսպիսի միջոցառումներով Մնացականյանը հնարավորություն է ստանում իր վերակազմության մեջ զմբեթաթմբուկը հարմարեցնել վերևում հիշված երկու բարավորների մասեր ներկայացնող քարերին:

Այս առումով հատկանշական է հետևյալ մեջբերումը՝ լափերի տեսակետից ռառավել մոտը,— գրում է Մնացականյանը,— դս վեցանկյուն է: Սակայն ինքնին հասկանալի է, որ լիովին բացուցված է վեցանկյուն թմբուկի հնարավորությունը: Եվ այսպես—

չորդարար կառուցելով 8, 12, 16 նիստեր ունեցող թմբուկներ և տեղավորելով այնտեղ նշված քարերը, դժվար չէ տեսնել, որ հաստակապես 12 նիստի դեպքում է, որ քարերը գտնում են իրենց իրական տեղերը:

Ինչպես երևում է մեջբերումից Ջվարթնոցի վերակառուցության նոր նախագծի հեղինակն իր աշխատանքում ցուցաբերում է մեխանիկական մոտեցում, Հիմնվելով լոկ երկու, թերևս պատահական քարերի՝ տաշվածի վրա, անտեսում է զմբեթից ներքև գտնվող շինվածքի ճարտարապետական-գեղարվեստական մշակման ձևն ու օգտագործված յուրահատուկ միջոցները՝ առկայությունը: Մնացականյանը զուգահեռ չի անցկացնում իր կազմած նախագծի և մյուս հուշարձանների միջև, կապված՝ զմբեթի կառուցման սովորույթին, և տաճարն ավարտում է բուն օրգա-

1 Անհրաժեշտ է հիշեցնել, որ Ջվարթնոցի շրջակայքում գտնված (պեղված) ոչ բոլոր քարերն ու բեկորներն են վերաբերում բուն տաճարին. նրանց մի մասը պատկանում է ավելի վաղ կառուցված հին սերբավայրին և ապա տաճարին կից՝ նրա հարավ-արևմտյան մասում երբեմնի շքեղ, իսկ այժմ ավերակ վիճակում պալատական կառուցվածքների:

Ինչ վերաբերում է Մնացականյանի հիշատակած, նրա պեղմանը՝ տաճարի զմբեթաթմբուկի պատահանի բարավորը կազմող քարերին, ապա պարզվում է, որ ընկ. 4. Պաֆագրայանի ցուցմանըձայն քարերը բեթվել են ձոփփսիմեի տաճար և այնտեղից էլ, ճարտարապետ Լիպարիտ Սաղոյանի հսկողությամբ, Ջվարթնոց, և ամենայն պատահականությունից խուսափելու համար, հիշյալ քարերը թողնվել են Ջվարթնոցի ցանկապատից դուրս, մուտքի հարսպարակում, չեն տարվել ներս, չեն խռովել տաճարի քարերին: Սա թերևս նշանակություն չէր ունենա, եթե այդ քարերն իրենց որևէ կողմով անմիջականորեն և ակներևաբար Ջվարթնոցի մասը կազմելու: Նրանց ավելի քան 50 սմ. հաստությունը ապացուց է այն բանի, որ նրանք չեն պատկանել զմբեթաթմբուկին:

2 Եթե Ջվարթնոցի զմբեթաթմբուկը պարտիված լիներ պլանականաբարչարով, ապա պատահանների բացվածքները անվազն պիտի այրուրված լինեին քանդակարդ ճոխ շրջանակներով: Հենց այդպես էլ արված է Փարդի Սեն-Շապելի Ջվարթնոցը պատկերող բարձրաքանդակում, մինչդեռ նման շրջանակների հետքեր չկան այն երկու քարերի վրա, որոնց մասին խոսվեց վերևում:

հետ ոչ մի կապ չունեցող, ստորագաս երին անհարիր և ծառար մի պատկեմն, խեղապես, ութ նիստով թմբուկի օան դեպքում, վերահիշյալ երկու քանեկին իրենց տեղերը, արդյո՞ք վերաՅյան հեղինակը Չվարթնոցը, կպասխտ ունեցող գմբեթաթմբուկով: Վեղ քարերը Մնացականյանին ստիպել ենթաթմբուկի անկյուններում դեկլունաձև խորշեր, որի հետևանքով անմիջապես քիվի տակ կազմվում ստով (12 մեծ և 12 փոքր նիստով): անյանն այդ խորշերը շեշտում է իրացնող գործոններ. «Չվարթնոցում, ինչպես և Մաստարայում և Գաուում, թմբուկի նիստերի հատման անը թնթեացված են եղել եռանկյուրշերով»:

սլները հաշվելու դեպքում պարզվում անկյունի խորշերի ընձեռած սեփեմա շատ ավելի փոքր է, քան այնմը, որ ստացվել է 16 նիստ ունեովը 12 նիստով փոխարինելուց ներսից կոր է, դրսից բազմանկյուրան նիստերի թիվը՝ քիշ, պատիյունը՝ շատ): Ինչ վերաբերում է ային, սպա կառուցողը թեթևացնեռակով չէ, որ թմբուկի անկյունեեղծել է եռանկյունի խորշեր: Կառույալ միջոցառումը ձեռնարկել է այնով, որ նախ թմբուկի վրա առաջանու ստվերը դառնան ավելի հետանև, և ապա², բազմանկյունի թմբուկը տուր տարածված օրգանիզմի հետ որ թմբուկի ութ նիստից շորս որոհամապատասխանեն շորս դուրսած խաշաթևերին, մյուս շորսը՝ խա-

շաթևերը միացնող կենտրոնական խորանարդի շորս անկյուններին:

Այսպիսով, ճարտարապետը կարողացել է խուսափել այն ճնշող տպավորությունից, որը կարող էր ստացվել հսկայածավալ թմբուկից, ծանրացած տաճարի ստորին, համեմատաբար տրոհված ծավալների վրա: Այս դեպքում թմբուկի ամեն մի նիստն ստացվել է ոչ ավելի լայն, քան ստորին խաշաթևերի հարթությունների լայնքն է: Այստեղ նրբանրկատ կառուցողը վարպետորեն հսկայածավալ գմբեթը գրեղ է համեմատաբար վտիտ խորանարդի վրա, շխախտելով հավասարակշռված ծավալների միամասշտաբության պատրանջը:

Իսկ ինչպիսի՞ն է արտաքին ճարտարապետական գեղարվեստական մշակումը Ձրվարթնոցի վերականգնության նոր նախագծում: Այստեղ թմբուկը, շնայած ոչ մեծածավալ, սակայն ծանր է նստել ստորին հսկայածավալ, սակայն նուրբ մակրուններով օրգանիզմի վրա: Թմբուկն անորոշությամբ և նույնիսկ ամեն նիստը այլ, ավելի խոշոր մասշտաբի են, քան երկրորդ, և նույնիսկ առաջին աստիճանի ծավալներն ու հարթությունները: Ամփոփ ասած, այս թմբուկը Չվարթնոցի համար չէ: Իսկ ինչպիսի՞ն է եղել երրորդ թմբուկը իրականում: Ծի՞շտ է արդյոք այն վերսիան, թե ավերակում թմբուկը բնորոշող բեկոր չի մնացել, բացի այն երկու քարից, որ կույան են դարձել Մնացականյանի համար՝ վերակազմության նոր նախագծում գմբեթաթմբուկի պատկերն ստեղծելիս: Իհարկե՞ ոչ: Մենք քննակներեն եզրակացրել ենք՝ բոլոր քարերը, որ Մնացականյանի կողմից վերագրվում են 2-րդ աստիճանի խաշաթևերին, պատկանում են Քորամանյանի վերակազմության ինչպես երկրորդ աստիճանին, այնպես էլ 16 էջանոց գմբեթաթմբուկին: Հենց այդ էլ, իրավացիորեն ընդունել է Քորամանյանը տաճարի երրորդ աստիճանը նախագծում պատկերելիս: Չվարթնոցի այս նոր վերակազմության մեջ խաշաթևերի կիսագնդերը ծածկված են

պիր Պ Յ. 1959 թ., էջ 72:
ния форма Сарабана очень живописна
мигранника вынута треугольными
идажиими Сарабану многогранну.
Форму, оном и У. 4. Численность, Умо-
тот:

կիսակոնուսներով, մինչդեռ 3-րդ աստիճանը հանդիսացող վերին գմբեթի ծածկը գնդաձև է (թվիկ մոտերքում գոգավոր)։

Անկախ այն բանից, որ եղել են գնդաձև ծածկով հայկական եկեղեցիներ, այդ հանգամանքը բավարար չէ, որպեսզի այժմ Զլարթնոցի համար նույնն արվի։ Զլարթնոցում պահպանված կղմինդրները Քորամանյանի կողմից հիշվում են, որ նրանք պատրաստված են նոյն կոնաձև կտորի համար։ «Զլարթնոցի կղմինդրներու մեջ երևացած հատուկ գմբեթի կռնի համար շինած կղմինդրներու վրա որոշ ուշադրություն դարձնել, թե ինչպես մեկ կողմը նեղ և մյուս կողմը լայն շինված են մասնավորապես մահեռները»։ Մի այլ առիթով Քորամանյանը գրում է. «...նույն ժամանակիս շինված հայ եկեղեցիներու գմբեթները միշտ կոնաձև են»։ Զլարթնոցի թանգարանում պահպանված մի քանի կղմինդրներից միայն մեկն ունի որոշ կորուսյուն, սակայն կղմինդրը այդպես կարող է ձևափոխվել նաև չորացնելու-թրթրծելու ժամանակ։ Մեծ շառավիղով ծածկի դեպքում, փոքր կղմինդրներով ծածկելիս, վերջինիս ձևն այդպես բարդացնելու կարիք չի լինում, այս դեպքում կորագիծը վեր է ածվում շատ մանր էջերով բազմանկյան։ Եվ,

վերջապես, մի կառուցվածքում երկու (կոնի և գնդի) ձևով ծածկ անելը և բազմաթիվ բազմաձև կղմինդրների պատրաստելը, երբ հնարավոր է համեմատաբար քիչ ձևերով կառուցել, անհամոզիչ է։

Աշտարակի կարմրավոր եկեղեցու գնդաձև գմբեթը ևս ծածկված է կղմինդրով, սակայն այնտեղ կղմինդրը կորածությունն ունի։

Կարմրավորի գմբեթը Զլարթնոցի գմբեթի համեմատությամբ այնքան փոքր շառավիղ ունի, որ թերևս բնական լինեք ծածկի կըղմինդրներին տալ կորուսյուն, մանավանդ, որ նրանք փոքրաթիվ այլաձևություններ կունենային, սակայն այդպես չի արվել։

Կարմրավորի օրինակը հասկացնում է, որ չի կարելի մեկ-երկու թեթևակի կորուսյուն ունեցող կղմինդրի վրա հիմնվել, պնդելու համար, թե Զլարթնոցի գմբեթը ունեցել է գնդաձև և ոչ կոնաձև ծածկ։

Այն փաստը, որ Զլարթնոցի կրկնօրինակ Գազկաշենի մոդելում, ինչպես և Փարիզի Սեն-Շապլեի հարթաքանդակում (որ հանդիսանում է Զլարթնոցի մոդելը, տես համապատասխան բաժինը) գմբեթի ծածկը կոնաձև է, բավական է համոզվելու համար, որ Զլարթնոցի ծածկը եղել է կոնաձև, ինչպես ընդունել է Քորամանյանը։

ՏԱՃՐՈՒ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Զլարթնոցի վերակազմության մեջ տաճարի բարձրությունն որոշումը կարևոր խնդիրներից մեկն է։

Այս հարցով հանգամանորեն զբաղվել են թե առաջին վերակազմության հեղինակ Քորամանյանը, որի նախագծով տաճարի ողջ բարձրությունը (սկսած պատվանդանի հարթությունից) հասնում է մոտ 45 մետրի, և թե «նոր վերակազմության» հեղինակ Մնացականյանը, որի նախագծով բարձրությունը 36 մետր է (նեքսի բարձրությունը՝ 35,5 մ.)։

Մնացականյանն իր վերակազմության մեջ բավարար մանրամասնությամբ կառու-

ցում է առաջին աստիճանը (անկախ այն հանգամանքից, թե այն ընդունելի է, կամ անընդունելի), մինչդեռ վերին երկու աստիճանների բարձրությունները որոշումը է «եւնելով 7-րդ դարի երկրորդ կեսի հուշարձանների համաշափուկություններից...» և, ապա, գրում է «Տաճարի ընդհանուր բարձրության... հարցում մենք հետևել ենք 7-րդ դարի տաճարներում այնքան լայն տարածում գտած օրինաչափությունը. դա այն է, որ տաճարների նեքսի բարձրությունը հավասար է լինում նրա լայնությանը։ Այդպես է և Հնդկաստանում»։

ում, և Մտառարայում, և Գտնանալուում, իսկ Վրաստանում՝ Ջվարիում¹։

Ջվարիոցի բարձրության որոշման համար Սնացականյանի ընտրած մեթոդը, և առավել ևս նրա ընտրած օրինակների վրա հիմնվելը, անվազն նախվհ, իսկ եզրակացությունը՝ անհամոզիչ։ Մի՞թե զամրանայի չէ, որ, որպես օրինակ աշխատության մեջ բերվում են Հոփսիսիմեի նման, Ջվարիոցից բոլորովին տարբեր տիպի տաճարներ, որոնք տրամագրիծ չունեն, ունեն երկար և կարճ առանցքներ և, հետևաբար, եթե վերոհիշյալ «օրինակափոխությունը» ճիշտ լինի երկար առանցքի նկատմամբ, ապա կարճ առանցքի նկատմամբ անպայման կստացվի ոչ ճիշտ, այսինքն՝ բարձրությունը կստացվի կարճ առանցքի մեծ, և հակառակը ընդունելու դեպքում՝ եթե բարձրությունը հավասարվի կարճ առանցքին, ապա մեծ առանցքի նկատմամբ այն կլինի ոչ ճիշտ, այսինքն՝ փոքր։ Իսկ հավասար ստացվել ոչ մի դեպքում չի կարող, քանի որ օրինակ բերված տաճարների երկու առանցքները միմյանց հավասար չեն։ Մնացականյանը, տաճարի երկրորդ աստիճանի բարձրությունը ստանալու համար, ընդհանուր բարձրությունից հանում է առաջին և երրորդ աստիճանների բարձրությունները և մնացած թիվն ընդունում է որպես երկրորդ աստիճանի բարձրություն։

Քորամանյանի վերակազմության մեջ այլ և տաճարի բարձրության որոշման մեթոդիչան։ Այստեղ ևս աշքաթող չեն արված ժամանակի տաճարաշինության սովորույթը և իրարակված օրինակափոխությունները, սակայն Խայազուրի կառուցման հիմքում հիմնականում որված է ավերակի առկա մնացորդներով

¹ Իր համոզումներում ավելի հետևողական լինելու նպատակով Սնացականյանը հիշյալ «օրինակափոխությունը» չի տի կիրառեր Ջվարիոցի իր վերակազմության երկրորդ ու երրորդ աստիճանների նկատմամբ միայն։ Ընդ որով այլ մասն է, որ այս կամ այն շափով նման է քրեթած օրինակներին՝ խառնված-կենտրոնազմբարձր, մթնշաղ ավարտագի առաջին աստիճանը ունեւով մասն չէ վերոհիշյալներին։

բնորոշվող երբեմնի կանգուն շինության խորակտեղը, նշանակությունը, գեղարվեստական արժեքն ու գործադրած միջոցները։ Այստեղ պարզորոշ զգացվում է հետազոտող արվեստագետի բարձր ճաշակն ու ինտուիցիան, մեծ գեղագետի և հմուտ—հետախույզ գիտնականի նուրբ զգացողության դրոշմը։ Քորամանյանը, ի տարբերություն այլ հետազոտողների, խորապես ըմբռնել է, որ Ջվարիոցը միախառնական կրկնություն չէ, այլ առավելապես նոր երևույթ է։

Քորամանյանը, տաճարի առաջին աստիճանը վերակազմելու համար, իր ձեռքի տակ ունեն ավերակում պահպանված ներքին խաչաթևերը կազմող սյունակամարաշարի բոլոր էլեմենտները։ սյունաշարի բոլորածն հիմքը, նրա վրա դասավորված սյունների խարիսխները, սյունների բնիցի երկուտը, նրանց վրա երբեմնի դրված զամբյուղահարկա քանդակով խոյակները, այս վերջիններս իրար կապող կամարների քարերի մնացորդները, հետևաբար՝ և հիշյալ կամարների բարձրությունը։ Նույն ձևով ունեցել է արծվախոյակ սյան պատվանդանը, սյան խարիսխը, սյան բունը, սյան խոյակը։

Քորամանյանը բացահայտել է երկկող կամարաթաղերը և որոշել նրանց կորության շառավիղն ու բարձրությունը՝ հաշված իրենց հենարաններից։ Ապա երկկող կամարաթաղերով ստեղծված բոլորակ հիմքի վրա պատկերել է բոլորածն սրահի թաղը։

Այսպիսով, գրեթե սանտիմետրի ճշտությամբ ևս վերակազմել է տաճարի առաջին աստիճանի առաջին հարկաբաժինը։

Երկրորդ հարկաբաժնի գլուտը, որ սերտորեն կապված է երկկող կամարաթաղերի առկայության հետ, Քորամանյանի մեծ էրուդիցիայի արդասիրն է։

Ուսանց վարանելու պետք է ասել, որ այդ կարգի մեծաթուղի կամարաթաղերի ստեղծումն ու իրականացումը, անկասկած, հետապնդել է տաճարի երկրորդ աստիճանը թմրկաձև ունենալու որոշումը, հակառակ դեպքում, այսինքն՝ միմիայն բոլորակ սրահի

ծածկը գլուխ բերելու համար, ոչ մի կառուցող զմեռ մեծ միջոցառման չէր դիմի:

Առաջին հարկաբաժնի ծածկի վերին հարթության վրա Քորամանյանը ցույց է տալիս այն սյունակամարաշարը, որով երկրորդ հարկաբաժնում գտնվողները հաղորդակից են լինում տաճարի կենտրոնական մասին, լըսում ժամասացությունը:

Հիշյալ սյունակամարաշարին վերագրվում են նույն համաչափությունները, ինչ կա առաջին հարկաբաժնում, թեև ևս միայն մի քիչ պակաս մասսիվություն (բարակ սյուններ, փոքր իտյակներ և այլն):

Ահա, այս կամարաշարի վրա բարձրանում է երկրորդ հարկաբաժնի բոլորածև սրահի թաղկապ ծածկը, որի շափերը ևս հայտնի են (նույնն է ինչ առաջին հարկաբաժնի թաղը):

Լեհց այս թաղի վրա էլ դրվել է տաճարի առաջին աստիճանի տանիքը, որի թեթևությունը և այնպիսին է, որպիսին ընդունված է եղել այդ ժամանակ տաճարաշինության ասորյայում:

Հիշյալ թեթ տանիքի վերին ծայրից սկսվում է տաճարի երկրորդ աստիճանը, որի բարձրությունը նախորդում է պատուհանների բարձրությամբ: Տաճարի առաջին աստիճանի պատուհանների բարձրության շափերը ճշտորեն ստացվում են ավերակում պահպանված բեկորների օգնությամբ: Այդ պատուհանները, իրենց համաչափություններով, մոտ են 7-րդ դարի տաճարներից մի քանիսի պատուհանների համաչափություններին: Ենկուղ վերահիշյալից, Ջվարթնոցի երկրորդ աստիճանի պատուհանների շափերն էլ վերցվել են՝ հետևելով նույն տրամաբանությանը: Այս վերջին պատուհանների բարավորների վրայից էլ սկսվում են արսիդների կիսազբմբեթները, որոնց բարձրությունը բխում է արսիդների հատակագծային շափերից և հայտնի է: Հիշյալ կիսազբմեթների վրա էլ դրվում է երկրորդ տանիքը, որի տակ էլ ավարտվում են զմբեթակիր քառակուսին ըստեղծող կամարները:

Այս բարձրության վրա սկսվում է տաճարի երրորդ աստիճանը—զմբեթաթմբուկը: Այստեղ Քորամանյանը տեղադրում է նույն երկրորդ աստիճանի պատուհանները, որոնց բարավորների վրա էլ կենտրոնական զմբեթը. նրա բարձրությունը, կապված լինելով հատակագծային շափերի հետ, որոշակի է: Այս զմբեթի վրա հազնում է կոնաձև տանիքը՝ ընդունված թեթույնով:

Ջվարթնոց տաճարի արտաքին պատկերը Քորամանյանի վերակազմությամբ բառացիորեն կապված է այն ներքին «կամախթ» հետ, որի վերակազմությունը նկարագրվեց վերևում:

Այսպիսի վերակազմությամբ՝ Ջվարթնոցի բարձրությունը ստացվում է 45 մետր:

Տաճարի բոլոր աստիճաններում պատուհանների շափերը Մնացականյան ընդունել է զլևթե նույնքան, որքան եղել են ընդունված Քորամանյանի վերակազմության մեջ:

Երկուստեք թաղերը, կիսազմբեթները և կենտրոնական զմբեթները սկսվում են պատուհանների հենց բարավորների վրայից և տնեն բարձրության նույն շափերը, որոնք ստացվում են հատակագծային տվյալներով:

Այսպիսով, պարզվում է, որ բարձրությունների այն տարբերությունը (մոտ 9 մետր), որ կա երկու վերակազմությունների միջև, ստացվում է նրանց կառուցման սկզբունքալին տարբերություններից, այսինքն, որ նոր վերակազմության հեղինակը չի ընդունում Քորամանյանի վերակազմությամբ տաճարի առաջին աստիճանի երկրորդ հարկաբաժնի (վերնահարկի) գոյությունը: Եվ քանի որ սույն աշխատության մեջ հաստատվում է վերջինիս գոյությունը, դրանով էլ ապացուցվում է տաճարի բարձրության՝ Քորամանյանի առաջադրած թվի առավել հավանական լինելը: Ծարարարայետ Ռ. Աղաբաբյանը այն

¹ Բարձրության շափերի տարբերության մնացորդ 2—2,5 մետր ծածկվում է զմբեթի տանիքի ձևի տարբերությամբ (այն, որ կոնաձևի գազաթր ավելի բարձր է, քան գեղածանիքը) և այլ մանրամասներով տաճարի տարբեր աստիճանի սահմաններում:

կարծիքին է, որ **Զվարթնոցի** համաշափությունները **Քորամայանի** վերակազմության մասին անվերջ ձգվածություն, նա գրում է. «**Պետք է ենթադրել, որ Զվարթնոցը** և (իշխանը) նույնպես ունեցել է սղված (привезенный) տեսք և իր հիմնական ծավալների ուրվագծով մոտեցել է մյուս կենտրոնազրմբի, հատակագծում խաչաձև, հենց այդտեղ՝ մոտիկ կանգնած շինություններին (օրինակ, **Հռիփսիմեյ**)»¹:

Փաստորեն սա նշանակում է, որ տաճարի առաջին աստիճանը պետք է վերնահարկ շունենար, չէ՛ որ **Զվարթնոցի** ձգվածությունը վերաբերում է առավելագույնս նրա առաջին աստիճանին, իսկ վերին երկու աստիճաններին համաշափությունների նկատմամբ առարկություններ չկան: Այն, որ **Զվարթնոցի** ունեցել է վերնահարկ, հաստատվեց սույն աշխատությանը՝ իրական փաստերով:

Անկախ այն բանից, որ **Զվարթնոցն** ու **Հռիփսիմեն** բոլորովին տարբեր տիպի կառուցվածքներ են, հիմնական ծավալների համաշափությունների խնդրում՝ անհամեմատելի, այնուամենայնիվ, երբ որոշ գիտնականներ կատարում են այդ համեմատությունը, **Զվարթնոցին** վերագրում ավելորդ ձրգվածություն, անհրաժեշտ է դառնում ստուգել որպես օրինակ բերված տաճարներից մի քանիսի համաշափությունները:

Ուղղանկյուն (ոչ քառակուսի) հատակագծով կենտրոնազրմբի տաճարներում բարձրությունը պետք է համեմատության մեջ դրել կարճ՝ արևելյան և արևմտյան ճակատների լայնության (փոքր առանցքի) հետ, քանի որ քրիստոնեության օրենքով կարևորը արևելյան ճակատն է, այն արտահայտում է գլխավոր արսիդը (սեղանը), իսկ արևմտյան ճակատը հանդիսանում է տաճարի գլխավոր մուտքը: Հավատացյալը եկեղեցուն մոտենալիս առաջին հայացքով ընկալում է արևմտյան ճակատը ողջ լայնությամբ և բարձրու-

թյամբ, և երբ այդ գլխավոր մուտքից ներս է մտնում, առաջին իսկ հայացքով ընկալում է ներքին տարածության գարձալ լայնությունն ու բարձրությունը:

Վերահիշյալից ելնելով, նկատում ենք, որ **Հռիփսիմեի** և **ընդհանրապես** այդ կարգի տաճարներում կարճ ճակատի և բարձրության հարաբերությունն ստացվում է մի թիվ, որը փոքր է մեկից, այդ հարաբերությունը **Հռիփսիմեում** կազմում է՝ 1:1, 40: **Քարզմանչաց** վանքում՝ 1:1, 30: **Աբրատավանքում**՝ 1:1, 80: **Օձունում** (առանց Կամարաշարքի)՝ 1:1,60: **Բավական ցածր գմբեթ** ունեցող **Տեկորում** (առանց սյունաշարի)՝ 1:1,60: **Գագկաշենում**՝ (**Քորամայանի** վերակազմությանը)՝ 1:1,37 (**Մնացականյանի** վերակազմությանը)՝ 1:1, 28): **Մինչդեռ Զվարթնոցում** (**Քորամայանի** վերակազմությանը)՝ 1:1, 26 է:

Ստացվում է տրամագծորեն հակառակ պատկեր, պարզվում է, որ **Հռիփսիմեում** համաշափություններն ավելի են ձգված, քան **Զվարթնոցում**: Բանն այն է, որ **Հռիփսիմեի** տիպի տաճարները բնության մեջ դիտվում են տարածականորեն, այնպես, որ ամեն անգամ միասին կարդացվում են երկու ճակատները (մեկը կարճ, մեկը՝ երկար), որի դեպքում կառուցվածքը ընկալվում է լայն և ցածր, այսինքն՝ սղված համաշափություններով: **Մինչդեռ Զվարթնոցի** և նրա նման բոլորակ հատակագծով տաճարների լայնությունը միշտ նույն չափով է կարդացվում, որտեղից էլ նայվելու լինեն նրանք: Այս պատճառով, ինչպես և կառուցվածքի արտաքին ծավալալին եռաստիճան լինելու հետևանքով, **Զվարթնոցն** ընկալվում է ավելի ձգված համաշափություններով: Այս այն կարևորն է, որը տեղ չի գտել Ս. Մնացականյանի ուսումնասիրություններում: Մեր կառուցող նախորդները ստեղծագործաբար են մոտեցել ճարտարապետության հայտնի օրինակներին, չեն կրկնել, նրանց համար բնորոշ է եղել նորարարությունը: **Քորամայանի Զվարթնոցը** վերակազմելիս իմացել է այդ ու չի սխալվել:

¹ Р. Я. Агабабян. Ксмпозиция купольных сооружений Грузии и Армении, 1950 г. Ереван, էջ 100.

ԿԱՄԱՐԱԾՈՒԹՎԵՐԻ ՄԱՍԻՆ

Շինութեան բարձրութեան որոշման առաջին ճշմարիտ ճանապարհը՝ ներքին կոնստրուկտիվ մասերի բարձրութիւնների համադրումն է: Այս առումով կարևոր տեղ է զբաղում երկկոր կամարների՝ լայնաթորչք թաղերի ձևի և բարձրութեան՝ որոշումը:

Քորամանյանի վերակազմութեան նախագծով երկկոր կամարները, որ վերևում անվանվեցին թաղեր, իրենց մի ծայրով հենվում են խաշաթների գագաթի երկու սյուներով կազմված կամարին, մյուս ծայրով՝ մայր մուկթերի հետնամասում կանգնած արծվախոյակ սյուններին, ըստ որում, նկատի ունենալով, որ այս վերջին հենարանն ավելի ցածր է, քան առաջինը, Քորամանյանը խոյակն վրա պատ է բարձրացրել, դրանով իսկ երկկոր կամարի երկրորդ հենարանը հասցրել է առաջին հենարանի բարձրութեան:

Վ. Կուզնեցովն իր վերաքննութեան մեջ այդպես էլ ընդունել է:

Մնացականյանը, երկկոր կամարի (թաղի) հենարանները նույն բարձրութեան վրա ստանալու համար, ոչ թե նախորդների պես պատ է բարձրացրել արծվախոյակների վրա, այլ բարձրացրել է հենց արծվախոյակը՝ մեծացնելով սյան բարձրութիւնը, այսինքն՝ անփոփոխ է թողել խարիսխի և խոյակի մեծութիւնները (այլ կերպ էլ չէր կարող անել, քանի որ սյան խարիսխն ու խոյակը տեղում կան, պահպանվել են), իսկ սյան բունը մեծացրել է, առավ կրկնակի բարձրութիւն (տեղում պահպանված բունն ունի 222—225 սմ. երկարութիւն, նա վերցրել է երկու այդպիսին և դրել իրար վրա):

Այս վերջին դեպքում երկրորդ հենարանը

հասնում է զգալի բարձրութեան, մինչ առաջին հենարանը մնում է մի քիչ ցածր: Մնացականյանն այս անգամ բարձրացնում է նաև առաջին հենարանը մեկ-մեկ ու կես շարքի բարձրութեամբ, հիշեցնելով, թե այդ մի շարքը, որ դնում է խաշաթի կամարների վրա, պարտադիր է «շինարվեստի օրենքներով»։ նույնի նկատում, որ խաշաթի կամարները Ձբվարթնոցում արդեն կրկնակի են, ինչպես ցույց է տրված նաև իր ներկայացրած գծագրում (իսկ այսպիսի դեպքերում հիշյալ «օրենքը» կորցնում է իր նշանակութիւնը):


Երկու դեպքում էլ, ինչպես Քորամանյանի, այնպես էլ Մնացականյանի մոտ, երկկոր կամարի երկրորդ հենարանը կազմված է մի քանի մասից. առաջին դեպքում՝ սյունն իր խարիսխով, բնով, խոյակով ու խոյակի վերայի պատով, երկրորդ դեպքում՝ սյունն իր խարիսխով, բնով, որ կազմված է երկու կտորից և խոյակով: Նրանք իրենց նշանակութեամբ, որպես կրող շինանյութեր, քիչ են տարբերվում:

Մեր կարծիքով, Ձվարթնոց կառուցողը, հենարանի հուսալիութեան շահերից ենելով՝ արծվախոյակ սյան բունն իրականացրել է միակտոր քարից՝ 225 սմ. բարձրութեամբ, որը և պահպանվում է տեղում: Եվ ապա Ձբվարթնոցի կառուցողը, ըստ երևույթին, նշանակութիւն չտալով, խիստ անհրաժեշտութիւն չի համարել արծվախոյակ սյան դրվագի բարդացման հաշիկի երկկոր կամարաթաղի հենարանները մի բարձրութեան բերելով մի ահա շատ հանգիստ կերպով հիշյալ աղեղի ծայրերը դրել է տարբեր բարձրութիւնների հենարանների վրա, առաջինը՝ խաշաթի գագաթի երկտակ կամարի վերևում, իսկ երկրորդը՝ ուղղակի արծվախոյակի վրա (տես զծ. 13):


Այս պայմաններում երկկոր կամարաթա-

1 Կամարաթաղերի կառուցելակերպով հնարավոր է դանձում նրա վրա ծանրացրել տաճարի նաև երկրորդ աստիճանի բոլորած թմբուկը, որի գոյութեան հարցը միշտ էլ եղել է առարկութիւնների գլխավոր թեման: Այդ կամարաթաղի ձևն ու բարձրութեան շահը կոման է հանդիսանում Քորամանյանի վերակազմութիւնը վերաբերողների համար:

2 Կամարը երկու տարբեր բարձրութեան հենարանների վրա կապելը այդ ժամանակ, ինչպես և դրանից հետո, նորութիւն չէր և երևույթը բնական է:



Պ. 12. Տիրբնոցի մայր ժայռերից մեկի կառուցման պլանը



Պ. 13. Չվարթանի խոյանի կամարապատ ստեփեր բարձրաբյուր սեփարակներով

դի եզրն ստանում է ոչ թե սիմետրիկ տեսք, ինչպես նախորդ երկու նախագծերում էր, այլ սլացիկ տեսք, ըստ որում, կամարն արծվախոյակի վրայից բարձրանում է գրեթե միշտ վեր, և միայն խաչաթևի կամարի վերևում, պատի հետ ձուլվելուն զուգընթաց, իջնում է իր երկրորդ հենարանի վրա:

Ճարտարապետ Մնացականյանը վերակազմության իր նախագծում երկկոր կամարաթաղի սլաքն ընդունում է երեք մետր, որ իբր թե այդ թիվը բեկորների շափազրույթյան արդյունք է՝ Մեր կողմից ևս շափազրվել են կամարաթաղի շատ քարեր, և այդ աշխատանքի արդյունքը, սակայն, մեզ այլ եզրակացություն է բերել: Հիշյալ քարերը տարբեր կորուսյուններ ունեն, նույն երկարություն լարի վրա ստացվում են տարբեր շափերի սլաքներ¹, այդ նշանակում է, որ կամարաղեղը մի կենտրոն չի ունեցել, այլ մի քանի կենտրոն, այսինքն՝ կամարաթաղի եզրը իր որոշ մասում եղել է ավելի սլացիկ, և մյուս մասերում՝ համեմատաբար հանգիստ ավելի մեծ շառավիղի արդյունք, ճիշտ այնպես, ինչպես ենթադրվում է մեր կողմից (տես գծ. 13):

Երկկոր կամարներից երկու զույգը, որոնց կրող արծվախոյակ սյունների դիմաց բացվում են Զվարթնոցի հինգ զոններից երկուսը, զգալի շափով դիտվում են միաժամանակ, ընկալվում միանգամից: Այս դեպքում կամարների պատկերը հաճելի ասոցիացիայով կրկնում է թևատարած արծվի պատկերը, որ քանդակված է երկու կողմերից իջնող կամարներն իր վրա կրող արծվախոյակի վրա: Եվ, ինչով քնական չէ կոնստրուկտիվ էլ նմենետի պատկերը, երբ կամարն իր բարձր հենարանի վրա՝ խաչաթևի գազաթում «ծլում», լայնանալով՝

¹ Այսպես օրինակ՝ 25 սանտիմետր ճաղատով քարեր կան, որոնցից մի քանիսի կորուսյան սլաքը 8 միլիմետր է, այդ նշանակում է կորուսյան շառավիղը եղել է 9,8 մետր, մյուս քարի կորուսյան սլաքը 32 միլիմետր է, որ նշանակում է, թե կորուսյան շառավիղը եղել է 2,8 մետր: Կան նաև քարեր, որոնց 60 սանտիմետր լայնքի վրա կորուսյան սլաքը 7 միլիմետր է, որ բերառում է 4,4 մետրանոց շառավիղ:

զալիս, և այնտեղ, որտեղ իջնում է արծվախոյակի վրա, ստանում է ամենամեծ շափը: Այսպիսով կամարը, որ փաստորեն վեր է անվում թաղի, մի էջով հենվում է մայր մույթին ու արծվախոյակին, վերջինիս բարձրության վրա, և մյուս էջով՝ խաչաթևի կեսը կազմող պատի վրա (կամարաշարի վերելում):

Տաճարի խաչաթևերը բոլորող սրահի ներսում շորս արծվախոյակ սյունների թվով նըման շորս պատկեր գոյություն ունի: Պետք է ընդունել, սակայն, որ հաճելի է, երբ ամեն կամարը (կամ թաղի եզրը) առանձին դիտելիս, ընկալվի նրա կանոնավոր ձևը, որոշակի լինի զգաթը (ամենաբարձր կետը) այնպես, ինչպես որոշակի են նրա երկու հենարանները: Ծարտարապետն այդ բանին հասել է թաղի եզրը թեք տաշելով, ըստ որում, հիշյալ թեք հարթությունն իջնելով նեղանում է և վերջանում՝ հենարանների շհասած: Այս դեպքում թեք հարթությունը, որ լայն է կամարի գազաթում, իր երկու սուր ծայրերը վերջացնում է գազաթից հավասար հեռավորության վրա, հետևաբար այդ թեք հարթության մի ծայրը բավական մոտենում է կամարի բարձր՝ վերին հենարանին: մյուս ծայրը զգալի շափով հեռու մնում երկրորդ՝ ցածր հենարանից²: Ահա հենց այդ թեք, լուսանաձև տաշվածքի առանցքը հանդիսանում է կամարաթաղի եզրագծի կենտրոնը:

Մնացականյանի մոտ արծվախոյակը գտնվում է զգալի բարձրության վրա, որից ինչելով էլ ավելի բարձրության է հասնում նրան հենված թաղի գազաթը: Ստացվում է այնպես, որ բոլորակ սրահի երկրորդ հարկաբաժին ունենալու համար տեղ չի մնում: Դեռ ավելին, Մնացականյանը գտնում է, որ վերնահարկի ծածկը հանդիսացող թաղին ներսի հենարան ունենալու համար անհրաժեշտ պիտի լիներ նույն լայնաթուղք կամարաթա-

² Տեղում կան երկկոր կամարի եզրաքարեր, որոնք իրենց շափի համաձայն պետք է տեղադրված լինեն ավելի մոտ հենարաններին, նրանց վրա չկա թեք եզրահարթության նշան:

ղերի սիստեմն ստեղծել նաև վերնահարկում: Երբ դեպքում, անհրաժեշտ պիտի լինեի ունե- նալ ևս 3 մետր ավել բարձրություն:

Մեզ հայտնի չէ, թե ինչու՞ Մնացական- յանը հնարավոր չի համարել երկրորդ կա- մարաթաղի փոխարեն՝ վերնահարկում ունե- նալ այնպիսի կամարաշար, ինչպիսին ցույց է տրված Զվարթնոցի ներքին տեսքը պատ- կերող գծագրում (տես գծ. 2), այս դեպքում լրացուցիչ 3 մետր բարձրություն չի պա- հանջվում:

Բարձր սյուների և մեծասլաք կամարա- թաղերի շահերից ելնելով, Մնացականյանը

ժխտում է երկրորդ հարկաբաժնի գոյությունն ընդհանրապես:

Մինչդեռ արժվախոյակ այն բարձրա- րյունը չկրկնապատկելով, մեծարիչ կա- մարաթաղի ծայրերը տարբեր բարձրությամբ հենարանների վրա դնելով, վերահարկում պարզ կամաբաշար է ստեղծելով, փաստորեն, ճեարարվոր է դառնում իրակատար վերեա- հարկ ունենալ մնալով Թորամանյանի մշա- կած ճակատի պարագծերում: Անա այս ամե- նը գրկում է Մնացականյանին վերահարկի անհնարինությունը եզրակացությունը հանգե- յու ճեարարվորությունը:

ՏՄՃՄՐԻ ԿՍՌՈՒՑՆԵԼԱԿԵՐՊԻ ՄՍՍԻՆ

Բանն այն է, որ Զվարթնոցի կազմության ինքնենթակա վերլուծությանը զբաղվողնե- բը, թող ներվի ասել, հաշվարկումները կա- տարում են թյուր ձևերով և, ընդհանրապես, այսինքն՝ ո՛չ կոնկրետ:

Ինչ խոսք, որ օրինակ՝ տուֆը 1500 տարի առաջ պատի մեջ որպես կամար, սյուն աշ- խատել է այնպես, ինչպես աշխատում է այժմ, ինչպես աշխատելու է այսուհետև Սա- կայն կարևորն այն է, թե ճարտարապետն ինչպիսի՞ տուֆներ է օգտագործում, ի՞նչ ձևով է աշխատեցնում կառուցվածքը, ի՞նչ կոմպո- ղիցիոն պլանային— տարածական լուծում է տալիս կառուցվելիք շինությունը, որպեսզի նրա (շինության) կմախքն աշխատի իբրև մի միասնական, ամբողջական տարածական սիստեմ, որի մասերը փոխադարձաբար կապ- ված լինեն միմյանց և միմյանց վրա ազդեն որպես կենդանի գործող օրգանիզմի անջակ- տելիորեն շաղկապված մասեր:

Մինչև օրս Զվարթնոցի ուսումնասիրող- ները մեխանիկորեն առանձնացնում են տա- ճարի երկրորդ աստիճանի բոլորակ պատի ամեն մեկ ութերորդը, կտորն, առանձնադ- նում են այն աշխատող ողջ օրգանիզմից: և ապա դնում են արժվախոյակ սյուներից չու- բաբանչյուրի վրա դարձյալ մեխանիկորեն անջատելով այն մայր մույթներից, ու այդ

ձևով, ահա, որոշում նրանց՝ հիշյալ սյունե- րի գերբեռնավորվածությունն ու նյութի մեծ լարվածությունը նրանցում:

Նախքան հուշարձանի ներկա վիճակն ու պահպանված մասերի հանգամանալից ուսումնասիրությունը, մենք ևս ինչ-որ վերա- պահման զգացմունքով էինք նայում Զվարթ- նոցի կոնստրուկցիաների աշխատանքին Սա- կայն խորամուխ լինելով ավերակի բեկորնե- րի տեղին, դերին, նշանակությանը, կոա- հումների որոշ էվոլյուցիա ապրելով, սովորե- լով և հասկանալով, հանգեցինք մի, ըստ երևույթին, հենց այն մտածելակերպին, որն իր ժամանակին հղացել է ճարտարապետն ու հմուտ կառուցողը:

Զվարթնոցի ճարտարապետի նորարարա- կան գործելակերպը այլ ձևով է զնահատվում դոկտոր Կուրենցովի կողմից: ևս մեղադրում է տաճարի շինարարին, թե վերջինս համար- ձակ շեղում է կատարել անտիկ հռոմեական հուշարձանների կանոնիկ կառուցվածքների սովորական-տիպական ձևերից: այսինքն՝ լայնաթիռի կամարաթաղ է ստեղծել սովո- բական սյունների շարք ստեղծելու փոխարեն, որ իբր հենց դա էլ դարձել է տաճարի խոր- տակման առիթ:

Սակայն, երբ նկատի ենք ունենում, թե նորաձևությունը իրականացած տաճարը

կանգուն է մնացել մի քանի դար, համոզվում ենք, որ Զվարթնոցի ճարտարապետի աննախագծեալ կառուցելակերպն իրեն լիովին արդարացրել է, այն դարձել է ոչ թե տաճարի կրծամանն առիթ, այլ ճանդիսագլխի է ճարտարապետական մտի ճշմանակալի թոյլի, և իրականացվել է ու հարատևել յճոհմիլ կառուցողական արվեստի յիարժեք հմտության, արժանի գովեստի և հիշատակության:

Յորամանյանը նշում է, որ Զվարթնոցի ճարտարապետը գիտեր իր համարձակ ձևերն արվածն, գրեթե, հանդուգն լինելու: Անշուշտ այդ այդպես է, այդ են հաստատում այն հատուկ միջոցառումները, որոնք ձեռնարկել է կառուցողը և որոնց հետքերը անչնչելի են, թերևս այնքան անհրաժեշտ այսօրվա ուշադիր ուսումնասիրողի և ընդհանրապես՝ շինարվեստի համար:

Զվարթնոցի պատերը կառուցվել են քարով և շաղախով: Գործադրվել են նաև մետաղյա գամեր և արձիճ:

Հայոց մուսուլմանները կառուցվածքներում գործադրված շաղախի բաղադրությամբ շատ են զբաղվել, դեռ շատ էլ զբաղվելու են, քանի որ այդ մասին մի ամփոփ աշխատություն չկա և ծանրակշիռ խոսք դեռ չի ասվել:

Ահավասիկ, դարերի թեոի տակ այդ շաղախն անընկճելի դիմացկուն, դեպի գալիք դարերն է տանում պատմական հուշարձանների կիսամերկ կմախքները՝ դարմացնելու և սովորեցնելու, թե ինչպես է պետք կառուցել հարատևելու համար:

Պատերի մյուս և կարևոր կոմպոնենտ քարը Զվարթնոցում նույնքան հետաքրքրական կողմեր ունի, որքան և շաղախը: Ցավոք, նրա ուսումնասիրությունը ևս չի կատարված¹:

¹ Վերջերս միայն 1959 թ. լույս է տեսել Հայկական ՍՍՌ Շինանյութերի և կառուցվածքների ինստիտուտում կազմված, տեխնիկական գիտությունների թեկնածուներ Զ. Հանգստյանի և Օ. Մարտիրոսյանի կողմից գրված «Հայաստանի տուֆերը և մարմարենրո» արժեքավոր գիրքը, որտեղ տեղավորված են մի շարք թուրքերի արտադրած շինարարների բազմակողմանի բնութագրությանը վերաբերող աղյուսակներ

Զվարթնոցում կիրառվել են գտել շատ տեսակ քարեր, իհարկե, ոչ այն պատճառով, որ որևէ հանք չի բավարարել նրա անհրաժեշտ քանակը և կամ շատ գույներն են պահանջվել: Ոչ, միայն և միայն կառուցողական և կատարումներով:

Այնտեղ օգտագործված են չեչաքարեր և պեմզաներ, ինչպես և տեղական սովորական շագանակագույն տարրեր երանգների այլ տուֆեր, որոնց ամրությունը հասնում է մեծ չափերի: Պատահական չէ, որ Ստրժիգովսկին Զվարթնոցի սյուների խարխիսների ու խոյակների շինանյութերն անվանում է բազալտ: Քարերի հիմնական քանակը տեղական տուֆեր են, որոնց ծավալային կշիռը հասնում է 1450 կիլոգրամի (մեկ խորանարդ մետրի քաշը):

Որոշ տուֆեր էլ կան, որոնց հաճախ անվանում են բազալտանման, դրանք իրականում հիալո-տրախի-անդեզիտներ են: Ահա այդ քարերից են պատրաստված կրող սյուների բները, խարխիսների ու խոյակների որոշ մասեր:

Սույն աշխատության կապակցությամբ Հայկական ՍՍՌ Շինանյութերի և կառուցվածքների ինստիտուտում գրված փորձերի հիման վրա պարզվում է, որ այդ հիալո-տրախի-անդեզիտների ծավալային կշիռը հասնում է 2320 կիլոգրամի, իսկ ամրության սահմանը, սեղմման դեպքում, 335—381, միլիոնը՝ 358 կգ/սմ². (կիլոգրամ մեկ քառակուսի սմ. վրա):

Սյուների խարխիսների և խոյակների մյուս մասը պատրաստված է մի այլ տեսակի տուֆով, որ որոշ չափով նման է երևանյան տուֆերին, նրա ծավալային քաշը կազմում է 1860 կգ., իսկ ամրության սահմանը, սեղմման դեպքում, 280—344, միլիոնը 321 կգ.սմ²:

և մանրամասնություններ, Օրինակ, Քալիքի հանքերում որոշ տուֆեր կան, որոնց ամրության սահմանը սեղմման դեպքում հասնում է 550 կգ.-ի մեկ ք. սմ.-ի վրա: Որոշ տուֆերում, այդ թվում նաև ֆիլոտային, հիյալ թիվը մեծանում հասնում է 650-ի և նույնիսկ 809-ի, 825-ի և այլն:

Զվարթնոցի ճարտարապետ տաճարի կմախքի պատասխանատու տեղերում կող կոնստրուկցիաները, սահնք՝ սյուներն իրենց խարիսխներով և խոյակներով, պատրաստել է հատկապես ամրակուռ քարերից՝, իսկ կրրվող մասերը և լիցքերը իրականացրել թեթև տուֆերով, չեչաքարերով և պեմզաներով:

Քորամանյանն այս մասին բազմիցս անդրադառնում է իր աշխատություններում, մեծ նշանակություն տալով միջոցառմանը:

Հենց այն հանգամանքը, որ սյուներից, խարիսխներից և ոչ մեկի վրա չկան ծանրության տակ ճզմվելու՝ նշաններ, ինքնին բավական է ժխտելու այն վերսխան, թե տաճարը բանդվելու ամենահիմնական պատճառներից մեկը արծվախոյակ սյուների մեծ գերլարվածությունն է եղել:

Զվարթնոցը կառուցողին քաջ հայտնի է եղել նաև քարի գործածության առավել հուսալի ձևը: Օրինակ, եթե սյունը պատրաստվում է մի քարից, կառուցվածքի մարկան նույնն է, ինչ որ օգտագործված քարինը, սահնք 50, 75, 100, 300, 400 և ավելին, միևնույն նույն ամուր քարով և յով շաղախով պատրաստված պատի մարկան օգտագործված քարի մարկալից ցածր է մոտ 4 անգամով, իսկ շաղախից՝ 2 անգամով և այլն: Ահա այս հանգամանքն է նկատի ունեցել Զվարթնոցի կառուցողը, որ բոլոր, ինչպես արծվախոյակ, այնպես էլ զամբյուղահալուս խոյակներով սյուների և՛ խարիսխները, և՛ բները, և՛ խոյակները պատրաստել է հատկապես ընտրված, վնասվածքներից զերծ միակտուր քարերից:

Զվարթնոցի ճարտարապետին քաջ հայտնի է եղել նաև իր պատրաստած շաղախի հուսալիությունը, և դրա համար էլ այնտեղ, որտեղ քարն ի վիճակի չէ լիակատար կոնստրուկտիվ դեր կատարել, այնտեղ առաջնու-

թյունը տալիս է բետոնին³, քարին թողնելով «դեկորատիվ» նշանակություն:

Շատ պատասխանատու կառուցվածքներում Զվարթնոցի կառուցողը համադրում է այդ երկուսին, քարին և բետոնին, օգտվելով նրանցից ամեն մեկի առավելությունը միասնական ճշխատանքում, ահա այս դեպքում մեծ դեր է ստանում քարի շափը, հատկապես երկարությունը:

Զվարթնոցի ավերակներում մինչև այսօր շարունակում են իրենց մոնոլիտ գոյությունը 3 մեծածախայ թարաբետոնային զանգվածներ, որոնք իրենց երբեմնի տեղից՝ ահադին բարձրությունից նետվել են ցած, կրելով ավելի վերևից փվող զանգվածների ծանր հարվածները: Այդ զանգվածներն այսօր էլ չ'վիճակի են դիմագրավել հարվածող մեծ ուժերի: Ուշադիր ուսումնասիրողն անկասկած կնկատի այդ զանգվածների մեջ մխրճված մեծ երկարության տուֆաքարեր: Ահավասիկ հարավ-արևմտյան զանգվածը (տես նկ. 14), որ իրենց ներկայացնում է հարավ-արևմտյան մայր մուլթի և արծվախոյակ սյուն, ինչպես և կից խաչաթևերի վրա երբեմնի ծանրացած երկթաղը⁴, իր վրա տարել է իրենից վեր բարձրացող բոլորակ պատը և խաչաթևը՝ շրջանցող սրահի թաղի կեսը:

Զվարթնոցի երկրորդ աստիճանի բոլորակ թմրկապատը նստած է եղել ալոպիսի շոթս երկթաղերով (կամ ութ միաթաղերով) ստեղծված անխզելիորեն միաձուլված մեծ շափերի քարաբետոնակուռ օղակի վրա: Այդ օղակը, միաժամանակ, լիարժեք ձևով հակազդել է այն բոլոր կենտրոնախույս հորիզոնական ուժերին (ռասպոր), որոնք կարող էին առաջանալ կառուցվածքի աշխատանքի ընթացքում:

Այդ երկթաղ զանգվածներից յուրաքանչյուրը երկու մասից է եղել, մեկը մայր մուլթից դեպի ձախ, մյուսը՝ աջ, ութ միանման

1 Հիշյալ կարծի տուֆի հանք հարցը հետաքրքրում է Քորամանյանին, բայց տեղը, ըստ երևույթին հայտնի չէ նրան:

2 Այլ բան է կորովիլը հարվածից, ընկնելուց և այլ պատճառներից:

3 Ստորիզովսկին այն անվանում է «ЛТОЯ БЕТОН»:

4 Երկթաղ է անվանվում, որովհետև կազմում է երկու թաղերի (արծվախոյակ սյունից աջ և ձախ) համաձուլվածքի կենտրոնական մասը:

Քաղեր, որոնք մուլթի մոտ եղել են լայն, ընդգրկվելով մուլթի մի էջը, ներգրավելով արժիատույակ այսն հատվածը, մյուս ծայրում նեղանալով՝ ձուլվել են խաչաթևի պատին նրա գագաթում: Տաճարի երկրորդ աստիճանի բուրգակ պատի ճիւղը վերեւում ճկարագրված կիրառման կերպով կազմում է Ջվարթնոցը կառուցողի ճանաչողական փայլատեղիները: Աճա այստեղ է, որ նա եզակի է. աճախաղանջ: Եվ ճի՞նք Ջվարթնոցն իր նախադասի բրեք հեռացել, բարձրացել է, հղկվել և դարձել հայ ժողովրդի մեծ ստեղծագործություն, ապա այդ վերաբերում է նաև հիշյալ հանգույցի յուրօրինակ լուծմանը, որն ինքնին մի համարձակ խիզախում է: Նրա նշանակությունը, սակայն, ըմբռնվում է ոչ բոլորի կողմից և ոչ միանգամից: Այն հասկանալի է հատկապես, երբ ուսումնասիրությունը կատարվում է հանգամանորեն և անպայման Ջվարթնոցի ավերակում:

Քորամանյանի մոտ տաճարի երկրորդ աստիճանի բոլորակ պատի հիմքը կազմող Քաղերը անվանվում են «աղեղներ», սակայն այս վերջիններիս և խաչաթևերի ու մյուս մուլթերի էջով ստացված եռանկյունաձև տարածությունները բլրեցված և պատկերված են ֆանեզակազարդ, զմբեքարդ կամարներով: Այստեղ, հաս, կարծես ակներև է Քաղի գաղափարը:

Աշխատությունների երկրորդ զրբի 90 էջում Քաղը Քորամանյանի կողմից անվանվում է «կամար»: Ահավասիկ «աարբեր ձևով կտրված են զարեւան ծածկող կամարներու ֆաբեր...»: Մեզ հայտնի է, որ Քորամանյանն իր վերակազմության նախագծում զարեւան ծածկել է Քաղով, միևնույն այն, ինչպես տեսանք, անվանում է «կամար»:

Վերահիշյալը հիմք է տալիս համոզվելու, որ Քորամանյանը վերակազմության երկրորդ աստիճանի բոլորակ պատը ծանրացնում է ոչ թե վտիտ աղեղի վրա (մեր այսօրվա հասկացողությունը), այլ արժիատու-

յակ այդնորը խաչաթևերի գագաթների միացնող լայնաթուխ Քաղերի (լայն կամարների)՝ վրա:

Քնական է, որ ճարտարագետ Տեր-Սարգսյանը դեռևս ավերակում չեղած, անհնար է համարել մեծաթուխը երկկոր քարե կամարների վրա դնել տաճարի երկրորդ աստիճանի հսկայական ծանրությունը:

Գոկտոր Կուզնեցովը Տեր-Սարգսյանից շորս տասնամյակ հետո իր ուսումնասիրության մեջ երկրորդ աստիճանի բոլորակ պատի հիմքը՝ կամարաթաղը շնկատելով դարձյալ երկկոր կամարի և ոչ Քաղի ձևով պատկերացրեց (չնայած տեղում Քաղերից մեկը առկա է մինչև այսօր և նրա ինչ լինելը պարզ էր Քորամանյանին) և, դրանից ելնելով էլ, սովյալ կոնստրուկցիայով տաճարի իրականացումը համարեց անհնարին:

Ճարտարագետ Մնացականյանը, նույն նկատառումներով, և Քորամանյանի «կամար» խոսքը նույն ձևով ընդունելով, ինչ որ Տեր-Սարգսյանը և Կուզնեցովը, չի ընդունում երկրորդ աստիճանի բոլորակ պատի գոյությունը: Նա չի համարձակվում երկկոր կամարներով ստեղծված, և կամ լայնաթուխ Քաղերի՞ թեք տաշվածքով սրված եզրագծի վրա բարձրացնել հիշյալ երկրորդ աստիճանի

2 Ջվարթնոցը հետազոտողները պարզապես և թուրիմացաբար Քորամանյանի «կամար» խոսքը հասկանում են ոչ որպես կամարակապ Քաղ, այլ լուր որպես ժապավենաձև կամար:

3 Մնացականյանը «Ջվարթնոցի մասնակի վերակազմման հնարավորության մասին» հոդվածում (սովետական արվեստ 1957 թ. № 1, էջ 50—51) զեռնեղել է վերակազմման նախագծի էսքիզ կատարված արտեստերիկ ձևով, որտեղ բոլորակ սրահի Քաղի մի եզրը հենելով դրսի բոլորակ պատի վրա, մյուս եզրը հենել է ոչ թե մեծաթուխ Քաղի երկկոր եզրին (որը և բացակայում է էսքիզում), այլ խաչաթևին, մի քան, որ անտարակույս սխալ է (և կամ թյուրիմացություն): Հիշյալ էսքիզում առկա է նաև արեւելյան ուղղանկյուն կառուցվածքը, բոլորված եռաստիճան որմնախորտիով: Արդ, եթե Մնացականյանը հիշյալ կառուցվածքը ինչպես տեսանք վերևում, չի համարում տաճարի օրգանական մասը, ապա ինչու է խորհուրդ տալիս նույնիսկ մասնակի վերակազմման դիպոստ այն բոլորի

1 Քորս Քորամանյան — Աշխատությունների 1 ծածկում, էջ 248:

բոլորակ պատր: Բայց ահա իր վերակազմութեան նախագծում այդ հիմքի վրա նա հենում է դարձյալ զգալի ծանրութուն, որ ստացվում է առաջին աստիճանի թեք ծածկից ու բոլորակ սրահը ծածկող թաղակետից և, բնորոշ մինչև երկրորդ աստիճանի հիմքին հասնող բոլորակ պատից:

Եթե Մնացականյանը Քորամանյանի մոտ տեսնում է լոկ ժապավենաձև լայնաթուղ կամար ու հավատ չի բնծայում, ապա ինքը ընդունելով լայնաթուղ թաղ մի շարք քարով և բարակացրած եզրերով, որի նկատմամբ դարձյալ թեքահավասար է, էլ ինչպե՞ս է վերոհիշյալ զգալի բեռը դնում թաղի եզրին:

Իսկ եթե խնդիրը կայանում է բեռի շատ և ու քիչ լինելուն, ապա պետք է հաշվարկում կատարել նախքան վճռական եզրակացությունների հանգելու:

Քորամանյանի Չվարթնոցի վերակազմութեան նախագծում երկկոր կամարի և կամ թաղի տարողունակութեան մասին խոսելիս, Մնացականյանը ոչինչ չի ասում նրանց բետոնակուռ լինելուց. և վերևից եկող բեռը կրելու պարտականությունը թողնում է միայն և միայն մեծաթուղ թաղի քարաշար եզրին. «...չի կարող տարակուսանք շատաչացնել— շուրջ ինը մետր թուխը ունեցող թաղերի այսպիսի թեքությունը, երբ կենտրոնական մասում քարի բարձրությունը կազմում է ընդամենը 36 սմ.»: Եվ ապա. «...այս հանգամանքն իր հերթին մի լրացուցիչ փաստարկ է հանդիսանում Քորամանյանի նախագծում այնքան նշանակալից գերխաղացող երկկորը յարուսի ոռոտնդաձև Կատի բացակայությունը հիմնավորելու համար»: Եթե Իսկապես Մնացականյանն այստեղ տեսնում է միայն և միայն քարե կոնստրուկցիա, ապա նա ինքն էլ է՝

որմոնախորհելով, ինչպես ցույց է տրված Քորամանյանի մոտ:

Քերև եզրակացնեք, որ Մնացականյանի վերոհիշյալ նախագծում արված է դեռևս այն ժամանակ, երբ նա չէր բնորոշում նաև մեծաթուղ թաղերի գոյությունը, ինչպես և արևելյան կառուցվածքը համարում էր տաճարի կառուցման ժամանակակից:

1 Տեղեկագիր — 1959 թ., № 9, էջ 57:

սխալվում, որ այնուամենայնիվ որոշ լավոր նրան բեռնավորում է, որովհետև այսպիսի երկկոր կամարը ինքն իրեն չի պահի, էլ ու՞ր մնաց լրացուցիչ բեռ:

Սակայն երբ Մնացականյանը խոսում է Գազկաշենի մասին, փորձում է հակաճանել Քորամանյանին, քաղաքապետության տակ է առնում կառուցողին (հիշելով Տրդատի անունը), գրում է՝ «այս շրջանում ևս լայնորեն օգտագործվում է հնում այնքան լավ հայտնի, հիմնական կռող քաղերը երկրորդ կորեթունայա քաղերով քեթապանելու տեսնելիքն...»: Իսկ ո՞վ պիտի խանգարած լինի Ջրվարթնոցը կառուցողին վերոհիշյալ «Տեսնելիքն» կիրառելու իր շինարարության մեջ և հատկապես քննարկվող երկկոր կամարներում և կամ թաղերում: Այստեղ մոտեցման միտումնավորությունը և ինքնահակասումը առկա է Չէ՛ որ հենց այդ տեսնելիքի գործադրողումը Չվարթնոցում հենց այդպէ՛ս էլ երևում է: Չէ՛ որ Չվարթնոցի, երկրորդ աստիճանի ողջ ծանրությունն իրենց վրա տարել են հենց այդ տեսնելիքայով իրականացված շորս մայր մուլթերը, շորս խաշաթները և շորս արծվախոյակ սյուները՝ միասնաբար (և ոչ քարակոփ լղարիկ ժապավենաձև կամարները): Սակայն այդ հսկայական ծանրությունը փոխանցվել է վերոհիշյալ հիմքի մասերին ոչ անմիջապես, այլ հենց այդ նույն տեսնելիքայով իրականացված շորս երկթաղերը հանդիսացող հսկայածավալ քարաբետոնակուռ զանգվածների միջոցով: Տվյալ զանգվածներից յուրաքանչյուրի երկարությունը հասնում է մոտ 18 մետրի³, լայնությունը՝ ծայրերում 98 սմ. (խաշաթների պատի հաստությունը), մեջտեղում՝ 5 մետրի (զմբեթակիր 3/4 սլան եզրից մինչև արծվախոյակ սլան դրսի եզրը): Չանգվածի բարձրությունն է 2,75 մետր

2 Տեղեկագիր — 1959 թ., № 4, էջ 80:

3 Իրականում 20 մետր է, սակայն զանգվածն իր երկու ծայրերում ձուլվում է խաշաթների զազաթների պատի հետ և առանձին չի կարողացվում, այդ պատճառով էլ երկարությունն ամենածայրից մեկական մետր պակաս է հաշվվում:

ամենաբարակ տեղում (Քաղերի գագաթում) և 6,0 մետր ամենահաստ տեղում (արծվախոյակ սյան և հենց մուլթի վրա):

Այսպիսով, լայնաթիռը Քաղերի սուֆակերտ հարթությունները հանդիսացել են հիշյալ զանգվածների երեսասպառումը միայն:

Անշուշտ, չի կարելի սասել, թե հիմքի ո՞ր մասի վրա ավելի շատ բեռ է եկել, կամ ո՞ր էլեմենտն է գտնվել գերլարվածություն վիճակում, վերոհիշյալ զանգվածները գտնվել են մի ստատիկ հավասարակշռված դրուժյան մեջ, երբ նրանց վրա շարունակել են բարձրանալ մայր մուլթերը՝ նույն իրենց հիմքի կտրվածքով-չափով ու ձևով մինչև գմբեթա՝ միջև իրենց, խաչաձևերի պատերը՝ մինչև իրենց կիսագմբեթավոր ծածկերը նույն իրենց կորագծով ու հիմնական շափերով:

Տվյալ զանգվածների վերոհիշյալ մասերի հետ զուգահեռաբար բարձրացել է նաև երկրորդ աստիճանի բուրբակ պատը, հասնելով մինչև խաչաձևերի կիսագմբեթների հիմքը, իր ներբեկում շունենալով, սակայն, սեփական հիմք: Այս պատը բոլորակ սրահի երկրորդ հարկաբաժնում չի եղել խուլ, նրա վրա եղել են 23 կամարակապ բացվածք (արևելյան արսիդի կողմից եղել է խուլ), ինչպես և իր վերնամասում տաճարի երկրորդ աստիճանում՝ 32 լուսավոր պատուհան: Այս պայմաններում, ահա, հսկայածավալ զանգվածներն իրենց բուրբակ՝ եզրագծի վրա ունեցել են

երկրորդ աստիճանի թմրուկի բեռը: Հստ որում, զանգվածի և կամ թաղի եզրագծի գագաթը մի ամբողջ մետրով դուրս է կարկանդակ արծվախոյակ սյան և խաչաձևի գագաթի միացման ուղղագծից: Եվ հենց այդ մասերում զանգվածի բետոնի մեջ մխրճված թաղի բարերն ունեն մեկ, մեկուկես մետր և ավելի երկարություն (տես նկ. 14):

Մեծածավալ զանգվածի այն մասերում, թաղի գրեթե գագաթում, որտեղից սկսվում է բուրբակ սրահի քարակերտ թաղածածկը, սովորական շարքի քարեր մեծ երկարությամբ մտնում են շաղախի մեջ, փաստորեն դառնալով նոր թաղեր քարի մի քանի շերտից կազմված, ինչ փուլթ, թե նրանց կարերը հորիզոնական են և շունեն մեծաթիռը թաղերի եզրաքարերի տեղք: Այս մասին է ահա, որ Քորամանյանը գրում է. «Տարբեր ձևով կտրված են գալերեան ծածկող կամարներու (Քաղերի—Տ. Մ.) քարերը, այս քարերը կտրված են նեղ ճակատով 35—55 սմ. մինչև 225—230 երկարությամբ, իսկ բարձրությունները մոտավորապես մինչև մեկ մետր՝ պատին մեջ թաղված հանդստին մոտերը...»:

Հիշյալ քարերի աշխատանքն ու բեռնավորվածությունը թերևս շատ չի եղել, եթե նկատի ունենանք զանգվածների բարձրության հսկայական շափերը (3—6 մետր), որոնք իրենց վրա կարող էին տանել շատ ավելի բեռ, քան տարել են:

ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՀՍՇՎԱՐԿՈՒԹՄՆԵՐԻ ՄՄԱՍԻՆՑ

Կոնստրուկցիայի նման աշխատանքի ոլյայմաններում մի հատուկ հետաքրքրություն է ստեղծվում արծվախոյակ սյան շուրջը. չէ՞ որ ուսումնասիրողներն ընդգծել են նրա

«մեծ գերլարվածությունը» վերևից եկող ծանրությունից տակ: Այդպիսի հաշվարկում կատարել է Կուզնեցովը, կատարել է նաև Մնացականյանը, վերջինս, սակայն, իր աշխատու-

1 Ք. Քորամանյան, գիրք երկրորդ, էջ 90:
2 Հայկական ՍՍՌ ԳԱ Քղթակից-անդամ, Ծրանի Քոլիտեխնիկական ինստիտուտի ամբիոնի վարիչ, զոկտոր, պրոֆեսոր Օգեն Մուրադի Սապոյնյանը և «Հայ-հիդրոտեխնիկա» ինստիտուտի զխավոր ինժեների տեղակալ, հանրապետության վաստակավոր շինարար Հարթա Գեղամի Սարգսյանը այս և նախորդ գլուխը

ձեռագիր վիճակում նայելով հայտնել են հետևյալ կարծիքը.
«Մանթանալով ճարտ. Տ. Մարությանի «Ջվարթնոց և զվարթնոցատիպ տաճարներ» աշխատությունը, համաձայն ենք նրա եզրակացությունների հատկապես տաճարի կառուցելակերպի և կառուցվածքի աշխատանքի վերլուծությանը»

թյան մեջ այդ հաշիվները չի հրատարակել: Հիշյալ հաշվարկումները կատարվել են վիճակում ասված ձևով, այսինքն՝ երկրորդ աստիճանի բոլորակ պատի 10 մետր լայնության մի հատված ծանրացրել են արծվախոյակ սյան վրա, վերջինս մեխանիկորեն անշատելով բեռի հիմնական մասն իր վրա վերցնող մայր մուլթինը:

Հաշվարկման այդ ձևը կարելի է կիրառել աշխատող կառուցվածքի հարթ սիստեմներում, մինչդեռ նրա գործադրությունը ամբողջական տարածական սիստեմում, ինչպիսին է Ջվարթնոցի կառուցվածքը, ճիշտ չէ, և հենց այդ սխալն էլ հետազոտողներին դարձրել է թյուրիմացության զոհ: Համաձայն Կուզնեցովի հիշյալ հաշվարկման, միմիայն պատերից արծվախոյակ սյան հորիզոնական կտրվածքի յուրաքանչյուր քառակուսի ասն-

ա. Ջվարթնոցի կառուցողները գիտակցել են կառուցվածքի մեջ առաջացած ուժերի փոխազդեցությունը, նրանք, անկասկած ստեղծել և ունեցել են կառուցողական որոշակի կանոններ, ճիշտ են օգտագործել շինանյութերը ըստ տեսանկյունի և ամրության: Կրող էլեմենտները պատրաստել են քարի առավել ամուր տեսակներից (հիալո-տրախի-անեզիտներ և այլն), իսկ կրվող մասերը ստեղծել են թեթև շինանյութերի օգտագործմամբ (չեշաքարի, պեմզաներ և այլն):

բ. Կառուցվածքի միակտորությունը (մոնոլիտությունը) պահպանելու համար օգտագործվել է բետոնը, որը կապվել է շարվածքի հետ մեծ խորության պոչավոր քարերի միջոցով:

գ. Կառուցվածքի պատասխանատու մասերը ստեղծվել են միակտուր քարերից (սյուներ և այլն), որոնց միացվել են երկաթով, արճիճի գործադրմամբ:

դ. Անկասկած Ջվարթնոցի կառուցվածքն աշխատում է իբրև ամբողջական տարածական սիստեմ, և հետևաբար վերինց կողմ բեռը փոխանցվում է ներքևում գտնվող կրող էլեմենտներին (սյուներին, պատերին, մուլթերին) միակտուր քարաբետոնակուռ օգակի միջոցով, ուղիղ համեմատական կրող էլեմենտների կրողունակության: Այս տեսակետից նախկին ուսումնասիրողներ՝ Հարտարպետության դիկտոր-պրոֆեսոր Կուզնեցովի և գիտության թեկնածու Ս. Մնացականյանի հաշիվները չեն արտահայտում կառուցվածքի տարածական աշխատանքը, քանի որ նրանք հաշիվները կատարել են հարթ, իրարից անշտ սիստեմների համար և հանգել են սխալ եզրակացության:

տիմետր մակերեսի վրա, գալիս է 40 կիրառմամբ ծանրություն:

Այս աշխատության առթիվ մեր կողմից ևս արվեց հաշվարկում պայմանական ձևով, ընդունելով նախորդների հաշվարկման մեթոդը: Պարզվում է, որ 40-ի փոխարեն ստացվում է 63 կիրառմամբ: Եթե իրականում այսպես լիներ, բնական կլիներ խոսել ոչ միայն քարի գերլարվածության, այլ նաև ողջ կառուցվածքի, այդ թվում պատերի գերլարված աշխատանքի մասին: Այսպես լինել չէր կարող, չէ՞ որ Ջվարթնոցի պատերի կառուցման ընթացքում, որպես շաղկապող նյութ՝ օգտագործված է կիրը, իսկ կրաշաղխով կառուցված պատերը շատ ավելի պակաս լարվածության լեգաբում ուղղակի քայքայվում են՝:

Հետազոտողներ Կուզնեցովն ու Մնացականյանը արծվախոյակ սյան գերլարվածությունը հիշատակելիս ամենեկին չեն ակնարկում օգտագործված քարի տեսակի և ամրության մասին, այնքա է եղրակացնել, որ նրանք նկատու ունեն տեղական սովորական տուֆերը: Մինչդեռ, ինչպես ասվեց նախորդ էջերում, Ջվարթնոցի կառուցողը բոլոր սյուները պատրաստել է ոչ սովորական, այլ հատուկ քարից: Ասվեց նաև, որ Քորամանյանը այս խնդրին տալիս է կարևոր նշանակություն: Արդ հասկանալի չէ, թե ինչու՞ Ջվարթնոցը հետազոտողները, ոչ Կուզնեցովը և ոչ էլ Մնացականյանը, ոչ մի խոսք և հիշեցում չեն անում այդ մասին, նրանք լուռ են, բայց չէ՞ որ չեն լուռվ իրենք՝ բեկորները: Զէ՞ որ այլ բան է այն վրա ծանրացնել զանգվածներ և պատեր սովորական շինանյութերից, այլ բան է՝ պեմզաներից: Այլ բան է սյուրը կառուցել սովորական տուֆերից, այլ բան՝ առավել ամրակուռ քարից:

Ահավասիվ, այն քարերը, որոնցից Ջվարթնոցի կառուցողը, պատրաստել է սյու-

1 Ժամանակավոր տեխնիկական պայմաններ, 1956 թ. (աշուուակ 9 և 10)»

ներք, ունեն սահմանային կրողունակութուն ոչ թե 65, 100, այլ 312—358 կիլոգրամ մեկ քառակուսի սանտիմետր մակերեսի վրա:

Սյուս կողմից շինութիւն խոշոր զանգվածները հիմնականում ստեղծված են թեթև արեւմտեաներից, որոնց քաշը սովորական տուֆի քաշի կհասն է կազմում և ավելի պակաս: Այս պարագաներում կրող սյան լարվածութիւնը, անկասկած, այլ է քան ներկայացնում են վերահիշյալ հետազոտողները:

Քանի որ հաշվարկման վերահիշյալ ձևը որակվում է ոչ ճիշտ, այժմ ներկայացվում է հաշվարկումն այն ձևով, որպիսին հիշատակվեց նախորդ էջերում:

Հաշվարկման առաջարկվող ձևը նորութիւն չէ: Նկատի ունենալով, որ Զվարթնոցի կամախը իրենից ներկայացնում է մի ամբողջական տարածական սիստեմ, ուրեմն նրա՝ կառուցվածքի հաշվարկումն էլ պիտի կատարել համապատասխան մեթոդով:

Քանի որ տաճարի առաջին աստիճանի վերահարկից վերև գտնվող կառուցվածքի որոշ ծանրութիւնը, առաջին աստիճանի առաջին հարկաքարձին կառուցվածքներին և հիմքին է փոխանցվում նախորդ էջերում նկարագրված կամարաթաղեր կազմող հսկայածավալ քարաքետոնյա կերտվածքներով, (տե՛ս գծ. 14), հետևաբար հնարավոր է դառնում վերինից եկող որոշ ծանրութիւնը հավասարապես բաժանել կառուցվածքի կրող մասերի՝ մայր մուլթերի, խաչթևերի և արծվախոյակ սյունների հորիզոնական կտրվածքների մակերեսների վրա միասին վերցրած:

Արծվախոյակներից վերև տաճարի որոշ քաշը (հաշված արտաքին մեծ թմբուկն ու բոլորակ սրահների կիսաթաղերը) կազմում է 6525 տոննա¹. կրողունակութիւն իմաստով տաճարի ամենաթույլ կտրվածքն անցնում է

արսիղները կազմող սյունաշարով: Այդ կտրվածքում կրող կառուցվածքների մակերեսն ստացվում է 54,4 քառակուսի մետր, պարզ բաժանումով ստացվում է՝

$$6525000 \cdot 544000 = 12 \text{ կգ/սմ}^2.$$

Ուրեմն, տաճարի կրող էլեմենտների, այդ թվում և արծվախոյակ սյունների յուրաքանչյուր քառակուսի սանտիմետր մակերեսի վրա, վերինից ծանրութիւնն է գալիս 12 կիլոգրամ և ոչ 40—63, որ ստացվում է նախորդ ուսումնասիրողների ձևով հաշվարկելուց:

Վերահիշյալը ցույց է տալիս, որ տաճարի աշխատող կառուցվածքներում եղել է նորմալ լարվածութիւն:


Դարձալ պայմանական ձևով հաշվելու դեպքում արսիղների զագաթներում 10 մետր ֆորմայի վրա եկող ծանրութիւնը հասնում է 436 տոննայի, իսկ 4 սյունների հորիզոնական կտրվածքների մակերեսների գումարը 1,12 քառակուսի մետր է: Այս դեպքում ամեն մեկ քառակուսի սանտիմետր մակերեսի վրա կգար 436000:11200 = 38,9 ≈ 39 կիլոգրամ ծանրութիւն:

Այս սյունները, որ միակտուր ամրակուս տուֆերից են, ի վիճակի են տանել նման բեռ, բայց ինչպես ցույց է տալիս տաճարի կառուցելակերպը, կառուցողը չի հանդուրժել, որ հաստաքեստ մուլթի յուրաքանչյուր միավոր մակերեսը լինի թերբեռնված, իսկ նուրբ կառուցվածքները—0,6 մետր տրամագծով սյունները՝ համեմատաբար ծանրաբեռնելված: Այս նշանակում է, որ արսիղների զագաթների վրա վերինից եկող ուժերը վերահիշյալ բետոնաղանգվածների միջոցով փոխանցվել են մայր մուլթերին (տե՛ս գծ. 15): Եթե սովյալ հանգույցի կառուցումը իրականացված չլիներ այս ձևով, ապա տաճարում առավել ծանրաբեռնված մասերը պիտի լինեին խաչթևերի սյունները (չորսական սյուն ամեն զագաթում):


Նկատի ունենալով այն, որ Զվարթնոցում

¹ Մեկ խորանարդ մետր քաշը ընդունելով 1,8 տոննա:

² Հաշվարկման ընթացքում պայմանականորեն արեւմտեան արսիղը և ընդունվել է որպես սյունականառաջարկ:



Պժ. 14. Զվարթնոցի ֆարաքնոնակաւ օգակամէ զանգզամի ամբողջական տեսքը վերեկից



Պժ. 15. Զվարթնոցի ֆարաքնոնակաւ զանգզամի մեկ-տասարդի տեսքը բլուրակ սրամի կողմից

մայր մուլթերն ունեն խիստ արտասովոր մեծ շափեր (կտրվածքում՝ 11,47 ք. մետր), ինչպես և այն, որ այդ մուլթերը տաճարի առաջին աստիճանի սահմաններում միացված են միաձուլված մեծ բարձրության ու լայնության քարաբեռոնակուռ օղակով, հնարավորություն է ընձեռնվում մեզ ավելի առաջ գնալ և եզրակացնել, որ արծվախոյակ սյուներից վերցունվող շենքի մասերը՝ այդ բվում վերահասարկաց, առաստի երկրորդ, ինչպես և երրորդ աստիճաններից եկող ողջ բեռը, վերահիշյալ գառավածների փոխանցումով, իրենց վրա են վերցնում բվով շուր հաստաբեռտ մայր մուլթերը: Եվ եթե վերևից եկող ծանրությունը կազմում է 6525 տոննա, իսկ մայր մուլթերի կտրվածքի ընդհանուր մակերեսը՝ 45,6 քառակուսի մետր է, ապա մեկ քառակուսի սանտիմետր մակերեսի վրա եկող բեռը ըստացվում է.

6525000:456000—14,3 կիրոգրամ:

Տաճարի ավելի քան երեք հարյուրամյա լյանքը կանգուն վիճակում անպայման հաստատում է վերոհիշյալ եզրակացությունը:

Ինչպես պարզվում է, Ղվարթեցում օգտագործված ամուր տուֆերով, հիանալի շալախով, հմուտ կառուցելակերպով ստեղծված կառուցվածքների անկասկած ի վիճակի են եղել կրելու այնպիսի բեռ, որպիսին ըստացվում է հաշվարկումներով: Վերոհիշյալ աշխատանքները ողջ լիակատարությամբ ցույց են տալիս, որ Ղվարթեցը կառուցող ճարտարա-լետը արեսպետել է իր ժամանակի հաշվարկման մեթոդներին, տեղյակ է եղել իր եւրալաժի բոլոր մասերում գործող ուժերի եծարյալը և կառուցվածքի ներքին նորմալ լշխաասանին:

Այս նշանակում է, որ Ղվարթեցը կորսնակվ է ոչ երբեք «կոնստրուկտիվ պակասարյուններով» և հազար անգամ ոչ նրա ստացողի մեղմով:



Այժմ, այս ամենից հետո, հետաքրքրու-յան համար հաշվելու փորձ ենք անելու, թե՛

եթե մտովի պատկերացնենք, որ արծվախո-յակ սյուները հեռացվեին այնտեղից, որտեղ եղել են, արդյոք Ղվարթեցը կանգուն չէ՞ր մնա, և եթե ապացուցվի, որ կանգուն կմը-նար, ապա այդ էլ կնշանակեր, որ արծվա-խոյակ սյուներում չի եղել լարված աշ-խատանք, հակառակ այլ ուսումնասիրողների պնդման նրանց ամեն գերլարվածությանը վե-րաբերյալ:

Նախորդ էջում կատարված հաշվարկում-ներով պարզվեց, որ նույնիսկ առանց խաշա-թների և արծվախոյակ սյուների մասնակցու-թյան, մայր մուլթերն ի վիճակի են եղել ի-րենց վրա տանելու ավելի բարձրում գտնվող ողջ ծանրությունը: Հետևաբար հաշվարկման հաշորդ քայլում պետք է կատարել կառուց-վածքի կայունության ստուգում:


Գարձյալ պայմանական ձևով ենթա-դրենք, որ տաճարի պատերը վերևում ճեղք-վածքներ են տվել, տարածական սխառմեք, որպես այդպիսին, գոյություն չունի և հետե-վաբար տաճարի մեկ քառորդն աշխատում է առանձին: Եվ ահա արծվախոյակ սյունը իր տեղից բացակայելու դեպքում երկրորդ աստիճանի բոլորակ պատն իր հիմքով (տա-ճարի մեկ քառորդի սահմաններում) պիտի ծանրանար մեծածավալ զանգվածի վրա, որն իր մեծ մասով նստած է մայր մուլթի և եր-կու կիսախաշաթների վրա. իսկ վերևից, որ-պես պահող ուժերի հիշյալ զանգվածի վրա ծանրանում են մայր մուլթի և կիսախաշաթե-վերի պատերի շարունակությունը, ինչպես և երկու խաշաթների ծածկող երկու կնիս—կիսա-զմբեթներն ու հենց բուն զմբեթաթմբուկի ն զմբեթի քառորդը: Զանգվածի մնացած մասը չունենալով հիմք, պիտի աշխատեր կոնսոլի ձևով, որի ամենամեծ դուրս կառուցվածքը պիտի գտնվեր արծվախոյակ սյան տեղով՝ 1,70 մետրի շափով: Կոնսոլի մայրում պիտի ազդեին բոլորակ պատի ծանրությունը, բո-լորակ սրահների կիսաթաղերը, ժամանակա-վոր բեռը—մարդիկ: Այսպիսի պայմաննե-րում ուժերի շեղոք գոտին պիտի անցներ այն գծով, որն ստացվում է մայր մուլթի հետևա-

մասի և կիսախաչաձևերի դրսի շրջափողով (տես գծ. 12): Մայր մույթի այն մասը, որ նստում էր արծվախոյակի վրա, որ ունեւ մոտ 6—6,5 մետր հաստութուն, հանդես կգար կրոնշտեյնի դերում:

Ոչ ոք չի տարակուսում, որ այդչափ հաստ քարաբետոնակուռ զանգվածը, որպես կոնսոլ պիտի աշխատեր ու շկոտրվէր, չէ՞ որ բեկորների արդի վիճակը այդ է պակասուցում¹: Եվ քանի որ գործող ուժերը շեղոք գոտուց զըտնվում են գրեթե հավասար² հեռավորության վրա, հետևաբար մնում է լոկ համադրել շեղոք գոտու երկու կողմերի քաշերը և հետևել հավասարակշռության վիճակին:

Նախորդ հաշիվներից հայտնի է, որ արծվախոյակ սյան վրա եկող ծանրությունը 10 մետր ֆրոնտում հասնում է մոտ 280 տոննայի, մինչ նույն 10 մետր ֆրոնտում պահող ուժերի՝ մայր մույթի և երկու խաչաձևերի մեկուկեսական կամարաթուղջի սահմանում ծավալների քաշը հասնում է ավելի քան 515 տոննայի:

Այսպիսով ստացվում է, որ պահող ուժե-



Գծ. 16. Կտրված մայր մույթով և արծվախոյակ սյունով

¹ Այս միտքը թերևս առիթ տա առարկության, որ հիշյալ զանգվածներն իրականում չեն կոտրվել, որովհետև արծվախոյակ սյունները եղել են իրենց տեղերում: Այդ հակահայել է, իսկ եթե ընդունենք նախորդ հետազոտողների այն թեզը, թե այդ սյունները եղել են գերլարված և դարձել են առիթ տաճարի խորտակման, ապա պետք է հետևեցնել, որ գերլարված սյուններն ի վերջո քայքայվելով դադարել են աշխատելուց (նույնն է թե գոյություն չեն ունեցել), այդ մոմենտում էլ պետք է որ կոտրվեին զանգվածները ու երբ փլվեր տաճարը՝ Փաստն այն է, որ տաճարը փլվել է, իսկ մասսիվներն այդ տեղերից չեն կոտրվել:

² Հարավ-արևելակողմի զանգվածի տաճարի ներքև նայող մասն այժմ հարթ վիճակում է, այդ ոչ թե կոտրման հետևանք է, այլ ժամանակին տաշվել է հանիկ Գաղյանի կողմից իրեն ամառային մահճակալ դարձնելու նպատակով, հետո միայն թեքվել է մի կողմի (ավերակի երկարությամբ պահակ-պահանջայան Ասատուր Հովհաննիսյանի պատմածից), եվ ընդհանրապես բեկորի կոտրման տեղը չի անցնում վերահիշյալ հարթվածքով:

³ Իրականում պահող ուժերի քաղուկը (հեռավորությունը) ավելի մեծ է, հետևաբար պահող մոմենտը ավելի մեծ:

րը գրեթե կրկնակի չափով գերազանցում են կոնսոլի ծայրում ազդող ուժերին: Հավասարակշռության համար հենց այդքանի անհրաժեշտություն կա նաև այժմ գործող նորմատիվներով: Վերահիշյալ հաշվարկումով պարզ է դառնում, որ մայր մույթների, ինչպես և ողջ կառուցվածքի կայունությունը պիտի մնար անսասան, նույնիսկ այն դեպքում, երբ արծվախոյակ սյունները այլ և այլ առիթներով սբացակայեցին իրենց տեղերից:

Ի վերջո կըրակացվում է, որ արծվախոյակ սյունների³ «հերլարվածությունը» չի հանդիսացել տաճարի կործանման առիթ:

³ Արծվախոյակ սյունները մեծ դեր են խաղացել տաճարի կառուցման ընթացքում: Օրինակ, վերահիշյալ մեծածավալ բնօրհագանդմաները իրականացնելիս, երբ դեռ կառուցված չեն եղել պահող ուժերը (մայր

ՏՄՃԱՐԻ ԿՈՐԹՈՆՄԱՆ ՊԱՏՃԱՌՈՒՆԵՐԸ ԵՎ ԺԱՄՄԱՆԸ

Ընդհանուր առմամբ համամիտ լինելով Քորամանյանի հետ Զվարթնոցի ներքին կազմաօժան կ արտաքին կոմպոզիցիոն պատկերի խնդրում, ժամանակակից հետազոտողների մեծ մասը բաժանում են զոկտոր Ա. Կուզնեցովի և Ա. Մնացականյանի այն կարծիքը, որ ինչպես Զվարթնոցը, այնպես էլ նրա օրինակով կառուցված տաճարները ունեցել են կարճատև կյանք և կործանվել են տվյալ կոմպոզիցիոն սխեմային յուրահատուկ կոնստրուկտիվ պակասությունների հետևանքով:

Այժմ, երբ աշխատության նախորդ գլուխներում հաստատվեց մինչ այժմ տարածում գտած վերոհիշյալ թեզի ոչ ճիշտ լինելը, ապա որո՞նք պիտի համարվեն Զվարթնոցի, և որո՞նք զվարթնոցատիպ մյուս տաճարների կործանման հավանական պատճառները:

Նախ, անհրաժեշտ է հիշյալ ուշադրանքներին յուրաքանչյուրը ուսումնասիրել առանձին-առանձին, կոնկրետ պայմաններում, ըստ նրանց տեղի, շինվանյալի, շինվակերպի և ժամանակի:

Վերևում պարզ դարձավ, որ Զվարթնոցում ոչ արժվատյակ սյունները, և ոչ էլ պատերն էին գերարվածության պայմաններում, ոչ երկկոր կամարներն էին վտիտ կամ ժապավենաձև, և ոչ էլ իրենցից ներկայացնում էին «գուռ» քարն կոնստրուկցիաներ:

Ասվեց նաև, որ ողջ կառուցվածքի ստատիկ հավասարակշռությունը կատարյալ է եղել:

Չէ՞ որ այլ պայմաններում նա չպիտի կարողանար կանգուն մնալ ընդհանրապես, էլ ո՞ր մնաց հարյուրավոր տարիներ: Հետևապես պարզ է դառնում մի բան, որ Զվարթնոցի և խաչքարի շարունակությունը դեպի վերև, արժվատյակ սյունների վրա է հիմնականում, ծանրացել զանգվածների զդայի մասը, ինչպես և վերահասարկի ներքին բուրակի պատը, երբ դեռևս այդ զանգվածների մոնոլիտությունը հասած չի եղել անհրաժեշտ ամրության, (որպիսին տեղի է ունենում անվազան ժամանակամիջոցում, հատկապես երբ շաղախը սրվում է կրով, ոչ ցեմենտով):

Ենթացաբար փակ երեք հարյուր տարի կանգուն պարելուց հետո կործանվել է արտակարգ մեծ ուժերի ներգործման հետևանքով:

Բնական ուժերից ամենահավանականը կարելի է համարել մեծ ուժի երկրաշարժը:

Հիմքում խաչաձև մեր եկեղեցիները իրենց ծավալային-տարածական կառուցաձևով բավական սեյսմակայուն են: Զվարթնոցի կենտրոնն էլ խաչաձև է, դեռ ավելին, այնտեղ խաչաթևերը բուրբակ պատով միացվել, կառուցվածքը դարձվել է մոնոլիտ, առավել սեյսմակայուն: Դրանով պետք է բացատրել, որ Զվարթնոցը չի կործանվել և դիմագրավել է այնպիսի աշխարհավեր երկրաշարժներին, ինչպիսիք են տաճարի կառուցումից քիչ անց՝ 7-րդ դարում և, ապա, 862 և 893 թթ. տեղի ունեցած երկրաշարժները, որոնք երկիրը վեր են ածել ավերակի, կործանել շատ կառուցվածքներ և նույնիսկ եկեղեցիներ: Այդ երկրաշարժներից հետո Զվարթնոցը շարունակել է իր կանգուն գոյությունը, ընդհուպ մինչև 10-րդ դարավերջը, իսկ այդ տարիներին, ըստ երևույթին, նման երկրաշարժներ չեն եղել, քանի որ պատմագրությունը չի հիշատակում այդպիսիք: Հետևաբար տաճարի կործանման առիթը չի եղել երկրաշարժը:

Տաճարի կործանման արհեստական պատճառ կարող էր լինել նաև թշնամական պալլ-թեցումը¹:

Ավերակների ուսումնասիրությունը ենթադրել է տալիս, որ թերևս տաճարը իսկապես պալլթեցվել է: Պարզապես որոշ քանակի պալլոցիկ նյութ է կուտակվել տաճարի ներսում, գուցե հենց գմբեթի շուրջը՝ խորշներում և գործողության մեջ է դրվել նրա քանդող ուժը: Այսպես, բոլոր կողմերից գրեթե փակված տաճարի ճիշտ կենտրոնում առաջացած վիթխարի պալլոցիկ վեր է շարտվել գմբեթը, այդ նույն պահին միաժամանակ

¹ Որպես պալլոցիկ նյութ, ենթադրվում է վառուղ, որը դեռ վաղ ժամանակներից հայտնի է եղել արաբներին:

Հավասար ուժով շահավորի ուղղութիւնում դեպի դուրս են հրվել արդեն իրենց ստատիկ հավասարակշռութիւն մեջ խախտված բոլորակ դասավորութիւնն առաջին և երկրորդ աստիճանների բոլոր պատերը, իսկ գմբեթը ուղղակի խորտակվել, ընկել է ցած¹, այն չի շարժվել մի կողմի վրա, յւշպաս կարող էր լինել հորիզոնական բնույթի երկրաշարժից խորտակվելու դեպքում: Այս եզրակացութիւնը հանգեցնում է համար հիմք են հանդիսանում այժմ ավերակում պահպանված երեք մեծածավալ զանգվածները, որոնք բոլորն էլ գրտնդվում են տաճարի արտաքին բոլորակ պատից դուրս, շահավորների ուղղութիւնում, իրենց տեղերից մոտ տասը մետր հեռավորութիւն վրա: Ինչ վերաբերում է ուղղածիպ բնույթի երկրաշարժներին, ապա այդպիսիք սովորաբար թույլ են լինում և հետևաբար պակաս վտանգավոր:

Պետք է նկատել, որ երկրաշարժի դեպքում, խիստ հաճախ տատանումների շնորհիվ կառուցվածքն աստիճանաբար խարխուլվում է և նրա մասերը, փվկելու, թափվում են

¹ Միանգամայն սխալ է Մնացականյանը, երբ գրում է «կործանումից հետո գտնվելով փլատակների երևանք, այդ յարուսների (երկրորդ և երրորդ—Տ. Մ.) քարերն էին անշուշտ, որ հավշտակվել էին առաջին հերթին, և պատահական չէ, որ այժմ մեզ այնքան քիչ բան է հասել երկրորդ յարուսից և ավելի ևս քիչ՝ տաճարի գմբեթից»: Տեղեկագիր № 9, էջ 65:

Այս քառաբորոն նշանակում է, որ իբր գմբեթը և երկրորդ յարուսը քանդվել են ավելի ուշ, քան առաջին յարուսը, չէ՞ որ այդպիսի պարագաներում միայն երանց քարերը կշտնվեն փլատակների լայսին: Մնացականյանը՝ նման արտահայտելով եզրակացութիւնն է հանգել իր իսկ սխալի հետևանքով, որ փաստորեն երրորդ աստիճանի անկա քարերը (պատահական կամարադեղներ և ալի) համարել է միայն և միայն երկրորդ աստիճանից:

Իրականում տաճարի երկրորդ և հատկապես երրորդ աստիճանների քարերը առային աստիճանի համեմատությամբ փոքր քանակ են ունեցել, և ապա, տաճարի փվկելու ժամանակ ընկնելով մեծ քարձորութիւնի փշով, խտնվել են հող ու խճիչ և հետագայում հետագծել ավերակից: Սրանով, ահա պետք է բացատրել, որ ավերակում տաճարի վերին աստիճաններից համեմատաբար քիչ բեկորներ են պահպանվել:

ցած, պատերի հիմքին մոտիկ, Միևշղեռ պայթեցման դեպքում՝ շենքի բավական խոշոր մասեր միանգամից նետվում են բավական հեռու: Հենց այդպիսին է պատկերը Ջվարթնոցում:

Այն հանգամանքը, որ հիշյալ զանգվածներն այժմ ընկած են մուշխնոզ անցնող առանցքների ուղղութիւնում, արծվախոյակ սյուների հիմքից մոտ 6—7 մետր հեռավորութիւն վրա, ցույց է տալիս նաև, որ ընդհուպ մինչև տաճարի կատարյալ խորտակումը, արծվախոյակ սյուները եղել են կանգուն և թնրես մեծածավալ զանգվածները ծանրացած արծվախոյակ սյուների վրա իրենց տեղից շարժվել են վերջիններիս երկարութիւն շարժով: Հենց այդ պահին էլ հիշյալ զանգվածներն անխտիր շուտ են եկել մեջքի, իսկ սյուները հանգիստ պահվել են հողին:

Համաձայն մեր մատենագիրների՝ Կիրակոս Կանաճակեցու և Մխիթար Այրիվանեցու ուղղակի վկայութիւններին, Ջվարթնոցը «ավերեցավ ի տանկաց» և «հակեցավ ի տանկաց»:

Նույն կարծիքին են Շախաթունյանցն ու Ալիշանը, այսինքն՝ Ջվարթնոցը ավերվել և օտարագրի քլնամիների կողմից:

Այսպիսով, ճշտությամբ հաստատվում է ավերակների մեր կողմից կատարված ինժեներական վերլուծութիւնի հիման վրա արված եզրակացութիւնը, որ տաճարը կործանվել է քլնամական զորձողայությունով:



Ջվարթնոցի շինութիւնում, նրա կառուցման պահից ի վեր, ինչպես ժամանակակիցներն ու տեղացիները, այնպես էլ հետնորդներն ու օտարները հիացել են և իրենց հիացմունքն արտահայտել զանազան առիթներով:

Հայ մատենագիրների գործերից հայտնի է, որ ընդհուպ մինչև 930 թվականը Ջվարթնոցը եղել է կանգուն:

Արար մատենագիր Ալ. Մուկադասին, Հայաստանում գտնվելուց մոտ 10 տարի հետո

985 թվականին գրած իր գրքում նկարագրում է Ղվարթնոցի ներքին տեսքն ու տիրամոր պատկերը՝ ավագ խորանի պատի վրա՝

Թագավոր Սմբատ II-ը, ճարտարապետ Տրդատի գործակցությամբ 988 թվականին հիմնադրել է Անիի Մայր եկեղեցին, որի շինարարությունը նրա մահվան պատճառով 989 թ. ընդհատվում է և, ըստ երևույթին, շարունակվում չորս տարի անց՝ 993 թ., երբ ճարտարապետ Տրդատը վերադառնում է Կոնստանդնուպոլիսից՝ Այա-Սոֆիայի կործանված գմբեթը վերականգնելուց հետո:

989 թ. թագավորական զանն է բարձրանում Գաղիկ I-ը: Ասողիկի վկայությամբ Գաղիկ I-ը ի կատար է ածում իր բարի ցանկությունը և 1001 թվականին հիմնադրում եկեղեցի՝ այդ ժամանակ արդեն ավերակ դարձած էջմիածնի Ս. Գրիգոր եկեղեցու [Ղվարթնոցի] շափերով և ճարտարապետությամբ:

Արդ՝ փորձենք հետաճուտ լինել, թե ե՞րբ Գաղիկ I-ը հղացավ այն ցանկությունը¹, որ Անիում կառուցի հուշան նեկեղեցի հայ եկեղեցաշինության պսակը կազմող Ղվարթնոցի ավանդական պատկերը հավերժացնելու մտադրությամբ:

Եթե այդ ցանկությունը Գաղիկ I-ի մեջ ծնվեց թագավոր դառնալուց անմիջապես հետո, ապա նա փոխանակ Մայր տաճարի շուրջ չորս տարի (մինչև 993 թ.) հողմահարման ենթարկված հիմքերը շարունակելու, կարող էր իրականացնել իր ցանկությունը և կառուցել Ղվարթնոցի կրկնօրինակը՝ զարդարելով իր թագավորության մայրաքաղաքը: Դեռ ավելին. հայտնի է, որ Հայաստանում միաժամանակ կառուցում էին մի քանի եկեղեցի, հետևաբար Գաղիկ թագավորն իր եկեղեցին կարող էր կառուցել Մայր տաճարի

կառուցմանը զուգընթաց, չպսակելով նրա ավարտմանը, մասնավանդ որ Մայր տաճարի կառուցման հոգսերը կրում էր հանգուցյալ թագավորի այրին՝ Կատրամիդեն:

Բնականորեն հարց է ծագում, թե ինչպես է Գաղիկ թագավորը համբերում և իր թագավորության 12-րդ տարում է միայն որոշում կառուցել Ղվարթնոցի կրկնօրինակը:

Այսպիսով, բավարար հիմքեր են ստեղծվում ենթադրելու, որ երբ Սմբատ II-ը հիմնադրում էր Անիի Մայր տաճարը 988 թ. և կամ չորս տարի անց, երբ Գաղիկ թագավորը (հատկապես Կատրամիդեն) 993 թ. վերսկսում էր Մայր տաճարի բուն պատերի կառուցումը, Ղվարթնոցը եղել է կանգուն: Ուրեմն Ղվարթնոցը «փլեյալ և կործանեալ» է եղել 993—1000 թվերի միջև և քաճ ապավորության տակ Գաղիկ թագավորը հղացել է Անիում կանգնել ևս մի Ղվարթնոց և Մայր տաճարի շինարարության ավարտման տարում էլ ճիմնադրել է եկեղեցին, որ հետագայում անվանվել է Գաղկաշեն:

Եթե Ղվարթնոցը կործանված լիներ շատ տարիներ առաջ, հավանական է, որ Ասողիկը չէր բավարարվի Գաղկաշենի կառուցման կապակցությամբ միայն խոսել նրա մասին, նա կխոսեր որպես առանձին երևույթ և կամ առնվազն «էր փլեյալ և կործանեալ»-ի սկզբում կգրեր «վաղո՞ւց» բառը:

Պատմական որոշակի աղբյուրներ, ինչպես և մեր ժամանակակից հետազոտողները, Գաղկաշենի կառուցող համարում են Տրդատին:

Անկախ այս ամենից, Թորամանյանը, ուսումնասիրած լինելով կառուցելակերպը Գաղկաշենում, չի բաժանում նախորդների կարծիքը: Մենք համամիտ ենք Թորամանյանին: Կասկածից վեր է, որ անձամբ Տրդատի ղեկավարությամբ կառուցված շինությունը, սովյալ ղեկյրում՝ Գաղկաշենը, պիտի դարձրի և ոչ տասնամյակների կյանք ունենար, այնպես, ինչպես նրա մյուս գործերը, այդ թվում նաև ս. Սոֆիայի գմբեթը, որ կանգուն է ցարդ շուրջ տասուկես դար:

¹ Сборник материалов по описанию местностей и племен Кавказа. XXXVIII, Тифлис, 1908 г. էջ 16. (տես պատմաբանասիրական հանդես № 4, 1959 թ., 4 արտ Ղաֆազարյան — Ղվարթնոց, էջ 183):

² К. Оганесян. Зодчий Трпат, 1951 г.

³ Նման բյուզանդական Կոնստանդին կայսեր ցանկության, որ Կոնստանդնուպոլսում կառուցի ևս մի Ղվարթնոց՝ զարդարելու իր մայրաքաղաքը:

Սակայն նկատի ունենալով, որ պատմագրութեան վերահիշյալ աղբյուրները Տրդատին հիշում են նաև որպէս Գագկաշենի կառուցող, ապա հնարավոր է մտածել, որ թերևս Տրդատը ստեղծած լինի Չվարթնոցի վերակազմութեան ընդհանուր ուղղագծերը՝ ինչպէս և կտրուր մասերի քանդակազարդերի էքսիզիները, որոնք պիտի անհրաժեշտ լինեին Գագկաշենի կառուցման համար, իսկ Ջրվարթնոցի մանրամասն չափագրութիւնը պիտի կատարած լինեն նրա աշակերտները: Սրանով էլ պետք է բացատրել Չվարթնոցի և Գագկաշենի հատակագծային և տարածական կառուցվածքների միջև նկատվող որոշ

տարբերութիւնները, որոնք չէին կարող լինել նախամտածված փոփոխութիւնների մտցնելու նկատառումներով:

Նույնպէս պետք է կարծել, որ տաճարի կառուցման գործը, Տրդատի արդեն ծեր հասակի սրտաճառով կատարած լինեն նրա աշակերտները:

Հայտնի չէ, թե մինչև ե՞րբ է ապրել Տրդատը, արդո՞ք կենդանի է եղել մինչև շինարարութեան ավարտը, թե ոչ:

Եթե Տրդատը մասնակցել է Գագկաշենի շինարարութեանը, ապա, մեր համոզմամբ, այս չափով միայն, և ոչ ավելի:

ՏԱՃԱՐԻ ԺԱՐՏԱՐԱՊԵՏՎԱՆ ՈՒՄ ՄԱՍԻՆ

Չվարթնոցը հայ ճարտարվեստի գլուխգործոցներից է և նրա ոճական առանձնահատկութիւնները, նրա կրած ազդեցութեան և աղբյուրի խնդիրները զգալի հետաքրքրութիւն են ներկայացնում: Դրա համար էլ տաճարի ուսումնասիրողներն անդադանում են այդ հարցերին և առանձնապէս զարմանալի չէ, որ հաճախ տարբեր կարծիքներին են հանգում:

Քորամանյանը Չվարթնոցի շինարարական օրինքները համարում է տեղական: Նա նկատի ունի՝ «Նախքան Չվարթնոց, կառուցվող մեծ թվով նշանավոր հուշարձաններ անվիճելի կերպով ցույց կուտան, որ տեղական ժողովուրդը միանգամայն զարգացած էր շինարարական արվեստի մեջ»: Ոճի խնդրում ևս Քորամանյանն ունի իր միանգամայն որոշակի կարծիքը. «Ջարդարանքների ոճերից երևում է, որ արտաքին ներգործութիւններ եղել են հայոց 7-րդ դարու ճարտարապետութեամբ կանգնվող Չվարթնոցի զեղարվեստական մասին վրա: Հունահռոմեական և սի-

րիական ոճերի մասնակի ներգործութիւնը ակներև է Չվարթնոցի մեջ. անշուշտ ճաշակի այս նորութիւնը Հայաստան բերողը ինքը ներսես Շինողն է, որուն կյանքը նախքան կաթողիկոսանալը, անցել է Կ. Պոլսում և կամ բյուզանդական երկրներում զինվորականի կարևոր պաշտոնում»²:

Մի այլ աշխատութեան մեջ Քորամանյանը գրում է՝ Չվարթնոցը թիր ընդհանուր ձևով մինչև հիմա գոյութիւն ունեցող թե հին և թե նոր ոչ մեկ եկեղեցիի նման չէ: Վերաքննելով ճարտարապետութեան էլեմենտները Քորամանյանը գրում է. «Մեծ սյուներու խոյակները՝ բոլորովին ինքնատիպ են բացի վրաները հարմարեցված հունական խոյուղներից: Կողովներու մանվածո քանդակները զուտ հայկական են»³ (տես նկ. 16): Բոլոր-

² Քորոս Քորամանյան, 2-րդ ժողովածու, էջ 81:

³ Չվարթնոցի «Կողովներու մանվածո քանդակները զուտ հայկական են» այս կարծիքի է Քորամանյանը:

Պարզվում է, որ կողովահարու նախնանք եղել է նաև այլ ժողովուրդների մոտ: Օրինակ Ստրոբիլակի ասում է, նման մտով հանդիպում է Աթենքի ակրոպոլսում, որը ստեղծվել է 5—6-րդ դարերում, ըստ որում սպետք է մտածել, որ նրա վրա աշխատել է իրականապէս վարպետ:

¹ Թերևս սխալ է պնդել, թե այն ժամանակներում նախագծեր չեն կազմվել. կազմվել են անկասկած, աստուց զծագրերի այդպիսի շինութիւններն այդ հզորությունամբ չէին կառուցվի, այդ նախագծերը սակայն չեն ունեցել մեր ժամանակակից նախագծերի բնույթը:

վին ինքնատիպ է և նաև արժամաքանդակ կրող խոյակներու ձևը (տես՝ նկ. 15), որը միմիայն Ջվարթնոց եկեղեցիին մեջ գործածված է ... moulure-ներուն (բարձրաքանդակներին — Տ. Մ.) մեջ բյուզանդականին խառն հայ-

Պրանկելներ այն կարծիքն է, որ այդ խոյակներին կոմպոզիցիան բավի՛ր համապատասխանում է 5 և 6-րդ դարերի հայակեն ու ազուն, քան 7-րդ դարի: Վրացական ՍՄԹ ԳԱ իսկական անդամ Գ. Չուրինաշվիլին կողմահայտն քանդակի մոտիվը համարում է ինքնուրույն — ուստ մրադախան, որ այն ոչ մի կապ չունի Իրանի և Աթենքի հետ: Փանդակի այս ձևը նա տեսնում է Մցի-Եթի խաչի փոքր եկեղեցու հյուսիսա-յին պորտիկի հյուսիս-արևմտյան սյան խոյակի վրա, որ իբր քարայվանի և հասնո է նշմարվում, ինչպես և (հայազգի Հարությունյան Փողոտի կառուցած — Տ. Մ.) Աթենի եկեղեցու պորտիկի սյան խոյակի վրա: Ըստ որում, խաչի փոքր եկեղեցու կոտորվածը համարում է 545—586 թվերի դարծ: Ենկելով այս իրավիճակից, նա գրում է՝ «այդ մոտիվը իր ծաղկմանն է հասնում վրացական և հայական եկեղեցիների վրա 7-րդ դարում միայն, այն է՝ Ջվարթնոցում և մոտիվով ձևով՝ Բա- նա եկեղեցուում»:

Նաև Մցի-Եթի փոքր եկեղեցու պորտիկը — նախա-որհը կառուցված է խաչի փոքր եկեղեցուց ուշ, և հե-տևաբար նրա հյուսիս-արևմտյան սյան կողմահայտն խոյակի կառուցման ժամանակը խաչի փոքր եկեղեցու կառուցման ժամանակի հետ Գ. Չուրինաշվիլու կողմից նախաքննելը, նշանակում է լուրջ սխալ գործել:

Որ նախամուտքը փոքր եկեղեցուն է կցված հետա-գայում, պարտորոշ նրևում է իր՝ Գ. Ն. Չուրինաշ-վիլու, գրքի 1 և 2 գծաթերթից (այլում) (ցլխաձոր հա-տակազդի և շինության հաստակազդի) շափաղարված և կատարված Ն. Գ. Անրոզի կողմից:

Ըվ ապա հավանաբար Գ. Չուրինաշվիլուն հայտնի չի եղել, որ կողովանն մանկածո քանդակի մոտիվը Հա-յաստանում լայն գործածություն է ունեցել դեռևս 5-րդ դարից սկսած, երբ դեռ գոյություն չունեին Մցի-Եթի խաչի ու փոքր և ոչ ի մեծ եկեղեցիները իրենց պոր-տիկներով հանդերձ, հակառակ դեպքում՝ դիտակներ կարիք չէր ունենա հիմնավորելու խաչի փոքր եկեղե-ցու 6-րդ դարին պատկանելը և դրանով իսկ՝ այդ մո-տիվի ծածկման հարյրներից Մցի-Եթի համարելը, իսկ ընթրիքանկելու սփռուրը Վաղարշապատին թողնելը:

Այստեղ նկատի է անցնում կողովանն մանկածո քանդակի իրենց վրա կրող 5-րդ դարում կառուցված Սրբուհի քաղիքիկայի խոյակը (տես նկ. 17), Հայաս-տանի հին մայրաքաղաք Վրինում 6-րդ դարում կա-ռուցված շինություններից մնացած խոյակները (տես նկ. 18 և 19) և 6-րդ դարի վերջում կառուցված Ալանի եկեղեցուում գտնված կողովահայտն քնդրերի:

կական գծեր կնշմարվին, թեև իրենց ամբող-ջությունը հպատակված են հայկական ճար-տարապետության ընդհանուր օրենքին, այ-սինքն՝ հունական կամ բյուզանդական ոճն-րու նման moulure-ները (նաև կամարաղեղը)

Բնական է մտածել, որ Ջվարթնոցի խոյակ քանդա-կողն օգտվել է իր շուրջը եղած քաղաքիվ և բարերար-վան օրինակներից և հատկապես Սրբուհի խոյակից: Գ. Ն. Չուրինաշվիլին խոսելով Ջվարթի արևելակող-մի ճակատի պատահանների կամարաղեղի վրայով անցնող խաղողի վազով ու տերևով ստեղծված ոլորա-քանդակի մասին, նշում է այդ մոտիվի տարածված լի- ները քրիստոնեական արևելքում:

Այն, ինչ որ արված է Ջվարթում, նա համարում է զեղարվեստի նվաճումների բարձրակետ, ինքնուրույն և զերծ որևէ ազդեցությունից:

Այդ նույն մոտիվով կատարված օրինակները, ինչ-պես ամենուրեք (բացի Վրաստանից) այդպես էլ Սի-րիայում, ու հատկապես նրա հյուսիսում (Չուրինաշվի-լին ավերեր անկարկում է հարավային Հայաստանը) համարում է անկեղծանի, գծազրկված խիտ և շրջ պա-րագծերով:

Ըվ այն աչք սերջ սրբիական մաներային շաղ-ման...» հետ էլ նույնպիսի է նա ավյալ մոտիվով քանդակը Ջվարթնոցում:

Օճանում այդ մոտիվը նա համարում է ավելի մոտ Ջվարթին (ուզում է ասած լինել, որ այն արված է վեր-չինիս պղնձադեղիվամբ) երևույթը բացառելով նրանով, որ այդ հուշարձանը գտնվում է ընդհուպ Վրաստանի սահմանադիմելու:

Վերահիշյալ մոտիվով քանդակները Ջվարթում և Ջվարթնոցում, կատարման ընդհանրված, իսկապես որ տար-բեր են: Ջվարթի քանդակողը առաջնորդվել է աշխա-տանքի լուսանկարչական մեթոդով, որոշմել է քարին խաղողի որևէ տերևի ու վազի կոնկրետ պատկերը ամե-նայն մանրամասնությամբ: Այս կարգի ստեղծագոր-ծությունների արվեստագիտության մեջ ընդունված է անվանել նատուրալիստական:

Ջվարթնոցի քանդակողը վերամշակել է այդ քան-դականքն, ստեղծել է ավյալ պտուղի և տերևի ընդ-հանրական, տիպական հասակ պատկերը՝ ակներև կեն-դանի և հյուսիսը, ցույցերիով այդ գործում մեծ հա-շակ և կատարյալ վարպետություն:

Այս կարգի ստեղծագործություններն էլ արվես-տագիտության մեջ ընդունված է անվանել առախա-տական:

Խոսելով Ջվարթնոցի հայտնի կողովահայտն խո-յակի մասին Ա. Լ. Ցախորունը 1950 թվականին լույս ընծայած իր «Հայկական Հարաբարագիտության պա-սա՛մայան ուղևորված գրքում հայտնում է այն մտքը, թե «հնարավոր է, որ այդ խոյակների պատրաստմա-

փոխանակ հետզհետե դեպի խորը գնալու, քանդակված են հավասար բարձրութիան վրա (տես նկ. 20) բան մը, որ հատուկ է միայն հայ ոճին»:

«Շենքին պսակը զուտ հայկական է թի՛ ձևով և թի՛ բանդակով»:

Դոկտոր Կուզեցեցովը հիշատակելով ներսեի հունական հակումները գրում է. «...Հենց դրա համար էլ Զվարթնոցի հատակագծում նկատելի է սիրիական 6-րդ դարի բարդ կոմպոզիցիա ունեցող տաճարների ազդեցությունը» (քառաթև տաճարը Բոսրայում — Սիրիա—512 թ. հայտնաբերված 1936 թ. կատարված պեղումների հետևանքով):

Իր գրքի 76 էջում նա գրում է. «Ստացվում է, որ հայկական Զվարթնոց եկեղեցին... ունի գրեթե նույնանման [Բոսրայի տաճարի հետ] հատակագիծ...»:

Կարծիքներում բավականաչափ հակասական է Զվարթնոցի ուսումնասիրողներից Ս. Մնացականյանը: Նա, համաձայնելով եւրոպական հետազոտողներին և նկատի ունենալով Քորամանյանի վերականգնությունը, գրում է: «Գիտական աշխարհում նկատված

եը մասնակցած լինեն հունական (սիրիական) վարպետներ»:

Արժանաչափ խոչնդների մասին նա ասում է, թե այդ մտտիվը եավանդաված է դեռևս անտիկ արվեստից, որը հելլենական արևելքում եղել է արևբան տարածված»:

Հայկական պատմական ճարտարապետության վերաբերյալ մի շարք աշխատությունների հեղինակ՝ դոկտոր Ա. Լ. Ցակրստեին հարկ է հարցնել՝ եթե ուրարտական շինարարական արվեստի ժառանգորդ հայ վարպետը մեր թվարկության արդեն 7-րդ դարում ի վիճակի չի եղել իր ուժերով քանդակել Զվարթնոցի կողովաշյուռ խոյակը, հապա էլ ինչու՞ Բյուզանդիոնի կայսրը ոչ թե իր նահանգը հանդիսացող Սիրիայից, այլ Հայաստանից էր վարպետներ տանում Կոնստանդնուպոլսում մի նոր Զվարթնոց կառուցելու համար: Նա, մոփորանք, չի՞ իմացել, որ Հայաստանում կողովաշյուռ խոյակներ կառուցում էին Զվարթնոցի դեռևս 200 տարի առաջ (Սերբուր և այլն): Մենք տեղյակ չենք նաև, թե Ա. Ցակրստեին որտեղի՞ց է հայտնի արժագանակ խոյակի մտտիվի հնուց ավանդված և հելլենական արևելքում արևբան տարածված լինելու չէ՞ որ մասնագիտական գրականության մեջ այդպիսի բան չկա:

երևույթ է այն ընդհանրությունը, որը կա մի կողմից Քրիստոսի գերեզմանի վրա կառուցված տաճարի, և մյուս կողմից հայկական... այդ ուստոնդան կառուցվածքների միջև: Իսկ որոշ արևմտաեվրոպական ուսումնասիրողներ Զվարթնոցը միշտև իսկ նույն այդ Քրիստոսի գերեզմանի տաճարի օրինակով կառուցված հուշարձան են համարում»:

Նույն աշխատության վերջին պարբերության մեջ գրում է. «Զվարթնոցը 5—7-րդ դարերի հայկական ճարտարապետական կուլտուրայի արգասիքն է, և նրա ճարտարապետական կերպարը բացահայտելու պետք է ելնել... ոչ հեռավոր և օտար կուլտուրաների շրջաններում ստեղծված կերպարներից, այլ հենց այն ռեալ տվյալներից, որ տալիս է բուն հուշարձանը և այն որոշակի միջավայրից, ուր մշակվել ու ձևավորվել է նրա հույակավ կոմպոզիցիան»:

Մի այլ տեղ նկատի ունենալով իր վերակազմությունը գրում է. «այժմ, երբ նրա (Զվարթնոցի—Տ. Մ.) ամբողջ կերպարն այնքան հարազատ, այնքան համահնչյուն է դառնում... հատկապես այդ էպիտալում հիմնական, որոշիչ տեղը գրավող խաչաձև կոմպոզիցիաներին, այլևս խոսք չի կարող լինել օտարամուտ ձևերի ընդօրինակման մասին...»:

Մնացականյանի ներկայացրած Զվարթնոցի վերակազմության նախագծում տաճարի առաջին աստիճանը ոչ մի ընդհանուր բան չունի երկրորդ և երրորդ աստիճանների հետ. այսինքն՝ նրանց համարումը տաճարին չի տվել միասնական, ամբողջական, համահնչյուն գեղարվեստական պատկեր, այդ վերակազմությունը անկասկած կրում է մեխանիկական մոտեցման անառարկելի դրոշմ: Մնացականյանը, Զվարթնոցի կառուցողին Կուզեցեցովի նախատիքներից «փրկելով», փորձում է տաճարի պատկերը համապատասխանեցնել 7-րդ դարում բնորոշված սինամաներին և փաստորեն այն դարձնում է ա-

1 Սովետական արվեստ, 1959, № 7, էջ 34:

2 Տեղեկագիր, 1959 թ., № 9, էջ 75:

Նախընտրելով, անտաղանդ մի ստեղծագործություն:



Եվ եթե ըստ Մնացականյանի Զվարթնուցը հանդիսացավ 7-րդ դարի հուշարձանների գրեթե կրկնությունը և իր հետ որևէ նոր բան չբերեց հայկական ճարտարապետությանը (ինչի մասին ոչինչ չի ասում Մնացականյանը), ապա էլ ինչո՞վ է նշանավոր, էլ ինչո՞վ է «հայ ժողովրդի ճարտարապետական կուլտուրայի պատմության փայլուն էջերից» և ինչի՞ հիման վրա է նոր վերակազմության հեղինակը Զվարթնուցը համարում մեծ գործ և նրա կառուցողին «հանճարեղ», պահանջելով՝ «...Ֆիլում է, թե ժամանակն է, որ մի կողմ գրվեն տաճարի հանճարեղ ճարտարապետի հասցեին յուրաքանչյուր մեծ ու փոքր աշխատության էջերից հնչող մեղադրանքները և ըստ էության գնահատվի հայ ժողովրդի հանճարեղ զավակի մեծ գործը»:

Մնացականյանը իր «Զվարթնուցի նոր վերակազմություն» աշխատությամբ ըստ էության Զվարթնուցի ու նրա կառուցողից, ինչպես և 7-րդ դարի հայ ճարտարապետությունից վերցնում է փառքի դափնին և առանց «ո՞վմարության» տեղափոխում 11-րդ դար՝ համարելով այն ժամանակի իրավիճակի արգասիք, հանձնում Գագկաշենի՝ զվարթնուցանման տաճար կառուցողին՝ ս10—11-րդ դարերում, երբ երկիրը բաժանված էր բազմաթիվ մանր ֆեոդալական կազմավորումների միջև, գրում է Մնացականյանը, մշակվում և իր որոշակի դեմքն է ստանում այդ էպոխայի ոճական նոր ուղղությունը... Ծարառապետները մի միասնական ծավալի մեջ են սկսում պարփակել... Ինտերիերի բարդ մասնատված լուծումները: Ոճական ահա այս նոր ուղղությունն էլ իր նոր դրսևորումը գտավ Գագկաշենում, որտեղ երկրորդ յարուսում տեղակայված պարփակվեց մի շրջագծային պատով և ստացավ ուստոնդային լուծում»¹, այսինքն այնպիսի տեսք, որպիսին ունեն Զվարթնուցը դեռևս 7-րդ դարում:

¹ Գագկաշենի կառուցումը Տրդատիև վերագրելու հարցը նախում է ստորև

² Տեղեկագիր, 1959, № 9, էջ 82—83:

Աշխարհի շատ ժողովուրդներ իրենց գույությունը ընթացքում ստեղծել են իրենց ինքնուրույն արվեստը, համապատասխան իրենց սովորույթներին, իրենց հայրենիքի աշխարհագրական յուրահատկությանը, կլիմային, կուլտուրային: Եվ այնտեղ, որտեղ ծաղկել է ժողովրդի ինքնարույթ արվեստը, այնտեղ ստեղծվել են գլուխգործոցներ, կոթողներ, որոնց արժեքն ու պատմական նշանակությունը տարածվելով, Կուրս է եկել հայրենիքի սահմաններից և դարձել համամարդկային սեփականություն, և ապա՝ հասկանալի ու հարազատ բոլորին, անկախ լեզվի և ամեն տեսակի տեղային առանձնահատկությունների տարբերություն:

Համամարդկային նշանակության բարձրացած հուշարձանները, թերևս, ստեղծվել են ոչ ներփակված, նեղ ազգային պայմանների շրջանակներում, կտրված արտաքին աշխարհից, նրանք պիտի ունենային և փոխազդեցություններ և սկզբնազդակ հանդիսացող աղբյուրներ: Ժողովուրդները բոլոր ժամանակներում, այլև կամ պակաս շափով, եղել են միմյանց կապված, թշնամական է հեղել նրանց վերնախավի հարաբերությունը միմյանց հետ, թե բարեկամական, միևնույն էլ նույնիսկ պատերազմների հետևանքով նվաճող և նվաճվող ցեղերը եղել են որոշ հարաբերության մեջ, ամեն դեպքում յուրահատուկ կապի ձևով:

Ազդեցությունների խնդիրը հաճախ տարբեր է մեկնաբանվում և որոշ դեպքերում ուսումնասիրողների կողմից ընդունվում է, որպես վերավորական երևույթ ազդեցությունը կրող ժողովրդի համար: Ազդեցությունների թյուր հասկացություն իր բացասական կողմերով արտահայտվում է նաև ճարտարվեստի քննազավառում:

Փոխազդեցությունների նշանակության ըմբռնման և նրա բարձր գնահատության հիանալի օրինակ կարող է հանդիսանալ տարբեր ժողովուրդների արվեստներից քաշ

ծանոթ՝ ճարտարապետ Քորոս Քորամանյանի և բանաստեղծ Ավետիք Իսահակյանի հետևյալ ընդհանուր կարծիքը. «Մեր ժողովուրդը տակավին իր նախնական վիճակի մեջ ընդունել է նախաշարիքից որոշ հիմքեր, խառնել է նրանց իր տարերթից բխած նորություններ, կրել է նաև ազդեցություններ օտարերկրացիներից՝ պարսիկներից և Միջագետքից, յուրացրել է, շաղախել իր ունեցածի հետ՝ ավելացնելով նոր տարրեր, նոր զգացություններ: Համաձայնեցրել է շինանյութերի հետ. կլիմայի հետ, ներդաշնակել է բնակարի՝ պեյզաժի հետ և իր մտավոր, ճազկան, կենցաղային պահանջների հետ:

Եվ, այսպիսով ստեղծվել է դարերի ֆանթազի և կուտակույնով հայկական ոճը՝ ինքնուրույն կենիք, որ այլևս անբեկանելի է»¹:

Ավ. Իսահակյանի խոսքերով ասած՝ մեր արվեստը իր կազմավորման սկզբնական շրջանում ուրիշ ժողովուրդներից ազդեցություն է կրել, և ինքն էլ, ապա, ազդել է ուրիշ ժողովուրդների ճարտարապետության վրա: Իսկ Քորամանյանը շարունակում է՝ «Երբ արդեն կատարյալ մարմին առավ մեր ոճը, սկսեց ճառագայթել»։ Եվ հետո «Մեր քարքարոտ բարձրավանդակից իջան, տարածվեցին մեր արվեստի շնորհները՝ դեպի Քալկանները, Բյուզանդիա, Իտալիա, Գերմանիա, Ֆրանսիա: Մեր գաղթական վարպետները, մեր թոնդրակեցի հալածական ճարտարները, արշավող ազգերը, տարան այդ շնորհները, ո-

րոնք եղան ներշնչման, մտածման, նմանության, թելադրման և նորությունների ազդակներ բյուզանդական, գոթիկ, ռոմանական և նույնիսկ արաբական արվեստների համար:

Փոխազդեցությունները ժողովուրդների արվեստների, և ոչ միայն արվեստների, զարգացման ազդակներ են, անհրաժեշտության նման մի բան: Մեծ կուլտուրա ունեցող ժողովուրդները շնչն վախենում ազդեցությունների կրելուց, եթե այն առաջ է մղում սեփական կուլտուրան, ազդեցություն, որ շնչկրում ճորտաբար, կուրորեն, մեխանիկական ընդօրինակման ձևով: Արվեստից, կուլտուրայից, ստեղծագործական քանքարից զուրկ լինելու ռեպրում է, որ ազդեցությունը տեղի է ունենում ընդօրինակման ճանապարհով:

Այս առումով բնորոշ է, որ Քորամանյանը լինելով մեծ արվեստագետ, աեալիստ, որ իր համոզումներով հարում է ժամանակակից մեր աշխարհայացքին, առանց որևէ «վախ» զլլալու, ընդունում է սիրիական ճարտարապետության որոշ ազդեցություններ, երբ նրան նույնիսկ հայտնի չէր այնպիսի մի տաճարի գոյությունը, ինչպիսին Բոսրան է, մինչդեռ Ս. Մնացականյանը այդ չի ընդունում, երբ արդեն Բոսրան ասում է ավելին, քան սպասվում էր: Քորամանյանը ազդեցությունից «չի վախենում», որովհետև նրա տեսակետով՝ «...ազդեցության հարցը երկրորդական է, բավական է, որ մեր արվեստը իր անժխտելի տեղն ունի ընդհանուր ազգերի ճարտարապետական արվեստի պատմության մեջ: Սրանով ես հպարտ եմ և մխիթարված»։ Եվ նա արդարացի է:

¹ Ավ. Իսահակյան — Երկեր, 1959 թ., հատ. 4-րդ, էջ 101—102.



ՐՈՍՐԸ ԵՎ ԶՎԱՐՔՆՈՑ

Սիրիայի հարավում՝ Խաուրանում 1936 թվականին պեղումներով հայտնաբերվել է Բոսրայի տաճարի վառ վիճակում պահպանված ավերակը¹։

Կառուցման ժամանակը համարվում է 511—512 թվականները։ Բոսրայի տաճարը եղել է իր ժամանակ խոշորագույնը Սիրիայում (Բյուզանդիոնի արևելյան այդ ժայռամասում)։ Հատակագիծը բավական բարդ է՝ դրսից թառակուսի է, ներսից՝ բոլորակ, այդ երկու ձևերի միջև ստացված հոծ պատի մեջ ցույց են տրված մոտ մեկուկես տասնյակ խոշոր ու մանր խորշեր։

Կենտրոնը եղել է թառաթև, և այդ խաչաձևությունն ստացվել է հատակագծում առանցքների ուղղությամբ կիսակլոր դասավորություն ունեցող շորս սյունաշարով։ Նրանց միացնող շորս մույթերն իրենց վրս կրել են գմբեթ (տես գծ. 17 և 18)։

Դոկտոր Կուզնեցովը Բոսրայի և Զվարթնոցի հատակագծերը համարում է իդենտիկ (նույնանման), տարբերություն գտնելով միայն և միայն նրանց բացարձակ չափերում։

Եվ քանի որ Զվարթնոցը կառուցվել է ավելի ուշ, հետևաբար, ճարտարապետության պատմության տեսակետից, Բոսրայի տաճարի հայտնաբերմանը տալիս է մեծ նշանակություն։

Բոսրայի տաճարի և Զվարթնոցի հատակագծերի ընդհանուր նմանությունն ակներև է, իսկ տարբերությունները նրանց միջև՝ որոշակի և իրենց նշանակությամբ խիստ կարևոր, մի բան, որ Կուզնեցովը չի փորձում նկատած լինել, այդ էլ այն պատճառով, որ նա ողջ լիակատարությամբ չի ընդունում Զվարթնոցի հատակագծի Բոսրայից տարբերող էլեմենտների բնորոշիչ նշանակությունը և այն դերը, որ վերջիններս խաղում են հուշարձանի համար ոչ պակաս նշանակություն ունեցող արտաքին ծավալային-տարածական յուրօրինակ պատկերի ստացման համար։

Բոսրայի տարածական-ծավալային վերակազմության նախագիծ չկա, սակայն հատակագծային լուծումները հնարավորություն են տալիս հզորակացնելու, որ տաճարի արտաքին կերպարանքը եղել է ամենևին էլ ոչ Զվարթնոցի նման։ Հետազոտողները հզորա-

¹ А. В. Кузнецов, Тектоника и конструкция центрических зданий. М., 1961 г. էջ 75, 76

կացութեան շնն հասգել նրա ծածկերի խընդրում և նույնիսկ հնարավոր են համարել նրա փայտածածկ լինելը: Կուզենցովը նույնացնելով Բուսրան և Զվարթնոցը, գրում է «Պետք է ընդունել, որ դրսի հիմնական բոլորակի (ռոտոնդայի) և ներքին քառաթև սիստեմի միջև եղած խզումը այնքան մեծ է և հակասական, որ [նրանց համար] արխիտեկտոնիկ և հաջող ծածկ լինել չի կարող»:

Գոկտոր Կուզենցովը, անկասկած տեղյակ է Զվարթնոցի ճարտարագետի կողմից տաճարի առաջին աստիճանի բոլորակ սրահը ծածկելու, ինչպես և երկրորդ աստիճանի բոլորակ պատը պահելու համար ձեռնարկված միջոցառումներին և հատկապես այդ նպատակի համար մայր մուլթերի հետնամասում կանգնեցված արծվախոյակ սյուների գոյության փաստին: Նա տեսնել է ավերակում պահպանված այն բետոնակերպ զանգվածը, որը հանդիսանում է երկրորդ աստիճանի բոլորակ պատի հիմքը կազմող թաղը: Կուզենցովը պատի է նաև այդ զանգվածի վրա պահպանված բոլորակ սրահի թաղակերպ ծածկի մասը կազմող քարի շարքը և եզրակացութեան շգալով անցնում է այդ փաստերի կողքով և գրում ինչպես Բուսրանում, այնպես էլ Զվարթնոցում «...Մինչև այժմ չի որոշված եկեղեցու ծածկի ճշգրիտ ձևը»:

Որ Բուսրայի տաճարի առաջին աստիճանի բոլորակ սրահի ծածկի խնդիրն անորոշ է, այդ հասկանալի է: Քերևս այդ անորոշությունն է ստիպել նրա առաջին ուսումնասիրողներին հանգել շինութեան փայտածածկ լինելու ենթադրությանը: Սակայն Քորամանյանի վերակազմութեամբ Զվարթնոցի երկհարկ բոլորակ սրահների և երկրորդ ու երրորդ աստիճանների ծածկերը միանգամայն նորմալ ու հաջողակ են, այնտեղ չկա որևէ անորոշության և կասկածի առիթ: Գրեթե անհասկանալի է դոկտոր Կուզենցովի անբավարարվածությունը, և առավել անհասկանալի՝ սխալ եզրակացությունների հանգելու առիթը:

Պետք է ենթադրել, որ Կուզենցովը, այ-

նուամենայնիվ, հնարավորություն չունեցավ ամբողջությամբ ընկալել մեծ տաճարի յուրօրինակ կառուցելակերպը, իսկ կառուցվածքի «ոչ կանոնիկ» անսովոր սխեման առանձին վերքրած, նրան հավատ չներշնչեց տեկտոնիկ տեսակետից:

Նախքան Զվարթնոցի կառուցումը, և նրանից դեռ շատ առաջ, Հայաստանում հիմքում խաշածև հատակագիծ ունեցող շատ տաճարներ կային: Հիմքում խաշածև տաճարների էվոլյուցիան մեզ մոտ տանում է դեպի ներքին տարածությունների ավելի ընդարձակում, թերևս տարբեր միջոցներով՝ խաշաթևերի երկարացումներով, զմբեթակիր մուլթերի հեռացմամբ և այլն:

Զվարթնոցի կառուցողն էլ այդ ընդարձակումը լուծել է բոլորակ սրահի միջոցով և, վերջինս կենտրոնի տարածության հետ կապելու համար, խաշաթևերի տրադիցիոն խուլ պատը դարձրել է թափանցիկ՝ վերածելով սյունակամարաշարի, մի նորաձևություն, որ տեղական ձևերի օրինաչափ զարգացում հանդիսանալով, միաժամանակ իր հիմքում ունի Բուսրան որպես ազդակ, որպես նախորինակի՝ Բուսրայի գոյությունը օգնել է Զվարթնոցի հատակագծի կազմավորմանը: Բուսրան նախօրինակ է հանդիսանում գլխավորապես առաջին աստիճանի ներքին տարածության կազմակերպման համար, և թերևս սրանով էլ այդ երկու հուշարձանները մոտ են: Ահավասիկ՝ երկուստեք ներքին տարածությունը կազմակերպվում է քառաթև խաչի հիմքով, և այդ խաչաթևերը ստացվում են առանցքների ուղղությամբ կիսաբոլորակ սյունաշարքերով: Այդ խաշածև կենտրոններն շուրջը բոլորում են միանման սրահներ: Առանձնապես շատ էլ տարբեր շնն հատակագրծային շակերը. Բուսրայում զմբեթի հիմքը կազմող քառակուսու էջերն ունեն 14 մետր

¹ Այն դեպքում միայն, եթե Կուզենցովի գրքում տեղադրված հատակագիծը, որ վերցված է 1936 թ. լույս տեսած անգլիական «The Palestine Exploration Fund» ամսագրից, ճշտորեն համապատասխանում է ավերակի տվյալներին:

լափ, բուրակի սրահի դրսի պատի ներքին տրամագիծը 36 մետր է. իսկ Զվարթնոցում՝ համապատասխանաբար՝ 11,6 և 33,9 մետր:


Ծրուկ հուշարձաններն իրարից տարբերող հանգամանքները վերաբերում են նրանց ներքին տարածություն ամբողջական լուծմանը, արտաքին ծավալային կոմպոզիցիոն կառուցմանը, ինչպես նաև արտաքին պլաստիկ գեղարվեստական մշակմանը: Այստեղ ազդու ձևով են հանդես գալիս ճարտարապետական մտահղացման և շինարվեստի որակական կողմն ու նպատակասլությունը:

Ներսես Տալեցիի հաստատվելով հայության մայր աթոռի գահակալ կաթողիկոս նրա համար քաղաքական, տնտեսական և բազմական շատ ծանր կացության պայմաններում, որոշում է ցույց տալ բարեկամներին, և հատկապես թշնամիներին, թե ինչի է ընդունակ իր ժողովուրդը, որին կոտորել, այդքան զրկանք ու տառապանք են պատճառել: Նա որոշում է հայ հողի վրա կանգնեցնել գեղարվեստի այնպիսի մի կոթող, որի փառքի առաջ գլուխ խոնարհեն ոչ միայն արվեստակիցները, այլև աշխարհի գոռոզ տերերը: Եվ կառուցում է այն, և համաձայն պատմագրության, Բյուզանդիոնի աշխարհակալ Կոնստանդ կայսրը տաճարի օծմանը մասնակցելուց հետո, իր հետ է վերցնում տաճարը կառուցող ճարտարապետին, որ Կոնստանդնուպոլսում, աշխարհահռչակ Այա-Սոֆիայի տաճարի առկայության պայմաններում, կառուցի ևս մի Զվարթնոց նրա գեղեցկության արտաքին դարմացնելու համար: Մեզ հայտնի չէ այժմ, թե այդ ժամանակներից մոտ 130 տարի առաջ կառուցված Բոսրայի տաճարը ի՞նչ վիճակում էր. կար, ի՞նչ տեսք ուներ, ու նրա առկայությամբ ինչու՞ էր կայսրը ցանկանում իր հայրենիքում կառուցել «երկրորդ» Զվարթնոցը և ոչ երկրորդ Բոսրան, եթե ըստ Կուլզնեցովի ընդունենք, որ Բոսրան եղել է սառաջին Զվարթնոցը: Ըստ երևույթի, այդ հուշարձանները հատկապես տարբերվել են իրենց արտաքին ծավալային լուծմամբ և հարթությունների


գեղարվեստական մշակմամբ, և այս խնդրում Բոսրան զիջել է Զվարթնոցին:

Ննարավոր պետք է համարել, որ Բոսրան Զվարթնոցի կառուցման ժամանակ թերևս ավերակ էր:

Ծթե փորձելու լինենք հատկազօծի հիման վրա և նրա ժամանակակից բյուզանդական կառուցվածքների նմանությամբ կազմել Բոսրայի վերակազմության նախագիծ, ապա այն պիտի ունենա մոտավորապես հետևյալ ձևը. առաջին աստիճանը պետք է



Գծ. 17. Բոսրա տաճարի հատակագիծ



Գծ. 18. Բոսրա տաճարի վերակազմության

լինի ոչ շատ բարձր խորանարդ, երկրորդ աստիճանը ինչպես ներքուստ, այնպես էլ արտաքուստ պարզորոշ արտահայտված տեսութային խաչին ձևով բարձրացած խաչաձև հաստակագծի վրա:

Օրրորդ աստիճանը եզել է գմբեթը, որը կարող էր լինել բազմանիստ և կամ բոլորակ թմբուկ՝ ավարտված կիսագնդաձև ծածկով (տես նկ. 18):

Ընդունում ենք, որ ներսես Շինողը վերցրեց, սակայն ի՞նչ վերցրեց Բոսրայի տաճարից և ի՞նչը փոխեց և ի՞նչ ստեղծեց այդ ձեռնարկումով: Զվարթնոց կառուցողը Բոսրայից թերևս վերցրեց այն, ինչով նրանք նման են միմյանց՝ քառաբսիդ կենտրոնը փաթաթեց բոլորակ սրահով և այդ սրահի ու տաճարի ներքին տարածությունները միացրեց սյունակամարաշարով:

Զվարթնոց կառուցողը հրաժարվեց Բոսրայի առաջին աստիճանը կազմող արտաքին քառանկյուն խորանարդից (որին ներգծված էր ներքին բոլորակ սրահը) դրանով իսկ ապաստվեց բոլորակ տաճարի համար ճարտարապետական մի այլ խարակտեր կրող արտահայտությունից: Այսպիսով, Զվարթնոցի արտաքին պատը դարձավ բոլորակ՝ թե ներսից, թե դրսից:

Զվարթնոց կառուցողը որոշեց երկրորդ աստիճանը ևս, ինչպես և երրորդ աստիճանը կազմող գմբեթը, հետևողականորեն կառուցել բոլորաձև: Այսպիսով, նա ստեղծեց եռաստիճան, ոտտոնդաձև կուռ մոնումենտալություն, շքեղ ու սլացիկ, բայց և պարզ ու սակայնալի մի բարձրաքերձ կառուցվածք:

Այս նպատակին հասնելու համար հարկավոր էր հաստակագծում կատարել մի աննախադեպ փոփոխություն, որ հնարավոր դարձնեք տաճարի երկրորդ աստիճանի բոլորակ թմբուկի իրականացումը, անհրաժեշտ էր նրա համար Ռուսալի հիմք ստեղծել, սակայն սյուններով շտանարքաններով, շխնդելով, շմասնատելով առաջին աստիճանի ներքին ընդարձակ տարածությունը: Եվ ահա կատարվեց: Գնդագետի համարձակ մտահղա-

ցումը, հիմք ունենալով կառուցողի հմտությունը, արդեն տրադիցիա դարձած շինելակերպի ներշնչող հնարավորությունները, ստեղծագործական մտքի թռիչքի մի գնդկցիկ ուստյունով Զվարթնոցը Բոսրայի նկատմամբ բարձրացրեց որակական մի նոր աստիճանի, ահա թե ինչպես:

Զվարթնոցի ճարտարապետը խաչաթևերի սյունակամարաշարը զգալիորեն ուժեղացրեց Բոսրայի յուրաքանչյուր խաչաթևի շրջա սյան կամ հիգ կամարի փոխարեն Զվարթնոցում կանգնեցնելով համապատասխանաբար վեց սյուն՝ յոթ կամարով: Եվ ապա մշակեց մայր մույթների տեսք ու ճշտեց չափերը, դարձնելով նրանց բարձև և ավելի հաստահեղույս: Եվ հետո, շրջա մայր մույթների հետնամասում ամրակուռ քարեց կանգնեց շրջա հաստատուն սյուններ՝ տաճարի կենտրոնից նույն հեռավորության վրա, որպիսի հեռավորություն ունեն խաչաթևերի զագաթները: Այսպիսով, տաճարի կենտրոնից հավասար հեռավորության վրա ունենալով խաչաթևերի շրջա զագաթներ ու շրջա հաստատուն սյուններ, ինչպես նաև շրջա մույթներ և նրանց վրա հենվող շրջա խաչաթևերի բոլորակ զագաթներով հիմք, այդ ամբողջը ծածկեց ութ իրար ձուլված քարաբետոնակուռ թաղակերպ համատարած գանգրվածով (տես գծ. 14): Զվարթնոցի կառուցողն այդ հուսալի հիմքի վրա բարձրացրեց երկրորդ աստիճանի բոլորակ թմբուկը: Այս յուրանառուկ միջոցառումների կիրառումը հանդիսանում է Զվարթնոցի բնորոշ և տարբերիչ կողմը՝ իր նախադրեց-հետադրեց: Այս ձևով կառուցված մյուս բոլորակ տաճարները նետագայում համարվեցին զվարթնոցանման կամ զվարթնոցատիպ: Եվ, ապա երրորդ աստիճանը, որ տաճարի գմբեթն էր, սովորական ձևով բարձրացրեց շրջա մայր մույթները կապող կամարներով ստեղծված քառակուսու աստիճանաբար շրջագծի վերածվող հիմքի վրա:

Այնուհետև, Զվարթնոց կառուցողը դեկորատիվ հարուստ միջոցներով՝ սյունակամարաշարով, պատուհաններով, քանդակաշե-

տերով շքեղացրեց իր շինությունը և հետագայում աշխարհին, թերևս նաև Սիրիային վերադարձրեց ոչ այն, ինչ վերցրել էր, այլ մի նոր երևույթ, ավելի բարձր, ավելի կատարյալ, մի նոր երանգի, մի այլ ոճի, դառնալով մի նոր վերածննդի նախօրինակ:

Անկախ այն բանից, որ մի քանի ոճերի

ազդեցություններ է կրում իր վրա, Ջվարթնոցը մի միասնական ոճի դասական արտահայտություն է (տես նկ. 1): Հետագայում եղան Ջվարթնոցի կրկնության փորձեր, որոնք անընչելի պահեցին իրենց նախորդի վահաշուք տեսքը՝ սերունդների պատկերացման և ողջ ճարտարվեստի պատմության մեջ:



ԶՎԱՐԹՆԱՑՏԻՊ ՏՆՃԱՐՆԵՐ

Ինչպես հաստատում է Քորամանյանը, Զվարթնոցն առաջին բոլորակ հատակագիծ ունեցող հուշարձանն է հայ հողի վրա՝ «Քրիստոնեական շրջանում եկեղեցիի համար նորոթյուն էր բոլորակ ձևը Հայաստանում, որ առաջին անգամ իրականացավ՝ Ներսես 3-րդի ձեռքով Զվարթնոցի շինությամբ»:

Մեր մյուս բոլորակ հատակագիծ ունեցող տաճարները կառուցվել են Զվարթնոցից հետո և նրա անմիջական ազդեցությամբ:

Հայտնի է, որ թագավոր Ադրնեբսեհի (888—923) հանձնարարությամբ, եպիսկոպոս Կվիրիկի օրոք, Ղարս քաղաքից 70 կիլոմետր հարավ՝ Փենեկ գյուղում կառուցվել է զվարթնոցատիպ Բանայի տաճարը: 10—11-րդ դարերի պատմագիր Ասողիկի վկայությամբ Անիում Գագիկ թագավորի (939—1020) օրոք կառուցվել է Ս. Գրիգորի տաճարը Զվարթնոցի նմանողությամբ և չափերով:

Վերջին տարիների պեղումներով՝ Ադրբեջանի Լյակիթ գյուղում բացվել է զվարթնոցատիպ տաճարի ավերակ:

Այսպիսով, այս շրջա տաճարները կառուցված լինելով տարբեր դարաշրջաններում, նույն տիպի կառուցվածքներ են. առաջինը կառուցվել է Զվարթնոցը, երկրորդը՝ Բանայի տաճարը, երրորդը՝ Գագիկաշեն եկեղեցին Անիում և ապա Լյակիթը, որի կառուցման

ժամանակը վերջնականապես պարզված չէ: Կան որոշ տվյալներ, որ իբր նույն՝ յոթերորդ դարում Ներսես Տայեցու կողմից իր հայրենի Իշխան գյուղում կառուցված տաճարն էլ եղել է զվարթնոցատիպ: Հետագայում՝ 9—12-րդ դարերում Իշխանի ավերակի վրա կառուցվել է նոր եկեղեցի, իր մեջ առնելով մինչև այդ կանգուն մնացած արևելյան արսիդի սյունակամարաշարը:

* * *

Ըստ Կուղեցցովի և Մնացականյանի, Զվարթնոցի երկրորդ աստիճանը հիմքում ունեցել է ոչ թե կոր, այլ թառաթև խաչի ձև: Ահա այս է, որ հիմք է տալիս պատմական փաստերին հակասող եզրակացություններին: Վերոհիշյալ թեզը ընդունելու դեպքում կարելի է հետևեցնել, որ ոչ թե Զվարթնոցի ազդեցությամբ է Հայաստանում սկսվել ու տարածվել բոլորակ հատակագծով տաճարների կառուցումը, այլ մի այլ աղբյուրից: Նույն հետևողականությամբ ստացվում է, որ Բանայի սկզբնաղբյուրը ևս պետք է որոնել ոչ Զվարթնոցում: Այնուհետև, Գագիկաշենի մասին խոսելիս, կեզրակացվի հակառակ պատմագրության և շինարարական փաստական գոյավիճակի, որ այն կառուցվել է

ու թե Ջվարթնոցի նմանողութիւնը ու շափե-
րով, այլ մի այլ տաճարի, թե՛րևս Բանայի, չի՞
որ արտաքին ծավալային կոմպոզիցիոն
ձևով այն ավելի նման է Բանայի բոլորակ
ձևերին, քան Ջվարթնոցի՝ եթէ վերջինիս երկ-
րորդ աստիճանը լիներ խաշակերպ:

Մինչդեռ պատմագրութիւնը ոչ մի տեղ
չի հիշատակում, թե Գագկաշենը կառուցվա՞ծ
լինի Բանայի նմանողութիւնը: Եվ հիրավի,
ներսնց հատակագծերում և հատկապես ար-
տաքին ու ներքին տարածական լուծումների
միջև մեծ տարբերութիւններ կան:

Ակնհերև է հակասութիւնը մի կողմից
նույնութիւն Գագկաշենի և Ջվարթնոցի հա-
տակագծերի, և տարբերութիւն ծավալային

լուծումներում, մյուս կողմից հատակագծա-
յին տարբերութիւն Գագկաշենի և Բանայի և
որոշ նույնութիւն՝ արտաքին ծավալային
լուծումներում: Երբորդ՝ անհամապատաս-
խանութիւն Ասողիկի հաղորդած տեղեկու-
թյան և մեզ ժամանակակից վերահիշյալ
մեկնաբանութիւնների միջև:

Եվ արդո՞ք տրամաբանական կարող է
լինել, որ Գագկաշենի կառուցողը Ջվարթնո-
ցից վերցրած լինի հատակագծային լուծումը,
իսկ Բանայից՝ ներքին այլ կազմութիւն
ունեցող հատակագծի վրա կառուցված տա-
ճարից, արտաքին ծավալային լուծումը:
Ճարտարապետութիւն պատմութիւն մեջ այդ
աննախադեպ երևույթ պիտի լիներ:

ՋՎԱՐԹՆՈՑ ԵՎ ԳԱԳԿՇԵՆ

Գագկաշեն եկեղեցու և Ջվարթնոցի հա-
տակագծերը նույնն են՝ մանրամասների
տարբերութիւնը հանդերձ (տե՛ս գծ. 1ձ):
Ավերակներում պահպանված բեկորներն ու
զանգվածները, երկուստեք նույն ներքին
կառուցվածքն են բնորոշում: Ահա այս հան-
գամանքներն են, որ հիմք են տվել Քորա-
մանյանին Գագկաշենի վերակազմութիւն
նախագիծը ներկայացնել Ջվարթնոցանման:
Որ այդ այդպես էլ պետք է լիներ, հաստա-
տում են պատմագրութիւնը և տաճարի մո-
դելը (տե՛ս նկ. 21): Այստեղ ևս տաճարը
եռաստիճան է և բոլոր աստիճանների հիմ-
քում ունի բոլորակ ձև: Ջվարթնոցը և Գագ-
կաշենը ներթուրում ունեն շորս մայր մուլթե-
րին հենված սյունաշար-կամարաշարով ըս-
տեղծված խաշաձև կենտրոն, որոնց շրջան-
ցում են արտաքին կոր պատով առաջացած
բոլորակ սրահներ:

Երկուստեք նույն պարագծաձևերն ունեն
մայր մուլթերը, խաշաթևերի կամարաշարե-
րը՝ վեցական սյունով ստեղծված (Գագկա-
շենում որոշակիորեն արևելյան արսիդը ևս
սյունակամարաշար է), արևելյան կողմից
ունեն ուղղանկյունաձև կառուցվածքներ
(տարբեր շափերի):

Ջվարթնոցի մուտքի դռները մշակված էին
բոլորակ պատի հարթութիւնից դուրս կար-
կառված՝ ըստ երևույթին միաժամանակ
ունենալով կոնտրֆորտի նշանակութիւն՝ ար-
տաքին բոլորակ պատի համար: Այդպիսիք
դրված էին նաև անկյունագծերում:

Ջվարթնոցի արևմտյան կիսում կային
այդպիսի (դուրս կարկառված) հինգ դուռ,
իսկ արևելյան կեսի համար կոնտրֆորտի դեր
էր կատարում մոտ 11 մետր ֆրոնտով ուղ-
ղանկյուն կառուցվածքը:

Գագկաշենում հաշվի չի առնվել Ջվարթ-
նոցի դուրս կարկառված մուտքերի կոնստ-
րուկտիվ նշանակութիւնը, և բոլոր մուտքե-
րը կառուցվել են արտաքին պատի հարթու-
թյան մեջ:

Այսպես, եթե Ջվարթնոցն ունի հինգ
արտաքին (դուրս կարկառված) և երկու ներ-
քին դուռ, Գագկաշենն ունի 3 արտաքին (պա-
տի հարթութիւնից դուրս չեկող) և մեկ
ներքին դուռ: Առաջինում բոլորակ պատը
դրսից բազմանկյունի է 32 էջով, երկրորդում՝

1 Գուռը զիսկովոր մուտքի կողմից և մուտք՝ պա-
տի կողմից դուրս են բերված ոչ միայն պատի հար-
թութիւնից, այլև զգալի շափով եռաստիճան որմնա-
թարթիտից:


36: Բացարձակ շփերի միջև ևս տարբերություններ չնշին են: Տարբեր բնույթի են լոկ հարթաքանդակներն արտաքին հարդարանքով:

Հատ երևույթին մեծ տարբերություններ եղել են կառուցելակերպի և օգտագործած շինանյութերի մեջ. տվյալ դեպքում նկատի է ունեցվում, որ այս հուշարձանի ներքին կրճախի իրագործումը և նրա կայունությունը մեծ չափով կախված է այն իրականացնելու ձևերից և միջոցներից: Սրանով էլ թերևս պետք է բացատրել, Ղվարբնոցի համեմատությամբ, Գազկաշենի կարճատև կյանքի փաստը:

Գազկաշենի ավերակներում գտնված տաճարի քարակոփ մոդելը, որպես իրական սպացույց, ուսումնասիրողներին որոշ չափով զրկում է տաճարի վերակազմության նախագծի հեռավոր տարբերակներ ստեղծելու հնարավորությունից: Իսկ Ղվարբնոցի մոդել չի հայտնաբերված (թեպետև այն եղել է անկասկած, քանի որ մեր շատ ու շատ կարևոր հուշարձաններ ունեն այդպիսին, այդ եղել է որոշակի սովորույթ), ժամանակակից պատմիչի կողմից գրված տաճարի կազմության մանրամասն նկարագրություն չկա, բացի վերը բերված Սեբեոսի շատ կարևոր վկայությունը: Ահա այս իրավիճակն է, որ հնարավորություն է տվել որոշ ուսումնասիրողներին, Քորամանյանից հետո, ներկայացնել Ղվարբնոցի վերակազմության այլաձևավորում բնորոշող իրենց առաջարկությունները:

Ճարտարապետ Մնացականյանը, Ղվարբնոցին վերաբերող իր աշխատության մեջ, անդրադարձել է նաև Գազկաշենի Քորամանյանի վերակազմության նախագծին: Նա այստեղ ևս «հայտնաբերում է» նույն կարգի սխալներ, ինչպիսիք «հայտնաբերել էր» Ղվարբնոցում և, ներկայացնում է նաև Գազկաշենի նոր վերակազմության նախագիծ: Անդրադառնալով տաճարի կարճատև կանգուն գոյության հարցին, այստեղ հեղինակը գրում է. «Մեր ուսումնասիրությունները

ցույց են տալիս, որ Գազկաշենի կործանման պատճառը ոչ թե նրա կառուցման տեխնիկային վերագրվող թերություններն են, այլ այդ նույն Ղվարբնոցի տիպի հատակագծի վրա բարձրացված երկրորդ յարուսի ռոտոնդային կոմպոզիցիայի հետևանքով վերասրլաց համալսարանություններ ունեցող սյունների զերարվածությունը, և հենց այդ էլ, ի վերջո, կանգնեցրեց այդ հանդուգն կոմպոզիցիան կործանման առաջ»: Բայց ի՞նչ ենք տեսնում վերակազմության նոր նախագծում, հակառակ ռոտոնդաձև անվանակոչմանը,



Պ. 19. Գազկաշենի հատակագիծը կազմված Թորամանյանի կողմից

Գազկաշենի երկրորդ աստիճանը ևս ստացվել է խաշաձու Այդ խաշաթների միջև տեղավորված երկուական մեծ շփի խորշերի օգնությամբ, բոլորակ է դառնում երկրորդ աստիճանի լոկ վերնամասը և ոչ ինքը՝ թմբուկը: Եվ քանի որ այդպես է, այսինքն՝ խաշաձու է, սպա պետք է որ Գազկաշենը ևս Ղվարբնոցի նման երկարակայս լիներ: Սակայն նրա կոշանքը կարճ է տևում: Իսկ ի՞նչ կործանվել է

ոտոտեղաձևութիան պատճառով, ապա նա պետք է Մնացականյանի կողմից ներկայացված ամբողջութիամբ ոտոտեղաձև, ինչպեսին է Քորամանյանի մոտ, հետևաբար էլ ինչու՞: Մնացականյանը, ինքն իրեն հակասելով, Ներթում վաղուց ստեղծված ոտոտեղաձև նախագիծը:

Բանն այն է, որ Մնացականյանը ստիպված է Գազկաշենի երկրորդ աստիճանը բուրավ (ոտոտեղաձև) անվանում. դրանով նա հորձում է խուսափել պատմագրության, մոեկի և ավերակի իրազեկան փաստերի հետակասության մեջ մտնելուց: Նա այն տակիկորեն ոտոտեղաձև է անվանում, իսկ վեակազմությունը ստեղծում է փաստորեն անաշխատ:

Երկրորդ աստիճանի վերոհիշյալ խորշերի ոլույթունը հաստատելու համար, նոր վերազմություն նախագծի հեղինակը հիշատարում է տրոմպի քարերի առկայությունն ավեակներում. «պեղումների ժամանակ հայտարբերված եռանկյունաձև տրոմպի քարերը, որոնց տաճարի ներսում հնարավոր չէ և ոչ մի չլ տնչ անշավորել, ի սկզբանե պատկանել հենց այս արտաքին խորշերին»:

Հետաքրքրական է, որ Մնացականյանը լարթնոցում հայտնաբերված տրոմպի քարը տեղավորում է շորս մայր մուլթերը աջնող կամարներով ստեղծված քառակուց ղեպի գմբեթի կոր հիմքը կազմող անուններում (առագաստների փոխարեն), իսկ զգալի ենում քմահանդրեն անհնար է հարում հայտնաբերված տրոմպի քարերը այն ձևով գմբեթատակ տանելը, այն ղեում 2-րդ աստիճանի վերոհիշյալ մեծաչափ բլրերի գլխամասում: Այն փաստարկը, թե որդ դարում տրոմպներ չեն կառուցվել, այդ ոչ չ նշանակում, թե այդպիսին չի գործարվել նաև Գազկաշենում, երբ վերջինս ամաղջութիամբ կրկնություն է 7-րդ դարում կացված տաճարի, հետևաբար տրոմպը ևս բող էր կրկնվել:

Մնացականյանին բուրբուրվին չի անհանտացնում այն հանգամանքը, որ Գազ-

կաշենի մոզելում նման խորշեր չկան: Հնդունելով հիշյալ մոզելի հիանալի մըակվածությունը, նա այնուամենայնիվ վերապահում է անում, որ ճշայնական ճարտարպետության մեջ մոզելները դրսևորում էին կառուցվածքների ընհանրուր գծերը, և այն էլ պայմանական ձևով:

Մնացականյանի կողմից Գազկաշենի նոր վերակազմության նախագծի ստեղծման դրդապատճառները նույնն են, ինչ որ էր Ջվարթնոցում: Իբր Գազկաշենի Քորամանյանի վերակազմությունն նախագծում ցույց տրված վերնահարկը գոյություն չի ունեցել, երկրորդ աստիճանի 36 պատուհաններից լուկ 12-ն է եղել իրական, մնացած 24-ը եղել է կեղծ և այլն:

Մնացականյանի համոզմամբ՝ Գազկաշենը կործանվել է երկրորդ աստիճանի թմբակապատի և այն կողմ սյունների գերլարվածության պատճառով:

Նախորդ էջերում կատարվեց Ջվարթնոցի կոնստրուկտիվ մասերի աշխատանքի վերլուծությունը և պարզվեց, որ տաճարի երկրորդ աստիճանը եղել է թմբկաձև և, սակայն, կանգուն վիճակում նա գոյատևել է ավելի քան 300 տարի (մեր կարծիքով մոտ 350) ու կործանվել՝ արտակարգ ուժերի ներգործության հետևանքով, և ոչ թե թմբկաձևության պատճառով. Եթե Գազկաշենը ևս իրականացվեր կառուցման նույն բնույթով և նույն մակարդակի շինարարական արվեստով, ապա նա և կանգուն կմնար դարերի ընթացքում, սակայն նրա կյանքը եղել է կարճատև Պարո է մի բան, որ Ջվարթնոցի սխեմայով շինությունը երկարակյաց չի կարող լինել, եթե այն իրականացվի քարե կոնստրուկցիաների սովորական ձևով: Ըստ երևույթին հենց այդպես էլ իրականացվել է Գազկաշենը Արեմն Գազկաշենի կործանման պատճառը (եթե չեն եղել նաև այլ պատճառներ, երկրաշարժ, պայթեցումներ և այլն), ապա կարող է եղած լինել կառուցողի պակաս հմտությունը շինարվեստում: Կրող կառուցվածքների իրականացման ընթացքում Ջվարթնոցի

համեմատությամբ նրա բոլոր շեղումները կատարվել են ի վնաս շինության ամբողջին:

Հիշենք, որ Զվարթնոցի կառուցողը յուր հատուկ մոտեցում է ցուցաբերել կրող էլեմենտների նկատմամբ, օրինակ, նա սյուների բները կերտում էր միակտուր քարից, մինչդեռ Գագկաշենում՝ երեք և ավելի կտորներից է: Զվարթնոցում երկրորդ աստիճանի բոլորակ պատի հիմքը կազմող թաղերը կառուցված են մեծ բարձրության բետոնակերպ զանգվածներով, թերևս Գագկաշենում այդպես եղած չլինի, համենայն դեպս ակնհաստեսները այդ չեն հիշատակում, կառուցողները թերևս հույս են ունեցել, որ զուտ քարակերտ երկկոր կամարաղեղները կարող են փրկեց վրա դրած հակայական բեռը հեշտությամբ տանել և սխալվել են:

Բոլոր դեպքերում ճիշտ եղրակացություն գալու համար անհրաժեշտ է վերաքննությունը կատարել ավերակում, հանգույց առ հանգույց հաշվի առնելով շրջապատող բոլոր հանգումներից այդ թվում նաև երկրաբանական տվյալները, ժամանակի դեպքերը և այլն:

Ինչ վերաբերում է 24 կեղծ պատուհանների առեղծվածին, ապա, եթե նոր վերակազմության հեղինակը փորձեր Գագկաշենի երկրորդ աստիճանի համար ստեղծել հատակագիծ, սույն աշխատության մեջ Զվարթնոցի նույն աստիճանի հատակագծի օրինակով, ապա բոլոր 36 լուսամուտները կլինեն իրական և ոչ կեղծ:

Գագկաշենի վերակազմության նոր նախագծում արտաքին ճարտարապետական պատկերի ստեղծման թերությունները նույն կարգի են, ինչ Զվարթնոցի վերակազմության նոր նախագծում:

Այստեղ ևս երկրորդ և երրորդ աստիճանների մասշտաբային համաշափություններն այլ են, անհամեմատ խոշոր, քան տաճարի ստորին՝ առաջին մեծածավալ աստիճանում: Եթե հին նախագծում առաջին և երկրորդ աստիճանների թմբուկներն ունեին 36-ական

նիստ, ապա նոր նախագծի երկրորդ աստիճանում ստացվել է 20: Թերևս տանելի լինեն, եթե արտաքին հարդարման միջոցները ստորին աստիճանում լինեին ավելի խոշոր, քան վերևում. հենց այդպես էլ մշակված է Մնացականյանի կողմից «պայմանական» անվանված Գագկաշեն տաճարի հիանալի մոդելը, որը, անկասկած, բնականին և բանականին ավելի մոտ է, քան վերակազմության նոր նախագիծը:

* * *

Գագկաշենը ուսումնասիրողներից, ճարտարապետական գիտությունների թեկնածու Կ. Հովհաննիսյանը՝ նոր վերակազմության առաջարկ չի ներկայացնում, նա ընդունում է թորմանյանի ուսումնասիրության տվյալները և վերակազմության նախագիծը, համարելով այդպիսիք՝ համոզիչ, արժեքավոր, Գագկաշենի մասին եղած նյութերից հիմնականը և միակը իր մանրամասնություններով հանդերձ: Կ. Հովհաննիսյանը չի առարկում նաև Զվարթնոցի թորմանյանի վերակազմության նախագծի դեմ: Սակայն այս երկու տաճարների համեմատության ընթացքում անում է հետևություններ, որոնց վերաքննությունն այստեղ համարում ենք անհրաժեշտ:

Հովհաննիսյանը Գագկաշենի կործանման պատճառը համարում է նույնը, ինչ որ էլ Զվարթնոցում: Այն հանգամանքը, որ Զվարթնոցը կանգուն մնացել է ավելի, քան երեք դար, իսկ Գագկաշենը, թերևս կես դար, ինքնին մեծ առիթ է տարբեր մոտեցում ունենալու այդ երկու տաճարների կործանման պատճառների ուսումնասիրության ընթացքում: Եթե այս բանը Մնացականյանն անում է Զվարթնոցին տալով կառուցվածքային այլ կազմություն, ապա Հովհաննիսյանը մնում է այն կարծիքին, որ արվեստագետի համարձակ մտահղացումը հենվել է հիմքում ոչ կատարյալ կոնստրուկցիաների վրա, ճիշտ այնպես, ինչպես նույնանման մյուս տաճար-

1 Կ. Մ. Оганесян—Зодчий Традт—1951 г. Ереван.

ներում: Հովհաննիսյանը Գազկաշենի կառուցող ընդունելով 10—11-րդ դարերի սահմանագծում հռչակավոր ճարտարապետ Տրդատին, գտնում է, որ նրա մտքած ըրողը փոփոխությունները 350 տարի առաջ կառուցված և այդ ժամանակ ավերակի վերածված Ղվարթնոցի նկատմամբ ավելի կատարյալ են դարձրել հուշարձանը՝ «Բայց Տրդատի ճարտարապետական հայացքը և մեծությունը երևաց նաև այստեղ: Նա վերակրկնեց Ղվարթնոցը (Սազավորի պատվերով), բայց արդեն ոչ այն չափերով, ոչ այն համաչափություններով, ոչ այն քանդակներով և մանրամասներով»:

Արդ՝ որո՞նք են նորամուծությունները Գազկաշենում.

1. Քերև Քյուրիմացույթյան արդյունք է այն, որ իբր Գազկաշենի ներքին խաչաձև տարածությունն ընդարձակված է: Ահավասիկ տվյալները՝ զմբեթակիր մույթներով ստեղծված քառակուսին թե՛ Ղվարթնոցում, և թե՛ Գազկաշենում գրեթե նույնն է: Այդ քառակուսով պայմանավորված զմբեթի արտաքին տրամագիծը երկուստեք մոտ 13 մետր է:

Խաչաթևերի գազաթևերի միջև եղած տարածությունը Ղվարթնոցում մոտ 26,2 մետր է, Գազկաշենում մոտ՝ 26,6 (չնչին տարբերություն): Գազկաշենում բավական նեղ է խաչաթևերը շրջանցող բոլորակ սրահը, նրա լայնքը հազիվ էրեք մետր է, մինչ Ղվարթնոցում ունի 3,50 մետր լայնություն:

Ղվարթնոցի ներքին տրամագիծն իր առաջին աստիճանում 33,90 մետր¹ է, Գազկաշենում՝ 32,5²: Այսպիսով, ստացվում է տրամագծորեն հակառակ պատկեր՝ Ղվարթնոցում ներքին տարածությունն ավելի ընդարձակ է, քան Գազկաշենում:

2. Բոլորակ սրահի մակերեսը (լայնքը) Գազկաշենում Ղվարթնոցի բոլորակ սրահի համեմատությամբ փոքրացել է, ոչ թե ներքին խաչաթևերի ընդարձակման առիթով, այլ

այն պատճառով, որ այնտեղ արտաքին պատերն են հաստ կառուցված մոտ 1,55 մետր՝ Ղվարթնոցի 0,9 մետրի փոխարեն:

3. Ղվարթնոցում բոլորակ սրահի և կենտրոնական մասի հատակները տարբեր բարձրությունների վրա շեն, այդպիսի բան չի երևում ոչ Քորամանյանի գծագրում ոչ էլ տեղում է այդպես. խաչաթևերի սյունաշարերի տակ անց է կացված լույ մի քարե ժապավեն մոտ 15 սմ. բարձրությամբ և 98 սմ. լայնությամբ: Նրանից ներս և նրանից դուրս հատակները գտնվում են նույն բարձրության վրա: Մինչդեռ Գազկաշենում, բոլորակ սրահի ու կենտրոնական մասի հատակները, իսկպպես, տարբեր բարձրությունների վրա են, կենտրոնական մասի հատակը բոլորակ սրահի հատակից բարձրացված է, մի բան, որ պարզ երևում է Գազկաշենն անձամբ չափագրող Քորամանյանի գծագրերում 1-ին գրքի 2:9 էջում, ինչպես և 4. Հովհաննիսյանի «Зодчий Трдат» գրքի 80 էջում տեղադրված լուսանկարում: Զարմանալի է, թե ինչպես պարզապես հակառակն է ասվում 4. Հովհաննիսյանի գրքում և այն որակվում որպես բացասական երևույթ՝ ոչ թե Գազկաշենի, այլ Ղվարթնոցի համար:

4. Այն, որ Գազկաշենի կառուցողը չի ընդունել Ղվարթնոցում կիրառված բուսական ճոխ հյուսվածքաձև քանդակազարդեր (նուռ և խաղողի հյուսվածքներ և այլն) և նրա մոտ քանդակները ավելի շուտ ունեն խիստ երկրաչափական օրնամենտի ձևեր Հովհաննիսյանի բացատրությամբ «համապատասխանում է իր ժամանակի ճարտարապետության պրինցիպին»: Մեզ թվում է, որ ամեն ինչ ժամանակով բացատրելը կարող է սխալների բերել, չէ՞ որ տեղի գործոնը նույնքան և նույնիսկ ավելի կարևոր է: Այս խնդրում կարող է դեր խաղալ նաև ճարտարապետի նախասիրությունը, որոշ օրինաչափություններ, ճարտարապետական էլեմենտների ըմբռնողություն կապված տեղի, կլիմայի և այլ սպեցիֆիկ հարցերի հետ: Անկախ այս ամենից, վաղուց ի վեր բոլորի կողմից ըն-

¹ Մտփերը վերցված են տեղից՝ ավերակներից:
² Տես Ք. Քորամանյան, ժողովածու 2-րդ, էջ 277. Խառաքքը գծված է հասակագծի հետ:

դունված է, որ Զվարթնոցի քանդակների գեղարվեստական արժեքը շատ ավելի բարձր է կրկնօրինակ Գազկաշենի քանդակների համեմատությամբ:

5. Զվարթնոցի արտաքին պատի հարթությունների դուրս կարկառված մուտքերը, որ ունեցել են նաև կոնստրուկտիվ-կոնստրուկտիվ նշանակություն. Գազկաշենի կառուցողի կողմից ըմբռնման շեն արժանացել, այստեղ իսպառ վերացվել են դոներից երկուսը, իսկ մյուս երեքում՝ նաև կոնստրուկտիվները՝ դոնները հավասարվել են պատի հարթությունը, և այս միջոցառումը կատարվել է ի վնաս կառուցվածքի կանգունության: Այս փոփոխությունը ևս չի խոսում Գազկաշենը կառուցողի օգտին:

6. Գազկաշենի կառուցողը նիստերի թիվը Զվարթնոցի 32-ի փոխարեն ընդունել է 36, ոչ այն նպատակով, որ համաչափությունները նախօրինակի համեմատությամբ լավացնի, ձգի (թերևս այդ է մյուս բոլոր համաչափությունները Զվարթնոցում ավելի լավ են, քան իր կրկնօրինակում, այլ այն նպատակով, որ մայր մույթերի հետամասում առանձին կազմող սյուների դիմաց արտաքին պատի վրա պատ լինի և ոչ պատուհան: Հենց այս նկատառումով է նաև, որ այստեղ վերացվել են անկյունագծալին մուտքերը, և ոչ հյուսիսայինը և հարավայինը, որոնք չափազանց մոտ են բնմահարթակին:

Այս նպատակով ճարտարապետը տաճարը պիտի կառուցեր կամ 36 նիստով (ինչպես և իրականացրել է) և կամ 28: Այս վերջինն ընդունել նա չէր կարող ոչ միայն նիստերի և նրանց վրա նկարված սյունակամարաշարի համաչափությունները վնասանելու նպատակով, այլ նաև երրորդ աստիճանի գմբեթաթմբուկի էջերի թիվը 14 շտանալու համար: 36 նիստի դեպքում ևս գմբեթաթմբուկի էջերի թիվը վերցվել է 16 և ոչ 13, որը նույնպես անհարմար թիվ է: Հենց այս պատճառով էլ գմբեթաթմբուկի սյունակամարների չափն ստացվել է ավելի խոշոր, քան տաճարի երկրորդ աստիճանում. սա թերևս ավելի վատ է, քան լավ: Այս առումով է:

ամենահարմար թիվն է 32-ը, և գմբեթաթմբուկում 16-ը, այսինքն՝ այն, որը և կիրառված է Զվարթնոցում: Այնտեղ միաշափ են ստացվել 2-րդ և 3-րդ թմբուկների էլեմենտները, դրանով էլ ճարտարապետական միջոցների համաչափությունները պատվանդանից սկսած անարդել և օրինաչափ բարձրանում են մինչև տաճարի զագաթը, մի բան, որ պակաս հաջող է Գազկաշենում և անհաջող է Մնացականյանի վերակաղմուցված Զվարթնոցում և Գազկաշենում:

Տաճարին առավել սլացիկություն տալու համար այլ միջոցների չի դիմում ճարտարապետը, քանի որ նա «կրկնում է Զվարթնոցը», նկատում է Հովհաննիսյանը:

Անառարկելի է սակայն, որ այնուամենայնիվ Գազկաշենը պլանային չափերով մոտավորապես նույնը լինելով Զվարթնոցի հետ նրանից ավելի բարձր է մոտ 2,5 մետրով (համաձայն Քորամանյանի վերակազմության): Արդյո՞ք նույն վերձիգության նպատակն է այս քայլերին դրել ճարտարապետին, և արդյո՞ք նրան չէր բավարարում Զվարթնոցի հասակը: Ոչ բոլորովին Օրկոտաճարների Քորամանյանի գծագրերի համեմատությունը ցույց է տալիս, որ բարձրությունների տարբերությունը վերաբերում է գլխավորապես առաջին հարկաբաժնի սյունակամարաշարին: Այդ լիակատար պարզորոշությամբ երևում է ավերակների լուսանկարներից: Իսկ ինչով է պայմանավորված հիշյալ սյուների այդպիսի բարձրացումը:

Բանն այն է, որ իր ժամանակին (10-րդ դարում) Զվարթնոցն ուսումնասիրող ճարտարապետը, կամ ցածր համարելով Զվարթնոցի առաջին աստիճանում խաչաթևերը կազմող սյունակամարաշարը, գիտակցաբար այն բարձրացրել է, կամ ուղղակի ենթադրել է, որ հիշյալ սյունակամարաշարը բարձր է եղել այնքան, որքան ինքն ընդունել է Գազկաշենում:

Խաչաթևերի սյուների բարձրացման ամենահավանական առիթը սակայն պետք է

Համարել արեւելյան արսիզը ևս սյունակա-
մարտաշարով ստեղծելու ճարտարապետի
որոշումը:

Քորամանյանի կազմած Գազկաշենի կտր-
վածքից երևում է, որ արսիզի սյունակամա-
րաշարը, որոշակի սովորույթի համաձայն,
զբոված է մոտ 3,5 մետրի շափով հատակից
բարձր: Կամարաշարի սյունների բարձրույթու-
նը ևս հասնում է 3,5 մետրի: Հետևաբար
մյուս խաշափեների սյունների բարձրությունը
(խարսխառով և խոշակով) չէր կարող 7 մետրից
ցածր լինել: Մինչդեռ Ղվարթնոցում համա-
պատասխան սյունների բարձրությունը (խա-
րբսխատակի պատվանդանի հետ միասին)
հասնում է 4,5—4,6 մետրի:

Հիշյալ սյունների բարձրությունների 2,5
մետրի տարբերությունն էլ առաջ է բերել
երկու տաճարների բարձրությունների տար-
բեր շափեր:

Ղվարթնոցի ավերակներից մեզ հայտնի է,
որ խաշափեները կազմող կամարաշարի սյու-
ններից մնացել են ամբողջական միակուսր
բնի, որոնց երկարությունը 2,22 մետր է: Սվ
ահա, Ղվարթնոցի առաջին ուսումնասիրողը
ենթադրել է, որ թերևս հիշյալ սյունների բը-
նեքը ստեղծված են եղել այդպիսի մի քանի
կտորից: Ու ինքն էլ Գազկաշենի սյունների 5
մետր երկարության բնիքը բնականորեն
պատրաստել է մի քանի կտորից, մի բան,
որ անպայման պետք է անդրադարձած լինի
տաճարի, և հատկապես նրա ներքին՝ առավել
կրող մասերի ամրության և կանգունության
վրա:

ՂՎԱՐԹՆՈՅ ԵՎ ԲԱՆՍ

Ինչպես վերևում ասվեց, Ղվարթնոցը,
Գազկաշենը և Բանան մի տիպի կառույց-
վածքներ են: Նրանցից ամեն մեկում ներքին
խաշափե տարածությունը շրջապատված է
բոլորակ սրահով: Նրանք միմյանց նման են
նաև արտաքին պատկերով, ըստ որում՝ Ղը-
վարթնոցն ու Գազկաշենը գրեթե նույնու-
թյուն են, մինչդեռ Բանայի տաճարը զգա-

Քորամանյանը, որ անձամբ տեսել, շա-
փազրել ու Գազկաշենի վերակազմության
նախագիծն է կազմել, չի խոսում այն մա-
սին, թե կրող սյուններն ինչ ամրությամբ քա-
րից են տաշված: Թերևս նույն քարից լինի,
ինչով կանգնվել է ողջ տաճարը, մինչդեռ Ղը-
վարթնոցում մենք ակնատես ենք սյունների
հատուկ, ամրակուռ քարից պատրաստված
լինելուն:

Քորամանյանը հատուկ կրթությունը
է նշում, որ Ղվարթնոցում կառուցողը «...բո-
լորակ խարսխի են վեր գտնված շատ մը
մասեր, ինչպես թաղեր, գմբեթ, փոխանակ
սովորական ծանր քարերու, շիներ է շատ թե-
թե կեմզ կարերով, որ շրտ անգամ ավելի
թեթև է, քան հասարակ քարը և ապա Գազ-
կաշենի կառուցողի մասին հիշում է «...Ոչ
միայն հրաբխային ավազոտ քարերով, այլև
ապառածի կտորներով խառնած զանգվածով
մը ծանրաբեռներ է գմբեթակիր սյուներու
կամարները»:

Արդ՝ պետք է եզրակացնել, որ զվարթ-
նոցումնաև կերպարաբեմբ ունեցող Գազկաշե-
նին չի վիճակվել երկար կյանք, որովհետև
երա կառուցումը չի իրականացվել այնպես,
ինչպես կառուցվել է Ղվարթնոցը:

Այստեղից էլ պետք է սկսել, որոշելու հա-
մար, թե ո՞վ պիտի եղած լինի Գազկաշենի
կառուցողը, հույակավոր ճարտարապետ Տըր-
ղա՞տը, թե՞ մի ուրիշը, որի մասին պատմու-
թյունը ոչինչ չի պահպանել:

լապես տարբերվում է նրանցից՝ ինչպես հա-
տակազծմանով, այնպես էլ արտաքին ծա-
վալների մշակմամբ:

Ղվարթնոցի և Գազկաշենի ավերակները
պեղվել և ստացած նյութերի հիման վրա ըս-
տեղծվել են վերակազմության նախագծեր, և
ինչպես սույն աշխատության մեջ պարզվեց,
հիշյալ նախագծերը, հատկապես Ղվարթնոց-


ցինը՝ կազմված Քորամանյանի կողմից, ճիշտ է պատկերում տաճարն իր երբեմնի կանգուն վիճակում:

Բանայի տաճարը չի պեղվել, չափազրվել է, որքան հնարավորություն է ընձեռել ավերակու Հիշյալ չափազրույթյունների հիման վրա էլ ստեղծված են վերակազմության նախագծեր ճարտարապետ Ս. Գ. Կլզիաշվիլու կողմից (1902 թ. չափազրույթյունների հիման վրա) և քաղաքացիական ինժեներ Ա. Ն. Կալզինի կողմից (1907 թ. չափազրույթյունների հիման վրա): Եվ որովհետև տաճարի լուկ արեւելյան հատվածն է բաց եղել թափված քարերից, չափազրույթյուններում որոշակիորեն պարզված է հենց այդ մասը, մինչդեռ տաճարի կեսից ավելին հատակագծում տրվում է գրեթե ենթադրաբար, մեն մի պաշտպանված կիսակամարի հիման վրա: Քերևս հենց սրանով էլ պետք է բացատրել, որ Քորամանյանի կողմից կազմված Բանայի հատակագծում՝ բոլոր խաչաձևերը ստեղծված են 6-ական սյուներով (7-ական կամարով), Ա. Կալզինցովի կողմից կազմված հատակագծում՝ 4-ական սյուներով (5-ական կամարով), մինչդեռ Ս. Կլզիաշվիլու և Ա. Կալզինի կողմից կազմված հատակագծերում՝ արևելյան խաչաձևը՝ 6 սյուներով, իսկ արևմտյան, հյուսիսային և հարավային խաչաձևերը՝ 4-ական սյուներով:


Մավալային առումով ևս տարբեր են այդ վերակազմության գծագրերը:

Այսպես՝ ըստ Ս. Կլզիաշվիլու տաճարը եղել է երկու աստիճաններով (չարուններով), առաջինի մեծ թմբուկով (երկհարկ բոլորակ սրահներով հանդերձ) և գմբեթով ավարտված երկրորդ աստիճանի գմբեթաթմբուկով: Հենց այս ձևով էլ Բանայի տաճարը ներկայացված է ճարտարապետության հումընդհանուր պատմության դասագրքում (տես գծ. 20 և 21), ինչպես և այլ հրատարակություններում: Ըստ

1 Գաղաշենի նախագիծը կազմված Քորամանյանի կողմից այստեղ մանրամասն չեն ներկայացված, սակայն այն ևս, մեր կարծիքով, նշտիվ պատկերում է տաճարը, նրա երբեմնի կանգուն վիճակում:



Գծ. 20. Բանա տաճարի կտրվածք



Գծ. 21. Բանա տաճարի հատակագիծ

Ա. Կալզինի, տաճարը եղել է երեք աստիճաններով, առաջին ցածր աստիճանով (միահարկ բոլորակ սրահով), երկրորդ աստիճանի լիմ-

2 Բանայի վերակազմության նախագիծը կազմելու Ա. Կալզինը իր տրամադրության տակ ուներ ղեկն 1905 թվականին Ք. Քորամանյանի կողմից կազմված Զվարթնոցի (ինչպես և Գաղաշենի) վերակազմության նախագիծը, ահա այս ի նկատի ունենալով է, որ ղեկտոր Ռ. Աղաբաբյանը գրում է, թե Քորամանյանի Զվարթնոցի վերակազմության նախագիծը բանալի հանդիսացավ Կալզինի համար Բանայի վերակազմության իր նախագիծը ստեղծելու:

բուկով և երրորդ աստիճանով, որ իրենից ներկայացնում է գմբեթը բարձրացած զբմբեթաթմբուկի վրա Այս վերջինս նման չէ մյուս տաճարների գմբեթաթմբուկներին. այստեղ ներսից այլունաշար է, որի վրա կը բարձրանում է գմբեթի կիսագունդը. հիշյալ այլունաշարից որոշ հեռավորության վրա ջրույց է տրված բոլորակ պատ, որով և ըստեղծվում է երրորդ աստիճանի բոլորակ սրահը: Հիշյալ երկու վերակազմության նախագծերից և ոչ մեկում չի անդրադարձել Քանայի 1881 թվի ականատես Գ. Ջ. Բակրաձեի մի շատ կարևոր արտահայտությունը տաճարի, ըստ իս, երկրորդ աստիճանի կազմության վերաբերյալ: Նա ասում է. «Թմբուկը ունե՞ր ոչ թե բոլորակ, այլ խաչաձև տեսք, չէ՞ որ խաչի կիսաբոլորակ ճյուղը թմբուկից դուրս էր գալիս կիսաբոլորակով»:

Եթե Գ. Բակրաձեին հասկանալու լինենք բառացիորեն, ապա ստացվում է, որ տաճարի առաջին թմբկաձև աստիճանի վրա բարձրացել է ոչ թե դարձյալ թմբկաձև երկրորդ աստիճանը, ինչպես որ պատկերել է իր վերակազմության մեջ Ա. Կալզինը, այլ խաչաձև, թեևս ալվելի ճիշտ՝ այնպիսի ձևով, ինչպիսին ունի տաճարի կենտրոնական մասը կազմող եկեղեցին: Այսպիսով, հնարավոր է դառնում հրապարակի վրա ունենալ Քանա տաճարի վերակազմության մի նոր՝ երրորդ նախագիծ, որը կլինի նույնքան հավանական, որքան և նախորդ վերակազմությունները:

Քանայի կառուցման ժամանակի մասին ճշգրիտ տեղեկություններ չկան, ժամանակակից պատմագրությունը չի խոսում նրա կառուցումից:

Քուն տաճարի վրա ուսումնասիրողների կողմից չի հայտնաբերվել որևէ արձանագրություն, միակ արձանագրության մասին ճանապարհորդ Կոլբը գրում է. «...Արձանագրություններ եղել են, սակայն մուսուլմանները նրանց այնպես են փչացրել, որ ոչինչ մանրամասնությամբ հնարավոր չէր տարբերել (հասկանալ)»:

Ծ. Գ. Վեյդնբաումը լինելով Քանայում, իր օրագրում թողել է հետևյալը. «Ահմեդ Բեգն ասում է, որ մուսուլիմը վրա կար արձանագրություն, սակայն բնակիչները քարը վերցրել են շինարարության համար» և շարունակում է. «արձանագրությունը գտնվում էր ենեկիցու ներսում հարավային դռան վերևում»:

Այս հիշատակություններում տաճարի կառուցման մասին չկա որևէ տեղեկություն: Թրամաձյանը, նշելով, որ Չվարթնոցը Միայնակ չէ իր ձևի տեսակետով, գրում է. «10—12-րդ դարերի մեջտեղը Հայաստանում շինվել են նույնօրինակ ճարտարապետությունը Անիում և Քանայում»:

Վրացական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Ծ. Տակալչվիլին իր «Քանա» աշխատության¹ մեջ բերում է վրաց պատմաբան (18-րդ դար) արքայազն Վախուշտիի Վրաստանի աշխարհագրությունը գրքից Քանային վերաբերող հետևյալ հատվածը. «Փանասուկերտից վերև, Քանա—Փանասուկերտ րաձուր վրա—սարբրում գտնվում է Քանան, որ այժմը կոչվում է Փանակամ: Այստեղ կա մեծ շահիերի գմբեթով տաճար, հրանայի կառուցված լավ և զեղեցիկ տեղում: Այն կառուցել է թագավոր Ադրնեբսեհը և այնտեղ թաղված են թագավորները: Նստում էր Փանասուկերտի և ողջ Տաօի, Օլթիի ու Նարումանի կամ Նարիմանիի հովիվ—հպիսկոպոսը: Այժմ այն լքված է»:

Ծ. Տակալչվիլին մեջ է բերում նաև Բագրատունիների Դավթի որդի Սումբաթի պատմությունը «Կուրոպալատ Դավթի (887 թ.) որդի Ադրնեբսեհը կուրոպալատ Գուրգենի օգնությամբ Ասպինձում (888 թ.) հաղթեց ու սպանեց իր հորը սպանող Նասրին և հետո նա կարգվեց վրացիների վրա թագա-

¹ Е. Такайшвили—Материалы по археологии Кавказа, вып. XII, 1909 г., Москва, раздел Бана.

² Այն տեղանքը, որտեղ կառուցված են Քանան շրջապատող մի շարք եկեղեցիներ, կրում է հայրենի Քարազուխ անունը (տես Ծ. Տակալչվիլի, Քանա, էջ 98. ստղասակի ծանոթություն—2):

վոր և այդ Ադրնեբուհը, սպանված Կուրուպալատ Մալթի որդին Բանան կառուցեց Կլիրիկ բանեցու ձեռքով, որը կարգվեց Բանայի առաջին եպիսկոպոսը:

Ադրնեբուհը մահացել է 923 թվականին: Տակալշվիլին եզրակացնում է, որ Բանայի տաճարը պետք է կառուցված լինի կամ 9-րդ դարի վերջերում, կամ 10-րդ դարի սկզբներում:

Տակալշվիլու այս եզրակացությունը բաժանում են հետազոտողների մեծամասնությունը, այդ թվում Ստրժիգովսկին, Կուզնեցովը, Սեվերովը, Տոկարսկին և ուրիշներ:

Գ. Զուբինաշվիլին Բանայի կառուցման ժամանակը համարում է 7-րդ դարը: Գոկուտը Ռ. Աղաբաբյանը իր գրքի տողատակի ծանոթության մեջ (էջ 98) հայտնում է, որ Զուբինաշվիլին իր վերջին ելույթներում հարցականի տակ է դնում իր իսկ առաջարկած ժամանակը՝ 7-րդ դարը:

Բանայի կանգուն գոյությունը հարատևել է մինչև 18-րդ դարի 50-ական, 70-ական թվականները: Այդ երկարակեցության վերաբերյալ տիրապետող կարծիքն այն է, որ իբր Բանայի կառուցողը, հաշվի առնելով Ձվարթնոցի կոնստրուկցիաների պակասավոր կողմերը, վերացրել է այդպիսիք, ստեղծելով շինության ավելի դիմացկուն կմախք: Այս առիթով Կուզնեցովը գրում է.

«Ձվարթնոցում ճարտարապետը տալիս է գեղեցիկ, թեթև և նույնիսկ հատակագծի համարձակ լուծում, սակայն պակասավոր՝ կոնստրուկտիվ, տեկտոնիկ տեսակետից:

Բանայում ճարտարապետը շտկում է կոնստրուկտիվ բարդ և հատակագծում վերտաքավոր տեղերը, սակայն մտցնում է կոմպոզիցիոն կոպիտ լուծումներ շափեց ավել սնամեջ մուլթերի ձևով բուրբակ պա-

տի անձևակերպ հաստվածներով հանգերձ, ինչպես նաև արտաքին պատին տալիս ավելորդ մասսիվություն:

Ն. Տակալշվիլին համեմատության դեմ. լով Ձվարթնոցի, Գազկաշենի և Բանայի շափերը, նկատում է, որ նրանց արտաքին շափերը գրեթե նույնն են, մինչև Բանայի ներքին շափերը փոքր են, որ ներքին տարածության հաշվին Ձվարթնոցի մուլթերի փոխարեն այստեղ ստեղծվել են քառակուսի սենյակներով եռահարկ ծավալներ, իսկ արտաքին պատերի հաստությունը հասցվել է ավելի քան երեք մետրի: Տակալշվիլին շարունակում է, թե 9—10 դարերի սահմանագծում արդեն հայտնի են եղել բոլորակ հատակագծով սաճարների կոնստրուկտիվ թույլ կողմերը, որա համար էլ Բանան կառուցողները նրա կողմ մասերին տվել են մեծ շափեր, ապահովելով նրան երկարակեցություն, անկախ նրանում գործարքվող շինանյութերի, հատկապես քարի քայքայվող-հողման հարկը հատկությանը: Տակալշվիլին Ձվարթնոցի և Բանայի տարբերությունը տեսնում է նրանց մուլթերի տարբերության մեջ:

Ն. Սեվերովը Բանայի կոնստրուկտիվ մասերի, Ձվարթնոցի նույն մասերի համեմատությամբ, ավելի մեծ շափերի կառուցելու հանգամանքով հավաստում է Բանայի Ձվարթնոցից ավելի ուշ կառուցված լինելը:

Այսպիսով, անկախ հետազոտողների ցանկությունից, ստացվում է այն տպավորությունը, որ իբր Բանան կառուցվել է Ձվարթնոցի ավերվելուց հետո, հաշվի առնելով վերջինիս կոնստրուկտիվ պակասավոր կողմերը, որ նրա՝ Բանայի ներքին տարածության մշակումը բխել է վերահիշյալ հանգամանքից:

Բանն այն է, որ Բանայի տաճարը կառուցվել է Ադրնեբուհի օրոք 883—923 թվականների միջև, մինչդեռ Ձվարթնոցն ավերվել է շատ ավելի ուշ՝ 10-րդ դարի երկրորդ կեսին՝ մոտ 80-ական, (թերևս 90-ական) թվականներին: Էլ ինչպե՞ս պիտի Բանայի կառուցողը հաշվի առներ Ձվարթնոցի

1 Այժմ, երբ շարադրում ենք սույն աշխատության Բանային վերաբերող գլուխը, մեզ հայտնի չէ, թե ինչի՞ հիման վրա էր Գ. Զուբինաշվիլին սկզբնապես Բանան համարում 7-րդ դարի գործ, և կամ ի՞նչն է առիթ դարձել, որ նա հետագայում կասկածի տակ է դրել իր իսկ կողմից առաջ քաշած այդ թեզը:

կանստրուկտիվ թերի կողմերը, երբ այն անհաղթելի կանգուն էր և, հետևաբար, չէր բացահայտված կառուցողական որևէ թեթուություն:

Հայտնի է նաև, որ Բանայի դրսի երեք մետր հաստություն պատը կառուցված է երկու հերթում, տարբեր ժամանակներում, տարբեր մարդկանց կողմից. սկզբնապես կառուցվել է 1,4 մետր հաստությամբ դրսի բոլորանիստ պատը և, ապա, հետագայում՝ վերոհիշյալ պատի ներսի կողմից 1,6 մետր շափի դրսա ցցվածքներով կամարաշարը:

Ինչ վերաբերում է Զվարթնոցի մույթերի համեմատությամբ Բանայի մույթերի այլաձևությունը, ապա այստեղ պետք է նկատել հետազոտողների մեկնաբանման կամայական բնույթը:

Զվարթնոցի յուրօրինակ հատակագծում գոյություն չունի երկու ինքնուրույն ավարտված մասերի համադրում: Այստեղ սյունակամարով ստեղծված քառաթևը (խաչաձևը) պարփակված է արտաքին բոլորակ պատով առաջացած սրահով: Առանց այդ բոլորակ սրահի, քառաթև միջուկն առանձին վերջված, կլիներ թերի, անձևակերպ: Արտաքին բոլորանիստ պատով առաջացած շրջանային սրահը հարմարագույն ձևով հաղորդակցվում է խաչաձևի հետ, ամբողջացնում տաճարի ներքին միասնական ընդարձակ տարածությունը:

Բոլորովին այլ իրավիճակ գոյություն ունի Բանայում: Այստեղ տաճարի կենտրոնական մասը ներկայացնում է ոչ թե լոկ քառասրի խաչաձևը, ինչպես որ է Զվարթնոցում, այլ մի ամբողջական, ավարտված կենտրոնազմբեթ կոմպոզիցիայով եկեղեցի, ինչպիսին է ասենք 624—631 թթ. կառուցված Բագարանի եկեղեցին, Գառնի բոլորակ եկեղեցին, ս. Սարգսի եկեղեցին Անիում, և այլն:

Երկուստեք, և Բանայի ներսում, և Բագարանում քառաթևի կիսաշրջանաձև արսիդները չեն սկսվում գմբեթակիր քառակուսուց, այլ հեռացած են թաղածածկ ուղ-

ղանկյուն տարածությամբ, որոնց Կուզեցոյն անվանում է բեմ: Երկուստեք կիսաշրջանաձև արսիդները դրսի կողմից փակված են հիշյալ բեմերը, ունենալով փոքր տրամագիծ, քան բեմերի լայնքը: Այսպիսով ըստացված է ներքին խաչաձևը, սակայն զգալի երկարած թևերով: Եվ այդ երկարած թևերի միջև երկուստեք տեղավորված են քառակուսի հատակագծով շրտակյան խորաններ: Բագարանում, ինչպես իր ուսումնասիրություններից եզրակացնում է Քորամանյանը, հիշյալ խորաններից յուրաքանչյուրի ներքին պատերը փոխարինվել են սյունով, որը իր վերնամասում կապվում է դրսի պատերի հետ երկու կամարով: Բանայում այդ քառակուսի սենյակները մշակված են ճիշտ և ճիշտ մյուս եկեղեցիների խորանների նման, որպես աղոթատեղի, արևելյան կիսաշրջան արսիդներով հանդերձ:

Բագարանում խորանների դրսի անկյունները և խաչաթևերի գագաթները ներգծված են միևնույն շրջագծի մեջ: Ճիշտ և ճիշտ այդպիսի է նաև Բանայում:

Բանայի կենտրոնական մասի, Անիի ս. Սարգսի և Գառնիի բոլորակ եկեղեցիների միակ տարբերությունն այն է, որ առաջինում արսիդներն ստեղծված են սյունակամարաշարով, իսկ վերջիններում՝ խուլ պատով:

18-րդ դարի բուսաբան ճանապարհորդ Կոխը Բանայի մասին գրում է. «Ե՛հնու-թյունը կազմված էր ցանկապատից և բուն եկեղեցուց չորս աղոթարաններով՝ կառուցված անկյուններում...»:

Ե. Տակալջվիլին գրում է. «Նա (Բանան—Տ. Մ.) կազմված է երկու գլխավոր, սակայն ներդաշնակորեն միացած մասերից, ներքին եկեղեցուց և օղակաձև շրջանց սրահից»:


Եթե Բանայի ներսում շիններ լիակատարությամբ ավարտված եկեղեցի, նկարագրողներից ոչ ոք այն չէր անվանի եկեղեցի: Այստեղից պետք է եզրակացնել, որ Բանայի կառուցողը ոչ թե կրկնել է Զվարթնոցը և միայն նրա մարմնով մույթերը փոխարին-

նել առավել ամուր և դիմացկուն աշտարականման կառուցվածքներով, այլ ընդունելով Ջվարթնոցի ստեղծագործական սկզբունքը, իր կառուցվածքի կենտրոնում պարզ խաչաձևի փոխարեն տեղադրել է ամբողջական, իր բոլոր մասերով ավարտված եկեղեցի, և ապա այն պատել է բոլորակ սրահով:

Այս պայմաններում բոլորածև սրահը չէր կարող այնպես օրգանական կապվել տաճարի կենտրոնական մասի հետ, ինչպես Ջրվարթնոցում և, բնականորեն, բոլորակ սրահի և կենտրոնական մասի ներքին տարածությունները չէին կարող այնպես հաղորդակցվել և ամբողջական-միասնական լինել, ինչպես Ջվարթնոցում: Բանալում, անկյուններում ստեղծված կառուցվածքները բոլորակ սրահի 50 տոկոսը ծածկում են կենտրոնական տարածությունից: Այս դեպքում կարող էին այդ երկու մասերը ներդաշնակորեն միացած լինել այնպես, ինչպես ներկայացնում է Տակալշվիլին: Եվ եթե փորձենք մեր պատկերացումից ջնջել Բանալի բոլորակ սրահի գոյությունը, մի՞թե որևէ շահով անկատար և կամ որևէ բանով պակասավոր կենեկայանար նրա կենտրոնական մասը՝ բուն եկեղեցին:

Իրողությունն այն է, որ մեր ժամանակակից ուսումնասիրողները, խորամուխ չլինելով Ջվարթնոցի և զվարթնոցատիպ մյուս տաճարների ավերման կոնկրետ պատճառների մեջ, ապրիորի, թերևս միմյանց կրկնելով, կառուցվածքի տվյալ սխեմային վերագրում են նրա բուն բնույթից բխող օրգանական թերություններ, կոնստրուկտիվ մասերի անմշակ տեղեր և, ապա, իրենց համոզումները վերագրում են այս կամ այն տաճարի կառուցողին: Տվյալ դեպքում, Բանալի կառուցողին վերագրում են այն, թե նա գիտե՞նալով Ջվարթնոցի և մյուս բոլորակ հատակագծով տաճարների կործանման պատճառները, ավելի հաստացրել է դրսի պատերը և ավելի կայուն ձևեր տվել մայր մույթներին:

Բանալի հատակագծից պարզորոշ երև



Գծ. 22. Գանձի—բոլորակ եկեղեցու ճատակագիծ

վում է, որ գմբեթակիր քառակուսին ստեղծել են ոչ թե աշտարականման շրտ ծավալները, այլ միայն և միայն նրանց ներսի անկյունները և 3/4 կորուսյան սյուները, և հենց նրանց իրար կապող կամարների վրա էն բարձրացել է գմբեթաթմբուկը: Ինչ վերաբերում է գմբեթակիր կամարների առաջացրած հորո հորիզոնական ուժերին, պետք է նկատել, որ այդ կամարներն իրենց ձևով և կառուցման բնույթով որոշ դեպքերում չէին առաջացնում նման ուժեր: Վերևից եկող ուժերը քարից-քար փոխանցվելով, նորանց տաշվածքի հարթությանը ուղղահայաց, իվերջո անցնում էին հենարանին տվյալ դեպքում մայր մույթին, գործելով ուղղահայաց և ոչ հորիզոնական ուղղությամբ: Այդ են ապացուցում մեր որոշ ավերակներում, թերևս դարձրելով անկործան կանգնած սմբրկ կամարները՝ ստեղծված քարով, առանց հորիզոնական ուժերը դիմագրավող պատահատվածների և նույնիսկ առանց շաղախի, որպիսին վաղուց հավելել, անցել է անձրևաչրերի հետ:

Փմբեթակիր կամարներից այս կամ այն շափով առաջացած հորիզոնական հրող ուժերի համազորը գործում է մուլթերի անկյունագծի ուղղությամբ: Ահավասիկ հենց այդ ուղղությամբ Բանայի մուլթերը դաստարկ մեջ և անզոր մեծ ուժեր դիմազրավելու համար: Զվարթնոցում մարտ մուլթերը ուժեղացված են հենց այդ անկյունագծային ուղղությամբ:

Այսպիսով, բնականորեն եզրակացվում է, որ Բահայի շորս աշտարականման ծավալները հանդիսանում են տաճարի կենտրոնը կազմող եկեղեցու մասերը և ոչ ամրացված մույրեր՝ ընդամենը 8 մետր տրամագծով գմբեթը կրելու համար:

Ծ. Տակալզվիլին իր «Բանա» աշխատության մեջ նշում է, որ տաճարի արտաքին 1,6 սաժեն (ավելի քան 3 մետր—Տ. Մ.) հաստություն ունեցող պատը կառուցվել է երկու հերթում, նախ 0,7 սաժեն հաստությամբ, և ապա ներսից ավելացվել է 0,9 սաժեն հաստությամբ պատ: Նա միաժամանակ հիշատակում է, որ արտաքին պատի այդ մեծ հաստությունը Զվարթնոցի նկատմամբ Բանայի օգտակար տարբերություններից մեկն է, որը մյուս գործոնների թվում տաճարին տվել է ամրություն և կայունություն, նա այս դեպքում չի հիշատակում, որ Բանա տաճարի կառուցողը սկզբնապես բարակ պատ է կառուցել, և հետո միայն, թե՛ որ դարում՝ հայտնի չէ, այն հաստացվել է:

Այս հարցում նույնպիսի վերաբերմունք են ցույց տվել նաև այլ հետազոտողներ, այդ թվում Կուզենցովը և Սեվերովը:

Փաստերը (չափագրություններ և ավերակի լուսանկարներ) անհերքելիորեն հաստատում են, որ Բանայի կառուցողը առիթ չի ունեցել անհանգստանալու Զվարթնոցի դրսի բոլորակ պատի բարակությամբ, ինքը ևս իր կառուցվածքում բարձրացրել է իր ժամանակի համար դարձյալ ոչ հաստ պատ:

Այս հարցում ևս մեր ժամանակակից հետազոտողները Բանայի կառուցողին են վերագրում իրենց գաղափարները, հակասու-

թյան մեջ մտնելով իրականության հետ:

Ինչպես հայտնի է, Զվարթնոցի միայն արևելյան արսիդն է հանդիսանում սեղան, Մինչդեռ Բանան, ըստ Տակալզվիլիլու՝ ունի հինգ սեղան: Նա նկատի ունի այն շորս խորանները, որ կան Բանայի խաչաթևերի միջև: Անտեսելով հիշյալ խորանների սահմանափակ նշանակությունն ու բացարձակ փոքր չափերը նա այդպիսիք մի շարքում է դնում եկեղեցու գլխավոր սեղանի հետ:

Նկատի առնելով Բանայի հիշյալ հինգ սեղանների ատկայությունը, ինչպես և հաստակագծի, Զվարթնոցի հատակագծի համեմատությամբ՝ բարդ սիման, Տակալզվիլին (նաև Ամիրանշվիլին) եզրակացնում է, որ Բանայի տաճարը հանդիսանում է Զվարթնոցի հետագա զարգացումը:

Նման եզրակացության համաձայնել անհնարին է: ԶԷ՝ որ զարգացում հասկացողությունը նախորդի համեմատությամբ բովանդակության հարստացման զուգընթաց, նկատի ունի ձևերի պարզեցում (ոչ հասարակացման իմաստով), հանգույցների հստակ լուծում, ժամանակի տեղեկեցիկ համապատասխան ներքին տարածության անհամեմատ ընդարձակում, կոնստրուկտիվ էլեմենտների թեթևացում, նորաձևություններ՝ ավելի մեծ թռիչքներ ծածկելու համար, ինչպես և կառուցվածքի ուտիլիտար պահանջների լիակատար բավարարում և այլն: Կա՞ այս ամենը Բանայում, տեսնենք: Հատակագծերի ուղղակի համեմատությունից երևում է, որ Բանայում փոքր է գմբեթի ներքին տրամագիծը (Բանայում 8 մետր է, Զվարթնոցում՝ 12), հետևաբար փոքր է նաև գմբեթատակ տարածությունը: Ինչպես խաչաթևերը, այնպես էլ գալերեան՝ նեղ են թվերի նույնպիսի հարաբերությամբ, խաչաթևերի միջև աշտարականման ծավալները խանգարում են ներքին տարածության ամբողջական ընկալման ծածկում են գալերեան ավելի քան կիսով չափ, մի բան, որ դժվարացնում է գալերեանի և կենտրոնի միջև հաղորդակցությունը:

7-րդ դարի շինարարական տեխնիկան

հնարավորություն չէր ընձեռում առավել մեծաթուղք գմբեթների կառուցման: Զվարթնոցի ճարտարապետը, ավելի ընդարձակ ներքին տարածություն ստանալու համար, ստիպված էր ներքին խաչաձևի շուրջն ստեղծել բոլորակ սրահ, այն էլ երկհարկ, որպեսզի այնտեղ առավել մեծ թվով մարդկանց տեղավորի: Նա, այդ սրահները տաճարի կենտրոնի հետ ավելի հարմար հաղորդակից դարձնելու համար, խաչաձևերը դարձրեց թափանցիկ, տրադիցիոն խուլ պատը փոխարինեց սյունակամարաղարով: Երկրորդ աստիճանի բոլորակ պատի համար հիմք ստեղծեց ոչ թե լրացուցիչ սյուներով, այլ մեծաթուղք կամարաթաղերով: Եվ նա իր նպատակին հասավ, մշակելով տաճարի հատակագիծ կլասիկ պարզությամբ, որտեղ ոչինչ չկա ավելորդ և ոչինչ պակաս չկա: Այս ամենով ահա Զվարթնոցը հանդիսացավ նոր աստիճան, տաճարաշինության մեջ հետագա զարգացում:

Զվարթնոցի հատակագծում այնպես հետադարձ է արտահայտվում ողջ շինության տարածական-ծավալային կերպարը, որ լոկ մեկ առաջին աստիճանի հատակագծով հնարավոր է դարձել ամենայն լիակատարությամբ նրա համար կազմել վերակազմության նախագիծ:

Բանայի ճարտարապետին, ըստ էության, չի հաջողվել տվյալ տիպի տաճարների որոշակի նպատակադրումը իրականություն դարձնել անհրաժեշտ ձևով: Նա, կենտրոնում տեղադրելով ոչ թե պարզունակ խաչաձև, այլ ամբողջական եկեղեցի՝ իր բոլոր տրադիցիոն հարամասներով, փաստորեն զգալապես կորցրել է բոլորակ սրահի նշանակությունը: Այստեղ բոլորակ սրահը դադարել է տաճարի ներքին տարածության օրգանական և անբաղկատելի մասը լինելուց, փաստորեն կցվել է կենտրոնական մասին մեխանիկորեն, նպատակ ունենալով տաճարների տրվալ տիպի ավելի բարձր էտապը հանդիսանալու: Տաճարների տվյալ տիպի զարգացում կը հանդիսանա՞ր արդյոք, եթե մի շատ ավելի բարդ հատակագիծով եկեղեցի դրվեր նույն

կոմպոզիցիայի կենտրոնում և շրջապատվեր դարձյալ բոլորակ սրահներով: Այդ անպայման կլինեիր տիպի անկում և ոչ զարգացում:

Ի վերջո պարզվում է, որ Բանայում «զարգացումը» հիմնականում գնացել է հատակագծի և ծավալային-տարածական որոշակի դրվագների բարդացման, գմբեթի տրամագծի փոքրացման, ներքին ամբողջական տարածության մասնատման, ուտիլիտար հարմարությունների վատացման ուղղությամբ: Իրջոցառումների մի ամբողջ շարք, որոնց իրազորման հետևանքով տաճարն իր բարեմասնություններով, աներկբա զիջում է նախորդին:

Այսպիսով եզրակացվում է, որ Բանայի զվարթնոցատիպ տաճարների մի տարատեսակ է, ոչ թե Զվարթնոցի հետագա զարգացումը:

Բանա տաճարի ոչ միայն առաջին աստիճանի հատակագիծով, այլ նույնիսկ տարբեր աստիճանների եղած շուրջ հատակագծերով, դեռևս հնարավոր չի դարձել ստեղծել նրա վերակազմության լիակատար նախագիծը: Մինչ այժմ նրա համար կազմված երկու վերակազմությունները միմյանցից տարբերվում են արմատապես: Մի դեպքում տաճարը երկու աստիճանով է, (հեղինակ Ս. Կլիխաշվիլի), մյուս դեպքում երեք (հեղինակ Ա. Կալգին): Առաջին դեպքում երկրորդ բոլորակ սրահը (վերնահարկը) ցույց է տրվում առաջին բարձր աստիճանի սահմաններում, մյուս դեպքում՝ երրորդ աստիճանի գմբեթաթմբուկի շուրջը:

Օրինակ, ի՞նչ նշանակություն պիտի ունենար գմբեթաթմբուկի շուրջը եղած սրահը, երբ այնտեղ տանող ուղիները ստեղծված պատերի հաստության ներսում խիստ փոքր չափերի են և անհարմար նույնիսկ մի քանի տասնյակ բարձրացողներին համար: Եվ եթե գմբեթաթմբուկի շուրջը սրահ լիներ, արդյո՞ք ճարտարապետը կզլանար իր ստեղծած շուրջաշտարականման ծավալներից մեկն ու մեկի ներսում սանդուխքներ կառուցել:

Առավելություն տալով Ա. Կալգինի կազ-

մած վերակազմութեանը, Ե. Տակալզվիլին գրում է. «Կմբեթի համեմատաբար փոքր տըրամագիծ ունենալն ուղղում է այն մտքին, թե գմբեթի շուրջը գոյութիւն է ունեցել բոլորակ սրահ...»:

Հետազոտողին պետք էր նկատել, որ զըմբեթի փոքրութիւնը բխում է տաճարի բուն սխեմայից: Նույն սխեմայի պայմաններում ավելի մեծ տրամագծով գմբեթ ունենալու համար, անհրաժեշտ պիտի լիներ բոլորակ տաճար կառուցել շատ ավելի մեծ տրամագծով:

Ա. Կալզիւնի վերակազմութեամբ գմբեթի մեծացումը բոլորակ սրահի միջոցով ունի լոկ արտաբերի նշանակութիւն, որն ավելի անկարևոր է, քան եթե բուն գմբեթի ներքին տրամագիծը մեծ լիներ, մի բան, որ ունեւր առաջնակարգ նշանակութիւն հատկապես այդ տիպի տաճարաշինութեան մեջ:

Ըստ երևութիւն Բանայի համար ճշմարտացի, անհերքելի լիակատարութեամբ վերակազմութեան նախագիծ պետք է ստեղծել ավերակի պեղումներից հետո, ինչպես այդ արվել է Զվարթնոցի և Գագկաշենի համար:

Բանան շատ հետաքրքրական հուշարձան է և նրա ամբողջական ուսումնասիրութիւնը շատ բան կպարզի այդ շրջանի ճարտարապետական կոթողների պատմութիւնից:

Ե. Տակալզվիլին իր աշխատութեան 98-րդ

էջում բերում է մի կարևոր տեղեկութիւն, թե Բրոսսեն գտել էր ավետարանի թղթե մի թերթ (դրված 936 թվականի մագաղաթագիր մի այլ ավետարանի մեջ), որտեղ գրված է եղել «խիստ հոգևորական սք. Ավկեսնտիլը Բանայի շրջանի այն տեղանքում, որը հայտնի է Քարազուլիս անունով, կառուցեց սք. Գևորգի եկեղեցին՝ ծախսելով նրա վրա շատ միջոցներ»:

Այդ ժամանակ այդ շրջանում կար անհավատարիմ սանջակ, Բաղին-Բեզ անունով, որը հրամայեց սրբին բանտարկել, սակայն նա շուտով ազատվեց»:

Ե. Տակալզվիլուն հայտնի չէ, թե հիշյալ գրութեան մեջ ո՞ր եկեղեցու մասին է խոսքը և թե ե՞րբ է տեղի ունեցել վերոհիշյալը:

Ինչպես երևում է Բանայի շրջանում շատ եկեղեցիների կան, որ թերևս իրենց արժեքով ու նշանակութեամբ միմյանց չեն զիջում և ցարդ հայտնի չէ, թե որը ո՞ւմ կողմից և ե՞րբ է կառուցվել: Հայտնի չէ նաև, թե նրանցից ո՞րն է կանգուն եղել, և ո՞րը՝ ավերակ, երբ հետագա դարերում նրանց մասին տեղեկութիւններ են գրառել պատմագիրները, և արդոք չե՞ն սխալվել, թե այդ եկեղեցիներից ո՞րն է Ադրնբրսեհի օրոք Կվիրիկի կողմից կառուցվել, ո՞րը՝ Ավկեսնտիլի, և որո՞նք՝ այլոց:

ԶՎԱՐԹՆՈՅ ԵՎ ԼՅԱԿԻԹ

Լյակիթն Անդրկովկասում հայտնաբերված զվարթնոցատիպ համարվող շորթորոյ տաճարն է, որի մասին առաջին անգամ, դեռևս 1592—93 թթ. տեղեկութիւններ է հրատարակում Ա. Խախանովը:

Հիշյալ ժողովրդական հատկագծով տաճարի ավերակը գտնվում է Ադրբեջանական ՍՍՌ-ի հյուսիսակողմում, Դաղստանի սահմանից ընդամենը 15 կիլոմետրի վրա (Զաքաթաբայից 20 կիլոմետր հարավ-արևելք) լեզդիներով բնակեցված Լյակիթ գյուղի այդիններում:

Հուշարձանի հանգամանալից ուսումնասիրութեամբ զբաղվել են Ադրբեջանական ՍՍՌ հուշարձանների պահպանութեան վարչութիւնը՝ ՍՍՌՄ Գիտութիւնների Ակադեմիայի Արվեստի պատմութեան ինստիտուտի հետ համատեղ:

Ճարտարապետ Պ. Բարանովսկիին կատարել է չափագրումներ և որոշ նորոգումներ բուն հուշարձանում:

Ինչպես Բարանովսկու կազմած մենագրութիւնը, այնպես էլ Ն. Տոկարսկու մեկնաբանութիւնները՝ Լյակիթի տաճարի վերա-

բերյալ (դոկտորական դիսերտացիայում), դեռևս չեն հրատարակված: Վերջիններիս հետ ծանոթանում ենք քաղվածաբար, որ բերված են 4. Տրևերի գրքում¹, նվիրված ազվանների կուլտուրայի պատմությանը:

Նույն խնդրի մասին կարճառոտ տեղեկություններ է տալիս 1958 թ. լույս տեսած ճարտարապետության համընդհանուր պատմության գիրքը (էջ 468):


Ինչպես վերոհիշյալ աղբյուրները, այնպես էլ մեր ուսումնասիրությունն ու տեղում կատարած չափազրույթյունը ցույց են տալիս, որ իսկապես, կյակիթը զվարթնացափայ տաճար է յուրօրինակ օրհգինալույթյամբ հանդերձ նա կանգուն վիճակում կարող է եղած լինել երկու ձևով. մի դեպքում՝ հուսարհանանկետրոնագմբեթ, մյուս դեպքում՝ երկաստիճան կենտրոնագմբեթ:

Առաջին աստիճանը ներսից խաչաձև է (գծ. 23), և ստացվել է շորս կիսաբոլորակներով ու նրանց հանդիպման տեղերում կանգնած գմբեթակիր քառակուսու շորս հաստահեղույս մույթերով: Հիշյալ խաչաձևը դրսից շրջափակող արտաքին կորածև պատով ստեղծվել է բոլորանիստ սրահ: Խաչաձև կազմող կիսաշրջաններից յուրաքանչյուրն ստացվում է երեք սյուներով և երկու մույթերով:


Գմբեթակիր քառակուսու շորս մույթերից յուրաքանչյուրի հետնամասում կանգնած է մեկական լրացուցիչ սյուն (Զվարթնոցի արծվախոյակ սյուների դասավորությամբ): Եթե Զվարթնոցի արծվախոյակ սյունները և խաչաթևերի զազաթևները գտնվում են մի շրջագծի վրա (տաճարի կենտրոնից հավասար հեռավորություններ ունեն), ապա այստեղ այդպես չէ: Հիշյալ լրացուցիչ սյուններից յուրաքանչյուրը գտնվում է ամեն խաչաթևը կազմող երեք սյուններից—երկուսի գծի վրա: Այսպիսով, ստացվում է ութ էջանոց բազմանկյունի, յուրաքանչյուր էջը կազմված երեք

սյունից (երկուսը՝ խաչաթևին պատկանող և մեկը՝ լրացուցիչ սյունը կանգնած մայր մույթի հետնամասում: Ըստ որում, հիշյալ ութանկյուն բազմանկյունին շունի հավասարանկյունները նրանցից շորսը մեծ են 135°-ից —մյուս շորսը՝ փոքր 135°-ից: Այս միջոցառումը հնարավոր է դարձրել, որ մայր մույթի հետնամասի լրացուցիչ սյունը կանգնի կոնխի երեք սյուններից երկուսի գծի վրա, ստեղծելով բազմանկյան էջը (երեք սյուներով):

Այստեղ ճարտարապետը կարողացել է ներքին տեղարակնխն ու արտաքին բազման-



Գծ. 23. կյակիթ տաճարի հասակագծ



Գծ. 24. կյակիթ տաճարի վերակառուցված Զվարթնոցի համաչափություններով

¹ К. В. Тревер—Очерки по истории и культуре кавказской Албании—Ленинград, 1959 г.

կյունին անպես համատեղել, որ խառնվենրը հաջողութեամբ ստեղծող սյունները, միաժամանակ և նույն հաջողութեամբ ստեղծել են տետրակոնիք բոլորող բազմանկյունին: Սրա հետևանքով, սակայն բազմանկյան գագաթներից շորսը (մայր մուլթերի առանցքով) ավելի հեռու են կանգնել դրսի բոլորակ պատի ներքին մակերեսից, մյուս շորս գագաթները՝ ավելի մոտ: Այս բանը երևում է ինչպես ավերակը շափազելիս, այնպես էլ, և ավելի պարզորոշ, երբ փորձում ենք օրինակապիտուն գտնել ստաճարի հատակագիծը կազմելիս:

Եթե ընդունելու լինենք, որ կլակիթը ևս եղել է եռաստիճան (տես գծ. 24), ապա երկրորդ աստիճանը, ութանկյուն բազմանկյան¹ հիմքով, թմբուկ է եղել: Անկյուններից շորսը հենվել են մուլթերի հետնամասի լրացուցիչ սյունների վրա, մյուս շորս անկյունը՝ խառնվելը կազմող կիսաշրջանաձև կոնխերի գագաթների սյունների վրա: Այսպիսով երկրորդ աստիճանի բազմանկյուն թմբուկի ամբողջական հիմքը կազմել են վերոհիշյալ բոլոր սյունները միմյանց միացնող կամ հեծանները և կամ՝ կամարները: Վերջիններին թրճիչները փոքր են 1,6-ից մինչև 2,0 մետր:

Տաճարի երրորդ աստիճանն իր հիմքում, հավանական է, որ եղած լինի քառակուսի և կամ դարձյալ ութանկյուն բազմանկյունի, ծածկը՝ բուրգաձև:

Առաջին աստիճանի սահմաններում հյուսիս-արևելակողմից և հարավ-արևելակողմից բոլորակ տաճարին հարել են (ըստ Քարանդակու) երկու խորան: Վերջիններից դուրս ցցվածությունը ենթադրել է տվել Քարանդակուն, որ տաճարը բոլորելիս է եղել նաև բաց սյունասրահ, սակայն այս վերջինս, ինչպես նաև խորանների երկարութեան շափն ու ձևը, հաստատուելու ոչ մի հիմք ու հետք չի հայտնաբերվում:

Հուշարձանի դրսի պատերը կառուցված են եղել մի քիչ կանոնավորված գետաքարերով ու կրաշաղախով: Բացվածքները (դռներ) անկյունները շարվել են համեմատաբար ընտրված քարերով: Դրսի պատերի որմաճքում աղյուս² չի գործածված: Մինչդեռ ներսի մայր մուլթերը և հիմքում բոլորաձև սյունները, իրենց խարսխներով հանդերձ, կառուցված են թրծած աղյուսով ու կրաշաղախով և քարի խառնուրդ բնավ չունեն: Աղյուսի հաստությունը 5—5,5 սանտիմետր է, շարքի շաղախի հաստությունը՝ 4,5—5 սանտիմետր: մեկ շարք աղյուսի և մեկ շարք շաղախի ընդհանուր բարձրությունը հասնում է 10—10, 5—11 սանտիմետրի: Աղյուսի շափը մոտ 22×22 սանտիմետր է: Շաղախը խիտ է քայքայվել, և թեթևակի հզումից թափվում է:

Դրսի բոլորակ պատի ներսի երեսից մի քանի տեղ (թերևս միայն շորս մայր մուլթերի ուղղությամբ), որոշ կանոնավորություն ունեցող փոքր տրամագծի սյուններ են խրված բուն պատի մարմնի մեջ: Մինչդեռ մոտ շորս մետր բարձրությունից վերև (որտեղով անցնում է հորիզոնական գիծ և պատի վերնամասը բարակում է) պատի հաստությունը մեջ խրված նման բարակ սյունները դասավորված են ավելի հաճախ (տես նկ. 23):

Առաջին աստիճանի փոքր սյունների մասին խոսելիս, Բարանովսկին ասում է՝ «Այդպիսի սյուններ, սակայն ավելի հաճախ՝ մոտմոտ դասավորությամբ եղել են նաև երկրորդ շարուսի պատերի վրա»:

Եթե հիորանենք Բարանովսկին ուղղակի հասկանալու, ապա նա երկրորդ յարուս (աստիճան) է համարում ոչ թե մեր կարծիքով՝ տետրակոնխի սյունների և մայր մուլթերի հետնամասի լրացուցիչ սյունների վրա բարձրացած 2-րդ հարկը կազմող բազմանկյունաձև թմբուկը, այլ նույն առաջին աստիճանի

¹ Հասկանալի չէ, թե ի՞նչի հիման վրա է Պ. Բարանովսկին երկրորդ աստիճանը ևս անվանում բոլորակ թմբուկ, երբ նրա հիմքը հիբավի բազմանկյունի է և ոչ կոր, և կոր լինելու ոչ ապացույցներ կան, և ոչ անհրաժեշտություն:


² Բարանովսկին հիմք չունի ասելու, թե գետաքարերով պատը տեղ-տեղ կանոնավորվել է աղյուսի շարքով, բացառությամբ մուտքի դռների բարավորների, ինչպես առկա է ավերակում, և թե միայն աղյուսից հետագա մասնակի վերանորոգման արդյունք չեն:

արտաքին բոլորակ պատով ստեղծվող սրահի երկրորդ հարկաբաժինը: Այդ դեպքում այստեղից կարող է հետևել՝ նախ, որ առաջին աստիճանը եղել է բավական ցածր, հետևաբար ներքին խաչաձևը կազմող սյուները ծածկվել են ոչ թե կամարներով, որպիսիք ստանալու համար համեմատաբար մեծ բարձրություն է պետք, այլ հորիզոնական հեծաններով (архитрав), թերևս փայտակառույց: Ապա հետևում է նաև այն, որ բոլորակ սրահի առաջին հարկաբաժինը ծածկվել է ոչ թե թաղով, այլ դարձյալ փայտով, քանի որ թաղի հետք չկա, մինչդեռ կա պատի բարակացում, որտեղ և կարող էր հենվել երկրորդ հարկաբաժնի հատակը: Եվ ապա կարելի է հետևեցնել, որ արտաքին աստիճանավորմամբ՝ կյակիթը թերևս ավելի նման է եղել Թանային (երկաստիճան՝ երկհարկ թմբուկ և գմբեթ) և ո՛չ եռաստիճան Զվարթնոցին (տես վերակազմության տարբերակները):

Սակայն Բարանովսկին մի այլ տեղ պարզորեն ասում է, որ երկրորդ աստիճանի հատակագծում բոլորակ պատը իրենց վրա տարել են տետրակոնխի և մույթերի հետնամասում կանգնած առանձին սյուները: Իսկ եթե ճիշտն այս է, ապա էլ ի՞նչ սյուներին մասին է խոսքը՝ «ավելի հաճախ դասավորված մեր երկրորդ յարուսի պատերի վրա»: Այդ բանը Բարանովսկուն որտեղի՞ց է հայտել, չէ՞ որ երկրորդ աստիճանից մնացած ոչ մի հետք չկա: Ինչ կա, երկրորդ աստիճանը չէ, դա թերևս կարող է լինել առաջին աստիճանի բոլորակ սրահի երկրորդ հարկաբաժինը: Կարելի է ենթադրել նաև, որ Բարանովսկու հիշատակած տեղում որոշ շարժով պահպանված (3—4 հատ) սյուները հանդիսացել են, առաջին աստիճանի արտաքին բոլորակ պատի, ներքին երեսի վերնամասի ձևավորման էլեմենտները՝ բոլորակ սրահի կողմից: Այս դեպքում կատարվի, որ առաջին աստիճանը եղել է բավական մեծ բարձրության, որը գուցե թե հավանական չհամարվի:

Ներսի սյուները, ինչպես և մայր մույթե-

րը, պահպանվել են մեկ, մեկուկես մետր բարձրությամբ (տես նկ. 24): Մույթերից մեկը և սյուներից մի քանիսը շկան, պահպանվել են նրանց միայն աղյուսաշար խարխիսնե-



Գծ. 25. Կյակիթ տաճարի վերակազմությունը Թանայի համալսարանում

րը: Մայր մույթերից շրթորդը, ինչպես և նրան մոտ կանգնած երեք սյուներ, չեն պեղված:

Դրսի պատերից համեմատաբար մեծ բարձրությամբ (3—6 մետր) պահպանվել են խորանների և բոլորակ պատի հանգույցներում (տես նկ. 23): Արևելյան կողմում պատը շկա, կա հետագայում առանց շաղախի շարված մեկ-երկու շարք: Ըստ երևույթին պատի հիմքերը՝, որված լինելով անմիջապես ձորագլխին, քայքայվել և իրենց հետ խորտակել են հիշյալ՝ արևելյան պատը:

Ինչպես տաճարի ներսում, այնպես էլ նրանից դուրս խորտակված բեկորներ ու քետոնաղանգվածներ չկան: Պետք է ենթադրել, որ հողմնահարվել, մասնացել, խառնվել են շրջապատի հողին:

Կյակիթ տաճարի կառուցողի և կառուցման ժամանակի մասին հին մատենագիրների մոտ հիշատակություններ չկան. չի գտնված

1 Տաճարի արևելակողմի պատերի հիմքերի տեղով անցնելիս է եղել ոռոգող առու, որն այժմ հեռացվել է հնագույն ցանկապատի սահմաններից դուրս:

նակ հիշյալ խնդիրները լուսաբանող արձանագրություն՝ ո՛չ հուշարձանի կանգուն մասերի վրա, ո՛չ էլ բեկորի ձևով: Այդ իրավիճակն է, որ զօժարկ կացության մեջ է գրեզ հետազոտող Բարանովսկուն տաճարի կառուցման ժամանակը որոշելու գործում: Սակայն նա հնարավոր է համարում ենթադրել, թե նրա կառուցման ժամանակը ևս պետք է համարել 7-րդ դարը, քանի որ նա ընդօրինակում է Հայկական հայտնի Ղվարթնոց տաճարը: Սակայն նկատի ունենալով «Լյակիթ տաճարի ավելի արխայիկ բնույթը և այլ առանձնահատկություններ», այն ավելի մոտ է համարում Սիրիայի (Բոսրա) և Փոքր Ասիական (Վիրանշեր) հուշարձաններին, որից ելնելով էլ նրա կառուցման ժամանակը տեղափոխում է նախազվարթնոցյան շրջանը՝ 6-րդ դար: (Հուշարձանի վրա այժմ պակցված երկու տախտակների վրա նշված է 5—7 դար):

Բարանովսկին նշում է այս տաճարի նշանակությունը ճարտարապետական-պատմական առումով, հատկապես զմբեկների քառակուսու առաջանալու և զարգանալու ճանապարհների կապակցությամբ:

Տոկարսկին պատմագրական որոշ նյութերի հիման վրա, որ պահպանվել են Մովսես Կաղանկատվացու գործերում, գտնում է, որ Լյակիթի տաճարը կառուցված պիտի լինի Ջիվանշերի կողմից, այն բանից հետո, երբ նա Կոնստանդինի կայսեր Վաղարշապատում եղած ժամանակ ներկա է եղել Ղվարթնոցի օժանդ, և նա ևս, ինչպես և Կոնստանդինի կայսրը, որոշած է եղել իր հայրենիքում կառուցել զվարթնոցատիպ տաճար: Տոկարսկին ենթադրում է, որ կառուցմանը թերևս մասնակցել են նաև հայ վարպետները¹:

¹ Իր ժամանակի նշանավոր կառուցումներում այլազգի վարպետների մասնակցությունը, ընդհանրապես, չի բացա՞վում, այդ թվում նաև հայ վարպետների մասնակցությունը Լյակիթ տաճարի կառուցմանը, մասնավորապես ինչպես նաև նպատակ ունենալու լինե՞ք այն, որ այդ տեղում, ինչպես այժմ, այնպես էլ առաջներում՝ եղել են որոշակի քանակ կազմող հայաբնակ գյուղեր:

Տոկարսկին Լյակիթն իր ներքին կառուցվածքային տեսակետից ավելի մոտ է համարում Ղվարթնոցին, քան Բոսրայի տաճարին, քանի որ «Բոսրայում չկա յարուսային կոմպոզիցիայի այն աստիճանավորությունը, որը յուրահատուկ է Ղվարթնոցին և որը աներկբա կրկնված է Լյակիթում»:

Այստեղ Տոկարսկին նկատի ունի մայր մույթերի հետևամասում կանգնած սյուների բացակայությունը Բոսրայում, հետևաբար և երկրորդ աստիճանի ջրղորակ պատի գոյության ևս հնարհությունը նրանում:

Որ Լյակիթի կառուցման ժամանակը և նրա նախատիպի կամ սկզբնաղբյուրի հարցը լուծումը որոշ զօժարկություն է ներկայացնում, այդ միանգամայն բնական է: Սակայն անքավարար և անհամոզիչ են այն ֆակտորները՝ «արխայիկ բնույթ և այլ առանձնահատկություններ», որոնց հիման վրա նախորդ ուսումնասիրողները տաճարի կառուցման ժամանակը հասցնում են 6-րդ, նույնիսկ 5-րդ դար (այսինքն՝ Բոսրայից էլ վաղ):

Արդ, ինչո՞վ է բնորոշվում Լյակիթի ավելի արխայիկ բնույթը: Հետազոտողը թերևս նկատի չունի շինելակերպը, քանի որ Լյակիթում, ինչպես և Կովկասյան լեռնաշղթայի վերջավորության փեշերը կազմող տվյալ շրջանում, հաջորդ ժամանակների ընթացքում, ինչպես և այժմ, գոյություն ունի նույն շինելակերպը, նույն շինանյութերի գործադրմամբ: Երևի նկատի չունի նաև այն, որ կոնստրուկտիվ էլեմենտները՝ մույթերը, սյուները, նրանց միջև եղած տարածությունները տարբեր շափեր և զգալի խախտումներ ունեն:

Այստեղ առավել նշանակալիցը տաճարի ներքին կոմպոզիցիոն սխեմայի առանձնահատկությունն է, ինչպես և ճարտարապետական էլեմենտների ամաշակութային տպավորություն ունեցող պարզունակությունը:

Այսպես՝ մայր մույթերի ձևը Ղվարթնոցի համապատասխան մույթերի մշակվածությունը չունի, հատկապես նրա հետևամասը, որ հատակագծում ուղղանկյունի է, մինչդեռ

անկյան դիմաց կանգնեցված է կոր հատակագծով լրացուցիչ սյունը (ներանք միմյանց նկատմամբ բավական անտարբեր են, թերևս և անկապ)։ Եվ կամ թե՛ տաճարի ներքին կոր սյունների խարխուխները, որ անկյունները եռանկյունաձև կտրված խորանարդի ձև ունեն, իսկ արտաքին բոլորակ պատի ներքին երեսի բարակ սյունները մշակված են բավական հասարակ և պակաս ճաշակով։

Հարց է առաջանում, նախ՝ այդքանից ավել, և ավելի լավ ինչպե՞ս կարելի էր կառուցել անձև գետաքարերով և միաձև աղյուսով, որոնք տեղի միակ շինանյութերն են։ Արդյո՞ք այս դեպքում կառուցողի վարպետության հարցը ենթակա է մոռացության, եվ ապա, այդ նույն մոտեցումը մեզ չէ՞ր գրդի պնդելու, թե Բանայի տաճարը, որ իր ձևերի մշակմամբ շունի Ջվարթնոցի համապատասխան մասերի մշակվածությունը, որ պատերի հաստությունը, տաճարի աստիճանների և մույթների ձևով, ներքին տարածության համաշափտություններով ավելի արխաիկ բնույթ ունի՝ կառուցվել է Ջվարթնոցի վաղ։ Եվ կամ թե, Անիի Գազակն են եկեղեցին, որ իր մշակվածության աստիճանով մոտ է Ջվարթնոցին, ապա նույն ժամանակամիջոցի կառուցվածքներն են։

Ինչպես հայտնի է, պատմագրությունն ու այլ փաստեր այդ շեն հաստատում։

Ն. Տոկարսկին միանգամայն արդարացի է կյակիթի ավելի Ջվարթնոցի և ոչ Բոսրայի հետ կապելու խնդրում։ Բոսրային ավելի մոտ կարող են համարվել մեր վաղ շրջանի ներքին տետրակոնի ունեցող տաճարներից շատերը։ Սակայն կյակիթում մայր մույթերի հետնամասի լրացուցիչ սյունների գոյությունը աներկրայորեն ուսումնասիրվող հուշարձանը կապում է Ջվարթնոցի և այդ տիպի մյուս հուշարձանների հետ։ Առավել անհիմն է կյակիթը Բոսրային նախորդող շրջանը՝ 5-րդ

դարը տանելը (Բոսրան կառուցվել է 6-րդ դարի 11—12 թվականներին)։ Զէ՛ որ Բոսրայում, ինչպես նաև նրանից հետո—մինչև Ջվարթնոցը, այլ հուշարձաններում չկա յուրահատուկ կողմ հանդիսացող լրացուցիչ սյունների գործարդությունը։ Այդ ժամանակներում ընդհանրացված էր միայն տետրակոնիսը։

Կյակիթի շափագրության ընթացքում ներկատվում էին երևույթներ, որոնք թե՛ն պատահական չէին, ապա ներկայացնում են որոշ հետաքրքրություն։ Օրինակ, խաշթեքը կազմող կիսաշրջանի վրա, միջսյունային տարածությունները զրեթե նույնն են, ինչ Ջվարթնոցում՝ 155—165 սանտիմետր։

Երկուստեք նույն շափերն ունեն խաշթեքերը կազմող սյունների խարսխասայերը՝ մոտ 100×100 սմ. (Ջվարթնոցում՝ 95×95 սմ.)։

Գմբեթակիր մայր մույթերին ձուլված, հատակագծում երեք քառորդ կորած սյունները բուն մույթից առաջանում են նույն ձևով, ինչպես Ջվարթնոցում։

Եթե Ջվարթնոցում միայն երկու՝ անկյունագծային դռներն են բացվում սյունների (արծվախոյակ) դիմաց, ապա կյակիթում բոլոր երեք դռներն են բացվում կոնիերի գագաթում կանգնած սյունների դիմաց։

Շատ հետաքրքրական է նաև, որ կյակիթ տաճարի, ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ և երրորդ աստիճանները բնորոշող հատակագծային դրվագներ, տրամագծեր և այլն, բոլորովին նույն համաշափտությամբ են փոքր (որ արտահայտվում է 0,6 թվով) Ջվարթնոցի համապատասխան աստիճանների թմրուկների տրամագծերից։

Հենց այս հանգամանքն էլ նկատի ունենալով, հնարավոր համարվեց կյակիթի վերակազմության փորձ կատարել նրա հատակագծի վրա բարձրացնելով ծավալ՝ Ջվարթնոցի նմանողությամբ և համաշափտություններով (որպես գործակից ընդունելով 0,6 թիվը)։

* * *

Լյակիթի մասին մինչև այժմ տպագրված նյութերին առընթեր, տեղագրված է Քարանդակու կատարած շափագրութիան հատակագիծը:

Հիշյալ գծագրին նայելիս դժվար է հավատալ, թե տաճարի ներսն ունի խաչաձև կազմություն, կետագծով ցույց տրվածը հավատ չի ներշնչում: Թվում է, թե այնտեղ բնորոշողը գմբեթակիր քառակուսին է, ապա ութանկյուն բազմանկյունին, և նրան շրջանցող բոլորակ սրահը, ստեղծված արտաքին բոլորակ պատով: Հիշյալ երևույթից խոսափելու նպատակով, այստեղ բերվում է նոր շափագրութիան գծագիրը, որտեղ ցույց են տրված նաև սյունների խարիսխները, որոնք և պարզորոշ են դարձնում ներքին քառաթև կազմութիան առկայությունը:

Տաճարի արևելակողմի երկու, ըստ Քարանդակու խորանների միայն տաճարին հարող մասերն են պահպանված, իսկ կիսաշրջանաձև արտիդային մասերը չկան, նույնիսկ հիմքերը չկան, շկան և այլգլխիք բնորոշող բեկորներ: Գիտնականի կողմից խորանները ձևակերպվում են, ըստ երևույթին, այլ տաճարների նմանողությամբ: Բայց, չէ՞ որ կարող է այդպես շինել: Օրինակ, մեր կարծիքով, դրանք եղել են բոլորակ սրահի երկրորդ հարկարածին տանող սանդղաքավանդակներ: Հնարավոր է ենթադրել, որ այդ երկու դուրս ցցված ծավալների միջև, արևելյան կողմից, եղել է տաճարը սպասարկող անձնակազմի օժանդակ սենյակ: Ինչպես այդ տիպի մյուս հուշարձաններում: Սակայն այս ևս ապացուցելու հիմքեր տեղում չեն պահպանվել:

Քարանդակու կազմած հատակագծում, մայր մույթների ղեպի տաճարի կենտրոնը ուղղված մասը ցույց է տալիս սյուն հիմքում քառորդ շրջագծի շափով: Մինչդեռ իրականում, ինչպես ասվեց նախորդ էջում, այն սյուն է դուրս ցցված տրամագծի երեք քա-

ռորդի շափով, մի բան, որ ավելի դուրեկան է և արտահայտիչ:

Լյակիթը Ջվարթնոցին մոտ ընդունելու ղեպքում, նշևք նրանց միջև եղած հետևյալ տարբերությունը: Նրանք որպես գեղարվեստական ստեղծագործություններ, տարբեր կարգի արժեքներ ունեն, ինչպես նաև տարբեր մասշտաբների կառուցվածքներ են: Ջրվարթնոցն ունի մոտ 36 մետր տրամագիծ և Քորամանյանի վերակազմությամբ՝ 45 մետր բարձրություն, մինչև Լյակիթի տրամագիծը 22 մետր է (բարձրությունը հայտնի չէ, մեր վերակազմությամբ հասնում է 27 մետրի):

Ներքին կոնստրուկտիվ սխեմայի ամենակարևոր հանգույցում, որ տաճարի երկրորդ աստիճանի հիմքն է առաջին աստիճանի սահմաններում, Ջվարթնոցում երկկոր թաղ է, մոտ 10 մետր թռիչքով, մինչև Լյակիթում 2 մետրանոց կամար է, կամ հեծան մի բան, որի իրականացումն առաջին ղեպքում համարվում է մտքի խիզախ թռիչք ու կառուցողական մեծ հմտություն, երկրորդի ղեպում՝ սովորական հիմքի ստեղծում՝ երկրորդ հարկարածի պատերը բարձրացնելու համար:

Ահա այս այն կարևորն է, որով և պետք է արժեքավորվեն վերահիշյալ երկու հուշարձաններն Այն, որ երկու ղեպքում էլ մայր մույթների հետնամասում կանգնած են լրացուցիչ սյուներ՝ երկրորդ աստիճանի թմբուկը կրող հիմք ստեղծելու համար, այդ հետքը զարմանալի լինելու ոչ մի հիմք չունի, այդ էլ գյուտը: Զարմանալի չէր լինի նաև, եթե Ջվարթնոցի կառուցողը, մեր ժամանակակից պրոֆեսոր Կուզնեցովի խորհրդի նմանողությամբ, տաճարի երկրորդ աստիճանի բոլորակ թմբուկի հիմքն ստեղծելու համար, ոչ թե երկկոր թաղեր կառուցեր, այլ արծվախոյակ սյուների շարքում ստեղծեր կանոնավոր (բավական խիտ) սյունաձևամարաշար (ամեն կամարի թռիչքը 160 սանտիմետր ընդունելով, ինչպես եղել է տեորարվոնիսի կամարաշարներում):

Հուշարձանի որոշ առանձնահատկությունները նկատի առնելով նրա կառուցման հա-

վանական ժամանակը կարելի է համարել յոթերորդ դարի երկրորդ կեսը և այս հարցում ակներևաբար արդարամիտ է Ն. Տոկարսկին և նրա կարծիքը մենք բաժանում ենք:

Վերակազմության երկրորդ տարբերակը հավանական համարելու դեպքում, պետք է

ենթադրել, որ լյակիթի տաճարը ժամանակակից է Բանայի տաճարին:

Լյակիթը Բոսրաթի հետ կապելը և հատկապես վերջինիս նախորդող շրջանին (5-րդ դար) վերագրելը, առնվազն՝ զուրկ է հիմքից:

ՀԱՄԱԶԱԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶՎԱՐՔՆՈՑԻ ՀՍԱԿԱԳԻՈՒՄ

Ինչպես ցույց են տալիս նշանավոր հուշարձանների հատակազօմային ու տարածական լուծումներն ու շատ ավերակների շտապագրություններ, անցյալի բոլոր անվանի ճարտարապետներն իրենց ստեղծագործական աշխատանքների ընթացքում առաջնորդվել են գոյություն ունեցող որոշ նորմաներով, սահմանված օրենքներով ու թերևս սեփական նախասիրություններով: Այդ ամենը, անկասկած, բոլոր դեպքերում օգնել է կառուցվելիք շինության կազմության մեջ ներդնել կանոնավորություն, հաճելի համաչափություններ. որանցում ակներխ է ներքին շարժման գրաֆիկի պարզությունը, ձայնային խնդիրների լուծումը և այլն:

Ուշադիր և հանգամանալից ուսումնասիրությունն այս ուղղությամբ՝ շատ բան կարող է հայտնաբերել նաև Զվարթնոցի ողջ կառուցվածքում, համենայն դեպս այդ են նույնում բարձր կատարելության հասած պլանային և տարածական լուծումները տաճարում, ինչպես նաև անգերազանց ճաշակով մշակված նրա բեկորներն ու պատառիկները: Մտնելիս կայսրիվա խոտապահանջ ուսումնասիրողը չի գտնում ավելորդ մի անկյուն, մի սյուն և ընդհանրապես մի բան, որը հեռացնելու դեպքում, չվնասի տաճարի ամբողջականությունը:

Բացառություն կազմողներից է դոկտոր Կուզնեցովը, որին Զվարթնոցի հատակագիծը տրամաբանական կներկայանար, եթե արծվախոյակ սյուները չլինեին և տաճարի վերակազմությունը կազմվեր իր առաջարկության ձևով: Մինչդեռ Զվարթնոցի հատակագիծը հենց նրանով է կատարյալ ու խորա-

պես տրամաբանական, որ այսօր, նրա ըստեղծման օրից շուրջ մեկուկես հազարամյակ հետո, այդ հիմքի վրա հնարավոր է դարձել վերակազմել տաճարի երբեմնի տնայնիք՝ իր կառուցվածքային մանրամասներով, ինչպես և ամբողջությամբ վերցրած: Հենց արծվախոյակ սյուներն են, որ իրենց գոյությունից հնարավոր են դարձնում վերահիշյալը: Զվարթնոցի ամբողջական կառուցվածքի ինչպես պլանային, այնպես էլ կոմպոզիցիոն տարածական սխեմայի վերլուծությամբ, համեմատաբար քիչ են զբաղվել:

Գոկտոր Կուզնեցովն ուշադրություն դարձնելով մայր մույթի աննախադաս, ամբողջովին յուրօրինակ ձևիև, փորձում է որոշ օրենքներ գտնել նրա կառուցման սխեմայի մեջ, նա գրում է. «Խոյակի (խոսքը վերաբերում է արծվախոյակին—Տ. Մ.) ԱՕԴ անկյունը (որ ստացվում է մայր մույթի երկու կողերի ուղղությունների շարունակությամբ դեպի բոլորակ սրահը—Տ. Մ.), գրեթե ճիշտ 45 աստիճան է: Պետք է ենթադրել, որ ողջ մույթը ճարտարպետի կողմից կառուցված է զազաթում 45 աստիճանի անկյուն ունեցող եռանկյան սխեմայով»:

Չափագրությունները ցույց են տալիս, որ վերահիշյալ անկյունը ոչ թե 45, այլ 50° է, հետևաբար դոկտոր Կուզնեցովի ենթադրությունը պետք է համարել ոչ ճիշտ:

Ճարտարապետ Մնացականյանը, հայկական գավիթների համաչափություններն ուսումնասիրելիս, անդրադարձել է նաև Զվարթնոցի համաչափություններին, նա այդ առիթով գրում է. «Զվարթնոցի (սխեմայի—Տ. Մ.) կառուցման հիմքը հանդիսանում է

շինութեան արտաքին շրջագծեր, որին հաջորդաբար ներգծված քառակուսիների ու շրջագծերի միտքով ստացվում են ներքին տարածութեան բոլոր հիմնական կետերը»¹։ Վերահիշյալ միտքը Մնացականյանի կողմից ներկայացվում է նաև գծագրի վերածված²։ Համաձայն այդ գծագրի, ստացվում է, որ Զլարթնոցի առաջին աստիճանի արտաքին պատի դրսի երեսը բնորոշող շրջագծին ներգծված քառակուսուն, դարձյալ ներգծված շրջագծեր կազմում է տաճարի երկրորդ աստիճանի թմբուկի պատի առանցքը։ Անալիտիկ հաշվարկումը ցույց է տալիս, որ այդպես կարող էր լինել միայն այն դեպքում, եթե տաճարի մեծ տրամագիծը ոչ թե 35, 70, այլ 37, 18 մետր լիներ։ Մոտավորապես այնքան, որքան մեծ թմբուկը պահպող քիվի տրամագիծն է (մի քիչ էլ ավելի)։

Այնուհետև Մնացականյանի ներկայացրած գծագրից ստացվում է, որ արծվախոյակ սյուների կենտրոնները միացնող քառակուսուն ներգծված շրջագծին, նորից բերգծված քառակուսին հանդիսանում է գմբեթակիր քառակուսին։ Անալիտիկ հաշվարկումը ցույց է տալիս, որ այդպես կարող էր լինել, եթե արծվախոյակ սյուների առանցքները միացնող քառակուսու էջը ոչ թե 18,08, այլ 18,24 մետր լիներ։

Նկատի ունենալով, որ աշխարհի շատ շինությունների համաչափությունների ուսումնասիրության և սխեմաներ կազմելու ընթացքում նման տարբերությունները հաշվի չեն առնվում, այս դեպքում էլ կարող ենք համաձայնել Մնացականյանի հետ մի վերապահության, այդ այն է, որ Զլարթնոցի սխեմայի կառուցման հիմք հանդիսացել է ոչ թե շինութեան արտաքին շրջագիծը, ինչպես ընդունում է ինքը, այլ գմբեթաքմբուկը։ Այլ կերպ չէր էլ կարող լինել, չէ՞ որ այնպիսի կենտրոնագմբեթ կառուցվածքում, ինչպիսին Զլարթնոցն է, ներքին տարածության

կենտրոնական, առավել բարձր, իր կատարած դերում առավել որոշիչ հանդիսացող մասը՝ գմբեթով պսակվող տարածությունն է, հետևաբար, ճարտարագետի կողմից նախ ընտրվել է գմբեթի տրամագիծը և ապա տաճարի մնացած մասերի չափերը։


Նենց այստեղից էլ պետք է սկսել և հետամուտ լինել Զլարթնոցի հատակագծի ստեղծման պրոցեսին։ Վարվելով այդպես, մեր առաջ կամաց-կամաց, էտապ առ էտապ բացվում, պարզվում, դառնում է հասկանալի ստեղծագործողի մտքի զարգացումը՝ պարզ սկզբնամասից մինչև ողջ կառուցվածքի բավական բարդ հյուսվածքը։

Այսպես. Զլարթնոցի ճարտարագետն ընդհանուր առմամբ որոշած լինելով իր կանգնելիք կոթողի ներքին կազմության ու արտաքին ծավալային-տարածական պատկերի հիմնական ուրվագծերը, անցնում է նրա հետագա, ավելի մանրամասն մշակման։ Ահա այդ մանրամասն մշակման ընթացքում նա, թերևս, սկսում է գմբեթի տրամագծի չափի ընտրմամբ, դրանով իսկ որոշակի է դարձնում գմբեթակիր մուլթերով ստեղծվող կենտրոնական քառակուսու չափերը (տես գծ. 26)։ Երկրորդ քայլը, որ կատարվում է, այդ շորս խաչաթևերի չափերի որոշումն է։ Ծարտարագետը պարզապես որոշում է խաչաթևերը գմբեթակիր քառակուսուց դուրս բերել հենց այդ քառակուսու կեսի չափով։ Այսպիսով, միայնց ուղղահայաց առանցքներից յուրաքանչյուրի վրա դասավորված երկու (ուղղանկյունաձև) խաչաթևերի գագաթների հեռավորությունն ստացվում է գմբեթակիր քառակուսու կրկնակի չափը։ Եթե մտովի վերահիշյալ խաչաձևը տեղավորենք մի մեծ քառակուսու մեջ, ապա գմբեթակիր քառակուսին կլինի այդ մեծ քառակուսու մեկ քառորդը։ Թվական արտահայտությամբ ստացվում է հետևյալը՝ գմբեթակիր արտաքին քառակուսու ամեն կողի երկարությունը հավասար է 13,08³ մետրի, հետևա-


¹ Ս. Ս. Մնացականյան — Շախական գավիթների ճարտարագետությունը, 1952 թ., էջ 128:

² Նույն տեղում, էջ 132:


³ Ավերակում արտիդի լայնքը հավասար է 9,88 մետրի, աստիդի եզրերից մինչև 3/4 գմբեթակիր սյու-




1




2




3



4



5



6

Գծ. 26. Զվարթնոցի հատակագծի ստեղծման ընթացքը

բար ամեն խաչաթևի դուրս ցցվածքը՝ 6,54 մետրի, այսպիսով, $13,08 + 2 \times 6,54 = 26,16$, որ նույնն է թե՛ $13,08 \times 2 = 26,16$:

Այնուհետև ճարտարապետը 6,54 մետրաչափով դուրս ցցված ուղղանկյունաձև խաչաթևերում ներգծում է կիսաշրջանաձև արսիդները, պատերի նախօրոք որոշված հաստությամբ՝ հանդերձ:

Այս ամենով հաստատվում է, որ Զվարթնոցի ներքին խաչաթևերը կազմող արսիդները ներգծված են այն ուղղանկյուն քառանկյունիներին, որոնք քրեթրակիր քառակուսու կիսի չափով կցված են եղել վերոհիշյալ քառակուսուն, նրա բոլոր չորս կողմերից:

Նախօրոք որոշած լինելով, որ տաճարի երկրորդ աստիճանը ևս առաջին աստիճանի նման, իր հիմքում պիտի ունենա բոլորակ ձև, որը պետք է հենվի մույթների, խաչաթևերի և արծվախոյակ սյուների վրա, ճարտարապետը կատարում է հաջորդ քայլը՝ խաչաթևն ինչպես զմեռ չորս կիսաբոլորակների զագաթների վրա նկարում է տաճարի երկրորդ աստիճանի թմբուկի պատը: Ահա այդ բոլորակ գծի տակ, ուր մինչ այդ նկարված են չորս խաչաթևերի զագաթները միայն, ճարտարապետը զըմբեթակիր քառակուսու անկյունագծերի ուղղությամբ տեղադրում է նաև արծվախոյակ սյուները՝ իրենց քառակուսի խարսխասալերով (տես գծ. 26): Այժմ թմբուկ արտահայտող վերոհիշյալ բոլորակ գծի տակ, որտեղ երկու կարգի ութ հենարաններ կան (խաչաթևերի զագաթները և արծվախոյակ սյուները՝

ներք. 0,865-ական մետր է, $\frac{3}{4}$ սյուների տրամագիծը՝ 1 մետր, այս բոլոր միասին $9,35 + 2 \times 0,865 + 2 = 13,08$ մետր, զմբեթակիր ներքին քառակուսու կողմերի ունեն 11,08 մետր չափ:

2 Պատերի հաստությունը խաչաթևերում 0,98 մետր է: Երբ ուղղանկյուն-քառանկյունաձև խաչաթևերում ներգծված են կիսաբոլորակներ, նրանց կենտրոնները միացնելով ստացվում է մի քառակուսի, որի չափերը բնչույակ մոտենում են զմբեթակիր քառակուսու չափերին, և կարծես թե՛ վերջինս իր կենտրոնի շուրջը պտտեցվել է 45 աստիճանի անկյունով, որպեսզի գտնվեն կիսաշրջանաձև խաչաթևերի կենտրոնները: Այս դեպքում զմբեթակիր քառակուսու վեր է ածվում ութանկյունու:

րը), ճարտարապետը սկսում է ուրվագծել արդեն հիմնական հենարանները՝ չորս մայր մույթները:

Տեղին է հիշելը, որ աշխարհի ու մի գմբեթավոր տաճար, և կամ որևէ կառուցվածք չունի Զվարթնոցի գմբեթակիր մույթների ձևը: Ուրիշ շատ տաճարներ կան, որոնց մույթների ձևերը զանազան վարիացիաներով կրկնվել են այլ և այլ կառուցվածքներում, մինչդեռ Զվարթնոցի մույթների ձևերը կրկնվեցին միայն և միայն նրա կրկնօրինակ Փագկաչենում:

Այստեղ ճարտարապետը մեծ շնորհք է ցուցաբերել և ինտերյեթի մշակման նուրբ ճաշակ: Նրա ստեղծած մույթների արդյունք են սրամիտ և օրիգինալ մտածողություն, նկատի ունենալով, որ մայր մույթներ պիտի գտնվեն գմբեթակիր $\frac{3}{4}$ սյուների և արծվախոյակ սյուների միջև, ճարտարապետը հիշյալ արծվախոյակ սյուների խարսխասալերի դրսի անկյուններին ուղիղ գծով միացնում է տաճարի արևելք-արևմուտք և հարավ-հյուսիս առանցքների և գմբեթակիր քառակուսու կողերի հանդիպումից ստացված չորս կետերին: Եվ, ահա, վերոհիշյալ գծերով, կիսաշրջանաձև խաչաթևերի հատվածներով, գմբեթակիր քառակուսու անկյունային մասերով ու $\frac{3}{4}$ սյուներով սահմանափակված մակերեսները հանդիսանում են մայր մույթների հատակագծային արտահայտությունը: Որպեսզի արծվախոյակ սյունն առանձին կարգազվի, որպեսզի մայր մույթը խիստ ծանր տպավորություն լիղղին, նրա արծվախոյակ սյանն ուղղված մասն անսնուն է յուրահատուկ խորշաձև մշակում:

Սովորաբար շրջագծաձևների հետ կապված հարթությունները ստացվում են շրջագծի կենտրոնի հետ միացնելով, այսինքն՝ շառավիղի ուղղությամբ: Այնպես, ինչպես այդ անում են կամարաշարի սյուների խոյակների և խարիսխների որոշ գծեր ստանալու ընթացքում: Այստեղ այդպես վարվելու դեպքում, մույթների տաճարի կենտրոնին ուղղված մասերը կստացվեին չափազանց լայն, իսկ

կիսաշրջանաձև կամարակապ խաչաթևերը՝ խիստ սեղմված: Այդ դեպքում շրջանց բոլորածև սրահը և տաճարի կենտրոնական մասերը կլինենիս պակաս հաղորդակից: Թերևս հենց այս վերջին հանգամանքն է թելադրել ճարտարապետին, որ նա տաճարի երկրորդ աստիճանի թմբկաձև պատի համար հիմք ստեղծել է մեծաթուխ թաղերով և ոչ սովորականի պես ողջ պարագծով սյուններ շարելով: Զվարթնոցի ճարտարապետի, «կանոնիկ» ձևերից կատարած վերոհիշյալ շեղումը և՛ տաճարի ներքին տարածության մշակման կարևոր կանոնավորություններից է:

Զվարթնոցի ճարտարապետն առանձնահատուկ ուշադրություն է հատկացրել մայր մույթների ձևին: Նա այդ մույթները մշակել է բոլոր կողմերից, նկատի ունենալով, որ տրվյալ տեղերում կանգնած մույթները դիտվելու են դարձյալ բոլոր կողմերից: Ահավասիկ այդ զորս միանման մույթներից որևէ մեկը (տես զծ. 12). եթե տաճարի կենտրոնին ուղղված մասք ձևավորված է 3/4 որմնասյունով և ունի որոշակի ավարտված ձև, ապա բոլորակ խաչաթևին ուղղված հարթության լայնքն այնքան է վերցված, որքան կից կամարաշարի մեկ կամարի բացվածքի լայնքն է: Մույթի աջ և ձախ կողները, որոնք կարող էին նրկարել մինչև բոլորակ սրահի ներսի եզրը, կարճացվել են, չէ՞ որ այդ շափի պատերը խուլ, անարտահայտիչ զանգվածի տպավորություն: Կատեղծներն: Ահա և մույթի հետամասը (բոլորակ սրահի կողմից). այնտեղ տեղադրվել է Զվարթնոցի ներքին շքեղություններից արծվախոյակ սյունը: Որքա՛ն է այն ամբողջական և տպավորիչ: Անկյունագծաձային մուտքների համար արծվախոյակ սյուններն ունեն անիտխարինելի նշանակություն:

Մայր մույթի հետամասի վրա, արծվախոյակ սյան դիմաց, ստեղծված է կիսաշրջանի հատակագծով, գլխից բարդ վերնամասով խորը: Այդ խորըի լայնքը, որ դիմացի սյան տրամագծի կրկնակի լայնքն ունի (160 սմ.). ստացվել է մույթի երկու երկար կողները ստեղծող գծերի անկյունից, արծվախոյակի


բոլորածև սյանը տարած շոշափողներով: Ըստ որում, մույթի հետամասի և արծվախոյակ սյան միջև թողնված է նույնքան տարածություն, որքան վերոհիշյալ խորըի խորությունն է (մի քիչ ավելի, քանի որ արծվախոյակի հետամասը սյան բոլորակից մի քիչ դուրս է մնում): Տաճարի երկրորդ աստիճանում, ինչպես և վերահարկում, եղել են նման խորըի՝ բոլորակ պատից նույն հեռավորության վրա: Նոր կազմված հատակագծերում այնտեղ ցույց են տրված պտտակաձև սանդուղիքներ: Մույթի հետամասից մինչև արծվախոյակ սյունը եղած տարածությունը ըստ երևույթին վերցված է հենց այնքան, որքան անհրաժեշտ է եղել հիշյալ սանդուղիքին:

Հատակագծի կազմելու հաջորդ էտպում կենտրոն հանդիսացող թառսբսիղը փաթաթվում է շրջանց բոլորակ սրահով, որը ստացվում է տաճարի առաջին աստիճանի արտաքին թմբկաձև պատի ստեղծմամբ: Հենց այդ ժամանակ էլ նշվում է արևելակողմի ուղղանկյուն կառուցվածքը:

Երբ հիմնականում ստեղծվում է տաճարի ամբողջական հատակագիծը, ճարտարապետը ուշադրությունը կենտրոնացնում է առանձին (մեծ ու փոքր) մասերի շափերի և ձևերի ճշտմանը, մի աշխատանք, որը զրեթե անհավատալի շափով, վերին աստիճան կատարյալ ու կանոնավոր է դարձնում հիշյալ մասերը, այդ մասերի փոխադարձ հարաբերակցությունը՝ համապիտանները:

Վերոհիշյալը պարզորոշ կերպով ցույց է տրված ստորև բերվող գծագրերում (տես զծ. 27): Ահավասիկ գծագրում (տես զծ. 27-1) որ, տաճարի առաջին աստիճանի հատակապիծն է, արտաքին պատի շրջագծի մեջ ամեն առանցքի ուղղությամբ տեղավորվել է երեք շրջագծի, որոնցից ամեն մեկը հավասար է գմբեթաթմբուկի ներքին պարագծի կազմող շրջագծին, այդ նշանակում է, որ մեծ առամագիծն ստացվում է բմբուկի ներքին տրամագծի եռակի շափով:

Թմբուկի ներքին տրամագծով, տաճարի



Նշ. 27. Ասյողի և առանձին մտերի հարաբերակցությունը Ջվորենցի հատակագծում

երկու առանցքների վրա գծված շրջագծերը՝ շոշափում են մայր մույթերի առավել դուրս եկած անկյունները: Երբ հիշյալ կետերը միացվում են տաճարի կենտրոնին, ստացված դժերով ողջ բոլորակը բաժանվում է ճիշտ 12

մասի, կենտրոնի մոտ ստացվող անկյունը հավասարվում է 30° -ի: Այս էլ նշանակում է, որ մայր մույթերը 12 սեկտորներից դրավում են 4-ը: Ուրեմն բոլորակ սրահը տաճարի ճիշտ կենտրոնից Ասյողի համար ծածկվում

է լուի 1/3-ի շահով: Մնացած 2/3-ը զբաղեցնում են կիսարդուրակ սյունակամարաշարով ստեղծված խաշաթները: Այս միաժամանակ ենթադրել է տալիս, թե արդյոք մույթի տաճարի կենտրոնին ուղղված այդ շատ կարևոր շափը ճարտարապետի կողմից չի՞ որոշվել հենց այս ձևով՝ շրջագծի 1/12-ի շափով:

Այդ նույն գծագրի վրա ցույց է տրված նաև արևելակողմի ուղղանկյունաձև կառուցվածքը, որի կարճ պատերի առանցքների հեռավորությունը ճիշտ և ճիշտ հավասար է գմբեթաթմբուկի ներքին տրամագծին: Գծագրի վրա (տես գծ. 27—2) մենք ակնհաստես ենք մի շատ հետաքրքիր պատկերին. ըստ երևույթին շենք սխալվի, եթե եզրակացնենք, որ ողջ տաճարը, տվյալ դեպքում հատակագիծը, ստեղծված է մի հաստատուն մոդուլի հիման վրա, և թերևս այդ մոդուլը դարձյալ գմբեթաթմբուկի ներքին տրամագծի որևէ մասը կազմելիս լինի:

Այս գծագրի վրա մույթների 3/4 սյուննրի կենտրոնները միացնող թառակուսին, որի մասն կողը շատ չնչին շափով է մեծ գմբեթի ներքին տրամագծից, բաժանել ենք ավելի փոքր թառակուսիների (թայլերի) և երբ տաճարի հատակագիծը ծածկում ենք այդ փոքր շափի թառակուսիներից ստեղծված ցանցով, պարզվում է, որ հատակագծի գրեթե բոլոր հանգույցների կարևոր կետերը գտնվում են վերոհիշյալ թառակուսիների անկյուններում:

Ահավասիկ, գծագրում երեք կոնցենտրիկ թառակուսիներ, որոնք միմյանց նկատմամբ մեծ են նույն թայլաշափով, և այդ թառակուսիներից առաջինի անկյուններն ընկնում են 3/4 սյունների կենտրոնների, երկրորդի անկյունները՝ արծվախոյակ սյունների կենտրոնների, երրորդի անկյունները՝ անկյունագծերում գտնվող մուտքի դռների առանցքների վրա:

Թառակուսիներից բացի, նկատվում են նաև միմյանց նկատմամբ ուղղահայաց խաշաձևեր կազմող շորս ուղղանկյունիներ, որոնք անկյունները մի դեպքում ընկնում են արտաքին պատի առանցքի, մյուս դեպքում՝

եռաստիճան որմնախարսխի եզրագծի վրա, երբ նրանց երկար կողմերը մի դեպքում անցնում են արծվախոյակ սյունների, մյուս դեպքում՝ 3/4 սյունների առանցքներով:

Գծագրի (տես գծ. 27-3) վրա երևացող պատկերը ստացվել է աղեղներով, որոնց կենտրոնները հանդիսանում են արծվախոյակ սյունների առանցքները: Ուշագրավ է, որ այդ աղեղները, անցնելով մյուս արծվախոյակ սյուններից երկուսի առանցքներով, զբմբեթակիր քառակուսու կողմերը հասնում են վերջինների միջևնակետում, որտեղով անցնում են տաճարի առանցքները: Հիշյալ աղեղների շառավիղները հանդիսանում են արծվախոյակ սյունները միացնող թառակուսու կողմերը: Ի վերջո պարզվում է, որ այդ կողմերի երկարությունը հավասար է տաճարի արտաքին բոլորակ պատի (հաշվի առնելով նաև արտաքին որմնասյունների հաստությունը) շառավիղին: Հնարավոր է, որ Զվարթնոցի ճարտարապետը, տաճարի արտաքին բոլորակ պատի տրամագծի շափը, նախամտածված ձևով, վերցրած լինի արծվախոյակ սյունների միջև եղած տարածության կրկնակի շափով:

Գծագրի (տես գծ. 27-4) վրա նույն տրամագծով ստեղծված շրջագծերով ավելի ակնբայի է դարձված հատակագծի բարձր կանոնավորությունը և զանազան մասերի ներքին փոխադառձ կապը:

Վերևում ասվածը գրեթե ամբողջությամբ կարող է վերարբերվել նաև Գուգկաշենին:

Մինչդեռ Բանայում այս խնդրին հատկացված է համեմատաբար պակաս ուշադրություն: Օրինակ, այնտեղ, արծվախոյակ սյան տեղում հանդես են գալիս արևմտյան կողմից երկու ուղղանկյուն սենամեջ աշտարականման ծավալների հատած անկյուններ, իսկ արևելյան կողմից՝ ամբողջական պատեր: Եթե առանձին կանգնած սյունների օգնությամբ կրկնակի շափով փոքրացված են երկկուկամարների թռչըները որոշ խաշաթների սահմաններում, սպա մյուս խաշաթների սահ-

մաններում նման սյունների դերը կատարում են պատերը:

Չնայած Բանայի արտաքին բոլորակի տրամագիծը մեծ է Ջվարթնոցի տրամագծից, բայց կենտրոնական խաչածևի ներքին ընդհանուր տարածությունը նեղված և մասնատված է, շնորհիվ այն բանի, որ խաչաթևերը բավականաչափ ձգվել են. միմյանցից բաժանվելով նրանց միջև կանգնած աշտարականման ծավալներով:

Ծվ երբ սյունակամարաշար աբսիդների երկու ծայրերն ուղիղ գծով միացնում ենք տաճարի կենտրոնին, ողջ շրջագիծը բաժանվում է ութ մասի, ըստ որում, աբսիդների ստեղծած անկյունները տաճարի կենտրոնում ստացվում են 45°-ից փոքր, իսկ մուլթերի ստեղծած անկյունները՝ 45°-ից մեծ: Այս նշանակում է, որ տաճարի կենտրոնից նայողի համար՝ բոլորակ սրահի ավելի քան կեսը ծածկված է մուլթերի ծավալներով:

Այստեղ բոլորակ սրահի ինտերյերը (ներքին տեսքը) ևս մշակված է խոշոր ձևերով. չկա Ջվարթնոցի մշակվածությունն ու նրբությունը:

Լյակիթի հատակագիծը, որոշ օրիգինալությամբ հանդերձ, շունի Ջվարթնոցի ինտերյերի կոպտորանս: Օրինակ՝ մայր մուլթերի կոնֆիգուրացիան բավական հասարակաց-

րած է, նրանց ձուլված մեծ տրամագծով երեք շառորդ որմնասյունների համեմատությամբ, մուլթերի միմյանց ուղղված ելունները, որոնց վրա կապվում են գմբեթակիր կամարները, բավական բարակ են, մոտ 60 սմ.: Մինչդեռ մյուս շարքալին սյունների տրամագիծը մոտ մեկ մետր է: Մայր մուլթերի արտաքին անկյունների դիմաց կանգնած են մեկական սյուններ, որոնք մուլթերի հետ ոչ միայն որևէ կապ չունեն, այլ նաև խորթ են իրենց ձևերով:

Տաճարն այստեղ ունի երեք արտաքին մուտք, սակայն նրանց դիմաց ներսի կողմից բավական մոտ տարածության վրա (մոտ 165 սմ.) կանգնած են աբսիդների կենտրոնական սյունները, մի բան, որ ընդհանրապես խիստ անհաճելի է: Ճիշտ է, Ջվարթնոցում ևս նման բան գոյություն ունի, բայց ըստ էության պայմանները խիստ տարբեր են: Ջվարթնոցում երեք գլխավոր դռները բացվում են խաչաթևերի կենտրոնական կամարների դիմաց: Միայն երկու անկյունագծային մուտքերն են, որ բացվում են շքեղատես արժրվախոյակ սյունների դիմաց, ըստ որում հիշյալ սյունների և այդ դռների միջև ոչ թե 165 սմ. է, ինչպես Լյակիթում, այլ 365—380 սմ. այս նշանակում է, որ Ջվարթնոցում սյունների, երկու դեպքում դռների դիմաց գտնվելը որևէ բացասական նշանակություն չունի:



ՓԵՐԻՋԻ ԼՈՐԻՍԻՍԵՆԴԵԿԸ ՈՐՉԵՍ ԶՎԵՐԹՆՈՑԻ ՄՈՒԵԼ

Փարիզի Աստվածամոր տաճարի դիմաց մինչև այսօր կանգուն է 1243—1248 թվերին կառուցված, առաջնորում՝ Արքայական, այժմ՝ Արդարադատության պալատին կից Եկեղեցին, որ կրում է Սեն-Շապել անունը:

Ահա, այդ եկեղեցու երկրորդ հարկի բաշտյունասրահի մուտքի ձախ քարակոփ պատին պահպանվում է թեմատիկ հարթաքանդակների մի շարք՝ աստվածաբանական-դիցաբանական բովանդակությամբ:

Այդ քանդակներից մեկի վրա պատկերված է Նոյան տապանի (նավակի) շինարարությունը, իսկ աջ կողմում երևում է մի եկեղեցական շենք: Հաջորդ քանդակում արդեն պատրաստ Նոյան նավակն է, այստեղ վերահաս ջրհեղեղից խուսափող զանազան կենդանիներ, թեք տախտակամածի վրայով քարձրանում են Նոյի նավակը, ուր նախօրոք տեղ են գրավել մարդիկ (նրանց թիվը չորս է): Այդ նավակի վրա պատկերված է նաև այն նույն եկեղեցական շենքը, որը նախորդ քանդակում գտնվում էր աշակողմում (տես նկ. 25): Այդ քանդակներից երրորդը պատկերում է հեղեղված աշխարհը և ջրերի վրա միայնակ լողացող Նոյան նավակը, որ տանում է մարդկանց, ինչպես և վերոհիշյալ եկեղեցական շենքը:

Որոշ ուսումնասիրությունների հիման

վրա սողերիս գրողը «Մի նորահայտ վկայություն» վերնագրով հողված հրատարակեց «Գրական թերթի» 1959 թ. մարտին (№. 12). տեղադնելով նաև վերոհիշյալ քանդակներից երրորդի լուսանկարը:

Այդ հողվածում պարզորոշ ասվում էր, որ 1) Նոյան նավակի վրայի եկեղեցական շինությունը մեր Զվարթնոց տաճարի վերապատկերումն է: 2) Այդ քանդակները կատարվել են բուն տաճարի կառուցման հետ գուգընթաց և ոչ ուշ: 3) Վերոհիշյալ պատկերների քանդակողը պետք է հայ մարդ եղած լինի, քանի որ քրիստոնեությունը դեպի Նյուսիս և դեպի Եվրոպա տարածվելիս, իր ձևաուարել է նաև արդեն հույակ ստացած կառուցող հայ վարպետների և ճարտարապետների: 4) Նկատի ունենալով այն, որ Զվարթնոցը կործանվել է Սեն-Շապելը կառուցվելուց մոտ 250 տարի առաջ, իսկ զվարթնոցանման Գազկաշենը՝ մոտավորապես 170 տարի առաջ, (ճիշտ թվականը հայտնի չէ)՝ և որ քանդակողը տեսած չլինելով այդ տաճարները կանգուն վիճակում, նրանց պատկերին պետք է ծանոթ եղած լինի կամ մողեկների և

1 Գազկաշենի վերջական կործանումը Հ. Խալիֆախյանը համարում է 1319 թ. մեզ հայտնի չէ սովյալ տեղեկության աղբյուրը:

կամ գրականության — մանրակարգչության նյութերից, որոնք հետագայում ոչնչացվել, անհետացել են մեր կուլտուրայի շատ ու շատ այլ կոթողների հետ օտար ասպատակությունների հետևանքով, իրենց հետ մոռացության մատնելով նաև Զվարթնոցի պատկերը: 5) Ի վերջո հիշյալ քանդակապատկերն ասում է, որ Զվարթնոցը եղել է եռաստիճան (трехярусный), և որ բոլոր աստիճանների հիմքում ունեցել է բուրբակ ձև, այսինքրն՝ այնպես, ինչպես 55 տարի առաջ տվել է իր վերակազմության նախագծում մեծ գեղագետ, գիտնական և հայրենասեր ճարտարապետ Քորոս Քորումանյանը: Սա այն կարևորն է, որը պետք է նկատի ունենան Զվարթնոցի վերակազմության Քորումանյանի նախագծի ճշտության վիճարկողները: 6) Այսպիսով Փարիզի քանդակը Զվարթնոցի համար ստանում է այն նշանակությունը, ինչ որ Գազկաշենի մողելը հայտնաբերված 1905—1906 թվերին, Ննց Գազկաշեն տաճարի համար:

«Մի նորահայտ վկայություն»-ը լույս տեսնելուց հետո հայտնի դարձավ, որ այդ քանդակներից վերջին երկուսի լուսանկարը կա մեծանուն քանաստեղծ Ավետիք Իսահակյանի գործերում: Ի՞նչն է այդ լուսանկարում հետաքրքրել հայ բանաստեղծին, եթե ոչ՝ առեղծվածային նմանությունը մեր հուշարձաններին:

Մի տարի անց, Սովետական Միության շինարարության և ճարտարապետության ակադեմիայի ավագ գիտական աշխատակից, գիտությունների ակադեմիայի ճարտարապետ Լ. Խաչիպաշյանը, ձեռք բերելով այդ նույն լուսանկարը, խնդրում է տեղեկացնել նրա ճշգրիտ տեղը, միաժամանակ հայտնելով իր համաձայնությունը մեր հողվածի գրույթներին, մի տարբերությամբ միայն, որ թերևս քանդակներում պատկերված է ոչ թե Զվարթնոցը, այլ Գազկաշենը:

Ահա և մամուլում տպագրվում է անվանի գրող Հրաչյա Քոչարի «Բաց նամակ լուի Արագոնին»-ը, որտեղ հեղինակն իր Ֆրանսիացի բարեկամին պատմում է հայ և Ֆրանսիացի ժողովուրդների դարավոր կուլտուրական կապերի մասին, մեջ բերելով նաև «Մի նորահայտ վկայություն» հողվածի գրույթները, թե Ֆրանսիական Սեն-Շապելում քանդակված է հայկական հուշակավոր Զվարթնոց տաճարի պատկերը և այլն:

1961 թվականին Ֆրանսիական Le Monge Souherrain ամսագրի 123, 124 համարներում հրատարակվում են հայ ճարտարապետության հուշարձանները և այնտեղ Զվարթնոցի նյութերի շարքում տեղադրված է Սեն-Շապելի վերահիշյալ քանդակի լուսանկարը, որով հեղինակ ճարտարապետ Ռևոտդյանը հավաստում է իր համաձայնությունը, թե քանդակում պատկերված է Զվարթնոցը:

Այս ընդհանուր կարծիքին են հանգել նաև բազմաթիվ ժամանակակից, միջին ու ավագ սերնդի հայ ճարտարապետները: Սակայն վերահիշյալ հողվածը լույս տեսնելուց մոտ չորս ամիս հետո, «Սովետական Արվեստի» 1959 թ. № 7-ում կարգում ենք ճարտարապետության թեկնածու Ս. Մնացականյանի «Մի նոր վկայություն»՝ որ արժանի է հերքման՝ հողվածը, որով հեղինակը ամեն կերպ փորձում է ժխտել Փարիզում հայտնաբերված քանդակի որևէ առնչությունը

1 Սեզ անսպասելի դարձանք է պատճառում Ս. Մնացականյանի վերահիշյալ «հերքման» քնույթն ու ձևը:

Նախ, որ նրա կողմից «հերքում» հողվածի վերագրել սխալ է մեկնաբանվում, այնտեղ գրված է «մի նորահայտ վկայություն» միևնույն Մնացականյանը գրում է «մի նոր վկայություն» լրմբոնելով, որ մեզ հետաքրքրող քանդակն աղոնի ղոյություն ունի ավելի քան 700 տարի և ետ չէ, նորահայտ է մեզ համար, թերևս հիշտ կլինի ասել, ետ է մեկնաբանում ստանում, որը և քննարկվում է այժմ (չէ՞ որ այդ լուսանկարը, ինչպես պարզվում է այժմ, վաղուց ի վեր հայտնի է եղել նույնիսկ մեր իրականության մեջ):

Եվ ապա - հերքման հեղինակը կամայականություն ցուցաբերելով իր հողվածում մեզ է վերագրում իր կողմից առեղծված բազմաթիվ գրույթներ և իր «հերքում» ամբողջովին կատուցում ավյալ գրույթներին ժամ: Ահավասրիկ նրա հողվածի հենց երկրորդ պարբերությունը՝ «հողվածի այն հիմնական գրույթը, թե եռաս-

Ղվարթնոցի հետ, նկատի ունենալով, որ հիշյալ քանդակն ավելի հաստատուն է Ղվարթնոցի վերակազմության ոչ թե իր (Մնացականյանի), այլ Քորամյանի նախագիծը:

Ահավաստիկ Մնացականյանի փաստարկները, որոնք բերված են վերոհիշյալ հոդվածում:

1. Քանի որ ղվարթնոցատիպ տաճարների ծավալային կերպարի հետ կապված ուսումնասիրությանը զբաղվող Արեմտա-Եվրոպական շատ գիտնականներ, այդ թվում Լ. Ստրժիգովսկին, Շարլ Դիլլը, ինչպես և Ք. Քորամյանյանը ինքն աղբյուրաբանել Սեն-Շապելի հիշյալ բարձրաքանդակին, որպես Ղվարթնոցի պատկերաքանդակ, հետևաբար այն այդպիսին չի կարող լինել:

2. Քանի որ եռաստիճան ոտտնդաձև կոմպոզիցիան ստեղծվել է ոչ թե Հայաստանում, այլ անտիկ շրջանի հոմանեական ճարտարապետության շրջանակներում, հետևաբար հարթաքանդակի շինության եռահարկ լինելը կապ չունի Ղվարթնոցի հետ:

3. Քանի որ հիշյալ եռահարկ կառուցվածքը քանդակում կազմում է տապանի օրգանական մասը և նրա առաջին աստիճանի լայնությունն ընդգրկում է մի մեծ կամար, հետևաբար, քանդակը կապ չունի Ղվարթնոցի հետ:

4. Նկատի ունենալով, որ 13-րդ դարում եռահարկ կոմպոզիցիայով կառուցվածքները պատկերները տարածված էին Ֆրանսիական արվեստի գործերում, հետևաբար հիշյալ «հարթաքանդակը հանդիսանում է «Ֆրանսիական ղարդարվեստի օրգանական մասը» և որ Ղվարթնոցի հետ այն ունի «Արտաքին, զուտ

տիճան ոտտնդաձև կոմպոզիցիա ստեղծվել է միայն միակական ճարտարապետության շրջանակներում... զուրկ է որևէ հիմքից»: Այսպիսի անհեթեթություն չկա որովհետեւ «Ֆրանսիական թերթի» մեր հոդվածում: Այնտեղ գրված է՝ «վերջին հաշվով ինչ էլ ասում քանդակը Այն, որ Ղվարթնոցը եղել է եռաստիճան (трехярусный), և որ բոլոր աստիճանների հիմքում ունեցել է կոր ձև: Այսինքն այնպես, ինչպես սրանից 55 տարի առաջ տվել է իր վերակազմության նախագիծը Քորա Քորամյանյանը: Ըվ այսպես ամբողջ հեղորոժա կառուցված է ֆաստիֆիկացիայի վրա:

ձևական նմանություն, որը և «ոչ մի հիմք չի կարող տալ... գիտական հիպոթեզներին, եզրակացություններին» և այլն:

Ինչպես երևում է վերոհիշյալից, Մնացականյանի մեջ բերած փաստարկներից և ոչ մեկը գիտականորեն կշռադատված միտք չի պարունակում: Օրինակ, ինչպե՞ս կարելի է, ասել, թե քանի որ «ոչակված գիտնականներն այդ մասին չեն խոսել, ուրեմն նոր խոսք ասելն անվազն ավելորդ է: Ըվ կամ քանդակի շինության եռահարկ լինելը վերաբերում է Ղվարթնոցից առաջ գոյություն ունեցող եռահարկ կառուցվածքներին: Բայց չէ՞ որ Ղվարթնոցն էլ (նաև Գազկաշենը) կառուցվել է առաջ, քան ստեղծվել է Սեն-Շապելի քանդակը: Անսպասելի է նաև այն միտքը, թե կառուցվածքը (եռահարկ շինության պատկերով) կազմում է տապանի օրգանական մասը: Ինչ վերաբերում է «մեծ կամարին», սպա այդ այն դեկորատիվ բացվածքն է, որով նավակ բարձրացրած ընտանի կենդանիները և մյուս փրկվածները ներս են մտել շինություն, պատասպարվել նախնի, չէ՞ որ առաջին հարթաքանդակում այնպիսի բարձրացողները երկրորդում չեն երևում: Ըվ վերջապես, ոչ ոք չի խանգարում, որ հարթաքանդակը համարվի ֆրանսիական զարդարված ստի գործ, որի վրա պատկերված լինեն նույն տապանը, Ղվարթնոցը, թշուրնը և էլի շատ պատկերներ, ինչպես որ է տեղի հաջորդ բազմաթիվ քանդակներում:

Ամենազարմանալին սակայն այն է, որ Մնացականյանը, ի լուր բոլորի, գրում է, թե «արտաքին, զուտ ձևական նմանությունը... նշանակություն չունի»:

Այդ ի՞նչ նյութ է շոշափում ճարտարապետ-գիտնականը, որտեղ «Արտաքին և զուտ ձևական նմանությունը» նշանակություն չունի: Ապա էլ ի՞նչը նշանակություն ունի, երբ քննարկվում է ճարտարապետական երկր: էլ ինչ՞ով է քնորոշվում նրա կերպարը և կամ տարբերությունը մի այլ երկից, հատակագիծն է պակասում, բայց այդ չէր կարելու պահանջել քանդակից:

Ճարտարապետության մեջ «Արտաքին և զուտ ձևականի» նշանակության թյուր հասկացողություններն են, որ հետազոտողին համարձակություն են տվել «Սովետական արվեստում» հրապարակել սր. գեղեցիկանի տաճարի կոնստի վերակազմության գծագիրը և երկու հատ էլ ավելի ուշ դարերի այլ կառուցվածքների պատկերներ, ցանկանալով ապացուցել, որ Սեն-Շապելի հարթաքանդակը ևս դրանցից մեկն է և Զվարթնոցի հետ կապ չունի: Իսկ կա՞ որևէ, թեկուզ հենց «Արտաքին և զուտ ձևական» նմանությունն իր բերած նյութերի և Սեն-Շապելի հարթաքանդակի միջև: Ոչ բոլորովին իսկ ունի՝ էլ ռուրիչ նյութեր կամ լուսանկար, աշխարհի ցանկացած մասում կառուցված որևէ կոթողի կամ շինվածքի, որ դարձյալ «Արտաքին և զուտ ձևական» նմանություն ունենա հիշյալ հարթաքանդակի և կամ Զվարթնոցի ու Գագկաշենի հետ: Չունի, քանի որ այդպիսիք չկան: Իհարկե, շատ կան եռահարկ ոտտոն-դանձ կառուցվածքներ, սակայն բոլորը միմյանցից, այդ թվում նաև Զվարթնոցից. Գագկաշենից և հարթաքանդակի պատկերից տարբերվում են հենց իրենց «Արտաքին և զուտ ձևական» ոչ նման լինելով:

Մի՞թե Ս. Մնացականյանն «Արտաքին, զուտ ձևական» կողմը չէ ի նկատի ունեցել, որ իր վերակազմության նախագծերում տարբեր է պատկերել Զվարթնոցը Գագկաշենից, այն էլ այն ժամանակ երբ երկուսն էլ ունեն նույն հատակագծերը:

Ելնելով այն բանից, որ Փարիզի քանդակը Զվարթնոցի պատկերի վերարտադրություն լինելը ոմանց կողմից վիճարկվում է, ոմանք էլ այն հակված են համարելու լուկ Գագկաշենի պատկերի վերարտադրություն, ստորև բերվում են լրացուցիչ հիմքեր «մի նորահայտ վկայություն» գրություններ հաստատելու համար.

Ջրհեղեղի պատմությունը Նոյան տապանով անիզելիտրոն կապված է Քրիստիական Արարատ լեռան հետ, որը գտնվում է նրա անունով կոչվող Արարատյան դաշտում:

Հայտնի է, և քրիստոնեության կողմից ընդունված, որ մարդկանց ձեռքով կառուցված եկեղեցիները համարվում են աստծո տներ, (երբ վերջինս իջնում է աշխարհ):

Քանի որ Նոյան տապանը մարդկանց հետո նրանց վերադառնան երկիր, նորից աճեն ու բազմանան, հետևաբար նրանց հետ փրկվում էր նաև քանդակում երևացող «Աստծո տունը», թեև ևս հուսալի ցամաքից— Արարատից ամենամոտիկը: Անառարկելիտրոն ամենամոտիկն այդ, դեռևս այն ժամանակ հուշակված Զվարթնոց տաճարն էր էլ միաձուլում, Արարատի նման սրածայր գմբեթով (և ոչ Գագկաշենը՝ Շիրակում, և այլ շինություններ հեռավոր երկրներում):

Արդ, երբ համադրում ենք մեր ձեռքի տակ եղած էքսպոնատները՝ Փարիզի քանդակի, Գագկաշենի քարակոփ մոդելի, Զվարթնոցի վերակազմության նախագծի լուսանկարները, ահա այս անառարկելի փաստերը մեզ բերում են անվերջ եզրակացությունների: Ահավասիկ Փարիզի քանդակն ու Գագկաշենի մոդելն արտահայտում են նույն կերպարը, բնորոշում են նույնատիպ կառուցվածքներ, այն էլ ոչ ընդհանուր, այլ զգալի մանրամասներով: Ահավասիկ և քանդակում, և մոդելում պատկերված է եռահարկ կառուցվածք, և մեկ և մյուս կառուցվածքը բոլոր հարկերում ունեն բոլորակ ձև. հարկերի, ինչպես և գմբեթի ծածկը կոնսաձև է: Արտաքին հարդարման մեջ երկուստեք ցույց է տրված նույնաձև սյունակամարաշար և այլն:

Ինչպես Զվարթնոցում, այնպես էլ Գագկաշենում առաջին աստիճանը երկու հարկաբաժին է ունեցել, որն արտահայտվել է արտաքին բոլորակ պատի վրա. առաջին հարկաբաժինը՝ սյունակամարաշարով և ձիգ պատուհաններով, իսկ երկրորդ հարկաբաժինը՝ կոր պատուհաններով: Այս բոլորը կուսակ Գագկաշենի մոդելի վրա: Եվ ահա Փարիզի հարթաքանդակի վրա կառուցվածքի առաջին աստիճանն առաջին հարկաբաժնի շափով ծածկված է նավակի կողերով և երե-

վում է երկրորդ հարկարժմիրը և այդտեղ չ'յ պատուհանները կոր են: Առեղծվածային բնույթի մի նմանություն ևս կա մեր Գաղկաշենի մոդելի և Փարիզի հարթաքանդակի միջև: Երկուստեք երկրորդ և երրորդ աստիճաններում պատուհաններն ունեն կոր ձև:

Բանն այն է, որ Ղվարթնոցի և Գազկաշենի վերակազմության բոլոր նախագծերում երկրորդ և երրորդ աստիճաններում պատուհանները ցույց են տրված ձգված ձևով: Մեր կանգուն մնացած տաճարներում պատուհանները հենց այդպիսի ձև ունեն, որը, իհարկե, ընդունելի է: Եվ եթե ընդունում ենք, որ մոդելները որոշ չափով պայմանական են, բայց այդ դեռ չի նշանակում, թե երկար պատուհանն այնտեղ կարող է կոր պատկերովել: Այս արդեն ինքնին ուսումնասիրության ենթակա խնդիր է: Մտտ հետաքրքրական է նաև, որ Գազկաշենի մոդելն իր տրամագծի և բարձրության հարաբերությամբ ու համաչափություններով, ավելի միշ է նման իսկականին, քան Փարիզի ֆանդուկ Ղվարթնոցի վերակազմության նախագծին: Ղարմասլիորեն երկուստեք նույն հարաբերություններն ունեն քանդակում երևացող մասը, Ղվարթնոցի համապատասխան մասի հետ (Քրոմամայանի վերակազմությանը): Ահավասիկ՝ քանդակում երկրորդ և երրորդ աստիճանների բարձրությունը հավասար է երկրորդ աստիճանի տրա-

մագծաչափին. նույն է նաև Ղվարթնոցի վերակազմության նախագծում: Բոլորովին նույն հարաբերությունն է ստացվում, երբ հիշյալ բարձրության չափին միացնում ենք տաճարի առաջին աստիճանի ծածկի բարձրությունը: Նույն հարաբերություններն ունեն երկրորդ աստիճանի բարձրությունը, վերջինիս տրամագծի հետ, թե քանդակում, թե վերակազմության նախագծում:

Երկուստեք նույն ձևով տաճարի առաջին աստիճանում տանիքը նեղ է, երկրորդ աստիճանում, լայն: Այս հանգամանքը անտիվանդակ չէ: Առաջին աստիճանի տանիքը, որ նեղ է, ծածկում է համեմատաբար նեղ բոլորակ սրահը, երկրորդ՝ որ լայն է, ծածկում է զգալի խորությամբ խաչաթևը (կոնխը): Այսպիսի մանրամասնություն անդրադարձումը մոդել-քանդակում պատահական լինել չի կարող: Ինչպես վերևում ասվեց, այսպիսի համապատասխանություն իսկականի հետ չկա նույնիսկ Գազկաշենի հիանալի մոդելում: Այժմ մնում է պարզել, թե Փարիզի հիշյալ քանդակը որի՞ կրկնապատկերն է, Ղվարթնոցի՞, թե՞ Գազկաշենի: Հարց է առաջանում, իսկ որի՞ կրկնապատկերն է Գազկաշենը, ինչպես հայտնի է՝ Ղվարթնոցի:

Արդ՝ եթե Փարիզի քանդակը նման է նաև Գազկաշենին, իսկ Գազկաշենը Ղվարթնոցին, հետևաբար Ղվարթնոցի պատկերը հարտաևել

¹ Այս հանգամանքը ենթադրել է տախ, որ մոդելը պարաստված է եղել թերևս տաճարը կառուցելուց առաջ, որ կոր պատուհանները կառուցման ընթացքում փոփոխվել են ձգված պատուհաններով: Սակայն այս ենթադրությունը ևս կասկածի տակ է առնվում ավերակում պահպանված կոր պատուհանների տարբեր տիպի շրջանակների բեկորների ավազությամբ (խոսքը չի վերաբերում զարդարանդակների տեսակներին և բնույթին):

Բանն այն է, որ բոլորակ պատուհանների ավերակում պահպանված քարերի զգալի մասն ունի բոլորակ զարդաքանդակի միայն մի շերտ, մինչդեռ պահպանված քարերից 5—6 հատի վրա այդ զարդաշերտից բացի, կա որոշ ձևով փորված երկրորդ զարդաշերտ: Այդ քարերի քանդակազարդումով պարզվում է, որ պահպանվել են երեք բոլորակ պատուհանների բեկորներ: Պատմության թանգարանում ցուցադրված մոդելում

երկրորդ զարդաշերտով կոր պատուհանները տեղադրված են հյուսիսային, հարավային և արևմտյան մուտքերի առանցքով վերնահարկի արտաքին նիստերի վրա: Իհարկե, մոդել պարաստողները կարող էին այդպես վարվել, սակայն թվում է, եթե ավերակում մինչև այսօր, բոլորակ պատուհանների քանակի համեմատությամբ, ոչ մեծաթիվ բեկորների մեջ, իրենց գոյությունը պահպանել են հիշյալ տարբերանշանով շուրջ երեք պատուհանի բեկոր, այս պետք է, որ տաճարում ավելի շատ լինեին այդ ձևի շրջանակներով պատուհաններ:

Ծննդով հիշյալ տրամաբանությունից, մենք հակված ենք ենթադրելու, որ թերևս հիշյալ տարբերանշանով բեկորները պատկանել են տաճարի վերին աստիճանների պատուհաններին, ինչպես որ է Փարիզի Ան-Շապելի հարթաքանդակում և Գազկաշենի մոդելում (տես նկ. 26):

է մինչև մեր օրերը թե՛ Գագկաշենի, թե՛ Փարիզի քանդակի և թե՛ Փորամանյանի վերակազմությամբ:

Ի վերջո պետք է ընդունել, որ վերոհիշյալ հարցադրումն ավելորդ է: Այստեղ հակասություն չկա. կարևոր է, որ 1243—1248 թվերին Փարիզի Սեն-Շապել տաճարում քանդակվել է մի պատկեր, որը մեզ մոտ ստեղծվել է դեռևս 643—652 թվականներին ի դեմս Ջվարթնոցի և ոչ 1000 կան թվականներին, ի դեմս Գագկաշենի: Իսկ թե այդ պատկերը Փարիզ է հասել Ջվարթնոցի, նրա այժմ անհայտ մոդելի և կամ մանրանկարի, Գագկաշենի, և կամ նրա մոդելի միջոցով, այդ խնդրի լուկ երկրորդ կողմն է:

Աշխարհին հայտնի է Ջվարթնոցը, որպես համաշխարհային ճարտարապետության զարգացման բնորոշ օղակներից մեկը, որին կրկնել են և կամ նմանվել, որը դարձել է նոր տիպերի ստեղծման նախօրինակ և այլն: Ջվարթնոցը հանդիսացել է կաթողիկե, արարների կողմից Հայաստանի մայրաքաղաք Գլխիք, այդ թվում և այն ժամանակվա կաթողիկեն ավերելուց հետո: Ջվարթնոցն իր ժամանակին իր վրա է բեռեղ արևելքի տերերի, ինչպես և արվեստագետների ուշադրությունը: Բնական է, որ այսպիսի դեպքերում խոսքը կենտրոնանում է առավել նշանակալից երևույթի, նորի, սկզբնականի առաջացմանը, որ Ջվարթնոցն է և ոչ կրկնություն, որ Գագկաշենն է: Չէ՞ որ Գագկաշենը կառուցվել է հենց Ջվարթնոցի կերպարն ավելի հարատև դարձնելու համար: Եվ այն իր դերը լրիվ կատարել է, եթե հենց նրա միջոցով է այդ պատկերը հասել Փարիզ:

Փարիզի քանդակի վրա շեն երևում մուտքի գոնեբը, չի երևում արևելակողմի ուղղանկյուն կառուցվածքը, այսինքն՝ այն հատկանշական մասերը, որոնց ճշմարիտ անդրադարձումը քանդակի վրա կարող էր պարզ դարձնել՝ այդ Ջվարթնոցի, թե՛ Գագկաշենի կրկնապատկերն է:

Այժմ ոչ մի միջոցով հնարավոր չէ պարզել այդ և հետևարար պետք է հավանական փորձարկել, որ Նոյան տապանի լեգենդի, բիրտիական Արարատ լեռան հետ կապված պատկերում պետք է անդրադարձած լինի՝ Արարատյան դաշտում երբեմնի բարձրացած շքեղաշուք Ջվարթնոցը:

Այս առումով չպետք է չափազանցություն ամարվի «Գրական թերթում» բերված մեր այն թեզը, թե Փարիզի հիշյալ հարթաքանդակի նշանակությունը Ջվարթնոցի համար պետք է զնահատվի գրեթե նույնքան, որքան Գագկաշենի համար Գագիկ թագավորի ձեռքում եղած քարակուփ մոդելը՝ գտնված 1906 թվականին Անիում:

Ինչպես երևում է, անհրաժեշտ էր, որ ճարտարապետության պատմությանը զբաղվող մասնագետները մինչ այժմ չսահմանափակվեին Սովետական Հայաստանի սահմաններում գտնվող ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրությամբ, այլ ընդարձակեին ուսումնասիրության սահմանները մինչև այնտեղ, որտեղ հայ վարպետները դրել են իրենց հանճարը, պատմությանը թողնելով կոթողներ, անարարացի համեստությամբ անհայտությանը հանձնելով իրենց՝ ստեղծողների անունները:



ԶՎԵՐԹՆՈՑԻ ՎԵՐԵԿԵԶՄՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՆԵՐԿԵ ՎԻՃԵԿ

Մեր այսքան նշանավոր տաճարին վերաբերող գծագրական նյութերի վիճակը վերին աստիճանի անմխիթարական է:

Քավական է ասել, որ հիմնական գծագրերից և ոչ մեկը լիակատար չէ: Քորամանյանի աշխատությունների առաջին ժողովածուի 237 էջում տեղադրված է Զվարթնոցի ընդհանուր հատակագիծը: Այնտեղ տաճարի բազմանկյունաձև յոթաստիճան պատվանդանը ցույց է տրված 7 նիստով, մինչդեռ պետք է ցույց տալ 9 նիստով, ինչպես որ իրականում է: Ժողովածուի 239 էջում տեղադրված է Զվարթնոցի արևմտյան ճակատը: Այնտեղ հյուսիսային մուտքի դուրս կառուցվածքը շատ ավելի է պատկերված, քան իրականում է, ինչպես նաև գծագրում ցույց չի տրված մուտքի քանդակազարդ կամարաղեղը (տես նկ. 1):

Քիվերը տաճարի բոլոր աստիճաններում պատկերված են բեկյալներով. իրականում նրանք եղել են բոլորագիծ, այստեղից էլ բխում է, որ տանիքները տաճարի բոլոր աստիճաններում նույնպես չպիտի ունենան բեկյալներ, մինչդեռ գծագրում նրանք պատկերված են բեկյալներով:

¹ Գծագրերում տեղ գտած վերահիշյալ թերությունները հիշող կերպով նշվել են Ս. Մնացականյանի կողմից իր աշխատության առաջին մասում:

Նույն ժողովածուի 240 էջում տեղադրված է Զվարթնոցի արևելք-արևմուտք կտրվածքը (տես նկ. 2): Այստեղ բացակայում է տաճարի 3-րդ աստիճանը կազմող զմբեթաթումբուկը: Այս այն գծագիրն է, որի վերնամասը կտրել էր Խաչիկ Դադյանը:

Այս կտրվածքն իր բարձրության չափերով չի համապատասխանում Քորամանյանի վերակազմության վերը հիշատակված ճակատին: Քորամանյանի աշխատությունների երկրորդ ժողովածուն կազմող Կ. Ղաֆազարյանի² առաջադրանքով ճարտարագետ Լի. Գասպարյանը վերագծել է Քորամանյանի վերակազմության սույն կտրվածքը, ավելացնելով զմբեթաթումբուկը տաճարի ճակատի սվյալների հիման վրա: Եվ ապա այդ կտրվածքի հիման վրա գծվել է ճակատուայր երկու գծագրերն էլ տեղադրված են աշխատությունների երկրորդ ժողովածուի 78, 79 էջերում:

Այստեղ պետք է նկատել, որ ողջ վերահիշյալը անտեղի կատարված աշխատանք է եղել և նույնիսկ առիթ հետագա թյուրիմացությունների: Քանի այն է, որ բարի նպատակով վերահիշյալ աշխատանքը ձեռնարկողներին ևս ողջ լիակատարությամբ պարզ

² Աշխատակցությամբ Ն. Քորամանյանի.

չեն եղել ՚հիշյալ կտրվածքում տեղ գտած անճշտությունները: Եվ եթե դրանք դեռ այն ժամանակ՝ 1948 թվականին, պարզ լինեին, ապա անհրաժեշտաբար կճշտվեին, իսկ ճակատ կազմելու կարիքն ինքնին կվերանայ: քանի որ այդ ճշտված կտրվածքին կհամապատասխաներ հենց Քորամանյանի թողած շայտի ճակատը:

Արդ, որոնք են այդ երկու կտրվածքների անճշտությունները. առաջին և ամենագլխավորն այն է, որ բոլորակ սրահի (առաջին հարկաբաժնում) կտրվածքի ծածկը ցածր է դրվել, նկատի չի ունեցվել երկկոր կամարաթաղի բարձրությունը, որ ընկնում է խաչաթևի կամարաշարի գլխավերևի և հիշյալ բոլորակ սրահի թաղակապ ծածկի միջև: Այնուհետև անհրաժեշտ էր խաչաթևեր կազմող բոլորակ պատերի վերնամասերում, տաճարի երկրորդ աստիճանի մակարդակի վրա ցույց տալ ոչ թե երեքական պատուհան¹, այլ յոթական բացվածք:

Այնուհետև, ժողովածուն կազմողների կողմից Քորամանյանի թողած նյութի (կտրվածքի և հատակագծի) նկատմամբ թերահավատություն (անհավատարմություն) է ցուցաբերվել և արևելյան արսիդի սահմաններում ևս խաչաթևը խուլ պատի փոխարեն² պատկերվել է սյունակամարով:

Կտրվածքներում երևացող մյուս թերությունները երկրորդական կարգի են, օրինակ. ինչպես կենտրոնական գմբեթում, այնպես էլ խաչաթևները ծածկող կիսագմբեթներում շարքի ուղղաձիգ կարերը ոչ թե սահմանափակվել են նույն շարքի սահմաններում, այլ ձգվել են առաջին շարքից մինչև գմբեթի գագաթը: Ինչպես հայտնի է, քարակոփ գմբեթները այդպես չեն ծածկվում, և Ջվարթնոցում էլ այդպես չպիտի եղած լինի:

Երկրորդ կտրվածքում սխալ են պատկեր-

¹ Կտրվածքներում երեքական պատուհաններ ցույց են տրված միմիայն հարավային խաչաթևի վերնամասում, և նույնիսկ այդ երեքական պատուհանները չկան արևելյան և արևմտյան խաչաթևերի վրա, որ կարող էին երևալ այդ կտրվածքներում:

ված բոլորակ սրահների թաղակապ ծածկերի շարքերը, ինչպես և գմբեթակիր քառակուսուց գմբեթի բոլորակ հիմքի անցումը հանդիսացող առաջաստները³ շարքերը:

Վերոհիշյալից բնականորեն հետևում է, որ այս կտրվածքների հիման վրա կազմված ճակատը ևս չի կարող համարվել լիարժեք գծագիր:

Աշխատությունների առաջին ժողովածուի 247 էջում տեղադրված Ջվարթնոցի հատակագիծը կազմված է Քորամանյանի կողմից, սակայն արևելյան արսիդի խուլ պատը սյունաշարի է վերածվել հետագայում: Սույն աշխատության նախորդ էջերում պարզաբանվեց, որ արևելյան արսիդի սյունաշար կամ խուլ պատ լինելը եղած նյութերով վերջնականապես չի պարզվում, և քանի որ Քորամանյանի տեքստում հիշվում է խուլ պատը, ապա անհրաժեշտ է, որ աշխատություններում այդպես էլ ընդունվի:

Անհրաժեշտ է նաև, որ հատակագծում Նյուխային մուտքի պատի հարթությունից դուրս կարկառվածքը փոքրացվի, հասցվելով եռաստիճան որմնախարխիսի սահմաններին, քանի որ այդպես է ավերակում:

Փոքր հարց է, սակայն անհրաժեշտ է բոլորակ սրահի արտաքին պատի ներսի երեսի սյունաշարի խարխիսների երարածերը միացնող շրջագիծը մաքրել հատակագծից: Այդպիսի գիծը բնորոշող որևէ երևույթ չկա ավերակում:

Ճարտարապետներ Կուլեկեցույի և Մնացակատարի վերակազմությունների գծագրերից և ոչ մեկն ընդունելի չէ Քորամանյանի վերակազմության համար. թեկուզ որպես լրացում:

² Սույն աշխատության կապակցությամբ Ջվարթնոցի համար նոր կազմված կտրվածքում շորս մուլթերով ստեղծված քառակուսուց անցումը թմրուկի բոլորակ հիմքին, ցույց է տրված առաջաստի ձևով. ինչպես որ ընդունում էր Քորամանյանը:

Ջվարթնոցին նախորդող շրջանում գմբեթակիր քառակուսուց բոլորակի անցումը իրականացվում էր տրամպի ձևով: Սակայն 580—600 թվերի ընթացքում

Սույն աշխատութիւն լույս ընծայուածով, գլխավոր գծագրերի գրութիւնը համեմատաբար բարեկամովում է: Բոլոր դեպքերում Զրվարթնոցի վերակազմութիւն նյութերում պետք է ընդունել, որպէս 'հիմք' Քորամանյանի կազմած արեւմտյան ճակատը, վերը 'հիշված մանր շտկումներով:

Սույն աշխատութիւն կապակցութիւն կազմված տաճարի առաջին աստիճանի հատակագիծը նույնն է, ինչ Քորամանյանի կազմած հատակագիծը, վերոհիշյալ շինին շրտկումներով հանդերձ:

կառուցված Ավանի եկեղեցում արդէն ստեղծվել էր առաջատային անցման եղանակը:

Այնտեղ անցումը իրականացված էր կոմբինացված ձևով:

Ետ 'ավանական է, որ 30—40 տարի անց կառուցվող Զվարթնոցում արդէն իրականացված լինէր կատարյալ առաջատար, որպէս անցման առավել զարգացած ձև:

Ճարտ. Մնացականյանի կազմած կտրվածքում (տես ԳԱ. տեղեկագիր, 1959 թ., № 9, էջ 75) ցույց է տրված կոմբինացված ձևը, նկատի ունենալով, որ ավերակներում կան տրոմպի մի քանի բեկոր: Բանն այն է, որ 'հիշյալ բեկորներով ստեղծված տրոմպը շատ փոքր չափեր է ունեցել և Զվարթնոցի ներքին հակայական տարածութիւն մեջ խազալիքի տպավորութիւն կարող էր թողնել և դուրս ընկնել ընդհանուր մասշտաբից: Անչա աչա հանգամանքը երթադրել է տալիս, որ տրոմպի այդ քարերը պատկանել են Շուշարձանի այլ կառուցվածքներին և կամ այլ Շուշարձանի և այդտեղ

Տաճարի համար առաջին աստիճանի երկրորդ հարկաբաժնի (վերնահարկի) հատակագիծը, երկրորդ և երրորդ աստիճանների հատակագիծերը, ինչպէս և ճշտված կտրվածքը կազմվել են սույն աշխատութիւն առիթով և կարող են հանդիսանալ պատշաճ գծագրեր Քորամանյանի վերակազմութիւն նյութերի շարքում:

Վերոհիշյալ նյութերը բավարար հիմք են 'անդիսանում Զվարթնոցի վերակազմութիւնն ու կազմման կան լիարժեք հրատարակութիւնն իրականացնելու համար:

ին բերվել այլ և այլ բեկորների հետ, որոնց մասին խոսվեց վերևում:

Տրոմպների 'հիշյալ բեկորների մանրամասն չափաքանակով պարզվում է, որ նրանցով կարող է ծածկվել 164—180 սանտիմետր լայնութիւն խորը, միեւնոց Զվարթնոցի գմբեթակիր քառակուսում տեղադրված տրոմպը պիտի ունենար անվազն 4,5 մետրանոց թռիչք և մոտ 2,5 մետր բարձրութիւն: Իսկ կոմբինացված անցում Զվարթնոցում հնարավոր չպիտի լինէր, քանի որ գմբեթաթմբուկի 'հիմքով անցնող շրջանակ գոտին (որի բեկորներն ավերակում կան) զրված լինելով գմբեթակիր կամարների վրա, պիտի սահմանափակէր փոքր տրոմպից մինչև բոլորակ գոտին առաջատար անցում ստեղծելու հնարավորութիւնը (այնտեղ դրա համար տեղ չի մնում):

Այս առումով Մնացականյանի կազմած կտրվածքում գմբեթակիր քառակուսուց անցումը գմբեթաթմբուկի բոլորակ հիմքին պատկերված է սխալ, այդ ձևով հնարավոր չէ քառակուսուց անցնել շրջագի:



ԶՎԱՐՔՆՈՑԻ ՆՈՐ ՄՈԴԵԼԸ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԵՐԱՐԱՆՈՒՄ

Մեր կառուցող նախահայրերը լավ սովորություն են ունեցել՝ պատրաստել են այս կամ այն շափով նշանակալից կառուցվածքի մոդելը (փոքր շափի կրկնօրինակը) և մեծ մասամբ՝ քարից: Հիշյալ մոդելները սովորաբար դրվել են բուն կառուցվածքի որևէ երևացող տեղում, նման օրինակներ կան Սանահնի և Հաղպատի կոմպլեքսներում և այլուր: Այդպիսի մոդելների շարքում իր կատարելությունը աչքի է ընկնում Գազկաշենի մոդելը, որ զույգ ձեռքերի վրա «պահել» է Գազիկ թագավորի քարակոփ արձանը՝ ամրացված տաճարի դրսի պատի վրա:

Մենք մի վայրկյան անգամ չենք տարակուսում, որ Զվարթնոցը ևս ունեցել է լավ մոդել և թերևս որոշ ժամանակ այն պահպանվել է բուն տաճարի ավերվելուց հետո և թերևս իր ժամանակին օգտակար է դարձել Գազկաշենի կառուցմանը:

Զվարթնոցի մի մոդել էլ կազմվել է Քուրամանյանի օրոք, որից մնացել է միայն լուսանկար:

Զվարթնոցի նկատմամբ հետաքրքրությունը բավական մեծ է ոչ միայն մեր աշխատավորության մեջ, այլ նաև ամեն կարգի ճանապարհորդների շրջանում: Ծանձարի մասին ճիշտ և անմիջական պատկերացում կազմելու հա-

մար անփոխարինելի նշանակություն ունի մոդելը, որը մենք շունեինք ընդհուպ մինչև 1959 թվականը: Այդ շնորհակալ գործն իր վրա վերցրեց կատարելու Պատմության թանգարանը:

Եվ ահա թանգարանի սրահներից մեկում մեր աչքերի առջև վեր է հանում Զվարթնոցի փառավոր կերպարանքը հիշեցնող մոդելը¹, որը իսկականից փոքր է 20 անգամով: Սակայն այս շափի մեջ էլ մեզ պատկերանում է նա բնության մեջ բարձրացած սիգահասակ, որպես երազային տեսիլ, շոշափելի պատրանք: Իդուր չէ, որ Քուրամանյանի գոռոզ կայսրն անզամ խոնարհվել է նրա վահուճյան առաջ և միջոցների դիմել, որ նման մի շինությունը զարդարի իր կայսրության մայրաքաղաք Կոնստանդնուպոլիսը, մինչ այդ փառազարգված հռչակավոր Այա-Սոֆիա տաճարով: Այդ փառավոր կոթողը, սակայն արտաբուստ շունեի այն հստակ, պարզ ու շքեղաշուք, վահացնող կերպարանքը, որ

¹ Մոդելը կազմվել է թանգարանի դիրեկտոր, պատմական դիտությունների ղեկավար Կ. Ղաֆադարյանի առաջադրանքով, իրականացվել է Գուրգեն Արևշատյանի կողմից՝ ճարտարապետ Գրիգոր Քոչոյանի շափագրությունների հիման վրա, համաձայն Քորամանյանի վերականգնության նախագծի, 1959 թվականին:

ուներ մասսակերպ միացմբի Ձվարթնոցը՝ բարձրացած Արտատյան դաշտում:

Նկատի ունենալով Ձվարթնոցի հիշյալ մոդելի մեծ նշանակությունը, անհրաժեշտ ենք համարում նշել նրանում իույլ տրված որոշ անճշտություններ, այդպիսիք հարմար առիթի դեպքում շտկելու համար: Խոսքը վերաբերում է տաճարի ներքին կազմության այնպիսի հարցերին, որպիսիք, ինչպես անցյալում, այնպես էլ այժմ, դարձել են վեճերի և քննարկումների առարկա և նույնիսկ առիթ վերակազմության նոր նախագծերի, իրենց հիմքում և, ընդհանրապես, տարբեր, մինչ այժմ ճանաչված Քորամանյանի վերակազմության նախագծի համեմատությամբ:


Ճշգրտման ենթակա թերությունները հետևյալներն են.

1) վերնահարկի բոլորակ պատի բացվածքների միջև եղած պատահատվածները միտմուլվել են խաչաթևերի կամարակապ սացվածքների սյունեղին (տես գծ. 28), ստացվել են մասսիվներ, որոնցից ղեպի զըլխավոր մույթերը մոտեցողները հասնում են մեծ շափերի, Նետևարսր և ունեն զգալի քաշ ծանրացած ստորին նուրբ շափերի սյունակամարաշարին, իսկ այդպիսի բան իրականում չի նանդուրծել կառուցողը:


Մոդելի այդ մասը պետք է շտկել ներկա աշխատության մեջ տեղադրված տաճարը առաջին աստիճանի երկրորդ հարկաբաժնի նստակազմի (տես գծ. 5) համաձայն:

2. Գրեթե նույն պատկերն ունի նաև երկրորդ աստիճանը: Այնտեղ ևս բոլոր խաչաթևերի վրա բացվող չթթակուն պատուհաններն ուղիղ գծով միացվել են արտաքին բոլորակ պատի շուրջ քանուրթ պատուհաններին, նրանց միջև թողնելով զգալաչափ պատի մասսիվներ: Արտաքին բոլորակ պատի մյուս շորս պատուհանները, որ գտնվում են մայր մույթերի հետևում աստիճան, ստացվել են թկույր խորշերի ձևով (տես գծ. 29):

Այս ևս ենթակա է ճշգրտման սույն աշ-



Գծ. 28. Ձվարթնոցի վերնահարկի հատակազիծ, որի հիման վրա պատրաստված է Հայաստանի Պետական պատմության բանգարանում ցուցադրված Ձվարթնոցի մոդելը (գիպս)



Գծ. 29. Ձվարթնոցի երկրորդ աստիճանի հատակազիծ, որի հիման վրա պատրաստված է նուր մոդելը

խատության մեջ բերված երկրորդ աստիճանի նստակազմի (տես գծ. 8) համաձայն:

3. Մայր մույթերի ծավալում պահարանների շեն եղել է շենակարտր մայր մույթերի վրա, ցույց տրված մեկական դռները պետք է փակվեն:

4. Մայր մույթերն աճարտվում են զուսպ

ձևի կապիտուլենթով. նրանց վերին գոտին, սյան սահմանն անցնելով, շարունակվում է խաչաձևերի վրա մեկ, մեկուկես մետրի սահմաններում միայն: Մինչդեռ այդպիսի գոտի է արված մոդելում, որը անընական ձևով կտրում է բոլոր քսանմեկ պատուհանների կամարակապ բարավորները նրանց գագաթի հենց եզրում: Այդպես չի լինում և այդ գոտուց պետք է հրաժարվել:

5. Երբ Թորամանյանը կազմում էր վերակազմության նախագիծը, ըստ երևույթին դեռևս պնդված չէին տաճարի մուտքի բոլոր բարերը: Եվ քանի որ այժմ հայտնի են, հարկ պետք է համարել հետազարում (նոր մոդելում) ցույց տալ այդպիսիք:

6. Բազմաբանակ բեկորները ցույց են տալիս, որ տաճարի բազմանիստ թմբկապատերը ավարտվել են բոլորակ քիվերով, մինչդեռ մոդելում քիվերը ևս իրականացվել են բազմանկյունաձև: Հանուն արդարության, այդ ևս պետք է շտկվի:

7. Տաճարի ներքին խաչաձև կենտրոնը բոլորող երկհարկ սրահները ծածկող թաղերի բարի շարքերը եղել են զուգահեռ բոլորակ պատերին: Մինչդեռ մոդելում շարքերն ուղղահայաց են բոլորակ պատերին: Իրակասում այդպիսի թաղեր չեն լինում հետևաբար անհրաժեշտ է այդ ևս շտկել նամաձայն համապատասխան գծագրի:

8. Թորամանյանի վերակազմության նույնիսկ զգում ընդունված է, որ տաճարի արևելյան ուղղանկյուն կառուցվածքը և բուն տաճարը կառուցվել են միաժամանակ. սույն սխեմատիկայի մեջ բազմաթիվ փաստերով հաստատվեց Թորամանյանի դրույթը՝ մի մասնակի ճշտմամբ, որ երկուստեք պատերը բարձրացվել են միաժամանակ, սկսած հիմնապատի վերևից: Մինչդեռ համաձայն մոդելի բոլորակ տաճարը կառուցվել, բոլոր կողմերից պատվել է սյունակամարաշարով ու քանդակազարդումներով և հետո, բերվել և մեխանիկորեն կցցվել է հիշյալ ուղղանկյուն կառուցվածքը: Մոդելն այդպես պարտաճեղով համար բացարձակապես ոչ մի

հիմք չկա, և այդ սակայման պետք է շտկվի: 9. Անշուշտ, իրավացի են մոդել պատրաստողները, որ բոլորակ սրահի երկրորդ հարկարածին բարձրանալու սանդուխտները տեղավորել են արևելակողմի կառուցվածքում: Ցավոք, աստիճանների առաջին կեսը չկա: Թվում է, որ սույն աշխատության մեջ սանդուխտների և դռների խնդիրը լուծված է բավարար ձևով և, հետևաբար, հնարավոր է, որ մոդելում մտցվող շտկումը կատարվի հիշյալ գծագրերի ձևով (տես գծ. 4 և 5):

Արևելակողմի ուղղանկյուն կառուցվածքի հաստահեղույս միջնապատը, իրականում պետք է շարունակվելիս լինի մինչև տանիք, որպեսզի հիմք հանդիսանա առանձին թաղերի համար: Մոդելում ծածկը պետք է ցույց տալ այդ ձևով:

10. Ներկա մոդելի, թերևս, ամենամեծ բացն է, որ նա բավարար ձևով ընդհանուր գաղափար տալով արտաքին ծավալի և պատերի մշակման մասին, շատ աղոտ պատկերացում է տալիս ներքին տարածության կազմակերպման և, հատկապես, կենտրոնկտիվ կառուցվածքային շատ կարևոր առանձնահատկությունների վերաբերյալ, չէ՞ որ Զբվարթնոցի ճարտարապետ-կառուցողի հանձարի փայլատակումն իր ժամանակներում արտահայտվել է նաև կոնստրուկտիվ նորաձևության և նույնարժեք կառուցելակերպի խնդրում:

Զվարթնոցի համար նոր, ավելի կատարյալ մոդել պատրաստելու դեպքում խիստ ցանկալի է, որ այն լինի հայտնույթի, այսինքն՝ ցանկացած դեպքում վերցվի ծածկը, ողջ ծավալը բաժանվի երկուսի և կամ շորսի, պարզորոշ երևա կառուցվածքի ամեն մասը, ամեն դրվագը: Մոդելի այս ձևի պատրաստելը նորություն չէ և, հետևաբար, կապված չէ մեծ զմլարությունների հետ: 。

Պատմության թանգարանում ցուցադրված Զվարթնոցի մոդելը կարող է լինել բավարարել հետաքրքրվող հասարակությանը, բայց մասնագետներին բավարարել չի կարող վերոհիշյալ նկատարումներով: Նրա կատարյալ

դարձնելը պետք է համարել ոչ միայն ցանկալի, այլև կարևոր:

Անկասկած շատ ավելի լավ կլիներ բոլոր տեսակի մոդելների ու մակետների փոխարեն ուղղակի վերականգնվեր Զվարթնոցը: Ըվեթե, իսկապես երբևէ այդ պիտի հաջողվի, ապա այն պետք է վերականգնվի որպես հայ ճարտարվեստի այդ դարաշրջանի գլուխգործոց, ստեղծված մեր ժողովրդի կողմից:

Այնուհետև, այն պետք է դառնա, ինչպես պատմական, այնպես էլ Սովետական շրջանի ճարտարապետության և արվեստի թանգարան: Ասենք նաև, որ Զվարթնոցի վերականգնումը առանձնապես շատ մեծ ծախսերի և դժվարությունների հետ կապված չէ:

Զվարթնոցի վերականգնման խնդիրը սակայն չպետք է նայվի որպես հասարակ շինարարական գործ:

Նախ, մեր կարծիքով, ոչ մի պայմանով չի կարելի Զվարթնոցը վերականգնել իր իսկ ավերակների վրա: Այդպես անելու դեպքում ցարդ պաշտպանված պատերի մնացորդները, նույնիսկ՝ հիմքը հնացած Երեմյան պահուստի կամ են և նրանք ի վիճակի չեն տանելու նոր բարձրացվող մոտ 40—45 մետր բարձրության ծանրակշիռ կառուցվածքը հետևաբար անհրաժեշտություն կդառնա հիմնահատակ անել ավերակը և նրա տեղում ստեղծել նոր հիմք, նոր շինանյութերով, նոր կառուցելակերպով: Այս վերջին հանգամանքն է, ահա, որի հետ համաձայնվել երբեք չի կարելի:

Ավերակի մնացորդները, այդ իսկականի

մասունքները ինչ վիճակում որ հասել են մեզ, նրանք պիտի սրբորեն պահպանվեն, թողնել են ապագային ի տես, որպես փաստ, և նյութ հետագա ուսումնասիրությունների համար: Այստեղից հետևում է, որ նոր Զվարթնոցը պետք է կառուցվի ոչ թե ավերակի տեղում, այլ նրանից մի ինչ-որ տարածություն վրա:

Իսկ եթե, այնուամենայնիվ, երբևէ հնարավոր չպիտի լինի վերահիշյալն իրականացնել, ապա պահանջ է առաջանում ունենալու Զվարթնոցի զգալի շահի մոդել (ասենք 1:10 մասշտաբով), այն էլ ոչ մի օրինակից, որոնցից մեկը անհրաժեշտաբար կթողնվի ավերակին կից թանգարանում: Այդպիսի մոդելը պետք է պատրաստվի մնայուն, դիմացկուն նյութից, ձուլածո և անպայման հավաքովի, նախորդ էջերում թվարկված նկատառումներով:

Այն մասնակի վերականգնումները, որ այժմ կատարվում են ավերակում, որով ցույց է տրվում տաճարի հիմնական հատակագիծը, ինչպես ասվեց, կրում է բարեկարգման բնույթ և ոչ ավելին: Այդբանով էլ պետք է սահմանափակվել սխալմունքներից և ավերակը փլացնելուց զերծ մնալու համար: Լոկ պետք է ափսոսանք հայտնել, որ հին կոտորված բարերից նորով են փոխարինվում ավելի շատ, քան պետք էր, և որ պատերի շարվածքը չի կատարվում լավ շաղախով ու թերևս մի քանի տարի անց կանգնած կլինեն նույն աշխատանքները վերակրկնելու անհրաժեշտության առաջ:

Շ Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Սուրբկելու փաստեր և առիթներ շու-
նենալով, պետք է համաձայնել Քորամայա-
նի հետ և Ջվարթնոցի հիմնադրումն ընդու-
նել 643 թվականը, ավարտը՝ 652՝ թվակա-
նը. ընդամենը 9 տարի, մի ժամանակամի-
ջոց, որի ընթացքում հնարավոր է եղել ա-
վարտել բուն տաճարի շինարարությունը:

Ջվարթնոցի ներքին ու արտաքին կոմպո-
զիցիոն տարածական կազմության և կերպա-
րանքի մտահղացման ամենահավանաբան
հեղինակը պետք է ճանաչել ներսես կաթողի-
կոսին, որը և շինարարական մեծ գործունեու-
թյուն ծավալելու համար հորորըվել է «Շի-
նարար» մականունով: Կասկած չկա, որ նա
ունեցել է գեղարվեստական բարձր ճաշակի
տեր ճարտարապետ օգնականներ և շատ հը-
մուտ կառուցող վարպետներ:

Ջվարթնոցը եղել է իր ժամանակի ճար-
տարապետական ամենահայտնի, ամենաշքեղ
կոթողներից մեկը:

¹ Այս առիթով անհրաժեշտ է հիշեցնել, որ նու-
թյունների պահպանության կոմիտեի կողմից Ջվարթ-
նոցի ավերակի վրա փակցված տեղեկանքում գրված
է ոչ թե տաճարի կառուցման ժամանակը, այլ ներսես
կառուցողի կաթողիկոսության ժամանակամիջոցը՝
643—661 թթ.: Այժմ, քանի որ առարկություններ չկան
Քորամայանի հաշվումների վերաբերյալ, անհրաժեշտ
է գրել 643—652 թվականները:

Քորամայանի խոսքերով ասած՝ «Այս
շնաշխարհիկ հիշատակարանը ոչ միայն շի-
նարարական տեսակետով մեծ տեղ պիտի
բռնի արվեստի պատմության մեջ, այլ և գե-
ղարվեստի տեսակետով ևս նշանավոր է թե
իր կանգնման և թե հետագա դարերու ճար-
տարապետության պատմության մեջ»:

Տաճարի կանգուն գոյությունը հարատևել
է մինչև տասներորդ դարի վերջերը, այսինքն՝
մոտ 340—350 տարի:

Ջվարթնոցը նույն հիմքի վրա նույն իր
բեկորներով վերականգնելու փորձ չի արվել.
սակայն նրա նվիրական պատկերը պահելու
համար Գագիկ թագավորի կողմից տասնմեկ-
երորդ դարասկզբում կանգնվել է Սուրբ Գրի-
գորի տաճարը Անիում՝ հար և նման Ջվարթ-
նոցին և նրա շափերով:

Ջվարթնոցատիպ տաճար է կառուցվել նաև
Բանալում, Աղրնեբսոսի օրոք, իններորդ-
տասներորդ դարերի սահմանագլխին, ինչպես
նաև Լյակիթում, որի կառուցման ժամանակը
վերջնականապես պարզված չէ: Ջվարթնոցի
ավերակները հողաշերտի տակից գուրս է
հանվել այս դարասկզբին: Պեղման աշխա-
տանքները սկզբում՝ 1900—1904 թվականնե-
րին, ղեկավարվել են Վարդապետ Խաչիկ

Դադաչանի կողմից, այնուհետև շարունակվել են Քորամանյանի հսկողության ներքո, որի կողմից և ստեղծվել է տաճարի վերակազմության առաջին նախագիծը: Ավելի քան կես դարու կյանք ունի հիշյալ նախագիծը, որը և արժանացել է ընդհանուր ճանաչման:

Զվարթնոցի ամբողջական կերպարն ու ներքին կազմությունը համընդհանուր ճարտարապետության պատմության մեջ ընդունված է Քորամանյանի վերակազմության ձևով:

Դեռևս այն ժամանակ, երբ Քորամանյանը խոր անհայտության խորքից վերակենդանացնում, վերստեղծում էր Զվարթնոցի երբեմնի հոյակապ պատկերը, ինչպես և մոտ անցյալում՝ հիսունական թվականներին, իրենց առարկություններով հանդես եկան ուսումնասիրողներ, որոնք շհամաձայնվեցին վերոհիշյալ վերակազմության նախագծի հետ:

Եթե ոմանք բավարարվեցին թերահավատություն և կամ բանավոր կարծիքներ հայտնելով, ապա մյուսները հանդես եկան գրավոր վերլուծությամբ և նույնիսկ վերակազմության նոր առաջարկով:

Այսպես՝ վարդապետ Դադաչանը չէր ընդունում տաճարի նոստիճան լինելը և Քորամանյանի կտրվածքից կտրել, հանել է երրորդ աստիճանը կազմող կենտրոնական զմբեթի իր թմբուկով հանդերձ:

Ճարտարապետ Ք. Տեր-Սարգսյանը, եթե սկզբում չէր ընդունում առաջին աստիճանի երկրորդ հարկաբաժնի գոյությունը, ապա Քորամանյանի օգնությամբ ավերակներում խորամուխ լինելով, համաձայնեց Քորամանյանի հետ և իրենից հետո շրջեց գրավոր՝ կամ գծագրական ձևի որևէ աշխատություն, որով հայտներ իր որևէ հակաճառություն կամ անհամաձայնությունը հրապարակի վրա եղած միակ վերակազմության նկատմամբ: Հետևաբար անհիմն պետք է ճանաչել Տեր-Սարգսյանին վերագրվող այնպիսի կարծիքներ, որոնք չեն համապատասխանում ճար-

տարապետի վերջնական եզրակացություններին:

Վիեննայի համալսարանի պրոֆեսոր Ստրո-ժիգոժսկին հիմնականում ընդունում էր Քորամանյանի գրույթները, չէր հակաճառում նրան նաև տաճարի առաջին աստիճանի երկրորդ հարկաբաժնի դեմ, բայց իր վրա չէր վերցնում նաև վերջինիս գոյությունը հաստատողի պարտավորություն: Հետևաբար անհիմն է և ոչ հավաստի նաև Ստրոժիգոժսկուն վերագրվող այն կարծիքը, թե նա Եվճոապես մերժում էր վերնահարկի գոյությունը:

Ճարտարապետության զոկտոր-պրոֆեսոր Ա. Վ. Կուզնեցովը քառասնական թվականների վերջերում ծանոթացավ Զվարթնոցի ավերակներին ու Քորամանյանի վերակազմությանը, և 1951 թ. լույս ընծայած իր գրքում մանրամասն վերլուծության ենթարկեց այն: Պետք է նկատել, սակայն, որ նրա հանգամանալից վերլուծության մեջ պարզորոշ երևում է նյութի ուսումնասիրության ոչ բավարար խորությունը: Ըստ երևույթին տաճանակի սղույթները՝ հնարավորություն չի տվել ավերակներում վերցնել այն, ինչ առատության մեր ընձեռում են ուսումնասիրողին բազմաթիվ բեկորներն ու հատկապես բետոնակուրի զանգվածները: Եվ թերևս այդ է պատճառը, որ Կուզնեցովի նյութերում զգալի են անճիշտ շափերը: Թերևս այդ չի կարևորը, քանի որ իրերի վիճակը Կուզնեցովի մոտ բարվոք չէ շատ ավելի կարևոր խնդիրներում: Այսպես, ոչ ճշգրիտ ձևով կատարված կոնստրուկտիվ հաշիվները, Զվարթնոցում գործածված տուֆատեսակները շտաբերելը (կերողունակության և քաշի տեսակետից) խորահիմու ճարտարապետի կիրառած կառուցելակերպի անուշադրության թողնելը—բետոնակերտ թաղիչ գուտ քարի կամարի կոնստրուկցիա վերագրելը, մեծաթուղի թաղի մաս, հանդիսացող, տաճարի հարավ-արևմտակողմի զանգվածի բավարար վերծանելը և այլն: Այսպիսով, նյութի անբավարար ընդգրկումն ու մշակումը Կուզնեցովին բերին այն համոզման, որ նման հատակագծի վրա հնա-

րավոր է շինություն կանգնեցնել, այնպես, որ նա հարատևի Այս բոլորից ելնելով էլ, և հատկապես արժվատյալ շորս սյունների գույությունը, նա անտրամաբանական անվանեց Ջվարթնոցի հատակագիծը: Նման շինմեավորված եզրակացության գալը թեևս ճետևանք է այն բանի, որ Կուզնեցովը պարզապես անտեսել է նույնիսկ այն փաստը, որ Ջվարթնոցը դիմագրավել է Արաբալայան դաշտում հաճախակի անցնող ունեցող և հատկապես 660-ական թվականների և 893 թվականի զգալի մոծի երկրաշարժերը և որ 6ա՝ Ջվարթնոցը կանգուն վիճակում ապրել է մոտ 350 փառավոր տարի:

Գագկաշենի կարճատև կյանքը (60—70 տարի), որ հիշեցվում է Կուզնեցովի կողմից որպես փաստ զվարթնոցատիպ տաճարի հատակագծի անտրամաբանական լինելու վերաբերյալ, հետևանք է ոչ կոնկրետ մոտեցման, հետևապես և եզրակացությունների շինմեավորված ընդհանրացման:

Այնուհետև Կուզնեցովը փորձում է համոզել նաև, որ տաճարի երկրորդ աստիճանի 32 պատուհաններից 12-ն է ճիշտ, մյուս 20-ը կեղծ են ու կույր: Եթե Կուզնեցովը փորձեր թորամանյանի կազմած շենքի ճակատի հիման վրա կազմել նրա զծագրական նյութերում բացակայող երկրորդ աստիճանի լոգիկ հատակագիծը, ապա կտեսներ, որ շկա ոչ մի կեղծ ու կույր լուսամուտ: Այս վերջին թյուր համոզումն էլ պատճառ եղավ, որ նա աշխարհ բերեց իր մի առաջարկությունը էսթիզի ձևով, որ երկրորդ աստիճանում տաճարը ոչ թե թմրուկաձև, այլ խաչաձև է իր հիմքում:

Թեևս Կուզնեցովի այս վերջին եզրակացությունն էլ հիմք հանդիսացավ ճարտարապետության թեկնածու Ս. Մնացականյանի համար, և վերջինս հանդես եկավ Ջվարթնոցի վերակազմության մի նոր առաջարկով, վերաբնություն նյութ դարձնելով այնպիսի հարցեր, որոնց տարբեր ժամանակներում անդրադարձել են ուրիշները, այդ թվում, ա-

մենամոտ անցյալում պրոֆեսոր-դոկտոր Ա. Վ. Կուզնեցովը:

Ներկա աշխատության ամբողջ նյութը լիակատար պարզորոշությամբ ցույց տվեց, որ Թորամանյանի վերակազմության նախադիժը վիճարկողները սխալվում են:

1. Պատվանդանի խնդրում, այն համարելով կանոնավոր բազմանկյունաձև:

2. Հատակագծի չափերի խնդրում, Թորամանյանին վերագրելով սխալ չափ:

3. Արևելակողմի ուղղանկյուն կառուցվածքի հարցում, որ իբր այն կառուցվել է ուղ ժամանակներում:

4. Առաջին աստիճանի երկրորդ հարկաբաժնի հարցում, որ իբր այն գոյություն չի ունեցել:

5. Սանդուղքների խնդրում, որ իբր այդպիսիք չեն եղել և չլին կարող լինել:

6. Երկրորդ աստիճանի թմրուկի հիմքը կազմող պատի խնդրում, որ իբր Թորամանյանի վերակազմությամբ այն խուլ պատ է եղել և այդ պատճառով վերնահարկը չի հաղորակվել տաճարի ներքին ընդարձակ տարածությանը:

7. Կայնաթուղ կամարաթաղերի և արժվատյալ սյուն խնդրում, որ իբր կամարաթաղի երկու հենարանները անպայման եղել են միևնույն բարձրության վրա: Ինչպես և արժվատյալ սյան բունն ունեցել է ոչ թե 222 սմ. բարձրություն, այլ կրկնակի՝ 444 սմ. բարձրություն, կազմված երկու քարակտորից:

8. Երկրորդ աստիճանի պատուհանների խնդրում, որ իբր թե 32 պատուհաններից 12-ն են (և նույնիսկ 9-ը) եղել իրական և որ մնացած 20-ը (կամ 23-ը) եղել են «կույր»:

9. Գմբեթաթմրուկի հիմքի խնդրում, որ իբր գմբեթակիր քառակուսուց անցումը բուրյակի կատարվել է ոչ թե ստացաստի, այլ տրոմպի միջոցով:

10. Երրորդ աստիճանի խնդրում, որ իբր այն եղել է ոչ թե 16, այլ 12 նիստերով:

11. Գմբեթի ծածկի խնդրում, որ իբր այն չի եղել կոնաձև, այլ եղել է գնդաձև:

12. Կառուցվածքների ներքին աշխատանքի խնդրում, որ իբր արժվախոյակ սյունն աշխատանք է մեծ գերաբարձություն և դարձել է պատճառ Ջվարթնոցի (և զվարթնոցատիպ տաճարների) կործանման, որ իբր ռաբրոտարայնի համարձակ մտահաջոմյս դուրս է եկել իր ժամանակի կառուցողական տեխնիկայի մակարդակից» և այլն:

13. Փարիզի Սեն-Շապլե տաճարի քանդակի խնդրում, որ իբր այն որևէ կապ չունի Ջվարթնոցի տիպի հետ:

Այս բոլորով, ա՜հա պարզ դարձավ, որ Ջվարթնոցի ուսումնասիրողներից առաջինը Քորամանյանը կարողացավ խորամուխ լինել մեծ հուշարձանի գաղտնիքներում և հրմտորեն ստեղծեց նրա՝ Ջվարթնոցի վերակազմության հոյակապ նախագիծը:

Հայ պատմական ճարտարապետության փառքերից մեկը հանդիսացող Ջվարթնոց տաճարի ներքին կազմության և արտաքին կոմպոզիցիոն կառուցվածքի ու նրա ճարտարապետական կերպարի խնդիրն այլևս առիթ չունի նոր վիճարկությունների, քանի որ այն բավարար չափով լուսաբանված է նախ ճարտարապետ Քորամանյանի փայլուն վերակազմությամբ և, ապա, նոր ուսումնասիրողների լրացումներով: Հետագա ուսումնասիրություններն առանձին մանրամասների հատնաբերման և ճշտումների ուղղությամբ, որոնք նոր լրացում կհանդիսանան եղած նյութերին, կլինեն ողջունելի:

Տաճարի հիմնական առաջին աստիճանի հատակագիծը մնում է այնպիսին, ինչպիսին կա Քորամանյանի առաջարկած վերակազմության նախագծում տեքստում նշված շրտկումներով հանդերձ:

Մյուս հարկերը, ինչպիսիք են՝ առաջին աստիճանի երկրորդ հարկաթաժիքը (վերնահարկ), երկրորդ և երրորդ աստիճանները պատկերված են սույն աշխատության գծագրերում:

Ջվարթնոցի արտաքին կերպարն այնպի-

սին է եղել, ինչպիսին կա Քորամանյանի վերակազմության նախագծում¹:

Տաճարի ներքին կազմությունը հիմնականում համապատասխանում է Քորամանյանի վերակազմության նախագծին, վերջինիս նկարագրության հետևյալ աննշան շրտկումներով, առաջին երկրորդ աստիճանի բուրակ պատին հիմք հանդիսացել են մեծածավալ բետոնակուռ զանգվածները ներքին հարթության թաղակերպ մշակմամբ հենված խաչաթևերի սյունակամարազարդ պատերի, հաստահեղույս մայր մույթերի և արծվախոյակ պուստիկ վրա: Ըստ որում, ամենայն հավանականությամբ թաղերի հենարանները եղել են տարբեր բարձրությունների վրա, ինչպես ցույց է տրված գծագրերում (տես գծ. 13):

Երկրորդ շտկումը ներքին կազմության մեջ, այդ այն է, որ բոլոր խաչաթևերում, երկրորդ աստիճանի պատահանների բարձրության վրա, ներսից ցույց տրվեն լոթական լուսամուտ՝ մինչ այժմ եղած երեքականի փոխարեն:

Որպես ներքին կազմությունը լուսաբանող նյութ, պետք է ընդունել սույն աշխատության մեջ բերված կտրվածքը (գծ. 4), որը կատարված է Քորամանյանի նյութերի և նոր կազմված վերնահարկի, վերին երկու աստիճանների (յարուսների) հասակագծերի հիման վրա:

Մինչև այժմ գոյություն ունեցող կասկածաքններն ու անհամաձայնությունները Քորամանյանի վերակազմության հիմնական դրույթների նկատմամբ, Դադյանի, Տեր-Սարգսյանի, որոշ չափով Ստրժիգովսկու, ապա Կուզնեցովի կողմից, եղել են նյութին պակաս չափով ծանոթ լինելու արդյունք: Զվարթնոցն իր տեսակի մեջ առաջինն է:

¹ Սիսլյ պետք է համարել այն, որ ճարտարապետ Ն. Խաչիխյանը դժոխ լիակատար ճանաչման շարժանացած Ջվարթնոցի նոր վերակազմության նախագիծը ներկայացված Ս. Մնացականյանի կողմից տեղավորել է 1962 թ. լույս տեսած «Краткая история местной энциклопедия»-ի 124 էջում:

Զվարթնոցափայ մյուս տաճարները՝ Բանա, Գագկաշեն, Լյակիթ, կառուցվել են նրանից հետո, նրա ազդեցությամբ և նույնիսկ նրա շափերով, որպես, գրեթե կրկնօրինակ (Գագկաշեն և այլն):

Իր գեղարվեստական արժանիքներով Զրվարթնոցն անհամեմատ բարձր է կանգնած այդ փային պատկանող մյուս բոլոր տաճարներից, այդ թվում ինչպես պլանային լուծման, ներքին տարածության կազմակերպման, արտաին ճարտարապետական կոմպոզիցիոն կերպարի ստեղծման, ճարպու-

րյունների գեղարվեստական մշակման, մասերի համաչափությունների որոշման, նպատակասլաց, համարձակ մտահղացման, կոնստրուկտիվ խնդիրների խիզախ և հմուտ վճռման և ամբողջ տաճարի շինելակերպի կատարելության տեսակետից:

Զվարթնոց տաճարը իր ժամանակի տաճարների շարքում կանգնած է առավել բարձր մակարդակի վրա, այն մի այլ որակ է և դրանով էլ արժանավորապես զնաճատվում է որպես համաշխարհային արժեքի, հանճարեղ ստեղծագործություն:





ЗВАРТНОЦ И ПАМЯТНИКИ ТИПА ЗВАРТНОЦ

(Краткое изложение)

ВВЕДЕНИЕ

Звартноц, одно из выдающихся произведений армянской средневековой архитектуры, великолепное сооружение своего времени.

Строительство храма начато в 643 г. и закончено в 652 г. По данным историографии, византийский император Константин во время своего пребывания в Вагаршапате (652 г.) участвовал в освящении храма. Это означает, что в это время строительство храма в основном было завершено.

Период от 641 до 661 гг., ошибочно считавшийся датой постройки храма, в действительности относится к церковной деятельности строителя храма Нерсеса III, который в течение указанных двадцати лет занимал престол католикоса армянской церкви.

Храм просуществовал почти до конца X века, приблизительно 340—350 лет.

Католикос Нерсес III, прозванный за свою кипучую строительную деятельность Нерсесом Строителем, еще до возведения Звартноца, в тридцатых годах

VII века в родном селении Ишхан в Тайке построил храм такого же типа.

Истории архитектуры неизвестно существование ряда храмов типа Звартноц. Так, например, храм в селении Пеняк (Бана) в районе Олты Карсской губернии является постройкой типа Звартноц. По данным историографии, он был построен в царствование куропалата Адрнасе (888—923).

Круглый храм в Ани, возведенный царем Гагиком (так называемый Гагикашен), является копией Звартноца. Разница между ними выражается в деталях. Основание храма заложено в 1001 г. Основываясь на свидетельствах историков, армянский ученый Торос Тораманян окончание строительства относит к 1006 г.

Круглый храм, находящийся в Азербайджанской ССР, в 20 км южнее города Закаталы—в селении Лякит, также является сооружением типа Звартноц.

Круглые храмы в Армении и в соседних с нею странах начали возводить

ся после Звартноца частично по его образцу¹.

Звартноц—центрально-купольное, в плане круглое, по высоте постепенно суживающееся трехъярусное сооружение (см. рис. 1). Центральная часть плана представляет тетраконх с крыльями в виде полукруглых абсид (экседр), образованных колоннадой; четвертое—восточное крыло—глухое (см. черт. 4). Крестообразный центр храма в пределах первого яруса окружен обходной галереей, образованной наружной кольцевой стеной.

Тот же крестообразный центр в пределах второго яруса по кругу опоясан стеной (см. чертеж 8).

Третий ярус храма является барабаном, с купольным завершением, покрытым конусным шатром.

Окружная стена второго яруса, которая начинается еще в пределах второй галереи первого яруса, опирается на так называемые «восемь точек».

Сводчатые перекрытия двойкой кривизны, пролетом в 10 м, опирающиеся с одной стороны на пилоны и стоящие за ними колонны, а с другой—на крайние центральные колонны экседр, служат основанием для стены барабана второго яруса.

Таким образом создан первый проект реконструкции храма Звартноц ученым Торос Тораманяном, участвовавший в раскопках храма с 1904 года.

Вокруг его проекта реконструкции, составленного в эти годы, возникло много споров.

Так, например, руководивший вначале раскопками архимандрит Хачик Да-

дян не соглашался с трехступенчатым видом храма².

Специально приглашенный духовным руководством Эчмиадзина известный архитектор Ж. Тер-Саркисян старался убедить Тораманяна отказаться от своего «необычного» проекта реконструкции. Однако, начав свою миссию с выпадок по адресу проекта реконструкции Тораманяна, Тер-Саркисян вскоре после ознакомления в натуре с руинами храма отказался от своих возражений.

Споры эти, начавшиеся в девяностых годах, прекратились в 1906 г., когда во время раскопок в Ани, производимых под руководством проф. Н. Марра при участии Тораманяна, в развалинах Гагикашена была обнаружена модель храма Гагикашена (см. рис. 21). Эта модель, а также свидетельство историка XI в. Асохика о том, что царь Гагик построил эту церковь по примеру Эчмиадзинского храма Св. Григория (Звартноц) доказали правильность проекта реконструкции, предложенного Тораманяном.

Второй период споров вокруг строения Звартноца начался в пятидесятых годах в связи с выходом в свет книги доктора, профессора архитектуры А. В. Кузнецова³. В своей книге по поводу общей архитектурной композиции храма Звартноц Кузнецов пишет: «Зодчему храма Звартноц (и Бана) не удалось создать вышеуказанную органическую связь внутреннего крестовокупольного пространства с наружной ротондальной формой... Затруднение в создании иной, более правдивой и достойной великого

² Он даже вырезал из разреза проекта реконструкции храма барабан с куполом, представлявший третий ярус.

³ А. В. Кузнецов, Тектоника и конструкция центральных зданий. М., 1951, стр. 111—114.

¹ Храм, построенный Нерсесом III в Ишхаке, не привлекает во внимание, т. к. еще полностью не выяснено его композиционное решение.

памятника реконструкции обуславливается конструктивно нелогичным планом Звартноца». Далее «По приближенному подсчету, колонны, расположенные за пилонами, могут воспринять нагрузку этих стен, но при больших напряжениях материала... в 40 кг/см²».

Кузнецов заключает, что: «Творческий, смелый замысел зодчего Звартноца не отвечал состоянию технических знаний той эпохи».

По Кузнецову, из 32 окон второго яруса храма только двенадцать действующих, остальные 20—слепые.

Исходя из вышесказанного, автор считает возможным предложить свое решение в следующем виде: «... основная крестовая тетраконховая система храма выявляется полностью во внешних формах его второго яруса» (см. чертеж 1).

Считая Звартноц в целом большим творением, Кузнецов заканчивает исследование упреком в адрес его зодчего. Он считает, что архитектор Звартноца взялся выполнить неосуществимое по тому времени сооружение.

Вслед за Кузнецовым в 1959 году кандидат архитектурных наук С. Х. Мнацаканян, оспаривая правильность проекта реконструкции Тораманяна, предложил свой вариант.

Повторяя Кузнецова, он утверждает, что второй ярус в плане должен был иметь не круглую, а тетраконховую форму; что по проекту Тораманяна якобы из 32 окон действительны 12 (или 9), а остальные 20 (или 23)—ложные. По его мнению, храм разрушен от перенапряжения отдельно стоящих за пилонами колонн и т. д. Далее Мнацаканян находит, что галерея первого яруса не имела второго этажа, так как в храме нет места, где могли бы поместиться ведущие

туда лестницы. Что же касается прямоугольного в плане строения, находящегося в восточной стороне, то оно, по мнению Мнацаканяна, было пристроено к храму позже, почему и в нем не могли находиться лестницы, что в свою очередь отрицает возможность существования второго этажа обходной галереи.

Отсюда и те низкие пропорции, наподобие храма Рипсиме и других аналогичных церквей, которые приписывает Звартноцу Мнацаканян своим проектом реконструкции.

Подобное мнение о пропорциях храма еще ранее было высказано доктором архитектуры, профессором Р. А. Агабабяном.

Немало и таких исследователей, которые признают проект реконструкции Тораманяна или разделяют с ним общие принципы реконструкции.

Историография, кроме общих восторженных посвящений, не оставила материалов, относящихся к внешнему и внутреннему описанию Звартноца, нет моделей, скульптур, миниатюр. Есть только развалины и свидетельство историка Себеоса, современника строительства храма: «... И построил (Нерсес III) церковь высоким строением и великолепной красотой».

Досадно, что наиболее крупные каменнобетонные массивы руин храма, характеризующие строение сооружения и детали верхних ярусов, в начале XX века были взорваны и размельчены архимандритом Хачиком Дадяном с целью удаления их от развалин. Сейчас общий облик сооружения восстанавливается лишь благодаря 3—4 крупным массивам и частям обломков, спасенными Тораманяном от уничтожения.

РЕАЛЬНЫЕ ОСНОВЫ РЕКОНСТРУКЦИИ ХРАМА ЗВАРТНОЦ

Перечислив в основном все возражения относительно проекта реконструкции Тораманяна, а также предложения вышеуказанных исследователей, мы переходим к изложению реальных основ реконструкции храма Звартноц, пользуясь при этом результатами наших исследований остатков храма. В ходе изложения одновременно будет выявлено наше отношение к высказываниям и предложениям различных авторов.

Предположение, что крестообразный центр храма в пределах второго яруса был обведен кольцевой стеной, Тораманян обосновывает соответствующим расположением отдельно стоящих колонн

за пилонами и наличием крупных массивов, служивших опорой этой стены в ряде сводов.

Существование второго этажа обходной галереи подтверждается Тораманяном наличием хранилища с остатками церковного ритуала в массиве, расположенном на юго-восточной стороне, а также большим количеством обломков орнаментированных наличников круглых окон.

Аргументации Тораманяна весьма вески и эти его положения подтверждаются также нашими доводами, приведенными в настоящей книге.

О ПРЯМОУГОЛЬНОЙ ПОСТРОЙКЕ С ВОСТОЧНОЙ СТОРОНЫ. О ВТОРОМ ЭТАЖЕ ГАЛЕРЕИ И О ЛЕСТНИЦАХ

Принимая наличие II этажа кольцевого обхода (галерей), необходимо искать следы лестниц, которые вели к нему. Таковые не были обнаружены ни Тораманяном, ни последующими исследователями в том числе и С. Мнацаканяном.

В круглом храме следов лестниц действительно нет. Однако они есть в

прямоугольном строении. Но эти следы приобретут ценность лишь в том случае, если выяснится, что прямоугольное помещение не было пристроено к круглому храму позднее, как это представляет Мнацаканян, а было выстроено вместе с круглым храмом.

Возведение восточного прямоугольного помещения одновременно с цент-

ральным объемом храма подтверждается следующими фактами.

1. В пределах фундаментов храма, между последними и стенами подвалов прямоугольного помещения нет строительной связи, а между тем такая связь есть в пределах, сохранившихся по сей день 1—3 рядов стен выше пола храма.

2. Во время частичных строительных реставраций в 1960—1961 гг. выявилась общность сохранившегося внутреннего бетонного массива стены в месте стыка сооружений, стало очевидно, что восточная стена круглого храма служила западной стеной для прямоугольного помещения. Правильность этого строительного приема диктовалась логикой строительного искусства, требующей обеспечения устойчивости 17-метровых боковых стен прямоугольного помещения либо путем возведения четвертой стены (чего в развалинах нет), либо строительной связью (на наличие которой мы уже указали).

В пользу одновременного возведения обеих частей храма говорит также то обстоятельство, что в пределах подвала на камнях фундаментов двух частей храма запечатлен один и тот же знак мастера. Это дает основание утверждать, что данные фундаменты были заложены или же его камни были отесаны руками одного мастера.

Отсюда становится ясным, что вначале были заложены фундаменты круглого храма, затем в притык к нему—фундаменты прямоугольных комнат и после возведены стены обеих частей одновременно и взаимосвязанно.

3. Наружная сторона восточной стены храма в пределах 11 метров прямолинейна и параллельна восточной стене прямоугольного помещения.

Если бы прямоугольная постройка

была пристроена к храму позже, то в пределах 3 граней наружная сторона граненой стены со своей аркадой высотой в 17 метров не была бы разрушена с целью превращения в прямолинейную, а была бы дополнена новой примыкающей стеной, либо оставлена без изменений по примеру многих древних пристроек.

4. Между двумя частями храма с самого начала строения оставлены два правильных дверных проема (см. рис. 5), оси которых не радиальны, а параллельны оси прямоугольного помещения.

5. В толще стены храма со стороны комнат сохранились две ниши сокровищницы; таковые не могли быть сделаны с наружной стороны стены, если бы не было упомянутых комнат, возведенных одновременно с храмом.

Теперь о следах лестниц.

На верхней грани фундамента круглого храма, которая одновременно является гранью стены подвала восточного помещения, до сего дня сохранились гнезда для косоуров двух деревянных лестниц, спускавшихся в подвал, а также следы гнезд для деревянных балок перекрытия подвала (см. рис. 7).

Поскольку в развалинах не обнаружено каменных лестниц, спускающихся в подвал, а таковые фактически были деревянными, то надо полагать, что и ведущие в верхний этаж лестницы также были деревянными.

С тыловой стороны каждого пилона в полукруглых нишах, очевидно, также имелись деревянные винтовые лестницы, связывающие галерею II этажа первого яруса со вторым ярусом храма (как показано на планах).

По плану второй галереи видно, что нижняя часть круглой стены II яруса в пределах указанной галереи не явля-

лась глухой; через ее проемы люди, находящиеся в галерее, приобщались к объездам, происходящим внутри храма.

Остальная часть этой стены в пределах восточной абсиды, где находились два шкафа (хранилища, на их следы указывал Тораманян), проемов нет.

Наконец, на обращенной к земле грани каменнобетонного массива с юго-западной стороны развалин сохранился пол треугольной ниши верхней галереи, выполненный из пемзобетона.

Таким образом доказательство одно-

временного сооружения основного объема и прямоугольного помещения на восточной стороне храма, наличие следов лестниц в прямоугольном помещении и остатки пола на высоте верхнего этажа приводят к твердому убеждению, что в храме существовал II этаж кольцевой галереи.

Недоказанным надо считать утверждение Мнацаканяна, будто храмы типа Звартноц-Бана и Лякит также не имели верхних галерей.

О ВТОРОМ ЯРУСЕ ХРАМА

Проблема второго яруса—наиболее важный рубеж, разделяющий составителей проектов реконструкции.

Месторасположение колонн, имеющих капители с изображением орла, направило Тораманяна на мысль о круглой форме второго яруса храма.

Версия о перенапряженности этих колонн, стоящих за пилонами, а также предположение будто из 32 окон II яруса 20—глухие, привели Кузнецова и позднее Мнацаканяна к мысли о тетраконховом строении второго яруса храма.

Мнацаканян в качестве аргумента к подтверждению своего проекта реконструкции приводит укомплектованный им из обломков развалин архивольт (см. рис. 13), будто бы своими размерами соответствующий ширине наружной грани экседры.

Дело в том, что Мнацаканян отобранные им камни упомянутого архивольта расположил полукругом так, чтобы получить пролет, равный ширине грани экседры, т. е. 2,25 метрам.

Обмер, произведенный нами, показал, что точный пролет архивольта ра-

вен 2,55 м., т. е. ширине грани многогранных барабанов II и III ярусов по реконструкции Тораманяна.

С. Мнацаканян на угловом камне, являющемся стыком пят архивольтов, измерив угол, составленный наклонными орнаментированными поверхностями архивольтов (равный примерно 156°), эту величину приписал углам граней барабана второго яруса.

Основываясь на этом, имея в виду, что линии, соединяющие центры колонн экседров, также составляют 156° , он пришел к заключению, что второй ярус храма имел не ротондальную, а тетраконховую форму.

К такому ошибочному выводу С. Мнацаканян пришел, так как не учел, что угол между гранями барабана должен был быть больше угла, составляемого наклонными поверхностями архивольтов, сомкнутых на угловом камне.

Наши обмеры показали, что вышеуказанный угол равен не 156° , а $168,5^\circ$, т. е. столько, сколько градусов составляет угол между гранями барабана вто-

рого яруса, полученный в реконструкции Тораманяна.

Второй довод Мнацаканяна в пользу тетраконогового строения второго яруса это сопоставление обломков карнизов.

Новыми обмерами, произведенными нами, подтверждается что карнизы были одного типа, но выполнены в 3-х вариантах, которыми завершались бара-

банные стены ярусов. Радиусы кривизны карнизов целиком совпадают с данными проекта Тораманяна.

Таким образом, отрицаются все попытки представить крестообразным в плане второй ярус храма с помощью «доказательств» и выводов, основанных на неправильных обмерах архивольтов и карнизов, сделанных Мнацаканяном.

О ТРЕТЬЕМ ЯРУСЕ ХРАМА

По проекту Тораманяна третий ярус представляет барабан с 16 гранями.

Обрамляющая барабан аркатура своим шагом и элементами повторяет аркатуру второго яруса храма. Против этого серьезных доводов не имеется.

Мнацаканян находит, что барабан имел 12 граней и не был обрамлен аркатурой.

Он имеет в виду два перемычных камня, не имеющих обрамлений, которые находятся за оградой развалин. Но дело в том, что эти камни не принадлежат храму Звартноц. Они, по указа-

нию доктора исторических наук К. Кафадаряна, были доставлены в храм Рипсиме с неизвестной постройки, а в дальнейшем—арх. Л. Садоянном перевезены в Звартноц.

В модели Гагикашена, а также на парижском барельефе, являющимся моделью Звартноца (о чем будет сказано ниже), покрытие купола третьего яруса коническое, как и в реконструкции Тораманяна, а не сферическое, как представляет это Мнацаканян в своем проекте реконструкции. Эти факты говорят сами за себя.

ОБ АРХИТЕКТУРНОМ СТИЛЕ ХРАМА

Звартноц, являясь шедевром армянского средневекового зодчества, входит в сокровищницу мировой культуры, представляя один из этапов развития всеобщей архитектуры.

До VII века армянским мастерам не раз приходилось возводить великолепные памятники искусства и архитектуры, и поэтому они были подготовлены для создания такого высокохудожественного и сложного для своего времени сооружения, каким являлся Звартноц.

Возникнув на почве высокой само-

бытной архитектурной культуры Армении, Звартноц нес на себе воздействие других, и в первую очередь, соседних народов. Естественно, что его стилевые особенности не могли ускользнуть от внимания многих исследователей. Тораманян строительные приемы Звартноца считал местными, имея в виду, что «до Звартноца существование многочисленных знаменитых памятников неоспоримо доказывает, что местный народ вполне был развит в строительном искусстве». Далее он продолжает: «Из характер-

орнаментов видно, что внешние влияния отразились на художественном стиле Звартноца, возведенного в архитектурных формах, свойственных для VII века Армении. Но Звартноц «своей общей формой не похож ни на одну из до сих пор существующих старых или новых церквей». Более конкретизируясь, ученый пишет: «...Капители совершенно своеобразны. Исключая приспособленные греческие волюты, корзинообразный орнамент чисто армянский (см. рис. 16). Совершенно своеобразна форма капителей с изображением орла, которая применена только в церкви Звартноц...» (см. рис. 15).

«Профилировка архивольтов взамен обычного постепенного углубления осуществлена на одной плоскости; обстоятельство, которое свойственно только армянскому стилю» (см. рис. 20). «Карниз здания чисто армянский и формой и орнаментом».

Приведенная характеристика, данная Тораманяном архитектурным особенностям Звартноца, до сих пор является общепринятой, хотя по некоторым вопросам у различных авторов имеются противоположные мнения. Так, действительный член АН Грузинской ССР Г. Н. Чубинашвили корзинчатый мотив орнамента считает самостоятельным, чисто грузинским, не имеющим никакой связи ни с Ираном, ни с Афинами. Он имеет в виду орнамент на капители северо-западной колонны северного портика малой церкви Мхитского Джвари, которая ныне находится в выветрившемся состоянии.

Считая Джвари постройкой 2-ой половины VI века, он заключает, что этот мотив достигает своего расцвета лишь в VII веке в церквях Грузии и Армении, как например, в Звартноце и в измененном виде в церкви Бана.

Как видно, Чубинашвили не известны

те многочисленные фрагменты корзинчатого мотива, которые были развиты в армянских церквях V—VI веков: в Ереруке, Двине и Аване (см. рис. 17 и 18)¹.

Конечно, для создания своеобразной и высокохудожественной корзинчатой капители Звартноца мастер скорее мог взять пример из многочисленных ближайших памятников.

Далее, Г. Н. Чубинашвили витой орнамент из виноградных лоз и листьев восточного фасада Джвари считает образцом высокого искусства, а тот же мотив на фасадах Звартноца — безжизненным, очерченным строгими сухими контурами, идентично манерной обработке позднесирийских образцов северных районов.

Эту оценку Г. Чубинашвили мы приписываем ничему иному, как результату узко-субъективных ощущений и взглядов на изобразительное искусство. Будет ближе к истине, если примем, что в Джвари мастер растение изобразил в некотором смысле фотографически, с передачей мельчайших подробностей, что характерно для натуралистических произведений.

● Что же касается Звартноца, то здесь тот же мотив обработан с большим мастерством, создан обобщенный, типичный образ, выполненный с уверенностью и сочно. Здесь явствует именно творческий подход реалистического метода.

Доктор А. Л. Якобсон считает возможным, что в изготовлении корзинчатой капители Звартноца участвовали греческие (сирийские) мастера. По его мнению капители с изображением орла унаследованы еще из античной культуры, кото-

¹ Что же касается капители Джвари, то необходимо отметить, что его северный портик построен позже церкви малого креста, что наглядно видно из обмеров Н. П. Северова, помещенных в альбоме Г. Н. Чубинашвили «Памятники типичной Джвари».

рые «в эллинистическом Востоке были довольно широко распространены».

Но, как было уже сказано выше, капители с корзинчатым орнаментом на сооружениях в Армении применялись еще за 200 лет до возведения Звартноца, следовательно, для осуществления данной работы армянские мастера не могли нуждаться в помощи сирийских мастеров. И действительно, трудно представить, что мастера Звартноца, будучи наследниками урартского строительного искусства, в VII веке в эпоху расцвета в стране архитектуры не были бы в состоянии своими силами извлекать корзинчатую капитель¹.

Для подтверждения своего заявления А. Л. Якобсон не приводит ни одного снимка «так распространенной» капители с изображением орла. В специальной литературе, во всяком случае, идентичных примеров капители с изображением орла мы не встречали.

В поисках истоков архитектурного мастерства Звартноца Кузнецов уподобляет его сирийскому храму Босра, а Мнацаканян, считая Звартноц полностью местным явлением, срывает его от архитектуры соседних стран, чем отрицает факт взаимовлияния.

В действительности же памятники мирового значения, в том числе и Звартноц, не могли создаваться в замкнутых национальных рамках в отрыве от окружающей среды мира.

Замечательным примером понимания и высокой оценки значения взаимного влияния могут служить высказывания по поводу архитектуры больших знатоков ис-

кусства — архитектора Тороса Тораманяна и поэта Аветика Исаакяна.

«Наш народ еще в первобытную эпоху перенял от предков некоторые основы строительного искусства, добавляя к ним свои новшества. Подвергаясь влиянию соседей, персов и народов стран Двуречья, он освоил, переработал, добавляя новые элементы, новые чувства. Учитывая строительные материалы, климат, народ создавал гармонию с пейзажем и своими умственными, духовными, бытовыми требованиями. И так, усилиями веков и накопленными достижениями был создан армянский самостоятельный стиль, который отныне не отвергнуть».

Говоря словами Аветика Исаакяна — «наше искусство на начальном этапе своего становления несло влияние иных народов, а затем само повлияло на архитектуру других народов».

Вышеуказанные высказывания Тораманяна и Исаакяна вполне согласуются с нашим современным воззрением на искусство.

Эту же мысль Тораманян развивает следующим образом: «Когда наш стиль принял совершенную форму, сам начал излучать». И далее: «С нашего каменного нагорья спустились, распространились дары искусства к Балканам, Византии, Италии, Германии, Франции. Наши перселенцы — мастера, наши гонимые тондракийские умельцы и нашествующие народы несли эти дары, которые явились стимулами внушения, мышления, подражания для византийского, готического, романского и даже арабского искусств».

